



«ԳԵՂԱՐԴ» ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀՀ ԳԱՍ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ



**ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ
ԱՐԴԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ.
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Գիտաժողովի նյութեր

Երևան – 2025

“GEGHARD” SCIENTIFIC ANALYTICAL FOUNDATION
INTERNATIONAL SCIENTIFIC–EDUCATIONAL CENTER OF NAS RA



**MODERN TRANSFORMATIONS
IN THE MIDDLE EASTERN REGION:
HISTORY AND GEOPOLITICS**

*Proceedings of the
Scientific Conference*

Yerevan – 2025

*Ժողովածուն տպագրվում է
«ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի
գիտական խորհրդի որոշմամբ*

*Խմբագրական հանձնաժողով՝
Ռոբերտ Ղազարյան, Արմեն Սարգսյան,
Գոռ Մարգարյան, Անուշ Հարությունյան,
Գայանե Ափոյան, Ստեփա Վարդանյան,
Սոնիկա Միրզոյան, Լիանա Գյուրջյան*

*Պատասխանատու խմբագիր՝
Գոռ Մարգարյան*

Մերձավորարևելյան տարածաշրջանի արդի փոխակերպումները:
Պատմություն և աշխարհաքաղաքականություն: Գիտաժողովի նյութեր.–
Եր.: «Անտարես», 2025.– 232 էջ:

Ժողովածուն հիմնականում ընդգրկում է «Մերձավորարևելյան տարածաշրջանի արդի փոխակերպումները. պատմություն և աշխարհաքաղաքականություն» գիտաժողովի (2025 թ. հունիսի 13–ին) նյութերը:

Նախատեսված է հայագետների, արևելագետների, միջազգային հարաբերություններով և պատմագիտությամբ հետաքրքրվող ընթերցողների լայն շրջանակի համար:

ISBN 978–9939–98–459–9

DOI: 10.54503/978–9939–98–459–9

© «Գեղարդ» գիտավերլուծական
հիմնադրամ, 2025



ԱՆՏԱՐԵՍ

*The collection is published by the decision of the
Scientific Council of the International Scientific and
Educational Centre of the NAS RA.*

Editorial Committee
**Robert Ghazaryan, Armen Sargsyan,
Gor Margaryan, Anush Harutyunyan,
Gayane Apoyan, Stella Vardanyan,
Monika Mirzoyan, Liana Gyurjyan**

Editor-in-Chief:
Gor Margaryan

Modern transformations in the Middle Eastern region: History and geopolitics.
Proceedings of the international scientific conference:– Yerevan. “Antares”,
2025.– 232 p.

The collection titled “Modern transformations in the Middle Eastern region:
History and geopolitics” features materials from scientific conference (13 June,
2025).

It is intended for Armenologists, Orientalists, scholars of international
relations, and a broad audience interested in historiography.

ISBN 978–9939–98–459–9

DOI: 10.54503/978–9939–98–459–9

© “Geghard” Scinetific Analytical
Foundation, 2025



ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈՐԲԵՐՏ ԴԱԶԱՐՅԱԼ

Ադրբեջանական կեղծարարություններն Ադրպասականի,
Աղվանքի և Իրանի հին շրջանի պատմության վերաբերյալ9

ՄԵԼԻՆԵ ՄԱԹԵՎՈՍՅԱԼ

Արցախյան Զրաբերդ գորգի ծագումնաբանության հարցի շուրջ19

ԼԻԱՆԱ ԳՅՈՒՐՋՅԱԼ

Երևան քաղաքը՝ որպես ադրբեջանական քարոզչության և
պատմական կեղծարարության թիրախ34

ԱՆՆԱ ՊԱԼԱՔՅԱԼ

Նացիստների հետ ադրբեջանցիների համագործակցության հետքերով54

ՍՏԵԼԼԱ ՎԱՐԴԱՆՅԱԼ

Սումգայիթ 1988. անպատիժ մնացած ոճրագործություն67

ԳՈՌ ՄԱՐԳԱՐՅԱԼ

Ռուսաստանի կերպարի դիվայնացումն Ադրբեջանի հեփտորիդային
պատմագրության մեջ79

ԱՄՍՍՏ ՍՈՒՐԱԴՅԱԼ

Ճիչ Արևելքում. դրվագներ 2014 թվականի եզրինների ցեղասպանությունից89

ԱՐԵՎԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱԼ

Կանայք և սեռերի միջև հավասարության հարցերն ԱՄԷ-ում107

ԱՐՄԻՆԵ ԽԱՆՊԻԿՅԱԼ

Ինքնասպանությունները, օրգանների և «զինվորի բաժնի» վաճառքն
ադրբեջանական բանակում118

ԱՆՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱԼ

Մամուլի ազատության սահմանափակումների քաղաքական մեխանիզմներն
Ադրբեջանում (2003–2025 թթ.)136

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ՎԱՐԴԱՐՈՆՅԱԼ

«Լոռայան գինը». Թուրքիայում լրագրող լինելը հանցանք է157

ԱԶԳԱՆՈՒՇ ՄԿՐՏՉՅԱԼ

Թյուրքական ժողովուրդների մոտ թենգրիականության ու շամանության
ժամանակակից դրսևորումները189

ԼՈՒՍԻՆԵ ՄԻՒԹԱՐՅԱԼ

Թուրքիայի կողմից փափուկ ուժի կիրառման սոցիալ-հոգեբանական
մեխանիզմները Մերձավոր Արևելքի երկրներում202

CONTENTS

ROBERT GHAZARYAN <i>Azerbaijani falsifications concerning the Ancient history of Atropatene, Caucasian Albania and Iran</i>	9
MELINE MATEVOSYAN <i>The issue of the origin of the Artsakh Jraberd carpet</i>	19
LIANNA GYURJYAN <i>The city of Yerevan as a target of Azerbaijani propaganda and historical falsification</i>	34
ANNA PALAQYAN <i>Tracing the Azerbaijani collaboration with the Nazis</i>	54
STELLA VARDANYAN <i>Sumgait 1988: An unpunished crime</i>	67
GOR MARGARYAN <i>Demonization of Russia in the post-soviet historiography of Azerbaijan</i>	79
ALMAST MURADYAN <i>A scream in the East: Episodes from the 2014 Yazidi Genocide</i>	89
AREVIK HARUTYUNYAN <i>Women and gender equality issues in the UAE</i>	107
ARMINE KHANPIKYAN <i>Suicide, organ trafficking, and the sale of ‘Soldier’s ration’ in the Azerbaijani army</i>	118
ANUSH HARUTYUNYAN <i>Political mechanisms of restrictions on press freedom in Azerbaijan (2003–2025)</i>	136
TIGRANUHI VARDPARONYAN <i>“The Price of silence”: Journalism as a crime in Turkey</i>	157
AZGANUSH MKRTCHYAN <i>Contemporary manifestations of Tengrism and Shamanism among Turkic Peoples</i>	189
LUSINE MKHITARYAN <i>The socio-psychological mechanisms of Turkey’s use of soft power in the Middle Eastern countries</i>	202

РОБЕРТ КАЗАРЯН

*Научно-аналитический фонд «Гегард»,
Институт Востоковедения НАН РА,
МНОЦ НАН РА, Кафедра востоковедения,
Эл. почта: rghazaryan@orient.sci.am*

**АЗЕРБАЙДЖАНСКИЕ ФАЛЬСИФИКАЦИИ
О ДРЕВНЕМ ПЕРИОДЕ ИСТОРИИ АТРОПАТЕНА,
КАВКАЗСКОЙ АЛБАНИИ И ИРАНА**

Начиная с советского периода, Азербайджан фальсифицирует не только историю стран и народов, которые существовали на территории современной Республики Азербайджан, но и соседних стран и народов.

У этих систематических фальсификаций также есть цель – попытаться доказать, что тюрки-азербайджанцы являются коренными жителями региона. Кроме того, азербайджанцы пытаются приписать себе историю тюркоязычных народов (в первую очередь огузов-туркмен) региона. При всем этом, конечно, азербайджанская историография демонстрирует особый подход к истории нескольких стран, в частности, речь идет об Армении, Кавказской Албании, Атропатене, Манне и Иране.

Ключевые слова: *Кавказская Албания, Атропатене, Иран, Медия, скифы, Манна, Армения, Азербайджан, фальсификации.*

Фальсификация истории в Азербайджане спонсируется и направляется государством. Азербайджанские власти различными способами особенно поощряют тех историков, которые всеми возможными способами пытаются присвоить или фальсифицировать историю древнего периода региона. Здесь у них есть главная цель: всеми имеющимися средствами «доказать», что тюрки-азербайджанцы жили в регионе еще до нашей эры. Фактически концепцию, на которой базируется вся

азербайджанская псевдоистория, мы сегодня можем видеть на официальной странице президента Азербайджана¹.

Все это находит место и в азербайджанских школьных учебниках, где учащимся преподносится фальсифицированная история, далекая от реальности. Иными словами, азербайджанские историки по приказу политиков вводят в заблуждение азербайджанское общество, начиная со школьного возраста.

В качестве примера приведем некоторые мысли и предложения из азербайджанских школьных учебников, например – из опубликованного на русском языке учебника «История Азербайджана². Для 10 класса общеобразовательной школы. Баку, 2018» (то же самое и в других азербайджанских учебниках по истории).

Начнем с предисловия этого учебника. Там на 8-й странице написано следующее:

«С одной стороны, социально-экономического развитие, расширение связей с соседними странами, с другой – завоевательная политика таких могущественных государств Востока, как Ассирия и Урарту, стали причинами создания в результате объединения живших на юге Азербайджана, вокруг озера Урмия племен такого сильного государства, как Манна. Будучи первым рабовладельческим государством на территории нашей страны, Манна долгое время вела борьбу за независимость и в результате смогла ее обрести. Стоявшая у истоков истории нашей государственности Манна стала основой, фундаментом для других наших государств, появившихся впоследствии на исторической сцене.

... В IV веке до н.э. на севере Азербайджана возникло государство Албания, а на юге – Атропатена. Тем самым в истории нашей страны укрепились древние традиции государственности».

На первый взгляд, если не принимать во внимание тот факт, что используются вымышленные топонимы Северный и Южный Азербайджан, кажется, что большой проблемы здесь нет. Азербайджанские

¹ <https://president.az/ru/pages/view/azerbaijan/history>

² Алиев Т., Агаларов П., Гулиев Н., Гасымов Э., Бабаев Ф., Гусейнов Э., Асадов К., Мамедов Р., История Азербайджана. Для 10 класса общеобразовательных школ Баку, 2018, 200 с.

историки пытаются в географическом плане показать события, происходившие на территориях нынешней Азербайджанской Республики и иранской Атропатены еще в 1-м тысячелетии до н.э. Но мы также видим, что азербайджанские историки всячески пытаются увидеть цивилизационную связь между этими государствами и Азербайджанской Республикой. Кроме того, после этого следует предложение, раскрывающее проблемы, которые поставили перед собой азербайджанские историки, а именно:

«Несмотря на сложную геополитическую обстановку, развитие и возвышение этих государств сыграло важную роль в становлении азербайджанского народа»¹.

То есть здесь уже с азербайджанским народом связываются события в государствах Манна, Кавказская Албания, Атропатена.

Также интересно общее название, которое они выбрали для текста: «Первое азербайджанское государство – Манна» – Р.К.

А на странице 18 этого учебника мы видим еще одно предложение: *«Хотя по определенным причинам в VI веке до н.э. Манна перестала существовать, она является первым государством, оставившим в наследство азербайджанскому народу традиции государственности».*

Конечно, очень сложно понять то, как государство, существовавшее в IX–VII веках до нашей эры, повлияло на государственность азербайджанцев, когда государство Азербайджан впервые появилось на карте мира только в 1918 году. А кроме того, государство Манна географически расположено южнее озера Урмия и даже географически не связано с современным Азербайджаном, не говоря уже о цивилизационных и этнических аспектах.

А на странице 19 есть такое предложение: *«Основным языком населения (подразумевается государство Манна) был древний тюркский язык».*

Потом все это в этом же духе продолжается и на страницах 21 и 22 этой книги:

«Одна из причин усиления Манны в этот период была связана с прибытием с берегов Черного моря в Переднюю Азию тюркских племен. Называемые в разных источниках киммерами, исkitами и

¹ История Азербайджана. Учебник, с. 8.

саками эти воинственные племена, сражавшиеся верхом на конях, стали причиной крутого поворота в истории Передней Азии. Ахшери (царь Манны) установил дружеские отношения с этими племенами, расселившимся вблизи северных границ Манны, а также путем их размещения на территории своей страны смог укрепить свою армию. В ассирийских источниках указывается, что Ахшери был союзником искитского правителя Ишпакая».

Там же на странице 22 – «Ахшери также оказал помощь повстанцам в Мидии, поднявшим восстание против власти Ассирии. Объединенные силы, нанеся поражение врагу, прогнали его из Мидии».

Здесь уже видна следующая цель азербайджанской историографии – Мидия. Эта страна была включена в процесс поиска происхождения азербайджанского народа еще с советских времен. И для того, чтобы эта связь стала очевидной, Манна, уже объявленная азербайджанской, идет на помощь своим братьям по крови мидийцам.

Продолжим изложение истории скифов по данным азербайджанской историографии. На странице 23 того же учебника мы находим следующую мысль о том, что:

«Принесший с собою новые виды оружия, новые способы ведения боя, новую культуру, этот народ (имеется в виду скифы), несмотря на многообразие названий в письменных источниках, по своему происхождению является древним тюркским народом».

Здесь же дается еще одно важное «научное открытие–объяснение»:

«Ведущие кочевой образ жизни искинты, двигаясь к западу от своей родины – Алтайских гор, прибыли на северное побережье Черного моря и поселились здесь по соседству с другим тюркоязычным племенем киммеров». Затем азербайджанские историки продолжают: *«Прибытие (имеется в виду в VII в. до н.э.) киммеров и искинтов считается первым массовым переселением тюркских племен в Азербайджан».*

Затем авторы резюмируют все это, заявляя следующее:

«В первой половине VII века до н.э. возникло Искитско–Ишгузское (от слов «Ич Огуз»), царство, охватывавшее территории от междуречья Куры и Араза до северо–западного побережья озера Урмия»¹

¹ История Азербайджана. Учебник, с. 23.

(тут становится понятно, почему скифов они упорно называли *искитами*, ведь это слово легче сравнить с тюркскими словами *ич огуз* (на тюркском: внутренняя/ий стрела, народ), чем этноним *скиф* (самоназвание – сколот–Р.К.)).

Чтобы связать все это в общую теорию, авторы учебника добавляют:

«Перешедшие на южный берег Араза искиты были хорошо встречены своими маннейскими соплеменниками, между ними возникли дружеские отношения»¹.

Фактически азербайджанские учёные пытаются показать, как, по их мнению, местный тюрко–азербайджанский народ Манны объединился со скифами вокруг единой пантюркской идеи ещё в VII в. до н.э.

Интересен здесь и тот факт, что, с одной стороны, азербайджанские историки признают, что родина тюркских народов находилась в Центральной Азии, с другой стороны, считая народ Манны тюрко–азербайджанским, они не дают никаких объяснений, о том, как эти люди появились в регионе в начале I тысячелетия до нашей эры.

А на странице 31 вышеуказанного учебника мы натываемся и на еще одну «интересную» мысль, согласно которой оказывается, что «... персы (имеется в виду Ахеменидская Персия–Р.К.) называли всех тюркоязычных кочевников саками. Из-за того, что сако–искито–огузские племена отличались воинственностью, Ахеменидские цари во всех своих войнах использовали силу саков».

Чтобы понять масштаб азербайджанских фальсификаций, коротко изложим реальную историю государства Манна.

Государство Манна (IX–VII вв. до н.э.) в основном занимало территорию к югу от озера Урмия. Сведения об этом государстве сохранились в ассирийских и урартских (биайнийских) источниках. От самих жителей Манны – маннейцев надписей не дошло, археологически их страна плохо исследована. Столицей Манны был город Изирту. Население страны состояло из разных племен. Если полагаться на ограниченную ономастическую выборку, то только четыре из 27 антропонимов являются древнеиранскими, хурриты были второй по величине

¹ Там же.

группой¹. Маловероятно, что в Манне было какое-либо этнолингвистическое единство. Как и другие народы Иранского нагорья, маннейцы со временем подвергались всевозрастающему иранскому (т. е. индоевропейскому) проникновению. Эта страна указана также в Библии наряду с Арменией: «...созовите на него царства Араратские, Минийские и Аскеназские...»². В последующие века территория Манны становится частью Мидии, в будущем Малой Мидии или Мидии Атропатены. Начиная с VI века до н. э. Манна входила в состав разных иранских государств³.

Можно добавить, возможно, что в этот период прототюркские племена начинали свою историю за тысячи километров далеко от Манны – на территориях Южной Сибири и Монголии⁴, но ни в коем случае не на территории Манны.

Приведем также несколько общеизвестных фактов насчёт скифов.

Упоминания о скифах содержатся в ассирийских, урартских и античных источниках. В VII в. до н. э. скифы перешли Кавказский хребет и обосновались на востоке Армянского нагорья и на приурмийских территориях⁵. Страбон упоминает их как саков и отмечает, что они захватили лучшие земли Армении, которые по их имени стали называться

¹ Boehmer R. M., Volkstum und Städte der Mannäer, *Baghdader Mitteilungen*, 3, 1964, S. 11-24; см. также Zimansky P.E., *Ancient Ararat. A Handbook of Urartian Studies*, New York, 1998, p. 39; Hassanzadeh Y., *An Archaeological View to the Mannaeen Kingdom, Asia Anteriore Antica. Journal of Ancient Near Eastern Cultures*, 4, 2022, pp. 13-46.

² Библия. Иеремия, 51:27.

³ Манне. *Encyclopedia Iranica*; Дьяконов И.М., *История Мидии от древнейших времен до конца IV века до н.э.*, Москва-Ленинград, 1950, в 2 томах; Diakonoff I. M. and Kashkai S. M., *Geographical Names According to Urartian Texts*, *Répertoire Géographique des Textes Cunéiformes* 9, Wiesbaden, 1979; Grayson A. K., *Assyrian Rulers of the Early First Millennium B.C. II (858-745 B.C.)*, *Royal Inscriptions of Mesopotamia Assyrian Periods* 3, Toronto, 1996; Lanfranchi G. B. and Parpola S., *The Correspondence of Sargon II. Part. 2: Letters from the Northern and Northeastern Provinces*, *State Archives of Assyria* 5, Helsinki, 1990.

⁴ Golden P., *The Turkic peoples. A historical sketch*, in *The Turkic languages. Second Edition*, Ed. by Johanson L., Csató É., Routledge, London and New York, 2022, p. 13.

⁵ Тохтасьев С.Р., *Проблема скифского языка в современной науке*, *Ethnic Contacts and Cultural Exchanges North and West of the Black Sea from the Greek Colonization to the Ottoman Conquest*, Iași, 2005, с. 59-108; Гуляев В. И., *Скифы. Расцвет и падение великого царства*, Москва, 2005, 400 с.

Сакасена¹ (Шакашен на арм.–Р.К.). В своих походах скифы дошли до Палестины. Позднее они вернулись в северные прибрежные земли Черного моря. В урартских источниках страна скифов называется Иш-киулу или Ишкуулхи, в ассирийских – Ашгуза или Ишгуза, а в Ветхом Завете² – Аскеназ. В неазербайджанской историографии³ и лингвистике и скифы, и саки, и киммерийцы считаются иранскими народами и не имеют никакого отношения к тюркским народам.

Что касается мидийцев, то историография говорит о том, что мидийцы – тоже один из иранских народов, которые обосновались на Иранском нагорье в конце II тыс. до н.э. Упоминания о мидийцах содержатся в ассирийских, греческих, армянских источниках, а также в Библии. Согласно греческому историку Геродоту⁴, некто Дейок смог объединить мидийские племена и основать Мидийское царство в первой половине VII века до н.э.⁵

Затем мы подходим к одному из важнейших разделов азербайджанской историографии: рассказам об Атропатене (Атрпатакан, позднее топоним Азербайджан) и Кавказской Албании. Здесь основной акцент делается на то, что поскольку, по их мнению, тюрки-азербайджанцы проживали на территории этих государств с самого начала, то возникшие в IV веке до н.э. эти государства являются лишь еще одним этапом развития азербайджанской-тюркской государственности.

Историю же возникновения государства Агванк или Кавказская Албания азербайджанские историки объясняют следующим образом: *с самого начала на тех территориях проживали тюркские племена искиотов (имеется ввиду скифы), на основе которых позднее в IV веке*

¹ Страбон Книга XI, VIII, 4. География в 17 книгах. Академия наук СССР, 1964, 944 с.

² Библия: Книга пророка Иеремии.

³ Например: Sulimirski T., The Scyths. The Cambridge history of Iran. In Seven Volumes. Volume 2. The Median and Achaemenian periods. Ed. By I. Gershevitch, 2008, pp. 149-199.

⁴ Геродот. Книга первая, Геродот. История в девяти книгах, Ленинград, 1972, 96-103.

⁵ Дьяконов И.М., История Мидии от древнейших времен до конца IV века до н.э., Москва-Ленинград, 1950; Diakonoff I.M., Media. The Cambridge history of Iran. In Seven Volumes. Volume 2. The Median and Achaemenian periods. Ed. By I. Gershevitch, 2008, pp. 36-148.

до н.э. они были объединены в государственное образование Кавказская Албания¹.

Всемирная (неазербайджанская) историография уверена, что в Кавказской Албании проживали племена, которые говорили на кавказских языках. Их наследниками считаются удины и лезгины. Первые тюркоязычные племена на территориях Кавказской Албании обосновались лишь после сельджукских походов XI века.

Интересно, что, по мнению азербайджанских историков, территория Албанского государства простиралась «... от Кавказских гор на севере до Атропатены на юге, от Каспийского моря на востоке до окрестностей озера Гёча (имеется ввиду озеро Севан – Р.К.) и Иберии (Грузии) на западе»².

Здесь очевидно, что предпринимается попытка разместить в пределах Кавказской Албании большую часть территорий нынешней Азербайджанской Республики. Мы этим историкам предложили бы почитать историка XIX века Бакиханова, которого азербайджанцы считают отцом азербайджанской историографии, его книгу «Гюлистан-и Ирам» («Райский цветник»). Он в своей книге ясно заявляет, что границы Великой Армении и Кавказской Албании проходят по реке Кура³.

Что касается Атропатены, то коротко можно изложить историю этого государство так: Атропатенское царство существовало с конца IV века до н. э. до начала III в. н. э. Его территория лежала к югу и к востоку от озера Урмия. Имя царству дал ахеменидский аристократ иранец Атропат (IV в. до н.э.), имя которого с древнеперсидского переводится как «охраняющий огонь». После походов Александра Македонского он стал правителем земель Северной Мидии – Малой Мидии. Впоследствии территория Малой Мидии по его имени стала называться Атропатена (Ātur-pāta-akān – буквально: «территория, принадлежащая Атропату»). В арабский период и под воздействием арабского языка, этот топоним стал звучать как Азербайджан, позже – Азарбайджан. И так как в 1918 году новосозданное закавказское государство носит то же

¹ История Азербайджана. Учебник, с. 32.

² Там же.

³ См. Аббас-Кули-ага Бакиханов. «Гюлистан-и Ирам». Академия наук Азербайджанской ССР, Институт истории, Баку, 1991, с. 11. См. также Caucasian Albania. An International Handbook. Edited by Jost Gippert and Jasmine Dum-Tragut, 2023, 735 p.

имя, то азербайджанская историография, основываясь только на этом факте, пытается в поисках своей национальной идентичности связать новосозданный азербайджанский народ с этим древним иранским государством.

Согласно данным греко-римских, иранских источников и в целом объективной (беспристрастной) историографии, население Атропатены имело иранское происхождение и разговаривало на иранских языках. В древний период никакого тюркского населения на территории Атропатены не существовало.

Резюмируя, можно сказать следующее: казалось бы, для азербайджанцев целесообразнее сосредоточиться на изучении новейшей истории территории Азербайджанской Республики. Тем не менее их основная цель – любой ценой создать впечатление, что турки-азербайджанцы жили на этой территории по меньшей мере с первого тысячелетия до нашей эры, утверждая своё коренное происхождение в Передней Азии. Одной из характерных уловок азербайджанской историографии является поиск любых слов (топонимов, этнонимов) в древних источниках, которые могут быть схожи или близки к тюркским словам, на основании этого делаются выводы о тюркском происхождении этих слов, и как следствие, об азербайджанской этнической принадлежности населения региона. Поскольку они считают себя главным тюркским народом в регионе, то всё, что имеет отношение к тюркам, автоматически приписывается азербайджанцам. Всемирная историография констатирует, что история Манны, скифов, Кавказской Албании, Атропатены и Мидии не имеет отношения к тюркам-азербайджанцам. Новосозданный этот народ не может претендовать на древнюю историю этих стран и народов.

Кроме того, азербайджанский народ до сих пор находится в поиске своих корней: когда это необходимо, он считает себя исключительно тюркским народом, когда необходимо усвоить албанское, кавказское наследие, он объявляет себя наследником Кавказской Албании. Этот поиск продолжается и по сей день. К сожалению, эти поиски всегда полны армянофобией и крайним националистическим проявлением. А фальсификация истории региона поощряется в Азербайджане на уровне государственной политики.

ՌՐԲԵՐՏ ԴԱԶԱՐՅԱԼ

«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամ,
<< ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ,
<< ԳԱԱ ԳԿՄԿ, Արևելագիտության ամբիոն
Էլվիոստ` rghazaryan@orient.sci.am

ԱՊՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ, ԱՂՎԱՆՔԻ ԵՎ ԻՐԱՆԻ ՀԻՆ ՇՐՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քանայի բառեր՝ Աղվանք, Ատրպատական, Իրան, Մարաստան, սկյութներ, Հայաստան, Ադրբեջան, կեղծարարություններ:

Խորհրդային ժամանակաշրջանից սկսած՝ Ադրբեջանը կեղծել է ոչ միայն ժամանակակից Ադրբեջանի Հանրապետության տարածքում եղած պետությունների և ժողովուրդների, այլև՝ հարևան երկրների և ժողովուրդների պատմությունը:

Այս համակարգված կեղծիքները նաև նպատակ ունեն ապացուցելու, որ իբրև թե թյուրքալեզու ադրբեջանցիները տարածաշրջանի բնիկներն են: Ավելին՝ ադրբեջանցիները փորձում են նաև յուրացնել տարածաշրջանի թյուրքալեզու այլ ժողովուրդների (մասնավորապես՝ օղուզ-թյուրքմենների) պատմությունը:

Կեղծարարությունների և յուրացումների այս քաղաքականությունը, որն ուղղորդվում է պետության կողմից, իր արտացոլումն է գտնում նաև ադրբեջանական դասագրքերում: Ադրբեջանական հասարակության երիտասարդ սերնդին դպրոցական տարիներից մատուցվում է կեղծված, հարևանների նկատմամբ (առաջին հերթին՝ հայերի) ատելության մի պատմություններ: Ադրբեջանցի կեղծարարներն առանձնահատուկ ջանքեր են գործադրում հատկապես տարածաշրջանի հին պատմության յուրացման ուղղությամբ: Այստեղ նրանց թիրախում են Մաննայի, Ատրպատականի, Աղվանքի, Մարաստանի, սկյութների և այլոց պատմությունը: Հայաստանի և հայերի գոյությունը հին շրջանում նրանց կողմից ընդհանրապես անտեսվում է կամ բացառվում:

ՄԵԼԻՆԵ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

<< ԳԱԱ ԳԿՄԿ, Արևելագիտության ամբիոն,
Էլիաւցե՝ meline.matevosssyan@gmail.com

ԱՐՑԱԽՅԱՆ ԶՐԱԲԵՐԴ ԳՈՐԳԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Վերջին տարիներին այսրկովկասյան տարածաշրջանի մշակութային ժառանգության ուսումնասիրությունների շուրջ հակասություններն աճել են, մասնավորապես՝ գորգագործության ավանդույթների և դրանց ծագումնաբանության վերաբերյալ: Հարկ է նշել, որ ադրբեջանական գորգի վերաբերյալ տեսակետներն ու ուսումնասիրությունները նույնպես բացառություն չեն, որոնք հաճախ իրենց վերլուծություններում ենթադրում են պատմական կեղծարարություն և ի ցույց դնում այլ ազգերի մշակույթը յուրացնելու ակնհայտ միտում: Գորգագործական ավանդույթի ճշգրիտ արմատները և այն, թե ինչպես է այն զարգացել ժամանակի ընթացքում, շարունակում են մնալ գիտական բանավեճերի և քննարկումների առարկա:

Այս դիսկուրսի շրջանակներում արցախյան տիպի գորգերի վերաբերյալ ադրբեջանական տեսակետները՝ որպես այդպիսին, հայ գորգագետների հանգամանալից քննարկման, քննադատական արձագանքի չի արժանացել: Այս տեսակետների քննարկումը չէր ունենա արդիականություն, եթե դրանք ստացած չլինեին այդքան լայն տարածում և հակահայկականության ու հակագիտականության ակնհայտ միտում չպարունակեին: Կարող ենք արձանագրել, որ ներկայումս նույնիսկ գորգագիտությունն անմասն չի մնացել քաղաքականացված լինելուց, ինչն էլ ավելի է սրում նմանօրինակ հետազոտությունների անհրաժեշտությունը մեզանում:

Բանալի բառեր՝ ճառագայթագարդ հորինվածք, Զրաբերդ, Չելբի, վիշապագորգ, ադրբեջանական պատմագրություն, մշակութային ժառանգության յուրացում, կեղծարարություն:

Պատմության նորագույն շրջանում ձևավորված պետությունը՝ Ադրբեջանը, մշակութային ինքնատիպության խնդիրն արհեստակա-նորեն առաջ քաշելով, մշակութային ժառանգության յուրացման փոր-ձերով ձգտում է հարևան ժողովուրդների՝ հայերի, իրանցիների, վրա-ցիների հաշվին կերտել սեփական մշակույթը:

Խեղաթյուրելով և շրջանցելով պատմական սկզբնաղբյուրների ակներև ու անվիճելի վկայությունները՝ Ադրբեջանը 2010 թվականին նույնիսկ հայտ է ներկայացրել ՅՈՒՆԵՍԿՕ և «ադրբեջանական» գոր-գագործությունը գրանցել է մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգություն՝ ներառելով նաև հայկական՝ մասնավորապես ար-ցախյան գորգերը¹:

Հայկական այդ գորգերը մասնագետների շրջանում հայտնի են «Ջրաբերդ»², «Խաչեն»³, «Չալաբերդ»⁴, «Արծվագորգ»⁵ և այլ անվանում-ներով:

Հողվածի աղբյուրագիտական հենքն են կազմում հայկական, եվրոպական, արևելյան աղբյուրները, ինչպես նաև՝ ասպարեզում առ-կա տարալեզու մասնագիտական գրականությունը: Օգտագործվել են նաև թեմայի վերաբերյալ ադրբեջանցի հեղինակների հետազոտու-թյունները՝ դրանցում եղած մշակութային ժառանգության յուրացման և պատմակեղծարարության դրսևորումները քննական վերլուծությամբ վերհանելու համար: Հայկական գորգարվեստի պատմական վկա-յությունների մասին մանրամասն ակնարկ են մեզ տալիս Յ. Քիր-տեանը՝ իր «Գորգը հայոց մօտ»⁶ աշխատության մեջ և Վ. Թեմուրճյանը՝ իր «Գորգագործությունը Հայաստանում»⁷ պատմաագագրական

¹ Traditional art of Azerbaijani carpet weaving in the Republic of Azerbaijan, <https://ich.unesco.org/en/RL/traditional-art-of-azerbaijani-carpet-weaving-in-the-republic-of-azerbaijan-00389> (02.17.2024); <https://ich.unesco.org/doc/src/07460-EN.pdf> (02.17.2024):

² Պողոսյան Ա., «Ջրաբերդ» խմբին պատկանող գորգերի ծագումնաբանական և տիպաբանական հարցերի մասին, Գիտական հոդվածների ժողովածու, Գավառի պետական համալսարան, 2018, 4, էջ 226-243:

³ Թաթիկյան Վ., Արցախի տոհմագորգերը, Երևան, 2004, էջ 22:

⁴ Ղազարեան Մ., Հայկական գորգ, Ֆիլիանդիա, 1988, էջ 22:

⁵ Նույն տեղում: Տե՛ս նաև՝ Թաթիկյան Վ., Արցախի տոհմագորգերը, Երևան, 2004, էջ 22:

⁶ Քիրտեան Յ., Գորգը հայոց մօտ, Վենետիկ, Մխիթարյան տպ., 1947, էջ 25-55:

⁷ Թեմուրճյան Վ., Գորգագործությունը Հայաստանում, Երևան, 1955, էջ 19-48:

ուսումնասիրությունում՝ մեջբերելով արաբական, բյուզանդական, պարսկական և այլ աղբյուրներ:

Արցախյան գորգագործության մասին մեզ հայտնի վաղագույն տեղեկությունները փոխանցել է Մովսես Կաղանկատվացին: Աղվանից Ջվանշիր իշխանի սպանության համար վրեժխնդիր լինելու նպատակով իշխանի քեռորդին վերցնում է հիսուն մարդ և գնում Արցախում գտնվող ոճրագործի հոր տուն, ավերում այն՝ վերցնելով նաև «մետաքսահյուս կերպաս դիպակներ, գույնզգույն կարպետներ»¹:

Տիպաբանական համակարգում գորգերի տեսակների դասակարգման մի քանի տարբերակ կա. դրանցից մեկն այն շրջանի կամ բնակավայրի անունով կոչելն է, որին առավել բնորոշ է տվյալ տիպը, իսկ մյուս դեպքում՝ օրինակ, գորգն անվանում են ըստ հորինվածքի և զարդաձևի:

Ադրբեջանցի հեղինակները գորգի «Ջրաբերդ», իսկ արաբապարսկական ձևով հայտնի՝ Ջալբերդ անվանումը հմտորեն փոփոխել են՝ դարձնելով «Չելեբի»: Ադրբեջանի ԳԱԱ Ճարտարապետության և արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող Թելման Իբրահիմովը, հիմնվելով այն տեսակետի վրա, համաձայն որի՝ Հարավային Կովկասի տեղանունները շատ դեպքերում ունենում են էթնոտոն բնույթ, այսինքն՝ երբ որևէ գյուղի կամ շրջանի անունը կրում է ցեղի, տոհմի կամ համայնքի անունը: Թելման Իբրահիմովը չի բացառում այսպես կոչված չելեբի գորգերի դեպքը՝ դրանց հայրենիքը համարելով «Չելեբի երկու գյուղերը, որոնք գտնվում են Ղարաբաղի Ջաբրայիլի² և Բարդայի³ շրջաններում»: Ըստ վերոնշյալ հեղինակի՝ այդ շրջանների գյուղական համայնքի հիմքն ի սկզբանե եղել է Չելեբի անվանումով տոհմը⁴:

Ըստ Թելման Իբրահիմովի՝ «Չելեբի» գորգի անվանման «Ջրաբերդ» փոփոխությունը նպատակ ունի կապել գորգի ծագումը Լեռնային

¹ Կաղանկատվացի Մ., Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969, էջ 175:

² Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 4, Երևան, 1998, էջ 374:

³ Դիլբարյան Ն., Հայոց տեղանունների բառակազմական բնութագիրը, 2022, էջ 19: Ջրական, քաղված է՝ https://las.sci.am/docs.php?file_id=82 (07.09.2024):

⁴ Ibrahimov T., Karabakh carpet Chelebi (Sunburst, Jelaberd). The origin of the carpet and the symbolism of its motives, p. 2.

Ղարաբաղի տարածաշրջանի «հորինված և հայկականացված անվան հետ»¹:

Փաստորեն՝ Թեյման Իբրահիմովը, կեղծելով իրական փաստերը, համարում է, թե «Ջրաբերդ» անվանումը հայտնվել է միայն քսաներորդ դարի վերջերին՝ Արցախի Հանրապետության գոյության տարիներին՝ որպես հայկական «նոր տեղանուն»²: Իբրահիմովը, պատմական աղբյուրների և սկզբնաղբյուրների փոխարեն, իր խոսքերը փորձում է հիմնավորել՝ հենվելով հիմնականում Ա. Ս. Պիրալովի և Մ. Դ. Իսակի ուսումնասիրությունների վրա, որտեղ հեղինակները տեղեկություններ են հաղորդում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Հարավային Կովկասի բնակավայրերում գորգերի արտադրության մասին: Իբրահիմովը նշում է նաև, որ Ջրաբերդը չի հիշատակվում որպես շրջան կամ բնակավայր³: Այնինչ պատմական տարալեզու աղբյուրները խոսում են ուղիղ հակառակի մասին. օրինակ՝ տասնհինգերորդ դարի իրանցի պատմիչ Ֆազլուլլահ Ռուզբիհան Խունջին բերում է Ջրաբերդի արաբականացված Ջալբերդ անվանումը⁴: Համանուն ամրոցի մասին հիշատակություններ ենք հանդիպում նաև Մովսես Կաղանկատվացու աշխատության մեջ: Անդրադառնալով Աղվանից Վիրո կաթողիկոսի (596–629 թթ.) կողմից իր մոտ Աղվանքի մեծամեծերին՝ աշխարհիկ և հոգևոր ներկայացուցիչներին, ժողովելու դեպքերին՝ նա նշում է, որ վերջիններս այդ ժամանակ գտնվում էին Չարաբերդ, նույն է թե՛ Ջրաբերդ ամրոցում⁵:

Կարող ենք արձանագրել, որ Թեյման Իբրահիմովի պնդումը առ այն, որ Ջրաբերդ տեղանունը հորինված և հայկականացված է, պարունակում է հակազիտականության ակնհայտ տարրեր: Հավելենք նաև, որ Իբրահիմովի կողմից օգտագործված Ե. Զեդգենիձեի,

¹ Նույն տեղում, էջ 1:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ Persia in A.D. 1478-1490: An Abridged Translation of Fadlulläh b. Rüzbihan Khunji's TÄRIKH-I ÄLAM-R-YI MINI" by V. Minorsky, p. 71.

⁵ Կաղանկատվացի Մ., Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969, էջ 121:

Ս. Ջոհրաբբեկովի, Հ. Տեր Եգիզարովի¹, Ա. Ս. Պիրալովի² և Ս. Դ. Իսաևի³ աշխատություններում այդքան շատ արծարծվող Չելեբի անվանումը նույնպես չի հիշատակվում որպես տեղանուն, շրջանի կամ բնակավայրի անվանում: Դա խոսում է նրա մասին, որ 19-րդ դարում գյուղը նոր էր սկսել ձևավորվել, դրա մասին են վկայում նաև Այսրկովկասի վիճակագրական կոմիտեի⁴ կողմից 1898 թվականին հրատարակված մարդահամարի վիճակագրական տվյալները, համաձայն որոնց՝ այդտեղ՝ պետական հողերի վրա (казенные земли), ապրում էր ընդամենը յոթ թաթարական ծովա⁵:

Ջրաբերդ գորգի զարդանախշերի մեկնաբանության հարցի շուրջ

13-րդ դարի հայ պատմիչ և եկեղեցական գործիչ Ստեփանոս Օրբելյանի գրի առած ժողովրդական մի ավանդազրույց բավական հետաքրքիր տեղեկություններ է պարունակում գորգի զարդաձևերի խորհրդանշական իմաստի վերաբերյալ, ինչը կարող է օգտակար լինել «Ջրաբերդ» տիպի գորգի զարդանախշերի ուսումնասիրության տեսանկյունից⁶:

Ըստ ավանդազրույցի՝ Արցախի Դլեն իշխանի (հիշատակվում է 1046 թվականին՝ որպես Խաղբակյան կամ Պռոշյան իշխանական տոհմի ներկայացուցիչ) որդին մահացել էր: Նրան այդ օրը հյուրընկալվում է «անծանոթ աշխարհից» մի ճգնավոր, որի պարկում Քրիստոսի խաչափայտի մասունքը պարունակող մի տուփ էր: Տուփը դրվում է մահացած մանկան սնարի մոտ, և առավոտյան նա արդեն ողջ-առողջ խաղում էր պարկի հետ: Ճգնավորը, եղելությունն իմանալով, փախուստի է դիմում, Դլենն իր ծառաներով ընկնում է նրա

¹ Зедгенидзе Я., Зохранбеков С., Егизаров А., Производство ковров и паласов в Шуше. Сборник материалов для описания местностей и племен Кавказа, Вып. XI., 1891, с. 1-79.

² Пиралов А.С., Краткий очерк кустарных промыслов Кавказа, Санкт-Петербург, 1913.

³ Исаев М.Д., Ковровое производство Закавказья, Тифлис, 1932.

⁴ Այսրկովկասի վիճակագրական կոմիտեն Ռուսական կայսրության վարչական կառուցվածքի մի մասն էր, որը պատասխանատու էր այդ տարածաշրջանում վիճակագրական տեղեկատվության հավաքագրման և վերլուծության համար:

⁵ Статистических данных о населении и закавказского края, Тифлис, 1898, с. 238.

⁶ Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն ևահանգիւն Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 485:

ետևից: Հետապնդումից ազատվելու համար հալածականը նախ դեն է նետում տուփը՝ մասունքը թաքցնելով հագուստի մեջ: Տուփը տեսնում են ձյան ու սառույցների մեջ՝ փթթած գեղեցիկ ծաղիկներով ու պատած սաղարթներով (գորգի առաջին խորհրդանշանի մեկնաբանություն): Տուփը դատարկ գտնելով՝ Դեն իշխանը շարունակում է հետապնդել ճգնավորին, ով զայրանալով գետն է գցում խաչափայտի մասունքը: Այն փնտրելով՝ տեսնում են գետը՝ երկու մասի ճեղքված (երկրորդ խորհրդանշան), մասունքն էլ ցամաքած տեղում, որից «բորբոքված բոց էր ցլանում դեպի վերև, զարմանալի բույր էր թանձր ծխի պես տարածվում շրջակայքում» (գորգի երրորդ խորհրդանշան): Նման ավանդազրույցը կարող էր հանգեցնել հեթանոսական ժամանակներից ավանդաբար գործվող վիշապագորգերի հորինվածքի վերածնունդը¹:

Հայ ուսումնասիրողները Ջրաբերդ գորգը համարում են անցումային գորգ՝ նշելով, որ 17-րդ դարում վիշապագորգերը կորցնում են իրենց դասական տեսքը և տրոհվելով սկիզբ են դնում մի քանի այլ տիպերի: Դրանց թվում են նաև Ջրաբերդը կամ Արծվագորգը²:

Ըստ մեկ այլ հիմնավոր տեսակետի՝ Ջրաբերդ տիպի գորգը վիշապագորգի ուղիղ շարունակությունն է: Հետաքրքրական է, որ վիշապագորգի հորինվածքի այս բաղկացուցիչ տարրը Խամսայի հինգ մեղիքություններից Ջրաբերդի մեղիքության զինանշանն է եղել: Այդ մեղիքության անկումից հետո էլ գորգի անունը պահպանել է այդ կարևոր հիշողությունը³:

Ադրբեջանցի հեղինակները գորգի սիմվոլիկայի վերաբերյալ «հետաքրիր» մեկնաբանություն են տալիս՝ այն կապելով սուֆիզմի հետ, ըստ որի՝ «Չելեբի» գորգերի առաջին հյուսողները եղել են սուֆիները և ի սկզբանե «Չելեբի» անվան տակ մեկվեվի սուֆիական միաբանության անդամներին էին հասկանում⁴:

Ըստ Թելման Իբրահիմովի՝ սուֆի-չելեբիի հոգևոր որոնումների վերջնական նպատակը մարմնում բանտարկված աստվածային

¹ Թաթիկյան Վ., Արցախի տոհմագորգերը, Երևան, 2004, էջ 29:

² Ղազարեան Մ., Հայկական գորգ, Ֆիլիանդիա, 1988, էջ 22: Թաթիկյան Վ., Արցախի տոհմագորգերը, Երևան, 2004, էջ 22:

³ Պողոսյան Ա., Վիշապագորգեր. Հայկական գորգարվեստի գանձանակը, Հայրենիքի Չայն, No44, 1984:

⁴ Ibrahimov T., Sufi confesion "Chelebi" and their famous Karabakh carpet, 2020, p. 1.

ոգու ազատումն էր նյութական «շղթաներից», ինչպես նաև Աստծո կողմից տրված նախնական վիճակի ու որակների վերականգնումը: Չելեբի ջուլիակի առեղծվածային ճանապարհորդությունն ու հոգևոր զարգացումն ավարտվում է առեղծվածային էքստազով, որը խորհրդանշվում է սուրբ լույսի բռնկումով: Ըստ հեղինակի՝ այդ հոգևոր էքստազը խորհրդանշական կերպով արտացոլված է Չելեբի գորգի մեղալիոնում¹:

Ըստ էության՝ ակնհայտ է դառնում, որ ադրբեջանական մշակութային գիտակցության մեջ «Չելեբի» գորգի սիմվոլիկան գերազանցում է դրա զուտ ազգագրական և արհեստագործական նշանակությամբ: Գորգի կենտրոնական մեղալիոնը համարվում է «միստիկական հայելի», որը արտացոլում է ջուլիակ-չելեբիի հոգեվիճակը:

Գորգի սիմվոլիզմի վերաբերյալ ադրբեջանցի հեղինակների մեկնաբանությունը, մասնավորապես այն ասոցացնելը սուֆիզմի հետ, մշակութային հեգեմոնիա հաստատելու և պատմական նարատիվները ազգայնական օրակարգերին համապատասխան վերաշաբաղդելու փորձերի ևս մեկ օրինակ է:

Ջրաբերդ տեսակի գորգերի վերաբերյալ տեսակետների համեմատական վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ ադրբեջանական մեկնաբանությունը քննական վերլուծության խստագույն կարիք ունի:

Այնուամենայնիվ՝ պետք է նշել, որ ադրբեջանական տեսակետը զգալի տարածում է ստացել և օտարազգի հետազոտողին կարող է հավաստի թվալ, եթե անտեսենք մեկ կարևոր գործոն, որ նման գորգերի ձևավորման համար անհրաժեշտ է տևական մշակութային և գորգագործական մշակույթի զարգացման դարավոր ընթացք, որոնց արդյունքում էլ կարող էին ձևավորվել նման բազմաշերտ խորհրդաբանություն ունեցող և բարձր վարպետություն պահանջող գորգեր: Հայ ուսումնասիրողներն ի ցույց են դնում այդ տիպի գորգերի զարգացման հնարավոր ամբողջական պատկերը՝ հիմնվելով նաև վիշապի պաշտամունքի հնագույն պատկերացումների վրա: Ինչպես նշել է Ս. Հարությունյանը՝ «զարմանալիորեն նկատում եմ, որ Վիշապամարտի առասպելը մեր ցեղի արյան մեջ նստած ու քաղցկեղի նման տարածված

¹ Ibrahimov T., Karabakh carpet Chelebi (Sunburst, Jelaberd). The origin of the carpet and the symbolism of its motives, 2020, p. 5.

է տարբեր դրսևորումներով»¹: Ինչ վերաբերում է վիշապ-քարակոթողներին, ապա վաղուց հայտնի է, որ դրանք էնդեմիկ են Հայկական լեռնաշխարհում և վիշապի, կրակի, արևի ու ջրի պաշտամունքի հետ կապված մեր հնագույն պատկերացումների արգասիքն են²:

Ե. Զեդգենիձեի, Ս. Զոհրաբբեկովի և այլոց տեսակետը, որ հայերը գորգարվեստը վերցրել են (կովկասյան) թաթարներից, ուղղակի անհիմն է: Ակնհայտ է, որ հայ գորգարվեստն իր ակունքներով հասնում է առնվազն մ.թ.ա. երկրորդ հազարամյակ, ինչի վերաբերյալ պահպանվել են հնագիտական, պատկերագրական որոշ նյութեր, ուրարտական ժամանակաշրջանից գորգագործությանն առնչվող աշխատանքային տարբեր գործիքներ, գործվածքի պատառիկներ:

Եզրակացություն

Այսպիսով՝ հիմնվելով պատմական աղբյուրների և հայ գորգագետների ուսումնասիրությունների վրա՝ ակնհայտ է դառնում, որ վերոհիշյալ Զրաբբեդ գորգերը դասական Վիշապագորգի զարգացումն են: Հայկական աղբյուրները ցույց են տալիս զարգացման հետագիծն ու ընդգծում արցախյան գորգերի և դրանց պատմական խոր արմատավորված կապը հայկական այլ գորգերի հետ: Սա խոսում է հայոց մեջ գորգագործության և վերջինիս սիմվոլիկայի անընդհատականության մասին:

Ներկայացված ադրբեջանական տեսակետները գորգերն ու դրանց խորհրդանշական նշանակությունը փորձում են կտրել հայկական մշակութային աշխարհից և դրանք վերափոխելով՝ ներկայացնել ադրբեջանական մշակույթի համատեքստում: Գորգերը վերաիմաստավորելու միջոցով դրանք ադրբեջանականացնելու այս միտումնավոր փորձերը վկայում են մշակութային յուրացման և պատմական ճկուն հարմարման ակնհայտ դրսևորումներից մեկի մասին:

¹ Հմայակյան Հ., Չրույցներ հայ մշակույթի մասին, «Նորավանք» ԳԿՀ, 2008, էջ 13:

² Ավելի մանրամասն տե՛ս Եսայան Ս., Նորից վիշապ կոթողների մասին, Բանբեր Երևանի համալսարանի, 2 (56), 1985, էջ 79-93, http://www.old.yasu.am/files/09S_Yesayan.pdf (07.09.2024):

MELINE MATEVOSYAN

*ISEC NAS RA, Department of Oriental Studies,
Email: meline.matevosssyan@gmail.com*

**THE ISSUE OF THE ORIGIN OF THE ARTSAKH
JRABERD CARPET**


Keywords: *Radiating pattern, Jraberd, Çelebi, Dragon-patterned carpet, Azerbaijani historiography, cultural heritage appropriation, falsification.*

In recent years, studies of the cultural heritage of the South Caucasian region have resulted in growing controversies, particularly concerning the traditions of carpet weaving and their origins. Research and perspectives on the Azerbaijani carpet are no exception as those analyses often include historical falsifications and reveal a clear tendency to appropriate the culture of other nations. The precise roots of the carpet-weaving tradition and its historical development remain subjects of ongoing scholarly debate and discussion. Within this discourse, Azerbaijani perspectives on Artsakh-type carpets have not yet been thoroughly examined or critically addressed by Armenian carpet researchers. The discussion of these views would not have been as relevant if they had not become so widespread and exhibited clear tendencies toward anti-Armenian bias and pseudoscientific claims. It can be stated that today even the field of carpet studies has been politicized, which further underscores the need for such research in our academic community.

Հայաստանի պատմության թանգարանի նյութեր



1. Գործվածքի հատված, Ք.ա. 13-12 դդ., Արթիկ, բուրդ



2. Իլիկի գլուխներ, Ք.ա. 12-8 դդ.

1. Մանածագործական գործիք, Ք.ա. 11-10 դդ., Հառիճ
2. Ասեղաման, Ք.ա. 11-7 դդ., Կարճաղբյուր
3. Ասեղներ, Ք.ա. 10-8 դդ., Կարճաղբյուր, Շնող
4. Զարդարուն մանածագործական գործիք, 11-12 դդ., Դվին
5. Մանածագործական գործիք, 11-12 դդ., Դվին



Կարպետի հատված, 13-րդ դ., Անի, բուրդ
Հայտնաբերվել է Անիի մեծահարուստ Տիգրան Հոննեցի՝
Ծաղկոցաձորի ընտանեկան քարայրային դամբարանում



1. Իլիկ, 19-րդ դ. վերջ, Մեղրի, Սյունիք, փայտ
2. Իլիկ, 20-րդ դ. սկիզբ, Լոռի, փայտ
3. Սանր, 19-րդ դ., Մեղրի, փայտ
4. Մկրատ, 19-րդ դ. վերջ, Արցախ, մետաղ
5. Կտուտիչ, 19-րդ դ. վերջ, Արցախ, մետաղ
6. Կեռ-Դանակ գորգագործի, 20-րդ դ. կեսեր, Երևան, պողպատ, այլումին, փայտ
7. Կտուտիչ, 19-րդ դ. վերջ, Սյունիք, եղջյուր
8. Կտուտիչ, 20-րդ դ. սկիզբ, Սիսիան, Սյունիք, եղջյուր, մետաղ
9. Կտուտիչ, 20-րդ դ. սկիզբ, Սիսիան, Սյունիք, մետաղ



Նկար 1.

Ձևարձակ վահաններով Արծվագորգ, 16-րդ դարի սկիզբ,
Սյունիք, բուրդ



Նկար 2.

Ջրաբերդի գորգ, 20-րդ դ. սկիզբ, Արցախ-Սյունիք, բուրդ,
Ջրաբերդի տիպի վիշապագորգը հայտնի է նաև Արծվագորգ անվամբ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԸ՝ ՈՐՊԵՍ ԱՂԻՔԵՋԱՆԱԿԱՆ
ՔԱՐՈՋՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԹԻՐԱԽ**

Հոդվածի նպատակն է՝ բացահայտել և մատնանշել Աղբրեջանի պատմագրության և քարոզչության այն ուղղությունները, որոնք միտված են Երևանի պատմության, մշակութային ժառանգության և ժողովրդագրական պատկերի խեղաթյուրմանը: Հոդվածը վեր է հանում այն մեխանիզմները, որոնց միջոցով հարևան պետությունը փորձում է ձևավորել «Արևմտյան Աղբրեջանի» գաղափարական հենքը:

Անդրադարձ է կատարվել նաև Երևանի հիմնադրման և անվան ստուգաբանության հարցերին, միջնադարյան ժողովրդագրական պատկերի վերլուծությանը, ինչպես նաև՝ քաղաքի մշակութային ժառանգության, հատկապես՝ Կապույտ մզկիթի և Կոնդի թաղամասի աղբրեջանականացման փորձերին: Հետազոտության արդյունքում ընդգծվում է, որ Երևանի վերաբերյալ աղբրեջանական պատմագրության ձևակերպած պնդումները չունեն գիտական հիմք և ծառայում են միայն քաղաքական նպատակների իրականացմանը:

Քանալի բառեր՝ Երևան, Աղբրեջան, պատմական կեղծարարություն, Կապույտ մզկիթ, Կոնդ, քարոզչություն:

Թեմայի կարևորությունը պայմանավորված է նրանով, որ սկսած 2021 թ.-ից՝ Աղբրեջանն ակտիվորեն սկսել է տարածել «Արևմտյան Աղբրեջանի» գաղափարը՝ թիրախավորելով ներկայիս ՀՀ տարածքը, որի հանդեպ իր նկրտումները փորձում է ամրագրել՝ կեղծ պատմական, ժողովրդագրական «փաստարկներ» մեջբերելով, աղավաղելով արխիվային տվյալները¹ և ստեղծելով արհեստական կառույցներ

¹ По поводу заявлений Азербайджана о мечетях Еревана и письма, адресованного

և միություններ, ինչպիսիք են՝ 2022 թ. գրանցված «Արևմտյան Ադրբեջանի համայնքը», 2024 թ. մայիսին Բաքվում բացված «Արևմտյան Ադրբեջան» պետական հեռուստատեսությունը¹, 2023 թ. հոկտեմբերին Բաքվի պետական համալսարանում բացված «Արևմտյան Ադրբեջան»-ի² և Ադրբեջանի մանկավարժական համալսարանում հիմնադրված Արևմտյան Ադրբեջանի ուսումնասիրությունների կենտրոնները (ԱԱՌԻԿ)³:

Ադրբեջանական պատմագրության վերլուծության արդյունքում առանձնացնում ենք մի քանի հիմնական ուղղություններ, որոնք բնութագրվում են փաստերի միտումնավոր խեղաթյուրմամբ և պատմական ժառանգության յուրացման փորձերով:

Երևան քաղաքի հիմնադրումը և անվան բացատրությունը

Ամենատարածված տեսակետը, որը շրջանառվում է Ադրբեջանում, այն է, թե իբր Երևանը հիմնել են ադրբեջանցիները: Նկատի ունեն Սեֆյան տոհմի կառավարիչներին⁴ փաստ ընդունելով միայն թուրք ճանապարհորդ Էվլիյա Չելեբիի ուղեգրությունում տեղ գտած այն հատվածը, թե Իսմայիլ շահը հրամայեց վեզիր Ռևան Կոլ խանին բերդ կառուցել⁵: Այս հատվածը հնարավորություն է տվել ադրբեջանցիներին պնդելու, թե իբր ժամանակակից Երևանը կառուցվել է ամրոցի

ЮНЕСКО, <https://monumentwatch.org/ru/alerts/по-поводу-заявлений-азербайджана-о-ме/> (21.04.2025).

¹ Состоялось открытие здания Телевидения Западного Азербайджана, 01.05.2024, https://azertag.az/ru/xeber/sostoyalos_otkrytie_zdaniya_televideniya_zapadnogo_azerbaidzhana-2981368 (18.04.2025); <https://geghard-saf.am/147>.

² В Бакинском государственном университете создан Центр исследований Западного Азербайджана, 27.10.2023, https://azertag.az/ru/xeber/v_bakinskom_gosudarstvennom_universitete_sozdan_centr_issledovanii_zapadnogo_azerbaidzhana-2804464 (18.04.2025).

³ Növbəti hədəfimiz Qərbi Azərbaycan qayıdır, 21.04.2025, <https://www.xalqcebhesi.az/news/interview/209531.html> (16.05.2025).

⁴ Ст'u Абдуллаев Р., Вырезанное Сердце Еревана, 01.01.2012, <https://regionplus.az/ru/articles/view/2974> (18.04.2025).

⁵ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Հ. 4, Թուրքական աղբյուրներ, Հ. Գ, Էվլիյա Չելեբի, կազմ.՝ Ա.Խ. Սաֆրաստյան, Երևան, 1967, էջ 81:

ավերակների վրա¹, և իբր աղբյուրներում և արխիվային նյութերում երևանի մասին որևէ վաղ հիշատակություն չկա²:

Հետաքրքիր է, որ ըստ Էվլիյա Չելեբիի՝ Երևանը կառուցվել է 1412 թ.: Ակնհայտ է, որ այդ պատմությունը հավաստի չէ, քանի որ 1502–1524 թթ. իշխած շահ Իսմայիլ Ա–ն մեկ դար առաջ բերդ կառուցելու հրաման արձակել չէր կարող, իսկ հնուց անտի գոյություն ունեցող անվանումը ոմն խանի անունից բխեցնելը Էվլիյա Չելեբիի՝ սխալմամբ կատարած եզրահանգումն է, երբ անուն ստացողը վերածվել է անուն տվողի: Եվ Ռևան խան կնշանակի պարզապես «Երևանի խան»³: Հ. Փափա–գյանն էլ նշում է, որ այստեղ տեղանունը սխալմամբ դիտված է որպես անձնանուն⁴: Բացի այդ՝ նույն Էվլիյա Չելեբիի մոտ հիշատակվում է, որ 810 թվականին (1407 թ.) Էմիր Թիմուրի վաճառականներից մեկը՝ Խոջա–խան Լեհազանին, «ոտք դրեց Երևանի հողի վրա» և, տեսնելով պտղաբեր երկիր, բնակվեց այստեղ⁵: Այս հատվածը արդեն հակասում է վերոնշյալ տեսակետին, քանի որ վկայում է, որ բնակավայրը գոյություն է ունեցել մինչ այդ:

Սակայն պակաս հետաքրքիր չէ այն փաստը, որ աղբյուրներից հեղինակները նույնպես հակասում են միմյանց՝ չկարողանալով հարցի շուրջ ընդհանուր տեսակետի գալ: Ն. Մուստաֆան պնդում է, որ քաղաքը հիմնադրվել է 1441 թվականին՝ Ջահան շահի օրոք⁶: Մեկ այլ հեղինակ՝ Իբրահիմ Բայրամովը, փորձելով ապացուցել, որ աղբյուրներից տարածաշրջանի հին ժողովուրդներից են, պատահաբար մոռացության է մատնել իր իսկ հայրենակիցների առաջ քաշած տեսակետները և մեջբերել է «Գիրք թղթոց»–ից հատված⁷, որտեղ 607

¹ İrəvanın tarixi mərkəzi hara yoxa çıxıb, 22 oktyabr 2018, <https://www.ens.az/az/irevanin-tarixi-merkezi-hara-yoxa-cixib> (16.05.2025).

² Абдуллаев Р., Вырезанное Сердце Еревана, 01.01.2012, <https://regionplus.az/ru/articles/view/2974> (18.04.2025).

³ Եղիազարյան Ա., Երևանի միջնադարի ու Նոր ժամանակների պատմությունը և աղբյուրների կեղծարարությունը, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2023, էջ 76:

⁴ Փափագյան Յ., Հոդվածներ, Երևան, Մատենադարան, 2020, Հատոր Բ, էջ 7:

⁵ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Հ. 4, Թուրքական աղբյուրներ, Հ. Գ, Էվլիյա Չելեբի, կազմ.՝ Ա.Խ. Սաֆրաստյան, Երևան, 1967, էջ 81:

⁶ Mustafa N., Qədim Azərbaycan şəhəri İrə van. «Məktəbəqədər və ibtidai təhsil», Xüsusi buraxılış – İrəvan Mülətimlər Seminariyası, 2 (2022), səh. 12.

⁷ Bayramov İ., İrəvan şəhəri və onun tarixi haqqında, 08.06.2022, <https://web.archive>.

թ. փաստաթղթերից մեկում հաղորդվում է երևանցի հոգևորական Դանիելի մասին, որը Դվինի ժողովի ժամանակ Աբրահամ կաթողիկոսի հորդորով մերժել է քաղկեդոնական դավանանքը¹:

Բացի դրանից՝ պատմական աղբյուրները հազեցած են Երևանի մասին հիշատակություններով. օրինակ՝ Երևանը հիշատակվում է արաբական արշավանքների ժամանակ՝ 7-րդ դարի 30-ական թվականներին²: Վարդան վարդապետի՝ 7-րդ դարի «Աշխարհացոյց»-ից հայտնի է, որ Երևանը Կոտայք գավառի կենտրոնն էր³: Ստեփանոս Օրբելյանը հայտնում է, որ Մաքենյաց վանքին այգիներ են նվիրաբերել Երևանում⁴, իսկ 1336 թ. Տերտեր Երևանցու ձեռագիր հիշատակարանում ասվում է. «Ի քաղաքէն այն պատուական, Որ իր անունն է Երևան»⁵:

Երևանի մոնղոլական շրջանի տերերից հիշատակվում է հայ Սահմադինը: 1261 թ. արձանագրության համաձայն՝ նա դարձել էր Անիի ավագներից մեկը, իսկ դրանից երեք տարի անց՝ 1264 թ., զնել է Երևան քաղաքը և այն դարձրել իր կալվածքը⁶: XIV դ. Երևանի կարևորության մասին պատկերացում կազմելու համար հույժ հետաքրքրական է այն իրողությունը, որ եթե նախկինում քաղաքում գործածական էին այլ վայրերում հատված դրամները, ապա այժմ ոսկյա և արծաթե դրամներ են հատվում հենց Երևանում: Ոսկյա առաջին դրամը Երևանում հատվել է 1333 թվականին, իսկ արծաթե դրամները՝ սկսած 1344 թվականից: Երևանի՝ սեփական դրամահատարան ունենալը ցույց է տալիս նրա՝ Հայաստանի քաղաքական և հատկապես առևտրատնտեսական կյանքում ունեցած կարևորությունը: Հետաքրքրական է նաև այն, որ

org/web/20230505173657/https://1905.az/ir%C9%99van-s%C9%99h%C9%99ri-v%C9%99-onun-tarixi-haqqinda/ (16.05.2025).

¹ Фальсификация истории: «Возвращение Еревана» - циничный бред или воинствующая глупость Алиевых, апреля 05, 2018, https://fakebaijan.blogspot.com/2018/04/blog-post_5.html (21.04.2025).

² Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Յ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևան, 1988, էջ 216:

³ Եղիազարյան Ա., Երևանի միջնադարի ու Նոր ժամանակների պատմությունը և աղբյուրագրական կեղծարարությունը, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2023, էջ 63:

⁴ Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, 1850, Փարիզ, էջ 223:

⁵ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ: Նյութեր հայ ժողովրդի պատմության, Գ. 2., Կազմ.՝ Լ.Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 288:

⁶ Եղիազարյան Ա., Երևանի միջնադարի ու Նոր ժամանակների պատմությունը և աղբյուրագրական կեղծարարությունը, Գիտական հոդվածների ժողովածու, էջ 67:

Երևանում հատվել են դրամներ «Հանուն հօր և որդույ և հօգույն Սրբոյ, Միակ» մակագրությամբ¹:

Քաղաքի անվան հետ կապված՝ ադրբեջանցիները պնդում են, որ Երևան տեղանունը առաջացել է *Ir/ə* մասնիկից և *van* պարսկերեն բառերից, ինչը նշանակում է խիզախ տղամարդկանց երկիր, նաև *ə* համարում են հին թյուրքական ծագման բառ, որը նշանակում է «երկրի այն կողմը, որը դեպի արևն է նայում», և վերջում եզրահանգում, որ ավելի ճիշտ կլինի *Ir* մասնիկը կապել աստվածությունների հետ²: Մեկ այլ ադրբեջանցի հեղինակ փաստում է, որ *yer*, *ə*, *an/van/yan/qan* ձևաբանական մասնիկներ են, որոնք արտահայտում են հավաքականություն³: Սակայն *ə* մասնիկը ունի մոնղոլական ծագում. *ere* նշանակում է տղամարդ⁴, արու⁵ քաջ⁶, իսկ ստուգաբանական բառարանների ուսումնասիրությունը փաստում է, որ այս մասնիկը թյուրքական լեզուներ անցում է կատարել մոնղոլերենից⁷: Հետևաբար՝ փաստել մի ստուգաբանական բացատրություն, որի մի արմատը մոնղոլական է, իսկ մյուսը՝ պարսկական, ու պնդել կապը ադրբեջանականի հետ, անհեթեթություն է:

Ադրբեջանցիները հաճախ մեջբերում են Ֆիլիպ Էկոզյանցի վերլուծությունները⁸. Նա Երևան քաղաքի հիմնադրման պատմության հիմք է ընդունում ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենի աշխատությունը: Շարդենը իր աշխատության մեջ անհիմն է համարում Երևանի անվան բացատրությունը Նոյ նահապետի ավանդազրույցի հետ կապելը

¹ Եղիազարյան Ա., Երևանի միջնադարի ու Նոր ժամանակների պատմությունը և ադրբեջանական կեղծարարությունը, էջ 70:

² İrəvan, <https://tarixinstitutu.az/page/103/irevan> (16.05.2025).

³ Siracoğlu R., İrəvanı bizdən alan, 2 İyun 2020, <https://modern.az/az/news/241990> (16.05.2025).

⁴ Поппе Н. Н., Грамматика письменно-монгольского языка Институт востоковедения Академии наук СССР И Ленинградский Восточный институт, Москва-Ленинград, 1937, с. 14.

⁵ Орловская М. Н., Очерки по грамматике языка древних монгольских текстов, Ин-т востоковедения РАН, Москва, 2010, с. 62.

⁶ Նոյն տեղում, էջ 97:

⁷ Санжеев Г. Д., Орловская М. Н., Шевернина З. В., Этимологический словарь монгольских языков: Институт востоковедения РАН. Гл. ред. Г. Д. Санжеев, ред. Л. Р. Концевич, В. И. Рассадин, Я. Д. Леман, Москва, том I, А–Е, 2015, с. 218.

⁸ Филипп Экозьянц: «Жан Шарден не нашел следов древности армян в Ереване», 27 ноя., 2025, <https://ru.irevanaz.com/index.php?newsid=5166> (21.04.2025).

և նշում է. «Ես նաև չեմ կարծում, որ այն կառուցվել է արաբների նվաճումներից առաջ... և ...ո՛չ քաղաքում, ո՛չ էլ շրջակայքում չկան մեծ հնության հետքեր...»¹: Այն, որ քաղաքը գոյություն է ունեցել վաղուց, մենք մեջբերեցինք տարբեր աղբյուրներ և փաստեր, իսկ ինչ վերաբերում է Նոյ նահապետի հետ կապված ավանդությանը, այստեղից հայերենում պահպանվել է երևնալ բայը (առանձին չի գործածվում, այլ *գալ, ելլել, հանել, բերել* բայերի հետ, օրինակ՝ երևան հանել, երևան գալ²) ի հայտ բերել, հանդես բերել, հայտնաբերել, հայտնագործել, հանդես գալ, ասպարեզ իջնել և այլ իմաստներով³:

Կրկին անդրադառնալով քաղաքի անվանը՝ նշենք, որ 1950 թ. Երևանի հարավում գտնվող Արին Բերդի պեղումների ընթացքում հայտնաբերվեց սեպագիր արձանագրություն, որի վրա գրված է. *«Խալդի աստծո զորությամբ Արգիշտին՝ Մենուայի որդին, այս անառիկ ամրոցը կառուցեց և անվանեց Էրեբունի՝ ի հզորություն Բիայնիլի երկրի և ի սարսափ թշնամի երկրների...»*⁴: Էրեբունին դարձել է Երևանի հնագույն միջուկը և պահպանվել դարերի ընթացքում կերպափոխված անվամբ Էրեբունի-Երեվունի-Երևան⁵:

Երևան քաղաքի մշակութային ժառանգության յուրացման փորձերը

Ադրբեջանական կողմը փորձում է նաև յուրացնել հարևան ժողովուրդների և երկրների հնագույն, էթնոպատմական և մշակութային ժառանգությունները:

1) Հենց այս համատեքստում նրանք թիրախավորում են նաև Հայաստանում թուրքմենների տիրապետության շրջանը⁶ փորձելով

¹ Chardin John, The travels of Sir John Chardin into Persia and the East Indies: the first volume, London: Printed for Moses Pitt in Duke-Street Westminster, 1686, p. 248.

² Հայոց լեզուի նոր բառարան, ՊԵՅՈՒԹ, 1992, էջ 565:

³ Արդի հայերենի բացատրական բառարան, Էդուարդ Բագրատի Աղայան, Երևան, 1976, էջ 342:

⁴ Adam T. Smith, “Yerevan, My Ancient Erebuni”: Archaeological Repertoires, Public Assemblages, and the manufacture of a (Post-)Soviet Nation. The Archaeology of Power and Politics in Eurasia: Regimes and Revolutions, Cambridge, 2012, p. 57.

⁵ Հովհաննիսյան Կ., Էրեբունիի որմանկարները, Երևան, 1973, էջ 9:

⁶ Кулиев Э., Разрушенные мечети Эривани, 25.07.2019, <https://e-minbar.com/kultura/razrushennye-mecheti-erivani> (18.04.2025).

կարա-կոյունլու ցեղային միության սաադլու ցեղը ներկայացնել ադրբեջանական¹:

15-րդ դարում Երևանը գտնվում էր սաադլու (ցեղապետ Ամիր-Սաադի անունով) ցեղի իշխանության ներքո: Հենց այդ ցեղի անունով էլ երկրամասը կոչվել է Չուխուր-Սաադ² (Սաադի փոս)³: Այդ անվանումը վերաբերել է շատ ավելի սահմանափակ մի շրջանի, սակայն երբ Սաադը, իսկ հետագայում նաև նրա որդիները ընդարձակել են իրենց տիրապետության սահմանները, «Չուխուր-Սաադ» անունը տարածվել է նրանց ենթակա ամբողջ երկրի կամ վիլայեթի վրա⁴: Հետաքրքիր է, որ XV դարի պատմաբան Թովմա Մեծոփեցին (1378–1446 թթ.), որը հայոց պատմության թմուրյան շրջանի հետ կապված իրադարձությունների ժամանակակիցն է, իր աշխատության մեջ չի հիշատակում Չուխուրսադ տեղանունը և Երևանն անվանում է գյուղատիպ⁵:

Չուխուրսադը, որը հետագայում դարձավ Սեֆյան պետության տասներեք բեկլարբեկություններից մեկը, փաստացի այն հիմքն էր, որի շուրջ հետագայում ձևավորվեց Երևանի խանությունը⁶:

Երևանի մոտակայքում՝ Արգավանդում է գտնվում սաադլու ցեղի Ամիր-Սաադի դամբարանը: Կոթողի բազմանիստ հատվածը կազմված է նուրբ մշակված կարմիր տուֆից, դամբարանի վրա, արաբերեն

¹ Иреванское ханство. Российское завоевание и переселение армян на земли Северного Азербайджана. Национальная Академия Наук Азербайджана Институт Истории Имени А. А. Бакиханова, Баку, 2010, с. 37.

² XVIII դ. առաջին կեսի պատմաբան Գրիգոր Կամախեցին (Դարանաղցի) հիշատակում է. «Եւ ի թվին ՌԾ և Թ(1610) էր, յորժամ գնացաք մեք ի Խախտեաց երկրէն ի յԱրարատեան գաւառին, որ այժմ *Սահաթի փոս* սաի ...»: Այսպես, Աբրահամ Երևանցու աշխատության մեջ, որը նվիրված է XVII դարի առաջին կեսի իրադարձություններին, մարզը կոչվում է «*Չուխուրի թաղամաս*» (*Ջուխուրցիներ*): Տէս Աкопян А., Варданян А., Наследие Кара-Коюнлу в Армении. Топоним Чухур-И Са'д и его нумизматическое отражение в XIX в., Культурное Наследие Евразии (с древности до наших дней), Алматы, 2016, с. 554.

³ Եղիազարյան Ա., Երևանի միջնադարի ու Նոր ժամանակների պատմությունը և ադրբեջանական կեղծարարությունը: Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2023, էջ 72:

⁴ Փափազյան Յ., Հոդվածներ, Երևան, Մատենադարան, 2020, հատոր Ա, էջ 131:

⁵ Աкопян А., Варданян А., Наследие Кара-Коюнлу в Армении. Топоним Чухур-И Са'д и его нумизматическое отражение в XIX в., Культурное Наследие Евразии (с древности до наших дней), Алматы, 2016, с. 554.

⁶ Նույն տեղում, էջ 557:

արձանագրություններից բացի, հայտնաբերվել են նաև հայերեն տառեր՝ «Ա», «Կ» և «Տ»: Այս ամենը պատահական չէ, քանի որ Հայաստանում մուսուլմանական ճարտարապետական կոթողներ ստեղծողները հիմնականում հայ վարպետներ են եղել², և սա վկայում է տեղական քրիստոնյա բնակչության և իշխող խավի միջև գոյություն ունեցած մշակութային փոխազդեցության մասին:

2) Հայաստանը պատմական տարբեր ժամանակաշրջաններում քաղաքական, առևտրատնտեսական և մշակութային առումով կապված է եղել հարևան Իրանի հետ: Երևան քաղաքը բացառություն չէ: Իրանական ճարտարապետությունն ու շինարարական արվեստը որոշակի ազդեցություն են ունեցել Երևանի ճարտարապետական տեսքի վրա³ հաշվի առնելով միջնադարյան քարավանատների կարևորությունը, որոնք քաղաքը վերածել էին առևտրի կենտրոնի Ռուսաստանի, Պարսկաստանի և Օսմանյան կայսրության միջև⁴:

Մինչ ֆրանսիացի ճանապարհորդ Ժան-Բատիստ Տավերնիեն Արարատյան հարթավայրը գովում էր որպես Պարսկաստանի լավագույն գավառներից մեկը⁵, իսկ 1701 թ. օգոստոսի 8-ին Երևան այցելած ֆրանսիացի ճանապարհորդ Ժ. Պ. Տուրնեֆորը այն հիշատակում է որպես «նշանակալի քաղաք և Պարսկական Հայաստանի մայրաքաղաք»⁶, ադրբեջանցիները փորձում են յուրացնել իրանական մշակութային կոթողները:

Ադրբեջանական քարոզչամեքենայի թիրախում հայտնվել է Երևանի պատմական Կոնդ թաղամասը և այնտեղ գտնվող մզկիթը: Վերջին

¹ Փափազյան Յ., Հողվածներ, Երևան, Մատենադարան, 2020, Հատոր Ա, էջ 186:

² Симонян А., Два вновь найденных мавзолея туркменских султанов кара-коюнлу в Армении (предварительное сообщение), 2001, с. 94.

³ Mirijanyan D., Harutyunyan A., Davtyan D., Grigoryan A., Babajanyan A., The Peculiarities of urban planning in Yerevan in the period of Iranian domination, 04.01.2023, <https://orbeli.am/en/post/1072/2023-01-04/The+Peculiarities+of+Urban+Planning+in+Yerevan+in+the+Period+of+Iranian+Domination> (11.03.2025).

⁴ Adam T. Smith, "Yerevan, my Ancient Erebuni": Archaeological Repertoires, Public Assemblages, and the manufacture of a (Post-)Soviet Nation, The archaeology of power and politics in Eurasia: Regimes and Revolutions, Cambridge, 2012, p. 65.

⁵ Նույն տեղում, p. 60.

⁶ Եղիազարյան Ա., Երևանի միջնադարի ու նոր ժամանակների պատմությունը և ադրբեջանական կեղծարարությունը: Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2023, էջ 162:

տարիներին Երևանի «ադրբեջանականացման» հարցերով զբաղվում է պատմաբան, հնագետ Սաբուհի Հուսեյնովը, որ պարբերաբար իր ֆեյսբուքյան էջում և հեռուստատեսությամբ հանդես է գալիս Երևանի անցյալի մասին իր դատողություններով¹ և եղած փաստերը, արխիվային նյութերը միակողմանի ներկայացնելով²: Նա 2024 թ. փետրվարին իր ֆեյսբուքյան էջում ավելի քան 12 գրառում է կատարել Երևան քաղաքի մշակութային ժառանգության մասին³: «Բաքու–Ջաբար» մեդիա խմբի ղեկավար, քաղաքագետ Այդին Գուլիևը նույնպես ֆեյսբուքյան իր էջում անդրադարձել է այս թեմային: Ա. Գուլիևը գրում է. «Երևանի քաղաքապետը «մեր հնագույն քաղաքի կենտրոն» համարվող «Թեփեբաշի» թաղամասը փոխել է «Կոնդ» և վաճառքի հանել քառակուսի մետրը 600 դոլարով... «Կուլտուրիցիդ», այսինքն՝ ցեղասպանություն ընդդեմ մշակույթի...»⁴:

Հուսեյնովը պնդում է նաև, որ Երևանի Կապույտ մզկիթը չի կարող իրանական լինել, իբր պատճառն այն է, որ Երևանում 1917 թ. ապրել է մոտ 100 պարսիկ, մինչդեռ 1831–1920 թթ. Երևանի բնակչության «մեծամասնությունը ադրբեջանցիներ» էին⁵: Ադրբեջանի խորհրդարանի պատգամավորներ Սուլթան Մամեդովը և Թաիր Միրքիշիլին, որոնք ժամանել էին Երևան՝ մասնակցելու «Եվրանեսթ» խորհրդարանական

¹ Hacıyev R., Ermənistanın İrəvanda azərbaycanlılara məxsus mədəni irsi məhv etdiyini peyk təsvirləri də sübuta yetirir, 31.01.2024, https://azertag.az/xeber/ermenistanin-irevanda-azerbaycanlilara-mexsus-medeni-irsi-mehv-etdiyini-peyk-tesvirleri-de-subuta-yetirir-arasdirma-2903242?fbclid=IwY2xjawKror1leHRuA2FibQlXMQA_BHjwiu3ClzrnF6JUAEGW8z_buRIL0DAwBfuu9Z1632VpEzbt-iwT_ocec7ILz_aem_bZC5Ga6hWXSoWt0alqz2rw (16.05.2025).

² По поводу заявлений Азербайджана о мечетях Еревана и письма, адресованного ЮНЕСКО, <https://monumentwatch.org/ru/alerts/по-поводу-заявлениу-азербайджана-о-ме/> (21.04.2025).

³ Տե՛ս ավելին Կոնդի մասին <https://www.facebook.com/share/p/15wDfEjdQg/>, Կապույտ մզկիթի մասին <https://www.facebook.com/share/p/1JLpVkbtttn/>, <https://www.facebook.com/share/14FaayFYquK/>, <https://www.facebook.com/share/p/1BgRqBkEUN/>, մոնղոլական դամբարանի մասին <https://www.facebook.com/share/p/1RdDHbqJyi/> (16.05.2025):

⁴ Sariyeva İ., İrəvanın Təpəbaşı məhəlləsinin satılması Azərbaycan mədəni irsinə qarşı cinayətdir..., 28.02.2024, <https://www.baki-xeber.com/siyaset/206708.html> (16.05.2025), Տե՛ս նաև 2024 թ. փետրվարի 27 հրապարակումը. <https://www.facebook.com/share/p/1Ah7tr6jFu/> (16.05.2025): Տե՛ս նաև <https://geghard-saf.am/543/kond-yerevan/>.

⁵ Азербайджанский историк считает «Голубую мечеть» Еревана азербайджанской, 05.07.2022, <https://radar.am/ru/news/social-2514026875/> (21.04.2025).

վեհաժողովի բյուրոների և կոմիտեների նիստերին, այցելել էին Երևանի պարսկական Կապույտ մզկիթ: Նրանք այն անվանել են ադրբեջանական մշակույթի միակ հուշարձան, որը պահպանվել է Երևանում¹. «Հուսով եմ, որ այս մզկիթի իրական տերերը շուտով կկարողանան այստեղ ադրբեջներ կատարել», – գրել է Թաիր Միրքիշիլին ֆեյսբուքյան իր էջում²: Այս ամենին եղավ Հայաստանում Իրանի դեսպանության կողմից համապատասխան արձագանքը՝ լուսանկարների հրապարակմամբ և գրառմամբ. «Պատմությամբ հետաքրքրվողները շատ լավ ընկալում են ավելի քան երկուհարյուրամյա վաղեմությամբ պարսկական արձանագրություններ ունեցող Կապույտ մզկիթի ճարտարապետության բարձր մշակութային արժեքը և ինքնությունը...»³:

Երևանի իսլամական հուշարձանների զգալի մասը կառուցվել է 17–19–րդ դարերում, երբ ամբողջ Արևելյան Հայաստանը գտնվում էր պարսկական տիրապետության տակ, իսկ Երևան քաղաքը պարսկական խանության կենտրոն էր: Երևանի մզկիթները պարսկական ճարտարապետության օրինակներ են, ուստի խոսել դրանց ադրբեջանական ճարտարապետության մասին ինքնին արդեն անհեթեթություն է⁴: Երևանի մզկիթներից շատերն ավերվել են 1679 թ. հզոր երկ-

¹ Ադրբեջանական կողմը նամակներ է ուղարկել միջազգային կառույցներ՝ ՀՀ տարածքում «ադրբեջանական» հուշարձանների մշտադիտարկման պահանջով: Վերջին նմանատիպ դիմումներից մեկը՝ բաց նամակը, ուղարկվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Օդրի Ազուլայի՝ 2024 թվականի մայիսի 7-ին: Ուղերձը ստորագրել են 102 գիտական և հասարակական գործիչներ: Նամակում նշված է, որ «Մենք՝ Ադրբեջանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներս», կոչ ենք անում ՅՈՒՆԵՍԿՕ-ին միջոցներ ձեռնարկել ՀՀ-ում ադրբեջանական ժողովրդի կյանքի և մշակութային ժառանգության ոչնչացումը դադարեցնելու համար»: Տե՛ս İrevanda Təpəbaşı məhəlləsində mədəni soyqırımınla bağlı UNESCO-ya müraciət ünvanlanıb, 06 iyul 2022, <https://apa.az/az/medeniyyet-siyaseti/irevanda-tepəbasi-mehellesinde-medeni-soyqirimla-bagli-unesco-ya-muraciet-unvanlanib-tam-metn-712138>, (16.05.2025), По поводу заявлений Азербайджана о мечетях Еревана и письма, адресованного ЮНЕСКО, <https://monumentwatch.org/ru/alerts/по-поводу-заявлений-азербайджана-о-ме/> (21.04.2025).

² Азербайджанские депутаты назвали персидскую мечеть в Ереване памятником азербайджанской культуры 23.02.2022, <https://armeniatoday.am/politics-ru/429736/> (20.04.2025). Տե՛ս նաև՝ <https://geghard-saf.am/111>:

³ Տե՛ս <https://armenpress.am/ru/article/1076339> (19.04.2025).

⁴ По поводу заявлений Азербайджана о мечетях Еревана и письма, адресованного ЮНЕСКО, <https://monumentwatch.org/ru/alerts/по-поводу-заявлений-азербайджана-о-ме/> (21.04.2025).

րաշարժի հետևանքով: Հստակ չէ, թե մինչ երկրաշարժը քանի մզկիթ է եղել Երևանում: XIX դարի ուսումնասիրողները թվարկում են ութ մզկիթ, որոնցից երկուսը՝ բերդի տարածքում, վեցը՝ քաղաքում: 1931 թ. դրությամբ Երվանդ Շահազիզը նշում է վեց մզկիթ՝ չներառելով Կոնդինը: Բազմաթիվ այլ աղբյուրների քննությամբ պարզվում է, որ XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբներին Երևանում գործում էր յոթ մզկիթ, առկա էին ևս երկու չգործող մզկիթներ¹:

Ադրբեջանական քարոզչամեքենան առաջ է տանում այն թեզը, որ Երևանի մզկիթների մեծ մասը խորհրդային տարիներին իբր միտումնավոր կերպով քանդվել են հայերի կողմից², այդ թվում թիրախավորվում է նաև Ալեքսանդր Թամանյանը³, իբրև նա միտումնավոր կերպով ոչնչացրել է քաղաքի իսլամական մշակութային ժառանգությունը, քանի որ այդ ճարտարապետությունն իբրև արտացոլում էր «ադրբեջանական միջնադարյան ճարտարապետության տարրերը»⁴: Պետք է նշել, որ 1930–1940–ական թվականներին Երևանի մզկիթներից շատերը քանդվեցին խորհրդային աթեիստական քաղաքականության հետևանքով: Այդ նույն տարիներին քանդվեցին նաև Երևանի եկեղեցիների մեծ մասը՝ Պողոս–Պետրոս եկեղեցին, Կաթողիկե սուրբ Աստվածածինը, Հին Նորք թաղամասի սուրբ Սիմեոն Ծերունի և Սուրբ Աստվածածին եկեղեցիները, Գեթսեմանի մատուռը, 20–րդ դարասկզբին կառուցված և որպես Երևանի գլխավոր տաճար հանդիսացող սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, Երևանի կենտրոնում գտնվող ռուսական Նիկոլայան սուրբ Աննայի եկեղեցին, Մլերի գերեզմանատան եկեղեցին, պատմական Կոզեմն գերեզմանատան եկեղեցին և այլն, որոնց մասին ադրբեջանական կողմը լռում է⁵:

¹ Միրիջանյան Դ., Յարությունյան Ա., Դավթյան Դ., Գրիգորյան Ա., Բաբաջանյան Ա., Երևանի քաղաքաշինության առանձնահատկությունները պարսկական տիրապետության շրջանում, Լրաբեր հասարակական գիտությունների, 3, 2022, էջ 335-337:

² По поводу заявлений Азербайджана о мечетях Еревана и письма, адресованного ЮНЕСКО, <https://monumentwatch.org/ru/alerts/по-поводу-заявлений-азербайджана-о-ме/> (21.04.2025).

³ ՏԵՍ <https://www.facebook.com/share/p/14hwstqhz9/> (16.05.2025).

⁴ Абдуллаев Р., Вырезанное Сердце Еревана, 01.01.2012, <https://regionplus.az/ru/articles/view/2974> (21.04.2025).

⁵ По поводу заявлений Азербайджана о мечетях Еревана и письма, адресованного ЮНЕСКО, <https://monumentwatch.org/ru/alerts/по-поводу-заявлений-азербайджана-о-ме/> (21.04.2025).

Երևանի ժողովրդագրություն պատկերի խեղաթյուրումը

Ադրբեջանական պատմագրության նպատակներից մեկն է՝ ներկայացնել հայերին՝ իբրև եկվոր և արտաքին քաղաքականությամբ վերաբնակեցված ժողովրդի: Այս կեղծ տեսության շրջանակում առանձնանում են մի քանի թիրախային ժամանակաշրջաններ:

Ադրբեջանցի որոշ հետազոտողներ պնդում են, թե հայերը տարածաշրջանում հայտնվել են միայն 1441 թվականին, երբ կարա-կոյունլու ամիրայության օրոք Հայոց կաթողիկոսությունը Կիլիկիայից տեղափոխվել է Էջմիածին¹: Ըստ այդ պնդումների՝ կաթողիկոսության հաստատումը հանգեցրել է որոշակի վերաբնակեցման՝ իբրև հողերի ձեռքբերման նպատակով դրանք խլել են ադրբեջանցի թուրքերից²: Հենց այս հանգամանքով է պայմանավորված, որ ֆրանսիացի միջնադարյան հեղինակ Ալեն Մանետոն-Մալլեի աշխատության մեջ հայերի մասին ուղիղ հիշատակումը Ֆիլիպ Էկոզյանցը որոշում է մեկնաբանել որպես կրոնական խումբ³՝ ոչ մի պատմական հիմք չունենալով, բացի դրանից, անտեսվում են ավելի վաղ շրջանի հիշատակությունները հայերի մասին:

Ստեփան Պավլովիչ Ջելինսկու կարծիքով՝ կասկած չկա, որ մինչև 15-րդ դարի կեսերը քաղաքը գտնվել է հայերի վերահսկողության ներքո, իսկ այնուհետև կռվախնձոր դարձել թուրք-պարսկական պատերազմների ժամանակ երկու տերությունների միջև⁴:

Հաջորդը, ինչի վրա փորձում են շեշտադրում կատարել, դա այն է, որ պարսկական տիրապետության շրջանում Երևանի բերդը բնակեցված

¹ Гумбатов Г., Армяне азербайджанский город Иреван переименовали 2020 <https://proza.ru/2020/12/06/1888> (18.04.2025)

² Иреванское ханство. Российское завоевание и переселение армян на земли Северного Азербайджана, Национальная Академия Наук Азербайджана Институт Истории Имени А.А.Бакиханова, Баку, 2010, с. 18-19, 45. Տե՛ս նաև Մустаֆա Н., Город Иреван, Иреван–исконная Азербайджанская земля, Баку, 2013, <https://www.virtualkarabakh.az/ru/post-item/3/26/irevan-qedim-azerbaycan-torpagi.html> (18.04.2025).

³ Что писали французы об армянах в 17 веке, Alain Manesson Mallet, 4 апреля 2019г. <https://youtu.be/Dg30p6Rb83I?si=yYgiRcJJYDwyUnnH> (18.04.2025); Гасанова Ш., Об Эриванской крепости языком фактов, <https://erevangala500.com/page/58.html> (18.04.2025)

⁴ Статьи Степана Зелинского «Город Ереван» и «Дарачичаг», <https://geghard-saf.am/ru/377/provinces-of-Yerevan-Elizavetpol-Armenian/> (18.04.2025).

է եղել մուսուլմաններով՝ պարսիկներով, իսկ հայերը բնակվել են արվարձաններում, Պաուլ Լուքասը հիշատակում է. «Այստեղ (Նկատի ունի Երևանի բերդը) կարող է լինել մոտ հազար երկու հարյուր տուն, որտեղ միայն մուսուլմաններ են ապրում: Այնտեղ քրիստոնյաները մի քանի խանութ ունեն, և գրեթե բոլոր արհեստավորները հայեր են»¹: Ժան Շարդենը վկայում է. «Ամրոցը կարծես թե կարող է փոքր քաղաք լինել: Այն օվալաձև է, մոտ չորս հազար քայլ է և պարունակում է ութ հարյուր տուն, որոնք բնակեցված են միայն սեֆյաններով: Ճիշտ է, հայերն այնտեղ խանութներ ունեն, որտեղ աշխատում և առևտուր են անում ամբողջ օրը, բայց երեկոյան նրանք փակում են իրենց խանութները և վերադառնում տուն»²: Ալեն Մանեսոն–Մալլեն հիշատակում է ամրոցում թուրքական կայազորի մասին³ և միաժամանակ նշում, որ քաղաքի բնակիչները հիմնականում հայեր են⁴:

Ֆիլիպ Էկոգյանցը, փորձելով վերլուծել Շարդենի աշխատությունը, շեշտադրել է այն հատվածը, որտեղ նշված է, որ հայերը աղքատ են և ապրում են չքավոր կյանքով, բայց այն, որ Շարդենը նշում է նաև տևական պատերազմների մասին, որոնք ծանր հետևանքներ են թողել բնակչության վրա, «վերլուծաբանը» մանրուք է համարել և արագ շրջանցել է⁵:

Ֆրանսիացի ճանապարհորդ Ժ. Բ. Տավերնիեն, որ եղել է Երևանում, ուշագրավ տեղեկություններ է հաղորդում բերդի և արվարձանների մասին: Ըստ նրա՝ բերդում ապրում էր խանն իր սպաներով ու զինվորներով, իսկ «Երևանի թաղում, որը [բերդի] հյուսիս–արևմուտքում մի արվարձան է⁶, ապրում է քսան անգամ ավելի շատ մարդ, քան հենց քաղաքում: Այստեղ են բնակվում բոլոր առևտրականներն ու արհեստավորները, ինչպես նաև՝ բոլոր հայ քրիստոնյաները, որոնք

¹ Voyage du Sieur Paul Lucas au Levant, by Paul Lucas. The second volume Paris, 1704, p. 13.

² Chardin John, The travels of Sir John Chardin into Persia and the East Indies: the first volume, London: Printed for Moses Pitt in Duke-Street Westminster, 1686, p. 245.

³ Mallet, Allain Manesson, Description de l'univers, 1683, Paris, D. Thierry, p. 212.

⁴ Նույն տեղում, էջ 214:

⁵ Эриван в 1670 году. Что писали в Европе об армянах в 17 веке. 12 апреля 2019 г. https://youtu.be/U18jteV3T38?si=8Q4nf-vSeg_JPoHu (18.04.2025).

⁶ Եղիազարյան Ա., Երևանի միջնադարի ու Նոր ժամանակների պատմությունը և ադրբեջանական կեղծարարությունը: Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2023, էջ 130:

*ունեն այստեղ չորս եկեղեցի և մեծ վանք...»*¹: 1700 թ. Երևան այցելած գերմանացի ճանապարհորդ Ֆ. Կ. Շիլինգերը պատմում է, որ բերդում ապրում էին միայն պարսիկներ, իսկ արվարձանում՝ նրանցից 10 անգամ ավելի շատ հայեր²: Սակայն ադրբեջանցիները այս պատմական իրականությունը նույնպես աղավաղում են. քաղաքի բերդում հիշատակվող մուսուլմաններին, պատմական ոչ մի հիմք չունենալով, անվանում են ադրբեջանցիներ³, իսկ հայերի բերդում առևտրով զբաղվելը և այնուհետև քաղաքի արվարձանային մաս վերադառնալը հիմք է տվել նրանց կարծելու, որ հայեր քաղաքում չեն եղել⁴:

16–17-րդ դարերի մասին ակտիվ վերլուծություններ կատարելիս ադրբեջանցիները հաճախ մոռացության են մատնում շահ Աբասի քաղաքականությունը և հայերի բռնագաղթը և միայն շեշտում են տարածաշրջանում օտար տարրերի առկայության մասին՝ անտեսելով սոցիալ-քաղաքական մի շարք փաստեր, շատ հաճախ խուսափելով էթնիկ տեղաշարժերի պատճառները ուսումնասիրելուց: Ինչպես նշել է իտալացի ճանապարհորդ Պեդրո դելլա Վալլեն, շահ Աբասի քաղաքականությունը միտված էր ապահովելու սահմանամերձ տարածքները, բայց նաև օգտագործելու տնտեսական ռեսուրսները⁵: Տավերնեի և Եվրոպացի այլ ճանապարհորդների խոսքերով՝ *«Սեֆյանների ներքին (ազգային) առևտուրը կազմակերպվում էր իրանցիների և հրեաների կողմից, մինչդեռ միջազգային առևտրի մենաշնորհը մետաքսի առևտրով զբաղվող հայերինն էր»*⁶: Իր նկարագրության մեջ Տավերնեն հատկապես ուշադրություն է դարձնում հայերի բռնի տեղահանությանը,

¹ Бегларян Е. А., Города и население Армении по Ж. Б. Тавернье, с. 121.

² Եղիազարյան Ա., Երևանի միջնադարի ու Նոր ժամանակների պատմությունը և ադրբեջանական կեղծարարությունը, էջ 136:

³ Абдуллаев Р., Вырезанное Сердце Еревана, 01.01.2012, <https://regionplus.az/ru/articles/view/2974>, (18.04.2025).

⁴ Гумбатов Г., Армяне азербайджанский город Иреван переименовали <https://proza.ru/2020/12/06/1888>, (18.04.2025), Tarixçi: “İrəvanda azərbaycanlıların mədəni irsinin yeganə sübutu olaraq qalan məkan Təpəbaşı məhəlləsidir”, 06 iyul, 2022, <https://oxu.az/medeniyyet/tarixci-irevanda-azerbaycanlilarin-medeni-irsinin-yegane-subutu-olaaraq-qalan-mekan-tepebasi-mehellesidir> (16.05.2025).

⁵ Matthee R., Was Safavid Iran an Empire? Journal of the Economic and Social History of the Orient, 2010, p. 249.

⁶ Ranjbar M. A. and Manesh, New Routes to Iran's International Trade in the Safavid Era. Ancient Asia, 2016, p. 3.

որը իրականացվել էր շահ Աբասի հրամանով: Երևանից մինչև Թավրիզ ամբողջ երկիրը շահ Աբաս Ա-ի կողմից լիովին ավերվել էր, որպեսզի օսմանյան բանակը այստեղ գոյատևելու ոչինչ չգտներ: Բնակչության առաջին մասը, որը բաղկացած էր ամենահայտնի ու մեծատոհմիկ հայերից, տեղափոխվեց Սպահան, որտեղ հետագայում զբաղվեց առևտրով և հիմնեց «Նոր Զուղա» գաղութը՝ ի հիշատակ իրենց նախկին բնակավայրի: Երկրորդ մասը տեղահանվեց Գիլան, որտեղ նրանց մեծ մասը դժբախտաբար զոհվեց: Երրորդ մասը ցրվեց բազմաթիվ գյուղերում՝ Սպահանի և Շիրազի միջև¹:

1639 թ. խաղաղության պայմանագրով՝ պետականությունից զուրկ, ավերված ու թալանված Հայաստանը կրկին բաժանվեց Օսմանյան Թուրքիայի և Պարսկաստանի միջև: Սակայն, չնայած սովին, ավերածություններին, հիվանդություններին ու բռնի տեղահանություններին, Տավերնեի վկայությամբ, հայերը շարունակում էին կազմել երկրի բնակչության մեծ մասը². «...չի կարելի զարմանալ, եթե քաղաքներում կամ գյուղերում հիսուն հայի դիմաց գտնեք միայն մեկ մուսուլմանի»³:

Այն, որ հայերը Երևանի կյանքում մեծ դեր են ունեցել, վկայում է նաև փաստը, որ 1724 թ.՝ օսմանյան արշավանքին ընդառաջ, Երևանում ինքնապաշտպանության նպատակով իրականացվում է ընդհանուր զորահավաք: Ըստ Աբրահամ Երևանցու՝ Երևանի հին թաղից հավաքված զորքը բաղկացած էր 4 հազար զինվորներից, որոնց գլխավորում էին փահլևան (գոտեմարտիկ) Նիկողոսը (Նիկողայոս), Սարիամի

¹ Бегларян Е. А., Города и население Армении по Ж. Б. Тавернье, с. 122.

² Մեջբերում Ժան Տավերնեի աշխատությունից. «Բայց քանի որ ինձանից առաջ ճանապարհորդած եվրոպացիները գուցե այնքան էլ հետաքրքրասեր չեն եղել կամ գուցե հնարավորություն չեն ունեցել ճշգրիտ ուսումնասիրելու Պարսկաստանի ամբողջական նահանգները, ես ձեռնամուխ եմ լինում այդ գործին. թեև Նույնիսկ պարսիկներն իրենք հաճախ բավարար չափով տեղյակ չեն, ես փորձում եմ հնարավորինս ճշգրիտ ներկայացնել՝ օգտվելով հին աշխարհագրության վկայություններից: Առաջին՝ Մեծ Յայքն է, որը մեր քարտեզներում առանց հիմքի կամ հիմնավորման երբեմն կոչվել է Թուրքոմանիա, այն դեպքում երբ ավելի ճշգրիտ կլիներ կոչել այն Հայաստան (Ermenick), քանի որ բնակչության մեծ մասը հայեր են: Այդ հատվածը, որը գտնվում է Արաքս և Տիգրիս գետերի միջև, ներկայումս երբեմն կոչվում է Իրան կամ Ղարաբաղ և համարվում է Պարսկաստանի ամենագեղեցիկ ու ամենաբերրի հողերից մեկը: Նրա գլխավոր քաղաքներն են՝ Երևան, Նախիջևան, Չուլֆա և Վան»: *St' u Jean-Baptiste Tavernier, Travels through Turkey to Persia, The Six Voyage, London, 1678, p. 141.*

³ Бегларян Е. А., Города и население Армении по Ж.-Б. Тавернье, с. 119.

որդի (Մարիամյան) Անդոնը (Աստոնիոս), Խաթունի որդի (Խաթունյան) Բուֆիքը և տեր Մովսեսը: Հետաքրքրական է, որ նույն հեղինակի վկայությամբ՝ 9423 զինվորներից բացի, քաղաքում մնում էր ևս 28 հազար մարդ (այր և կին), որոնք կռվի համար չունեին համապատասխան փորձ, բայց մասնակցում էին իրենց տների պաշտպանությանը¹:

Մեկ այլ տարածված թեզի համաձայն՝ հայերը Թուրքիայից և Իրանից տեղափոխվել են Երևան Ռուսական կայսրության տիրապետության տարիներին: Ադրբեջանցի կեղծարարներն այն աստիճանի են հասել, որ իրենց «գիտական աշխատություններում», մեջբերելով Գյուլիստանի պայմանագրի 3–րդ հոդվածը, նախկին պարսկական խանությունները թվարկելու փոխարեն, որոնք այդ հոդվածով անցնում են Ռուսական կայսրությանը, օգտագործում են «Հյուսիսային Ադրբեջան» մտացածին հասկացությունը, որն իբր այդ պայմանագրով անջատվում էր այսպես կոչված «Հարավային Ադրբեջանից»²:

Ադրբեջանցիների խոսքով՝ Թուրքմենչայի (1828 թ.) և Ադրիանապոլսի (1829 թ.) հաշտության պայմանագրերի ստորագրումից հետո սկսվեցին ադրբեջանցիների սև օրերը³: Նրանք քննադատում են նաև Հայկական մարզի ստեղծումը⁴: Ադրբեջանը տարբեր աշխատությունների միջոցով փորձում է իր հանրությանը համոզել, որ Ռուսաստանի համակրանքը հայերի կողմն էր, և Ռուսական կայսրությունը չէր վստահում մուսուլման բնակչությանը և այլն⁵: Ադրբեջանական գրականությունը ուսումնասիրելիս ակնհայտորեն երևում է հուզական բնութագրեր, այլ ոչ թե պատմական վերլուծություններ, օրինակ՝ «Հայերը, որոնք անընդհատ քոչվոր կյանք էին վարում և սովոր էին փոխել

¹ Տե՛ս Abraham of Erevan, *History of the Wars (1721-1738)*, George A. Bournoutian, Costa Mesa, CA, 1999, p. 25.

² Фальсификация истории: «Возвращение Еревана» - циничный бред или воинствующая глупость Алиевых апреля 05, 2018, https://fakebajjan.blogspot.com/2018/04/blog-post_5.html (21.04.2025).

³ Mustafa N., Qədim Azərbaycan şəhəri İrə van. «Məktəbəqədər və ibtidai təhsil», Xüsusi buraxılış – İrəvan Müəl imlər Seminarıyası, 2 (2022), səh. 16.

⁴ Tarixçi: “İrəvanda azərbaycanlıların mədəni irsinin yeganə sübutu olaraq qalan məkan Təpəbaşı məhəlləsidir”, 06 İyul, 2022, <https://oxu.az/medeniyyet/tarixci-irevanda-azerbaycanlilarin-medeni-irsinin-yegane-subutu-olaraq-qalan-mekan-tepebasimehellesidir> (16.05.2025).

⁵ Տե՛ս История Азербайджана, Учебник по предмету, для 9-х классов общеобразовательных заведений, с. 10.

բնակության վայրերը, ներշնչվել էին այն մտքից, որ «ավելի լավ է ուտել ռուսական խոտ, քան պարսկական հաց»¹ կամ Մամեդովի հետևյալ արտահայտությունը աշխատությունից. «Այսպիսով, *ցարական Ռուսաստանի ձեռքով դրվեց Ադրբեջանի այսօրվա ծանր խնդիրների հիմքը: Ազգագրական իրավիճակը, առաջին հերթին՝ Երևանի, Նախիջևանի և Ղարաբաղի շրջաններում, սկսեց փոխվել հոգուտ հայերի»*² կամ մեկ այլ մեջբերում 9-րդ դասարանի դպրոցական դասագրքից. «*Հայերը, որոնք միշտ օգտագործվել էին որպես գործիք մեծ տերությունների կողմից, զինվեցին Ցարական Ռուսաստանի կողմից*»³:

Երանք պնդում են, որ Թուրքմենչայի և Ադրիանապոլսի պայմանագրերից հետո տարածաշրջանի էթնիկ պատկերը փոփոխվել է: Ըստ նրանց՝ «Ղաջարական պետությունից՝ 40 հազար, իսկ Օսմանյան պետության տարածքից 54 հազարից ավելի հայեր են տեղափոխվել Հյուսիսային Ադրբեջան»⁴: Սակայն Թուրքմենչայի պայմանագրի հոդված 13-ում հստակ նշվում է, որ խոսքը ռազմագերիների մասին է, որոնք պետք է վերադառնան իրենց բնակավայրեր⁵:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու պահին Երևանն ուներ մոտ 11500 բնակիչ⁶: Գրեթե նույն տվյալներն է նշում Ստեփան Զելինսկին իր հոդվածում՝ վկայակոչելով, որ 1829 թ. Երևանի բնակչության թիվը 11647 էր, որոնցից հայերը կազմում էին 944 տուն (4132 մարդ), թաթարները՝ 1807 ծովս (7331 մարդ): 1880-ին Երևանի նահանգի բնակչությունը կազմում էր 12449 մարդ, որից ռուսներ՝ 46 ծովս (155

¹ Иреванское Ханство, Российское завоевание и переселение армян на земли Северного Азербайджана, Национальная Академия Наук Азербайджана Институт Истории Имени А. А. Бакиханова, Баку, 2010, с. 24.

² Мамедов И., История Азербайджана (с древнейших времен до наших дней), учебник. Баку, 2020, с. 483.

³ История Азербайджана, Учебник по предмету, для 9-х классов общеобразовательных заведений, с. 84.

⁴ История Азербайджана (с древнейших времен до первых десятилетий XXI века), Учебник для вузов. К изданию Рекомендован приказом министра образования Азербайджанской Республики, 26.02.2014, Баку, 2016, с. 215.

⁵ St u Туркманчайский мирный договор между Россией и Ираном. Выверено по изданию. Под стягом России: Сборник архивных документов. М., Русская книга, 1992. https://www.hist.msu.ru/ER/Text/FORIGN/turkman.htm?utm_source=chatgpt.com (11.05.2025).

⁶ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան, Երևան, 1988, էջ 216:

մարդ), հայեր՝ 1509 ծուխ (5975 մարդ), թաթարներ՝ 1318 ծուխ (6293 մարդ), վրացիներ՝ 7 ծուխ (26 մարդ)¹:

Ընդհանրապես, հակառուսական տրամադրվածությունը Ադրբեջանում շարունակվում էր նույնիսկ խորհրդային շրջանում: Այս առումով հետաքրքիր է ադրբեջանական ԽՍՀ-ի հիմնադրման 10-ամյակին նվիրված բանաստեղծությունների ժողովածուի աղբյուրների վերլուծությունը: Այստեղ ռուսները պիտակավորվում են որպես անպատվաբեր մարդիկ, հյուսիսային արյունարբուներ, հյուսիսի գազաններ. *«Ձեռքերդ հեռու, ձեռքերդ հեռու, հյուսիսի վայրի՛ գազաններ, ձեռքերդ հեռու ադրբեջանական շրջանից»*: Փաստաթղթի վերջին մասը կոչ է անում ազատագրել Ադրբեջանը ռուսական ազդեցությունից²: Արխիվային նյութերից երևում է դժգոհություն Բաքվում և Մուղանում ռուսների վերաբնակեցման դեմ, իբր ամեն ամիս Ռուսաստանից բերվում և Ադրբեջանում բնակեցվում էր 2000 ռուս: Որպես ռուսների գերիշխանության փաստարկ՝ նշվում է, որ Բաքվի համալսարանի ուսանողների մեծամասնությունը ոչ թե թուրքեր էին, այլ ռուսներ, և որ ռուսները հնարավորություն ունեն Բաքվում սովորելու Ադրբեջանի հաշվին: Սակայն, հետագայում հեղինակները կտրուկ փոխում են շեշտադրումը: Ադրբեջանցիները սկսում են մեղադրել իրենց հարևաններին՝ Վրաստանին և Հայաստանին, որոնք Ադրբեջանի համեմատ «ավելի շատ արտոնություններ և հնարավորություններ են ստացել, քան Ադրբեջանը», թե ինչու Վրաստանում մանգանի արդյունաբերությունը չի ազգայնացվում, մինչդեռ Ադրբեջանում ամեն ինչ ազգայնացված է, ինչու Վրաստանն ու Հայաստանը ունեն զորամասեր՝ դիվիզիաներ և հեծելազորային գնդեր, մինչդեռ Ադրբեջանին թույլ չեն տալիս դիվիզիա ունենալ, ինչու շաքարի գործարանը չի կառուցվում Ադրբեջանում, այլ Հայաստանում և այլն³:

¹ Статьи Степана Зелинского «Город Ереван» и «Дарачичаг», <https://geghard-saf.am/ru/377/provinces-of-Yerevan-Elizavetpol-Armenian/> (12.05.2025).

² Harutyunyan A., Margaryan G., Ideological Resistance in Early Soviet Azerbaijan: A Textual Analysis of a Unique Archival Document. *Historia i Świat*, 14, 2025, p. 375.

³ Harutyunyan A., Margaryan G., Anti-Soviet Movements in Soviet Azerbaijan (1920s-1930s), National-Liberation and Anti-Soviet Movement in the Caucasus And East Central Europe. On the 100th Anniversary of the 1924 Georgia Uprising Causes and Dynamics, Ivane Javakhishvili Tbilisi State University, p. 210.

Այս շարքը կարելի է շարունակել երկար, սակայն կարևոր է մի փաստ ևս. Ադրբեջանում գիտությունը, հատկապես պատմագիտությունը, ծառայում է ադրբեջանական իշխանությունների կողմից տարածվող կեղծ թեզերը ամրապնդելու համար: Նույնիսկ ադրբեջանցի Ջ. Գասիմովը իր 2014 թ. հրապարակած հոդվածում խոսել է նրա մասին, որ ադրբեջանցի գիտնականի աշխատանքի խոչընդոտներից են ալիևյան ռեժիմի պարտադրած ավտորիտար պայմանները և երկրի գիտության և կրթական համակարգում կոռուպցիան¹: Ջ. Գասիմովը նշում է նաև, որ միայն վերջին տասնամյակում ադրբեջանցի պատմաբանները մեծ թվով գիտական կեղծ հրապարակումներ են արել Ալիևի մասին: Տասնյակ կենսագիրներ նկարագրել են Ադրբեջանի «մեծ առաջնորդի» կյանքը²: Միջնակարգ դպրոցների և համալսարանների՝ պատմության բոլոր դասագրքերում կա «Միացյալ Ադրբեջանի» քարտեզ, որը ներառում է ժամանակակից Ադրբեջանի Հանրապետությունը և, այսպես կոչված, «Հարավային Ադրբեջանը»՝ Իրանի տարածքը³: Այս պարագայում, եթե առաջնորդի և սեփական երկրի վերաբերյալ ստեղծվում են կեղծ հոդվածներ, դժվար չէ պատկերացնել, որ նույն մեթոդները կկիրառվեն նաև հայերի պատմությունը աղավաղելու համար:

Եզրակացություն

Ադրբեջանական պատմագրության վերջին տասնամյակների զարգացումները ցույց են տալիս, որ պատմական գիտությունը այդ երկրում հաճախ ծառայում է պետական գաղափարախոսության ձևավորմանն ու տարածմանը: Պատմագիտական ուսումնասիրությունները, որոնք պետք է լինեն գիտական անաչառության և աղբյուրագիտական հենքի վրա կառուցված, Ադրբեջանում իշխանությունների վերահսկողության ներքո են:

Երևանի պատմության, նրա անվան ծագման և հիմնադրման հարցերում ադրբեջանցի հեղինակների մեկնաբանությունները ցույց են տալիս ազգային ինքնության կառուցման միտում՝ հիմնված այլ

¹ Gasimov Z., History-Writing and History-Making in Azerbaijan Some Reflections on the Past Two Decades of Independence, Swedish Research Institute in Istanbul, Stockholm & Istanbul 2014 Papers, vol. 5, p. 69.

² Նույն տեղում, էջ 79:

³ Նույն տեղում, էջ 80-81:

Ժողովուրդների պատմական անցյալի յուրացման և «թյուրքականացման» վրա: Այս մոտեցումը նպատակ ունի վերաշարադրելու տարածաշրջանի պատմությունը:

Նկատելի է, որ ադրբեջանական պատմագրությունը հաճախ մերժում է միջազգային և տարածաշրջանային գիտական շրջանակներում ընդունված պատմական փաստերը՝ ստեղծելով ազգային նարատիվներ, որտեղ առաջնային է ոչ թե պատմական ճշմարտությունը, այլ՝ գաղափարական շահը:

LIANA GYURJYAN

*ISEC NAS RA, Department of Oriental Studies,
Email: gyurjyanliana01@gmail.com*

THE CITY OF YEREVAN AS A TARGET FOR AZERBAIJANI PROPAGANDA AND HISTORICAL FALSIFICATION

Keywords: *Yerevan, Azerbaijan, historical falsification, Blue Mosque, Kond, propaganda.*

The article addresses the etymology of Yerevan's name, based on references to the Erebuni fortress. Analysis of primary sources indicates that the city existed from an earlier period, which contradicts the information provided by Evliya Chelebi. Yerevan's cultural heritage, which was formed under the influence of changes in the ruling class in the region, fully reflects the cultural traditions of the Armenian people.

The article demonstrates that Armenians, regardless of political and military changes, remained the principal population of the region and had significant influence on the cultural and economic life of both the city and neighboring states, such as Iran.

«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամ,
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ, Արևելագիտության ամբիոն,
Էլփոստ՝ anna.palacyan2001@gmail.com

**ՆԱՏԻՍՏՆԵՐԻ ՀԵՏ ԱՊՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ
ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ**

Հոդվածը նվիրված է Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Նացիստական Գերմանիայի ղեկավարության և ադրբեջանցի քաղաքական ու ռազմական գործիչների միջև հաստատված համագործակցությանը: Հետազոտության առարկա են համագործակցության քաղաքական ու գաղափարական նախադրյալները, ադրբեջանական զինված ստորաբաժանումների կազմավորումն ու մասնակցությունը ռազմական գործողություններին: Ուշադրություն է դարձվում հետպատերազմյան փուլում այդ գործիչների՝ Ադրբեջանում պետական հերոսացման գործընթացին: Նացիստական Գերմանիայի և ադրբեջանական ուժերի կապերի ուսումնասիրությունը կարևոր է մի կողմից ԽՍՀՄ դեմ ուղղված հակաբոլշևիկյան տրամադրությունների համատեքստում, իսկ մյուս կողմից՝ այն պատճառով, որ այդ համագործակցությունն Ադրբեջանի կողմից հետագայում ներկայացվել է որպես ազատագրական շարժման մաս՝ Նացիստների հետ համագործակցած գործիչներին վերստին արդարացնող քաղաքականությամբ:

Բանալի բառեր՝ Ադրբեջան, Նացիստական Գերմանիա, ԽՍՀՄ, Հայրենական մեծ պատերազմ, ադրբեջանական լեգեոն:

Նախաբան

Ադրբեջանական հակախորհրդային ուժերի և Նացիստական Գերմանիայի ռազմաքաղաքական ղեկավարության միջև համագործակցությունը սկսվել էր դեռևս Հայրենական մեծ պատերազմի նախօրեին: Սկզբնական շրջանում գերմանական հետախուզությունը՝ Աբվերը, հավաքագրում էր ադրբեջանցի վտարանդիներին (դրանց թվում էր նաև «Մուսավաթ» կուսակցության ղեկավար Մամեդ Էմին

Ռասուլզադեն), իսկ արդեն պատերազմի մեկնարկին ռազմական գործողություններին մասնակցելու համար ԽՍՀՄ հանրապետություններից, այդ թվում՝ Ադրբեջանից, ներգրավվեցին խորհրդային իշխանություններից դժգոհ անձինք, դասալիքներ, ռազմագերիներ¹:

Խորհրդային կարգերից դժգոհ ու Ադրբեջանի անկախացման համար պայքարող ադրբեջանցիները Նացիստական Գերմանիայի հետ համագործակցությունը դիտարկում էին որպես հնարավորություն՝ վերականգնելու 1918 թ. հիմնադրված, սակայն կարճ կյանք ունեցած Ադրբեջանի Հանրապետությունը: Նրանց համար Գերմանիայի հետ գործակցությունը ընկալվում էր որպես ԽՍՀՄ-ից ազատագրման ու ազգային ինքնիշխանություն ձեռք բերելու միջոց: Այս ձգտումները խրախուսվում էին նաև գերմանական իշխանությունների կողմից, որոնք փորձում էին օգտագործել հակախորհրդային տրամադրությունները՝ ռազմաճակատում լրացուցիչ ռեսուրսներ ապահովելու նպատակով:

Ադրբեջանցիների և նացիստական ռազմաքաղաքական ղեկավարության քաղաքական և գաղափարական համագործակցության ուղիները

Նացիստական ռազմաքաղաքական ղեկավարության որոշմամբ՝ պատերազմի սկզբնական շրջանում ձևավորվեցին հակախորհրդային ազգային կազմակերպություններ, որոնց գործերի համակարգմամբ զբաղվողներից մեկը նացիստական կուսակցության ազդեցիկ անդամներից Ալֆրեդ Ռոզենբերգն էր²: Այս կազմակերպությունների, ինչպես նաև Գերմանիայի կողմից ստեղծված, խորհրդային ռազմագերիներից հավաքագրված լեգեոնների մասին հետաքրքիր մանրամասներ ենք կարդում 1943–1944 թթ. «Թուրքեստան աշխատանքային խմբի» ղեկավար, 1944 թ. Արևելաթյուրքական ստորաբաժանման ղեկավար Ռայներ Օլցշայի վկայություններում: Վերջինս համակարգում էր

¹ Из протокола допроса бывшего начальника Восточного отделения РСХА, директора института «Арбайтсгемайншафт Туркестан» гауптштурмфюрера СС Ольцша Райнера. 27 ноября 1945 г., Центральный архив ФСБ России (ЦА ФСБ РФ), Военно-исторический журнал, 1996, № 5, с. 24-31.

² Ալֆրեդ Ռոզենբերգի մասին տե՛ս <https://www.tracesofwar.com/persons/48926/Rosenberg-Alfred-Ernst.htm> (18.05.2025):

թուրքեստանյան (միջինասիական հանրապետությունների ներկայացուցիչներից հավաքագրված) լեգեոնների (այդ թվում՝ ադրբեջանական) ստեղծումը:

Պատերազմի ընթացքում ձևավորված լեգեոնները ներկայացնում էին առանձին վաշտեր և գումարտակներ, որոնք համախմբված էին միայն անվանապես, սակայն տեղակայված էին տարբեր շրջաններում կամ նույնիսկ տարբեր երկրներում և գործում էին գերմանական տարբեր օպերատիվ հրամանատարությունների ենթակայությամբ¹:

Վերնախտի կազմում ադրբեջանական ստորաբաժանումների ստեղծմամբ մեծապես հետաքրքրված էր Թուրքիայի զինված ուժերի գեներալ Հուսեյն Հյունայու Էմիր Էրքիլեթը, որը աչքի էր ընկնում իր հակաբոլշևիկյան հայացքներով: Նա 1941 թ. սեպտեմբերին այցելեց Արևելյան ճակատի հարավային հատված՝ անձամբ միջամտելու մահմեդական ռազմագերիների (հատկապես ադրբեջանցիների) վիճակը բարելավելու հարցով Հիտլերի մոտ բարեխոսելու գործընթացին: Այդ ժամանակ քննարկման արդյունքում տրվեց նաև «Ադրբեջանական ազգային կոմիտեի» ստեղծման համաձայնություն²: Այս կոմիտեն ձևավորվեց Գերմանիայի Օկուպացված արևելյան տարածքների նախարարությանը և Թուրքեստանի ոսումնասիրության կենտրոնին կից՝ ադրբեջանցի գործիչ Աբդուռահման բայ Ֆաթալիբեյլի-Պյուդենգիսկիի գլխավորությամբ: Վերջինս պատերազմի ընթացքում գերի ընկնելուց հետո սկսել էր համագործակցել գերմանացիների հետ և նշանակվել էր, այսպես կոչված, «ադրբեջանական շտաբի» պետ³:

Ինչպես նշեցինք, Աբվերի հետ համագործակցության մեջ էր մտել նաև Էմին Ռասուլզադեն, որը ադրբեջանական վտարանդիների առաջնորդն էր Եվրոպայում և թեև ավելի ազդեցիկ կերպար էր, սակայն «ադրբեջանական շտաբի» պետ նա չէր նշանակվել՝ պայմանավորված թուրքական ուժերի հետ իր կապով և պանթուրքական գաղափարներով: Պանթուրքական շարժումը հակասում էր գերմանական

¹ Dallin A., *German Rule in Russia, 1941–1945: A Study of Occupation Policies*, London, 1957, p. 540.

² Чуев С. Г., *Проклятые солдаты. Предатели на стороне III рейха*. Москва, 2004, с. 515.

³ Из протокола допроса бывшего начальника Восточного отделения РСХА, директора института «Арбайтсгемайншафт Туркестан» гауптштурмфюрера СС Ольцша Райнера. 27 ноября 1945 г., с. 281.

ծրագրերին, քանի որ, ըստ դրանց, «պատերազմից հետո Կովկասում պետք է ստեղծվեր Գերմանիայի հատուկ Ռայխկոմիսարիատը»¹: Գերմանական ռազմաքաղաքական ղեկավարության և Ռասուլզադեի համագործակցությունը երկար չի տևել, սակայն Ռասուլզադեի գլխավորությամբ ձևավորված, այսպես կոչված, վտարանդի «Ադրբեջանական կառավարությունը» ադրբեջանական զորամիավորումների ձևավորողներից մեկն է դարձել: Բացի դրանից՝ սկսեց լույս տեսնել նաև «Ադրբեջան» թերթը, որի գլխավոր խմբագիրը Կարմիր բանակի նախկին մայոր Մեջիտ Կարսալանն էր²: Այս թերթը զբաղվում էր հակաբոլշևիկյան քարոզչությամբ, ուներ ընդգծված թյուրքական ուղղվածություն և բաժանվում էր զինվորներին անվճար³: Թերթի տարբեր համարներում օգտագործվել է «Թուրք ազերիների պատմություն», «Ազերի-թուրք ժողովուրդ» արտահայտությունները՝ ընդգծելով, որ «Ադրբեջանը թուրք-իսլամական մշակույթի բաղկացուցիչ մաս է, և այդ երկրի պատմությունը անհրաժեշտ է ուսումնասիրել թյուրքականության շրջանակներում»⁴: Թերթը մեջբերել է նաև 1943 թ. նոյեմբերի 6-ին Բեռլինում կայացած Ադրբեջանի Ազգային համագումարի ժամանակ մայոր Ֆաթալիբեյլիի ելույթից հատվածներ, որտեղ վերջինս ևս շեշտել է ադրբեջանցիների ներսում թյուրքականության գաղափարի քաղաքականապես ընդունման կարևորության մասին՝ ներկայացնելով այն որպես «բոլշևիզմի գլխավոր թշնամի» և ազատագրական պայքարի շարժիչ ուժ⁵:

Ադրբեջանական զորամիավորումների ձևավորումը նացիստական բանակի կազմում

Սկզբնական շրջանում Ադոլֆ Հիտլերը թերահավատորեն էր մոտենում խորհրդային ժողովուրդների ներկայացուցիչներին որպես օժանդակ ռազմական ուժերի հավաքագրելուն, սակայն պատերազմի ընթացքում տեղի ունեցած մի շարք իրադարձություններ նրան

¹ Նույն տեղում, էջ 282:

² Справка Главного командования сухопутных войск Германии о формировании вспомогательных войск из лиц татарского и кавказского происхождения. 20 марта 1942 г., Центральный архив ФСБ России, с. 609.

³ Yılmazata M., II. Dünya Savaşı'nda Bir Lejyoner Yayını: Azerbajcan Gazetesi, Ankara, 2018, s. 310.

⁴ Նույն տեղում, էջ 314:

⁵ Նույն տեղում, էջ 317:

ստիպեցին վերանայել իր դիրքորոշումը¹: Այս փոփոխության վրա ազդեցին երկու իրադարձություններ. առաջինը՝ թուրք գեներալ էրքիլետի վերը հիշատակված այցն էր Արևելյան ռազմաճակատ, երկրորդը ԽՍՀՄ Գլխավոր շտաբի ադրբեջանցի գերեվարված մայորի նամակն էր, որով նա հավաստիացնում էր, թե «մշտապես համակրել է նացիստական գաղափարներին, եղել է հակաբոլշևիկ և առիթ է փնտրել՝ պայքարելու իր հայրենիքի ազատագրության համար»²:

Հարկ է նաև նշել, որ Հիտլերը վստահում էր մուսուլմաններին (այն է թե՛ թյուրքական ծագում ունեցող ժողովուրդներին, այդ թվում՝ ադրբեջանցիներին). «Ես միայն մուսուլմաններին եմ վստահելի համարում³: Ես մաքուր կովկասյան գոմարտականների ձևավորումը շատ լուրջ ռիսկ եմ համարում, սակայն մաքուր մուսուլմանական ստորաբաժանումների ստեղծման մեջ վտանգ չեմ տեսնում»⁴: Այս կարծիքը կիսում էր նաև Վերմախտի (Նացիստական Գերմանիայի զինված ուժերի) հրամանատարությունը, որի ներկայացուցիչները նշում էին, որ «մուսուլմանները ոչ միայն կուժեղացնեն գերմանական կազմավորումների մարտական ներուժը, այլև կծառայեն որպես արդյունավետ քարոզչական գործիք»⁵: Հետևաբար՝ զարմանալի չէ, որ Արևելյան ժողովուրդների զինվորական ծառայության արգելքի առաջին պաշտոնական շրջանցումը կապված էր հենց մուսուլմանական լեգեոնների ձևավորման թույլտվության հետ: 1941 թ. դեկտեմբերի 22-ին Գերմանիայի բարձրագույն հրամանատարությունը հավանություն տվեց առաջին՝ Թուրքեստանյան (Turkestanische Legion) և Կովկասյան-մուսուլմանական լեգեոնների (Kaukasisch-Mohammedanische Legion) ստեղծմանը⁶, իսկ դրանց պաշտոնական կազմավորումը տեղի ունեցավ 1942 թ. մարտին⁷:

¹ Altstadt A. L., The Azerbaijani Turks: Power and Identity under Russian Rule, Hoover Institution Press Publication, 1992, p. 156.

² Dallin A., German Rule in Russia, 1941-1945: A Study of Occupation Policies, London, 1957, pp. 539-540.

³ Նկատենք նաև, որ տևական ժամանակ ադրբեջանցիները, չունենալով Էթնանվանում, շատ դեպքերում պարզապես կոչվում էին «մուսուլմաններ» - Ա. Պ.:

⁴ Munoz A. J., The East Came West: Muslim, Hindu, and Buddhist Volunteers in the German Armed Forces 1941-1945, New York, 2001, p. 60.

⁵ Motadel D., Islam and Nazi Germany's War, London, 2014, p. 223.

⁶ Müller R.-D., The Unknown Eastern Front: The Wehrmacht and Hitler's Foreign Soldiers, translated by David Burnett, London, 2012, p. 242.

⁷ Motadel D., Islam and Nazi Germany's War, London, 2014, p. 224.

Արդեն օգոստոսին, ադրբեջանցի կամավորների թվի աճով պայմանավորված, Կովկասյան–մուսուլմանական լեգեոնը վերանվանվեց «Ադրբեջանական լեգեոն», իսկ դրա կազմում ընդգրկված դադստանցիները, չեչենները և ինգուշները տեղափոխվեցին այլ լեգեոններ¹:

1942 թ. վերջերին Գերմանիայի կողմից օկուպացված Լեհաստանի տարածքից, որտեղ անցկացվել էին գումարտակների մարզումները, առաջնագիծ է ուղարկվել արևելյան զորամիավորումների «առաջին ալիքը», այդ թվում՝ ադրբեջանական 2 գումարտակ: 1943 թ. առաջնագիծ է մեկնել ադրբեջանական 6 գումարտակ²: Երկու տարվա ընթացքում Լեհաստանում ստեղծվել է ընդհանուր առմամբ 52 գումարտակ, որից 8–ը՝ ադրբեջանական³: Լեհաստանը միակ վայրը չէր, որտեղ ձևավորվել էին արևելյան լեգեոնները: 1942 թ. վերջից մինչև 1943 թ. մայիսը Ուկրաինայում կազմավորվել և կազմավորման փուլում էին 33 գումարտակներ, որոնցից 7–ը ադրբեջանական էին (6–ը՝ արդեն կազմավորված, 1–ը՝ կազմավորման փուլում)⁴:

1943 թ. վերջին ստեղծված Արևելամուսուլմանական գնդի կազմում, որն ի սկզբանե կազմված է եղել թյուրքախոս ժողովուրդներից, եղել են մեծ թվով ադրբեջանցիներ: Ըստ Ռայների՝ 1944 թ. վերջին նախատեսված է եղել այս գնդի օրինակով ստեղծել Կովկասյան գունդ, սակայն ռազմաճակատում տեղի ունեցած իրադարձությունների պատճառով այս ծրագիրը չի իրագործվել, և կովկասյան ժողովուրդները միացել են տարբեր գնդերի, օրինակ՝ ադրբեջանցիները միացել են Արևելամուսուլմանական գնդին⁵: Դեյվիդ Մոթադելի հաղորդմամբ էլ՝ 1944 թ. վերջին որոշվել է արևելամուսուլմանական մի քանի գումարտակներ միավորել նորաստեղծ Կովկասյան գնդի մեջ: Ըստ այդմ՝ գունդը պետք է բաժանվեր 4 գումարտակների, որոնցից երկուսը պետք է լինեին մուսուլմանական, իսկ մյուս երկուսը՝ հայկական ու վրացական, սակայն ադրբեջանցիները

¹ Дробязко С.И., Под знамёнами врага. Антисоветские формирования в составе германских вооруженных сил 1941-1945 г., Москва, 2005, с. 151.

² Чув С. Г., Проклятые солдаты. Предатели на стороне III рейха. Москва, 2004, с. 517.

³ Дробязко С.И., Под знаменами врага, с. 153.

⁴ Романько О. В., Мусульманские легионы во Второй мировой войне, Москва, 2004. https://militera.lib.ru/research/romanko_ov/index.html.

⁵ Из протокола допроса бывшего начальника Восточного отделения РСХА, директора института «Арбайтсгемайншафт Туркестан» гауптштурмфюрера СС Ольцша Райнера.27 ноября 1945 г., ЦА ФСБ РФ.

«խնդրել են իրենց չխառնել քրիստոնյա հայերի ու վրացիների հետ» և թույլ տալ շարունակել մնալ Արևելաթուրքական գնդում¹:

Ադրբեջանական զորամիավումների ներգրավվածությունը պատերազմական գործողություններին

Արևելյան լեգեոնները ներգրավված են եղել մի շարք տարածքներում, այդ թվում՝ Կովկասում ծավալվող մարտական գործողություններում: Սակայն բազմաթիվ ստորաբաժանումներ չեն արդարացրել գերմանական հրամանատարության ակնկալիքները. դրանց կազմում ընդգրկված խորհրդային ռազմագերիների մի մասը դասալքել կամ անցել են Կարմիր բանակի կողմը՝ չցանկանալով կռվել հայրենակիցների դեմ: Մինչդեռ, օրինակ, ադրբեջանական 804-րդ և 805-րդ գումարտակները, ինչպես նշել է գեներալ-լեյտենանտ Գ. Ֆոն Գրայֆենբերգը, «Կովկասի լայն անտառային շրջաններում հաճախ գործել են ինքնուրույն, հաջողությամբ պայքարել թշնամու խմբերի ու ջոկատների դեմ և մեծապես նպաստել այդ տարածքների խաղաղեցմանը»²: 804-րդ գումարտակը, որը ղեկավարում էր Ֆաթալիբեյլին, աչքի ընկավ նաև Կուբանի պաշտպանական գոտում՝ զգալի վնաս հասցնելով խորհրդային ուժերին: Ավելի ուշ Կուբանում ցուցաբերած մարտական հաջողությունների համար այս գումարտակին տրվեց «Ասլան» (Առյուծ) անվանումը³:

Ադրբեջանցիները աչքի են ընկել նաև մեկ այլ կազմավորման՝ կովկասյան հատուկ նշանակության «Բերգման» գումարտակում: Նրա կազմում կային ադրբեջանական երկու վաշտեր, սակայն ավելի ուշ գումարտակը վերափոխվում է գնդի, իսկ ադրբեջանական վաշտերը միավորվում են մեկ գումարտակի կազմում: Ի սկզբանե այդ ուժերը կռվել են առաջնագծում, այնուհետև ուղարկվել են Լեհաստան և 1944 թ. մասնակցել Վարշավայի ապստամբության ճնշմանը⁴:

Վարշավայի ապստամբության ճնշմանը մասնակցելը համարվում է ադրբեջանական լեգեոնի «հերոսական» էջերից մեկը: Վարշավայի ապստամբության ճնշմանը, որի հետևանքով մահացել է մինչև 200

¹ Motadel D., Islam and Nazi Germany's War, London, 2014, p. 236.

² Романько О. В., Мусульманские легионы во Второй мировой войне, Москва, 2004. https://militera.lib.ru/research/romanko_ov/index.html.

³ Чув С. Г., Проклятые солдаты. Предатели на стороне III рейха, Москва, 2004, с. 517.

⁴ Նույն տեղում:

հազար մարդ, առավել ակտիվ մասնակցություն ունեցողներից են եղել ադրբեջանցիներից, կենտրոնասիական թյուրքախոսներից, Վուլգյան թաթարներից բաղկացած ստորաբաժանումներից ստեղծված Արևելամուսուլմանական գունդը, ադրբեջանական երկու՝ «Բերզման»-ի երկրորդ և 111-րդ զորամիավորումների առաջին գումարտակները¹: Ռայները ևս վկայում է, որ Արևելաթյուրքական գունդը մասնակցել է նաև Մինսկի շրջանում և Վարշավայում Կարմիր բանակի դեմ մարտերին², իսկ ադրբեջանական լեգեոնը եղել է գնդի կազմում կռվողներից մեկը³:

1944 թ. ադրբեջանա-թյուրքական գումարտակի որոշ անդամներ պարզևատրվել են գերմանական բարձրագույն շքանշաններով, այդ թվում՝ 5 Առաջին աստիճանի և 13 երկրորդ աստիճանի «Երկաթե խաչ» շքանշաններով. սրանով փորձ էր արվում ցույց տալ լեգեոնի կարևորությունը և բարձր պահել վերջիններիս մարտական ոգին⁴:

Վերմախտի կազմում ադրբեջանցիների թվի մասին հստակ տեղեկություն չկա: Ըստ տարբեր աղբյուրների՝ նրանց թիվը կարող էր հասնել 70 հազարի և մինչև անգամ 120 հազարի, սակայն առավել հավանական է համարվում 40 հազարը⁵, մեկ այլ հեղինակ՝ գերմանացի պատմաբան Դեյվիդ Մոթադելը, խոսում է 25–38 հազարի մասին⁶:

Հետաքրքրական է պատերազմի ընթացքում հրապարակված «Թաթարական և կովկասյան ծագում ունեցող անձանցից» օժանդակ զորքերի ձևավորման մասին գերմանական ցամաքային զորքերի հրամանատարության տեղեկանքը, որում խոսվում է, թե ինչպես է պետք ընդդեմ Խորհրդային Միության քարոզչություն իրականացնել կովկասյան ժողովուրդների շրջանում: Նշվում է, որ Կովկասում ապրող ազգերից առավել նշանակալից են վրացիները, հայերը և ադրբեջանցիները, որոնցից առաջին երկուսը քաղաքական առումով ամենամեծ դերը ունեն: Ըստ տեղեկանքի՝ այս երկու ժողովուրդների (հայերի և

¹ Дробязко С.И., Под знаменами врага, с. 233-234.

² Из протокола допроса бывшего начальника Восточного отделения РСХА, директора института «Арбайтсгемайншафт Туркестан» гауптштурмфюрера СС Ольцша Райнера. 27 ноября 1945 г., ЦА ФСБ РФ.

³ Motadel D., Islam and Nazi Germany's War, London, 2014, p. 234.

⁴ Yilmazata M., II. Dünya Savaşı'nda Bir Lejyoner Yayını: Azerbajcan Gazetesi, Ankara, 2018, s. 324.

⁵ Altstadt A. L., The Azerbaijani Turks: Power and Identity under Russian Rule, Stanford, 1992, p. 153.

⁶ Motadel D., Islam and Nazi Germany's War, London, 2014, p. 225.

վրացիների) առանձին ներկայացուցիչները ավելի շնորհալի ու շփվող են, տնտեսական, մշակութային և քաղաքական գործունեության ոլորտում ավելի առաջադեմ են, քան մյուս ազգերը: Ընդգծվում է, որ ադրբեջանցիները թյուրքական ծագման ժողովուրդ են, որոնց գյուղերում պարզապես «թաթար» են անվանում. *«Եթե վրացիներն ու հայերը ունեն հին ազգային պատմություն, ապա ադրբեջանցիների ազգային ինքնագիտակցությունը վերջին հարյուրամյակի ընթացքում զարգացել է շատ դանդաղ»¹:*

Այսպիսով՝ Հայրենական մեծ պատերազմի տարբեր փուլերում ադրբեջանական լեզեոնի կազմում ձևավորվել են տարբեր գումարտակներ ու ստորաբաժանումներ, բացի դրանից, մեծ թվով ադրբեջանցիներ ընդգրկված են եղել Արևելամուսուլմանական գնդի կազմում: Վերմախտի կազմում ընդհանուր առմամբ ծառայել է առնվազն 40 հազար ադրբեջանցի:

Չնայած նացիստական ղեկավարության հետ Ռասուլզադեի, Ֆաթալիբեյլիի և մյուսների համագործակցությանը՝ վերջիններս մինչև այժմ էլ Ադրբեջանում հերոսացվում են ինչպես ադրբեջանցի հասարակության, այնպես էլ՝ իշխանությունների կողմից: Ադրբեջանցիները փորձում են կոծկել կամ առնվազն չնկատելու տալ քաղաքական գործիչների համագործակցությունը Նացիստական Գերմանիայի հետ՝ վերջիններիս մասին գրքեր, հոդվածներ գրելով: Ռասուլզադեի արձանները կանգնեցվում են Ադրբեջանի տարբեր հատվածներում: Նրա պատկերով նամականիշներ են թողարկվել, նա պատկերված է ադրբեջանական թղթադրամների վրա: Ֆաթալիբեյլիի մասին նկարահանվել է նաև «Դյուդենգիից Մյունխեն» փաստավավերագրական ֆիլմը: Իսկ 2013 թ. նոյեմբերի 22-ին Իլհամ Ալիևը ստորագրել է² «Մամեդ Էմին Ռասուլզադեի 130-ամյակի անցկացման կապակցությամբ» հրամանագիր՝ պետական մակարդակով նշելով նրա հորեյանը:

¹ Справка Главного командования сухопутных войск Германии о формировании вспомогательных войск из лиц татарского и кавказского происхождения. 20 марта 1942 г., (ЦА ФСБ РФ), с. 603.

² 1news.az/news/20131122064316362-Ilkham-Aliev-podpisal-rasporyazhenie-o-provedenii-v-Azerbaidzhane-yubileya-Mamede-Emina-Rasulzade

Եզրակացություններ

1. Նացիստական Գերմանիայի հետ համագործակցած ադրբեջանցի գործիչները (Ֆաթալիբեյլի, Ռասուլզադե և ուրիշներ), ձգտելով ԽՍՀՄ-ից Ադրբեջանի անջատմանը, աջակցել են նացիստական ռեժիմի գաղափարներին ու ռազմաքաղաքական շահերին:

2. Հակաբոլշևիկյան հռետորաբանությամբ ադրբեջանցի քաղաքական ու ռազմական գործիչները համագործակցում էին նացիստական կառավարության հետ՝ ազգայնական, թուրքամետ իշխանություն ստեղծելու տեսլականով:

3. Ադրբեջանական զորամիավորումները ակտիվ մասնակցել են ռազմական գործողությունների, ինչպես նաև՝ ռազմական հանցագործությունների, այդ թվում՝ Վարչավայի ապստամբության ճնշմանը:

4. Ադոլֆ Հիտլերի վստահությունը շահած ադրբեջանցիները հիմնականում արդարացնում էին նացիստական ղեկավարության ակնկալիքները՝ ցույց տալով հավատարմորեն ծառայելու բարձր պատրաստականություն, ինչպես, օրինակ՝ Կովկասի լեռներում, Կուբանում, Վարչավայում:

5. Ադրբեջանում հետագայում նացիստների հետ համագործակցած այս գործիչները ոչ միայն չեն դատապարտվել, այլև պետական մակարդակով հերոսացվել են:

ANNA PALAQYAN

*“Geghard” Scientific Analytical Foundation,
ISEC NAS RA, Department of Oriental Studies,
Email: anna.palaqyan2001@gmail.com*

TRACING THE AZERBAIJANI COLLABORATION WITH THE NAZIS

Keywords: Azerbaijan, Nazi Germany, USSR, Great Patriotic War, Azerbaijani Legion.

The article examines the political and military collaboration between Azerbaijani figures and Nazi Germany during World War II. It explores the

ideological motivations behind the cooperation, the formation of Azerbaijani military units within the Wehrmacht, and their involvement in key operations, including the suppression of the Warsaw Uprising. The study also highlights the postwar glorification of Nazi collaborators such as Mammad Emin Rasulzade and Abdurahman Fatalibeyli in Azerbaijan. Through this lens, the article exposes the systematic attempt to reframe wartime collaboration as a nationalist liberation struggle, revealing a troubling pattern of historical revisionism and state-supported heroization.



Նկար 1.

Ադրբեջանական 804-րդ գումարտակը
(լուսանկարը՝ Rolf-Dieter Müller “The Unknown Eastern Front:
The Wehrmacht and Hitler’s Foreign Soldiers” գրքից)



Նկար 2.

Վարչավայի ապստամբության ճնշմանը մասնակցած
ադրբեջանական զինվորներ (1944 թ.)

(լուսանկարը՝ Գերմանիայի դաշնային արխիվից (Deutsches Bundesarchiv))



Նկար 3.

Թռուցիկում պատկերված է գերմանական զինվորական համազգեստով ադրբեջանցի զինվոր՝ Ադրբեջանի դրոշը բարձրացրած։ Տեքստը գովարանում է մայիսի 28-ը՝ Ադրբեջանի անկախության օրը՝ ներկայացնելով այն որպես «փայլուն օր»

**ՍՈՒՍԳԱՅԻԹ 1988. ԱՆՊԱՏԻԺ ՄԼԱՑԱԾ
ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ**

1988 թվականի փետրվարին Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում հայ բնակչության նկատմամբ տեղի ունեցան զանգվածային բռնություններ, որոնք պատմության մեջ մտան որպես Սումգայիթի ջարդեր: Դրանք ուղեկցվեցին սպանություններով, բռնաբարություններով, խռտանգումներով և հայերի բնակարանների թալանով: ԽՍՀՄ իշխանությունները դեպքերը որակեցին որպես «խուլիգանական արարքներ»՝ առանց քաղաքական գնահատականի: Դա նախադեպ դարձավ ինչպես Կիրովաբադում և Բաքվում ևս իրականացված ջարդերի, այնպես էլ հետագայում հայերի նկատմամբ ադրբեջանցիների իրականացրած բռնությունների համար, ներառյալ՝ 2016, 2020, 2022 և 2023 թվականների ռազմական գործողությունները:

Հետաքննությունների արդյունքում պատասխանատվության ենթարկվեց ընդամենը 94 մարդ, իսկ կազմակերպիչները՝ Ադրբեջանի ղեկավարության ներկայացուցիչները, մնացին անպատիժ: 1948 թ. դեկտեմբերի 9-ի՝ ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի դրույթների համադրությամբ՝ Սումգայիթի դեպքերը համապատասխանում են ցեղասպանության հանցակազմի տարրերին:

Բանալի բառեր՝ «Վերակառուցման» քաղաքականություն, Արցախյան ազատագրական շարժում, Ղափանի իրադարձություններ, Սումգայիթ, սումգայիթյան ոճրագործություն:

Ներածություն

1985 թ. ԽՍՀՄ-ում հռչակված «վերակառուցման» քաղաքականությունը նպաստավոր պայմաններ ստեղծեց Արցախյան հարցի արծարծման և արցախահայության ազգային-ազատագրական պայքարի վերելքի համար: Արցախահայության շրջանում սկսեց բարձրաձայնվել պատմական այս տարածքը (Արցախը) Հայաստանին վերամիավորելու գաղափարը: Դեռևս 1987 թ. նոյեմբերին Մոսկվա ուղարկվեց Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու պահանջագիր՝ գրեթե բոլոր չափահաս արցախցիների ստորագրությամբ: 1988 թ. հունվարի 5-ին ԽՍՀՄ մայրաքաղաք մեկնեց արցախցիների պատվիրակությունը՝ երկրի ղեկավարությանն իր պահանջները ներկայացնելու համար: Այդ պահանջների գլխավոր բովանդակությունն էր՝ վերացնել պատմական անարդարությունը և ԼՂԻՄ-ը միացնել Հայաստանին: Շուտով Արցախյան շարժումը համաժողովրդական բնույթ ստացավ:

1988 թ. փետրվարին տեղի ունեցան Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի (այն կազմավորվել էր դեռևս 1923 թվականի հուլիսի 7-ին) ժողովրդական պատգամավորների շրջանային և Ստեփանակերտի քաղաքային խորհուրդների նստաշրջաններ՝ պահանջելով հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան՝ Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին վերամիավորելու օրակարգով: 1988 թ. փետրվարի 20-ին հրավիրվեց ԼՂԻՄ մարզխորհրդի արտահերթ նստաշրջանը, որին 150 պատգամավորներից մասնակցել են 111-ը: Նստաշրջանն ընդունեց պատմական որոշում, որով հիմք դրվեց Արցախյան շարժման նոր փուլին: Որոշման մեջ ասված էր. «Ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին՝ խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ խոր ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերին և ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը»:

Արցախահայության սահմանադրական այս պահանջներին Ադրբեջանում ԽՍՀՄ-ի կենտրոնական իշխանությունների հետ համախորհուրդ հակադրեցին բիրտ ուժի և բռնության քաղաքականությունը²:

¹ Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994, էջ 278-279:

² Բալայան Վ., Շուշի, Երևան, 2017, էջ 473:

Դեռևս 1988 թ. փետրվարին, երբ Ստեփանակերտում անցկացվեց առաջին հանրահավաքը, Ադրբեջանի Կոմկուսի կենտկոմի բաժնի վարիչ Ասադովը հայտարարեց, թե «հարյուր հազար ադրբեջանցիներ պատրաստ են ցանկացած պահի ներխուժել Ղարաբաղ և սկսել կոտորած»¹:

1988 թ. փետրվարի 27–29–ն ընկած ժամանակահատվածում Բաքվից 26 կմ հեռավորությամբ գտնվող, մոտ 250.000 բնակչություն ունեցող Սումգայիթ քաղաքում, որտեղ ապրում էին շուրջ 18.000 հայեր, տեղի ունեցան հայ բնակչության զանգվածային ջարդեր, կոտորածներ²: Սակայն մինչ օրս վերջնականապես բացահայտված չէ, թե ադրբեջանական կողմից ովքեր են ծրագրել և կազմակերպել հայերի սպանողը, ինչու չկանխվեց ջարդը, և ինչու ԽՍՀՄ ղեկավարությունն³ ու իրավապահ մարմինները չկանխեցին, պատշաճ կերպով չդատապարտեցին հանցագործությունն ու դրան համապատասխան քաղաքական և իրավական գնահատական չտվեցին⁴:

Հայերի ջարդի վերաբերյալ առկա են⁵ ականատեսների բազմաթիվ վկայություններ, միջազգային կառույցների զեկուցումներ, պաշտոնական փաստաթղթեր, դատական գործերի նյութեր և դատավճիռներ:

Ջարդերից առաջ և դրանց ողջ ընթացքում Սումգայիթում տարածվել են կեղծ լուրեր Հայկական ԽՍՀ Կապան քաղաքում և Լեռնային Ղարաբաղում ադրբեջանցիների նկատմամբ ազգային հիմքով իրականացվող հետապնդումների և դաժանությունների վերաբերյալ:

1990–ական թվականներին ադրբեջանական հասարակության գիտակցության մեջ մասսայականություն էր վայելում, այսպես կոչված, «բունիաթովյան վարկածը»⁶, որը սումգայիթյան ջարդերի պատասխանատուներ էր համարում հայ ազգայնականներին, որոնք իբր այդ ամենը կազմակերպել էին ադրբեջանցիներին անվանարկելու

¹ Կոմունիստ 13 սեպտեմբերի, 1989 թ.:

² Հայտնի է նաև Սումգայիթի ցեղասպանությունն անունով:

³ web.archive.org/web/20160305190707/http://sumgait.info/sumgait/politburo-meeting-29-february-1988.htm

⁴ Сумгаитская трагедия в свидетельствах очевидцев, Ереван, 1989, с. 3.

⁵ www.youtube.com/watch?v=6I6YHWCxoNE

⁶ Հակոբյան Ա., «Ղափանի դեպքերի» առասպելը նախասումգայիթյան, սումգայիթյան և հետսումգայիթյան զարգացումներում, Լրաբեր հասարակական գիտությունների, 2024, թիվ 2, էջ 63-95:

նպատակով: Այս նույն թեզն առաջ է քաշում նաև Ադրբեջանական ԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, ԳԱ Պատմության ինստիտուտի փոխտնօրեն Մ. Իսմայիլովը: Վերջինս իր գրքում նշում է. «...Սումգայիթյան իրադարձությունների կազմակերպումը հայ ծայրահեղականների ձեռքի գործն է՝ ադրբեջանցի ժողովրդին սևացնելու և ԼՂԻՄ-ի անջատվելը դյուրացնելու համար...»¹:

Վերջին շրջանում «բունիաթովյան վարկածը» դիտարկվում է որպես «ղավադրության տեսության ակնառու օրինակ»²:

Արդեն 1990 թ. հայտնվեց ադրբեջանական մեկ այլ թեզ, որի հիմքը Դավուդ Իմանովի «Սումգայիթի արձագանքը» ֆիլմն էր, որտեղ ջարդերի կազմակերպման մեջ մեղադրվում էին հայերը, ռուսներն ու ամերիկացիները, որոնք այդ եղանակով իբր «փորձում էին կործանել Խորհրդային Միությունը»:

Սումգայիթյան ջարդերի առնչությամբ հիմնականում սկսել են շրջանառվել, այսպես կոչված, «Ղափանի դեպքերը», որի հեղինակներն են Ա. Յունուսովն ու Հարավային Կովկասի հակամարտությունների գծով վերլուծաբան, անգլիացի Թոմաս դե Վաալը: Վերջինս իր «Սև այգի. Հայաստանն ու Ադրբեջանը խաղաղության և պատերազմի միջով» աշխատության մեջ³ գրում է, որ «հայերի բռնարարքների» հետևանքով Ղափանի շրջանից «ծեծված ադրբեջանցիները» գնում էին Բաքու, այնտեղից ուղղվում դեպի Սումգայիթ, իսկ Յունուսովը նշում է, որ խոսքն իբր մոտ 4000 «բռնագաղթածների» մասին է:

«Ղափանի դեպքերը» կազմակերպվել ու ներդրվել էին Ադրբեջանի պաշտոնյաների կողմից Սումգայիթից առաջ՝ մամուլի հրապարակումների, «ղափանցիների» անունից շինծու բողոք-հեռագրերի, կեղծ լուրերի տարածման միջոցով:

Հայերի՝ Սումգայիթում սեփական ջարդերի կազմակերպման անտրամաբանական դրույթի միակ փաստական հիմքը հանցագործություններին Էդուարդ Գրիգորյան անունով անձի ակտիվ մասնակցությունն էր: ԽՍՀՄ ՊԱԿ-ի քննիչներից Ադրբեջանական ԽՍՀ-ում քննությանն էր մասնակցում նաև Կիևի ռազմական օկրուգի հատուկ

¹ Մոսեսովա Ի., Յովնանյան Ա., Բաքվի ջարդերը, Երևան, 1992, էջ 28-29:

² Հակոբյան Ա., նշվ. աշխ.:

³ Թոմաս դե Վաալ, «Սև այգի. Հայաստանն ու Ադրբեջանը՝ խաղաղության և պատերազմի միջով», Երևան, 2007:

բաժնի ավագ քննիչ Վալերի Կիպորենկոն: Վերջինիս վկայությամբ¹ «զանգվածային անկարգություններից մոտ մեկ-երկու շաբաթ առաջ Սումգայիթ են ժամանել փախստականներով լի մի քանի ավտոբուսներ... Իրականում սրանք մարդիկ էին, ովքեր Երևանում լավ եկամուտ չունեին և, օգտվելով ԼՂ-ի վատթարացող իրավիճակից, որոշեցին, ի հեճուկս հայերի, գալ հայրենիք և բնակարան ստանալ: Մենք օպերատիվ զեկույցներ ունեինք ԽՍՀՄ ՊԱԿ-ից, որտեղ որևէ մեկին բռնաբարելու կամ Երևանից վտարելու դեպք չի եղել: Սա զուտ քարոզչական արշավ էր, որը հանգեցրեց նրան, որ ադրբեջանցիները, լսելով այս ամենը, չունենալով սեփական բնակարան և մշտական աշխատանք, հեշտությամբ ներգրավվեցին տարբեր խմբերի մեջ, որոնք գալիս էին Սումգայիթ, պարզում, թե որտեղ էին ապրում հայերը, թալանում այդ բնակարանները, տերերին նետում փողոց, սպանում: Երբ ես հասա Սումգայիթ, քաղաքն ամբողջությամբ ավերված էր...»: Որպես քննչական խմբի ղեկավար՝ Վալերի Կիպորենկոն ասել է. «Ես ինքս եմ հարցաքննել Գրիգորյանին և նրան մեղադրանք առաջադրել: Նա ունեցել է հայկական ազգանուն, բայց ազգությամբ նշված է եղել որպես ադրբեջանցի: Իրականությունն այսպիսին է. նա ծնվել է անգործունակ ընտանիքում, մայրը ադրբեջանցի է, մանկության տարիներին հայրը լքել է նրանց ու մեկնել անհայտ ուղղությամբ², ուստի ծայրահեղ բացասական վերաբերմունք է ունեցել հայերի նկատմամբ: Նա ուներ մի քանի համոզմունքներ և թեև ուներ հայկական ազգանուն, բայց ծայրահեղ բացասաբար էր տրամադրված հայերի նկատմամբ»: Քննիչի այս վկայությունից կարելի է եզրակացնել, որ Է. Գրիգորյանի հայկական ազգանուն ունենալն ադրբեջանցիներն օգտագործեցին՝ Սումգայիթի ջարդերի պատասխանատվությունը հետագայում հայերի վրա բարդելու նպատակով:

Վ. Կիպորենկոն ինքն է փաստել, որ ջարդերը կազմակերպված էին և հիմնված ազգային պատկանելության հիմքի վրա: «Սումգայիթի անկարգությունների ժամանակ ոչ մի ադրբեջանցի չի տուժել, ոչ մի հայ

¹ Валерий Кипоренко: *Беспорядки в Баку проходили под теми же лозунгами, что и в Сумгаите – 13 Января 2011 – Аналитика – новости Украины.*

² Կա վարկած, որ Է. Գրիգորյանի մայրը եղել է ազգությամբ ռուս, իսկ հայրը մահացած է եղել վաղուց:

Նրանց չի սպանել: Հայ ժողովուրդը պատրաստ չէր դիմադրության»,– նշել է քննիչը¹:

Ադրբեջանցիների կողմից Սումգայիթում հայ խաղաղ բնակչության նկատմամբ իրականացված գործողությունները Վ Կիպորենկոն բնութագրել է որպես ցեղասպանություն. «Այո՛, Սումգայիթում դա հենց ցեղասպանություն էր: Քարոզվող կարգախոսներն էին՝ «Սպանի՛ր հայերին», «Նրանք խլել են մեր լավագույն բնակարանները», «Նրանք երկրորդական ժողովուրդ են», և «Սումգայիթում չպետք է մնա ոչ մի հայ»:

Սումգայիթում ջարդերի հիմքով ձերբակալվել են 84 անձինք (82 ադրբեջանցի, 1 հայ և 1 ռուս)²: 1988 թվականի փետրվարին և ավելի ուշ Կրեմլի նախաձեռնած և իրականացրած հարցի վերաբերյալ հետաքննությունը ցույց է տվել, որ 1987–1988 թվականներին Կապանում տեղի ադրբեջանցիների նկատմամբ հալածանքներ չեն եղել: Փաստորեն հայերի ջարդի սցենարը պատրաստ էր, և հենց սումգայիթյան առաջին հանրահավաքում՝ 1988 թվականի փետրվարի 26–ին, բեմադրվում է իբր «Հայաստանում՝ Ղափանում, հայերի կողմից կտրված գլուխների, բռնաբարված և առևանգված հարյուրավոր ադրբեջանուհիների» և ահասարսուռ այլ թեմաներով ներկայացումը: Փետրվարի 26–ին Սումգայիթի գլխավոր հրապարակում Ադրբեջանական ԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Հասան Սեիդովը հանդես է գալիս³ «Կորչե՛ն հայերը Սումգայիթից», «Մա՛հ հայերին», «Հայերը մեր հավատի թշնամիներն են ու առաջընթացի խանգարիչները, կոտորեցե՛ք նրանց» կոչերով: Փետրվարի 27–ին սկսվում է հայերի սպանող Սումգայիթում: Թմրանյութերի և ալկոհոլային խմիչքների ազդեցության տակ գտնվող ամբոխը, որին հրահրում էին քաղաքային իշխանությունների ներկայացուցիչները, հայերին սպանում էր բնակարաններում, տանջամահ անում փողոցներում ու հրապարակներում, ողջ–ողջ այրում: Նախօրոք կազմվել էին հայերի բնակարանների ցուցակները, անջատվել հեռախոսները: Փետրվարի 26–29–ը քաղաքի միլիցիան չի

¹ Валерий Кипоренко: *Беспорядки в Баку проходили под теми же лозунгами, что и в Сумгаите – 13 Января 2011 – Аналитика – новости Украины.*

² Շարաֆյան Ն., Սումգայիթի հայերի զանգվածային ջարդերի հետևանքները և մեղավորների դատապարտումը, Լրաբեր հասարակական գիտությունների, 2022, թիվ 1, էջ 30–41:

³ Кривописков В.В., Мятажный Карабах. Из дневника офицера МВД СССР. Издание второе, дополненное, Москва, 2007, с. 185–200.

գործել, ճանապարհներն ու երկաթուղին գտնվել են զինված բանդաների հսկողության տակ: Վկաները հետագայում պատմում են բազմաթիվ դեպքեր, երբ հայ երեխաներին ու ծերերին, կանանց ու տղամարդկանց անխնա սպանել են, ապա դիակների վրա բենզին լցրել ու այրել: Խմբերով հարձակվել են միայնակ աղջիկների, կանանց, նույնիսկ հղիների վրա, բռնաբարել, ապա ենթարկել խոշտանգումների:

Սումգայիթյան իրադարձությունների ականատես վկաների հարցաքննությունների նյութերի հիման վրա, որն իրականացվել է ՀԽՍՀ դատախազության քննչական խմբի կողմից ԽՍՀՄ դատախազության հանձնարարությամբ, ՀԽՍՀ դատախազության կողմից հատուկ ստեղծված քննչական խումբը՝ բաղկացած 12 օպերատիվ աշխատակիցներից, 1988 թ. մարտի 17-ից 29-ը հարցաքննել է 281 վկայի՝ Սումգայիթ քաղաքի 2925 բնակիչներից, որոնք տեղափոխվել են Հայաստան և տեղակայվել ՀԽՍՀ-ի տարբեր շրջաններում¹:

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը հրապարակել է 1980-ական թվականների վերջին Խորհրդային Ադրբեջանում բնակվող հայերի նկատմամբ բարբարոսության և զանգվածային բռնության փաստերի վերաբերյալ Հայաստանի դատախազության արխիվում պահպանված քննված քրեական գործերի նյութերը²: Ըստ այդ նյութերի՝ վկաների ցուցմունքների համաձայն՝ փետրվարի 27-ից սկսած՝ Սումգայիթում սկսվել են զանգվածային անկարգություններ, ջարդեր և թալան՝ ուղղված հայերի բնակարանների, հիմնարկների դեմ, որտեղ ապրել և աշխատել են հայեր: Ցուցարարների բազմությունը, բաժանվելով խմբերի, շրջել է տներով, ճշտել հայերի հասցեները, կոտրել դռները, ներխուժել է բնակարաններ, իրականացրել ջարդեր, ծեծել և սպանել բնակիչներին, բռնաբարել կանանց (հիմնականում խմբակային ձևով) և նվաստացրել՝ մերկացրած անցկացնելով փողոցներով:

¹ Հայաստանի Հանրապետության դատախազություն, Տեղեկանքներ՝ ՀԽՍՀ դատախազության քննչական խմբի կողմից անցկացված Սումգայիթի դեպքերի ականատեսների հարցաքննության նյութերի ակնարկային տեղեկանք, Գաղտնի / հանրայնացված/ 08.04.1988 թ., https://www.prosecutor.am/storage/pages/pg_66_8994549712.pdf:

² Հայաստանի Հանրապետության դատախազություն, Ադրբեջանում հայերի նկատմամբ իրականացված վայրագությունների դեպքերի առթիվ քննված գործի նյութերը, 2010 թ., <https://www.prosecutor.am/page/66>:

Նույն վկաները նշել են, որ անկարգություններ իրականացնող խմբերի գործողություններում նկատվել է որոշակի կազմակերպվածություն: Նրանց ձեռքին եղել են քարեր, փայտեր, մետաղական ձողեր, դյուրավառ հեղուկներով տարաներ և այլ առարկաներ: Քաղաքային տրանսպորտի երթևեկությունը կանգնեցվել է, տրանսպորտում որոնվել են հայեր: Ցուցարարների ձեռքին եղել են դրոշներ, պաստառներ՝ հայերի վտարման և ոչնչացման կոչերով: Որոշ մասնակիցների մոտ եղել են բարձրախոսներ: Ցուցմունքներում նշված է, որ զանգվածային անկարգությունների և վայրագությունների օրերին քաղաքի որոշ բնակիչների, մասնավորապես՝ հայերի հեռախոսները անջատված են եղել, մինչդեռ նույն շենքում ապրող ադրբեջանցիների հեռախոսներն աշխատել են: Հայերին տարբերել են որոշ բառերի արտասանությամբ, նրանց նույնականացրել են՝ ստուգելով անցորդների փաստաթղթերը փողոցներում, հետևել և ստուգել են ավիատոմսերի վաճառքի կետերում՝ պարզելու, թե ովքեր են գնել տոմսեր դեպի Հայաստան և այլն:

71 վկաների ցուցմունքներում արձանագրվել են բազմաթիվ բռնաբարությունների, կանանց մերկացման, նրանց այդ վիճակում փողոց դուրս բերելու և այլ նվաստացումների դեպքեր: Հարցաքննված վկաները նշել են, որ բազմաթիվ դեպքերում տեղի են ունեցել խմբակային բռնաբարություններ՝ զոհերի հարազատների և մտերիմների ներկայությամբ: Նշվել են նաև անչափահաս աղջիկների և տարեց կանանց բռնաբարության, մերկացման, ծեծի, կրծքագեղձերը կտրելու և զոհերին այրելու դեպքեր: Բազմաթիվ բռնաբարություններ ուղեկցվել են զոհերի սպանությամբ: Նկարագրվել է նաև երկու դեպք, երբ հայ կանայք, փորձելով խուսափել բռնաբարությունից և նվաստացումից, իրենց նետել են պատուհաններից և պատշգամբներից¹:

Ըստ վկաններից մեկի ցուցմունքի²՝ «Չաբաթ երեկոյան, այսինքն՝ 1988 թ. փետրվարի 27-ին՝ մոտավորապես 21.30-ին, մենք ճիչեր և սուլոցներ լսեցինք «Սպուտնիկ» խանութի կողմից: Մոտենալով

¹ Հայաստանի Հանրապետության դատախազություն, Տեղեկանքներ՝ ՀԽՍՀ դատախազության քննչական խմբի կողմից անցկացված Սուվգայիթի դեպքերի ակադեմիայի հարցաքննության նյութերի ակնարկային տեղեկանք, Գաղտնի / հանրայնացված/ 08.04.1988 թ., https://www.prosecutor.am/storage/pages/pg_66_8994549712.pdf:

² 1938 թվականին ծնված վկա Սևյան Գրիգորի Սարկիսովիչ. 1955 թվականից մշտապես բնակվել է Սուվգայիթում:

պատուհանին՝ տեսանք հսկայական բազմություն... Յուցարարների միջին տարիքը 16-ից 35 տարեկան և բարձր: Նրանց թվում կային նաև երիտասարդ աղջիկներ...»¹: Նույն վկան նշել է, որ ադրբեջանցիներին զգուշացված է եղել գիշերը բնակարանի լույսերը չվառել, ինչից պարզ է դարձել, թե որտեղ են ապրել հայերը:

Ադրբեջանցիների դաժանությունների մասշտաբն ու բնույթը վկայում են, որ դրանք ոչ թե պատահական անկարգություններ են եղել, այլ հայ բնակչության դեմ համակարգված և ուղղորդված գործողություններ: «...Կուսակցության կոմիտեի շենքի մուտքի մոտ ես ականատես եղա, թե ինչպես զինվորների ուղեկցությամբ իմ կողքով անցկացրին մի աղջկա՝ անգիտակից վիճակում, կտրած ականջներով»,– իր ցուցմունքում նշում է մեկ այլ վկա²:

Ըստ բազմաթիվ վկաների՝ Սումգայիթի փողոցներում խորհրդային բանակի զինվորներն անտարբեր դիտում էին սպանողը: Երբ նրանց հարցրել են, թե ինչու չեն միջամտում, չեն կասեցնում ջարդերը, հրամանատարները լոկ ուսերն են թոթվել. «Կարգադրություն չկա»: Խորհրդային բանակի ստորաբաժանումներն «ուշացան» ճիշտ այնքան, որքան անհրաժեշտ էր հայերի նկատմամբ ծայր առած վանդալիզմն ավարտելու համար: Որպեսզի Սումգայիթից ուշադրությունը շեղվի, այդ նույն օրերին հայերի ջարդեր են կազմակերպվում նաև Աղդամում, Շամխորում և հայաշատ այլ բնակավայրերում:

Միայն երեքօրյա ջարդերից հետո՝ փետրվարի 29-ի գիշերը, խորհրդային զորքերը Կրակի գլխավորությամբ մտան Սումգայիթ. վերջիններս, սակայն, իրավունք չունեին մարտական փամփուշտներ կիրառելու: Մեծ դժվարությամբ հաջողվեց դադարեցնել վայրագություններն ու քաղաքից դուրս հանել ողջ մնացած հայերին:

Ըստ պաշտոնական տվյալների՝ Սումգայիթում տանջամահ էին արվել³ 32 մարդ, խոշտանգվել ու ծանր վիրավորվել ավելի քան

¹ Հայաստանի Հանրապետության դատախազություն, Քրեական գործերի կյութեր՝ «3-րդ միկրոշրջանում սպանում էին մի կնոջ և մանկահասակ երեխաների», https://www.prosecutor.am/storage/pages/pg_66_8994711408.pdf:

² Հայաստանի Հանրապետության դատախազություն, Քրեական գործերի կյութեր՝ «Ես ականատես եղա, թե ինչպես զինվորների ուղեկցությամբ իմ կողքով տարան ուշագնաց մի աղջկա՝ ականջները կտրած», վկա՝ Խաչատրյան Սվետլանա Յուրիի՝ ծնված 1920 թ.: https://www.prosecutor.am/storage/pages/pg_66_8994740241.pdf:

³ www.sumgait.info/sumgait/sumgayit-list-victims.htm

200, այլ տվյալներով՝ 400 հոգի: Շուրջ 200 բնակարան ենթարկվել է հարձակման ու կողոպուտի, ավերվել է մշակութային և անվտանգության ավելի քան 50 շինություն, վնասվել ավելի քան 100 միավոր ավտոտրանսպորտային միջոց: Սակայն այս տվյալներն իրականությանը չեն համապատասխանում: Առկա են այլ հիմնավոր փաստեր, որ Սումգայիթում 3 օրվա ընթացքում սպանվել է ավելի քան 110 հայ:Նրանց հիմնական մասին սպանել են խոշտանգումներից հետո՝ ողջակիզելով:

1988 թ. գարնանը Հայկոմկուսի կենտրոնում ստացված մի փաստաթղթում նշվում է, որ Սումգայիթում սպանվել են ոչ թե 32 հայեր, այլ ավելի քան 400, և խեղվել, ու տուժել են մոտ 1000 հոգի: Հետքերը թաքցնելու համար դիակները տարվել են Բաքու, այլ քաղաքներ կամ էլ՝ նետվել ծովը:

Եզրակացություն

Սումգայիթում տեղի ունեցածին չի տրվել քաղաքական գնահատական: ԽՍՀՄ մի քանի քաղաքներում տեղի են ունեցել առանձին դատավարություններ: Զարդարարներից պատասխանատվության է ենթարկվել միայն 94 մարդ, որոնցից մեկն է մահապատժի ենթարկվել: Իսկ ջարդերի իրական կազմակերպիչը՝ Ադրբեջանի ղեկավարությունը, մնացել է անպատիժ: Սումգայիթի ջարդերը ԽՍՀՄ կենտրոնական ղեկավարության կողմից որակվել են որպես «խուլիգանական արարքներ» և ոչ միանշանակ են դատապարտվել: Դա հանգեցրեց հայերի ջարդերի շարունակական ադրբեջանական այլ քաղաքներում, մասնավորապես՝ կոտորածներ տեղի ունեցան 1988 թ. Նոյեմբերին Կիրովաբադում (Գանձակ) և 1990 թ. հունվարին՝ Բաքվում:

Այսպիսով, ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի 2-րդ հոդվածի² դրույթների և պատմական տվյալների համադրումից բխում է, որ 1988 թ. փետրվարին Սումգայիթում տեղի ունեցած հանցագործություններն իրենց օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերով համապատասխանում են ցեղասպանության հանցակազմի

¹ Улубабян Г. и другие, Сымгаит...Геноцид...Гласность?, Ереван, 1990, с. 55.

² ԿՈՆՎԵՆՑԻԱ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼՈՒ ԵՎ ՊՍԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ: www.arlis.am/hy/acts/75835

տարրերին: Ցավոք, ադրբեջանական բարբարոսների վայրագություններն ու ձեռագիրն այս տարիների ընթացքում չեն փոխվել: Սուսգայիթում, Կիրովաբադում, Բաքվում հայերի նկատմամբ իրականացված գազանությունները՝ հայերին գլխատել, անդամահատել, դիակներն այրել, կանանց բռնաբարել, ականջները կտրել, մասնատել և այլն, նույնությամբ կրկնվել են¹ «Յաշմա», «Կոմանդո» ադրբեջանաթուրքական հատուկ նշանակության ջոկատների կողմից 2016 թ. Քառօրյա, 2020 թ. Արցախյան 44-օրյա պատերազմների, Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի նկատմամբ 2022 թ. սեպտեմբերյան ագրեսիայի, 2023 թ. սեպտեմբերին Արցախի ամբողջական հայաթափման ընթացքում:

STELLA VARDANYAN

“Geghard” Scientific Analytical Foundation,
Email: stella118228v@gmail.com

SUMGAIT 1988: AN UNPUNISHED CRIME

Keywords: *Perestroika policy, Artsakh liberation movement, Kapan incidents, Sumgait, Sumgait massacre.*

No political assessment has been given to the events that took place in Sumgait. Separate trials were held in several cities of the USSR. Only 94 perpetrators were held accountable, one of whom was sentenced to death. However, the real organizers of the massacres – the Azerbaijani leadership – remained unpunished. The Sumgait massacres were classified by the central leadership of the USSR as “acts of hooliganism” and were condemned ambiguously. This led to the continuation of massacres

¹ [The-ongoing-Armenophobic-state-policy-of-Azerbaijan_compressed-4.pdf.tatoyanfoundation.org/wp-content/uploads/2023/06/The-ongoing-Armenophobic-state-policy-of-Azerbaijan_compressed-4.pdf](https://tatoyanfoundation.org/wp-content/uploads/2023/06/The-ongoing-Armenophobic-state-policy-of-Azerbaijan_compressed-4.pdf)

of Armenians in other Azerbaijani cities, in particular, pogroms took place in Kirovabad (Ganja) in November 1988 and in Baku in January 1990.

Thus, based on the comparison of the provisions of Article 2 of the UN Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide of December 9, 1948, and historical facts, it follows that the crimes committed in Sumgait in February 1988, by their objective and subjective elements, correspond to the components of the crime of genocide.

Unfortunately, the barbarity and the methods of the Azerbaijani perpetrators have not changed over the years. The atrocities committed against Armenians in Sumgait, Kirovabad, and Baku beheadings, mutilations, burning of bodies, rapes of women, cutting of ears, dismemberments, and other acts were repeated by the Azerbaijani–Turkish special units “Yashma” and “Commando” during the Four–Day War of 2016, the 44–Day Artsakh War of 2020, the September 2022 aggression against the sovereign territory of the Republic of Armenia, and the complete ethnic cleansing of Artsakh in September 2023.

*Ереванский государственный университет,
Факультет международных отношений,
Научно-аналитический фонд «Гегард»
Эл. почта: gor.margaryan@ysu.am*

ДЕМОНИЗАЦИЯ ОБРАЗА РОССИИ В ПОСТСОВЕТСКОЙ ИСТОРИОГРАФИИ АЗЕРБАЙДЖАНА

Статья анализирует процесс демонизации России – в образах Российской империи и Советского Союза – в постсоветской историографии Азербайджана как устойчивую и институционально закреплённую стратегию политики памяти. Центральным инструментом выступает колониальная парадигма, позволяющая интерпретировать использование терминов «агрессия», «оккупация» «захватчики» и «угнетения». Автор показывает, что подобный подход не является результатом спонтанных научных дискуссий, а формируется государственными институтами, академическими центрами и системой школьного образования. Особое внимание уделено роли ключевых историографических фигур, политизации исторического знания и интерпретаций ключевых событий. Анализ учебников и научных публикаций демонстрирует сознательное закрепление негативного образа России и создание ретроспективных мифологических конструкций, служащих задачам национального строительства. Делается вывод о том, что подобный нарратив одновременно способствует консолидации азербайджанской идентичности и препятствует развитию объективной научной историографии, углубляя идеологические разрывы в регионе.

Ключевые слова: *азербайджанская историография, демонизация России, колониальная парадигма, политика памяти, национальное строительство, историческое мифотворчество, школьные учебники, постсоветское пространство, Российская империя, СССР.*

Процесс демонизации России, прежде всего в лице её исторических предшественников – Советского Союза и Российской империи, – в азербайджанской историографии постсоветского периода представляет собой значимый и показательный объект для исследования политики памяти. Данное явление не может быть охарактеризовано как спонтанная реакция отдельных течений в азербайджанской исторической науке, ни как эпизодический продукт внутренней политической конъюнктуры. Напротив, оно демонстрирует черты целенаправленной, институционально закреплённой и последовательно проводимой стратегии.

Центральным и наиболее последовательным мотивом в демонизации России и Российской империи в постсоветской азербайджанской историографии является применение колониальной парадигмы. Имперское и советское правление над территориями современного Азербайджана рассматриваются через призму колониальной эксплуатации, насильственного захвата и угнетения. Эта парадигма используется для формирования негативного образа России как агрессивной и чуждой цивилизации, чья единственная цель состояла в экономической и политической эксплуатации азербайджанского народа¹. Этот подход реализуется через несколько ключевых компонентов: использование уничижительной терминологии, представление двойственного образа России, а также акцент на экономическую эксплуатацию и якобы уничтожении государственности Россией. Здесь речь идёт о закавказских ханствах, сформировавшихся и усилившихся после ослабления и распада политической власти Ирана в первой половине XVIII века. В азербайджанской историографии эти политические образования зачастую искусственно объявляются «азербайджанскими государствами», что достигается путём сознательного игнорирования их реальной этнополитической природы и отсутствия какой-либо институциональной связи с современным азербайджанским государством. На основе такой ретроспективной политизации прошлого Россия интерпретируется как «ликвидатор» якобы «азербайджанских» ханств, что приводит

¹ Россия в учебниках истории стран Ближнего и Постсоветского Востока, Китая: реферативный сборник / отв. ред. В.А. Аватков; ИНИОН РАН, Москва, 2024, с. 9-16; Shalala Mammadova, *The Image of Russia in Contemporary Azerbaijani History Textbooks*, электронная статья (13.06.2025) на сайте <https://bakuresearchinstitute.org/en/the-image-of-russia-in-contemporary-azerbaijani-history-textbooks/>

к формированию глубоко искажённой исторической картины и представляется одним из примеров современного национального мифо-строительства в Азербайджане.

Советская эпоха воспринимается как прямое продолжение колониальной политики, но с новыми, еще более жестокими инструментами. Критики подвергается весь советское прошлое включая советскую историографию. Согласно азербайджанским исследователям советское востоковедение занималось «конструированием» истории для тех народов и государственных образований, у которых не были развиты ни историческая наука, ни историография. Однако при этом парадоксальным образом одновременно высказывается скрытый упрек Москве, утверждая, что в советский период именно азербайджанская историография оказалась значительно более сфабрикованной, чем историография соседних народов¹. Россия и СССР стали точкой отсчета, отделяющей «до» и «после», то есть время свободы и времени «колониального порабощения». Этот сдвиг нашел отражение даже в названиях исторических событий. Например, Великая Отечественная война больше не называется «Великой Отечественной войной», а просто «Второй мировой войной» (İkinci Dünya Müharibəsi, см, например работы Б. Каримова, Е. Гулиева и др.²), а Апрельская революция (Бакинская операция) в апреле 1920 года было переименовано в «Апрельскую оккупацию» (Aprel işğalı)³, как например в публикациях научных сотрудников Института истории имени А. Бакиханова НАНА М. Эмрахова⁴ или

¹ Garagozov R., Azerbaijani history and nationalism in the Soviet and post-Soviet periods: challenges and dilemmas, *Dynamics of Asymmetric Conflict*, 2012, 5, pp. 136-142. 10.1080/17467586.2012.743030.

² Karimov B., İkinci Dünya Müharibəsi dövründə azərbaycanlıların İtaliya və Yuqoslaviya partizan hərəkatında iştirakı tarixindən. Milli Azərbaycan Tarixi Muzeyi, 2015; Quliyev E., İkinci Dünya müharibəsi illərində Türkiyənin itkiləri. Refah faciəsi. 31 Mart Azərbaycanlıların Soyqırımı Gününün 105-Ci İldönümünə Həsr Olunmuş “1918-Ci İI Mart Soyqırımı Tarixi Tədqiqatlarda” Mövzusunda Respublika Elmi Konfransının MATERİALLARI, 2023.

³ Gasimov Z., Some Reflections on the Past Two Decades of Independence, in: *Historiography and National-Building among Turkic Populations*, hrsg. von Birgit Schlyter, *Papers*, Vol. 5, Swedish Research Institute in Istanbul, 2014, p. 69-89.

⁴ Emrahov M., Aprel İşğalından Sonra Sovet Bolşevik Rejiminin Azərbaycan Xalqının Milli-Mənəvi Dəyərlərinə Qarşı Soyqırımı Siyasəti. *Akademik Tarih ve Düşünce Dergisi*, 2022, 9(3), s. 748-776.

М. Сулейманова¹. Очевидно, что риторика формировалась сверху с целью замены существующей парадигмы, что наглядно демонстрирует Указ Президента Азербайджана Ильхама Алиева «О 90-летнем юбилее Азербайджанской Демократической Республики», подписанное 15 февраля 2008 года. В документе использованием термина «Апрельская оккупация» подчёркивается насильственный характер установления советской власти, которая прямо ассоциируется и идентифицируется с официальной Москвой. Однако, примечателен еще тот факт, что когда речь идет о государственности, то в том же документе констатируется, что «28 апреля 1920 года была создана вторая республика – Азербайджанская Советская Социалистическая Республика», что представлено как факт конституционного образования государства². Следует отметить, что аналогичная интерпретация прослеживается и в современных вузовских учебниках Азербайджана. В издании «История Азербайджана», подготовленном Бакинским государственным университетом в 2016 г., воспроизводится та же оценочная лексика, что характерна для школьных пособий. Россия последовательно описывается как «захватчик», при этом термин «захват» по отношению к России употребляется многократно, в другом случае генерал П. Д. Цицианов и русские войска обвиняются в «массовых истреблениях» населения Гянджи и т.д.³.

Надо заметить, что государственная власть изначально сыграла ключевую роль в продвижении и закреплении нового исторического нарратива. Под руководством президента Абульфазы Эльчибея в 1992 году начался сдвиг в сторону тюркоцентричных нарративов, что выразилось в активном противодействии российскому влиянию. В период правления Гейдара Алиева и далее азербайджанская историография приобрела ещё более выраженный политизированный характер, а популистские методы формирования официального исторического

¹ Süleymanov M., 1920-ci ilin Aprel İşğalı Dövründə Azərbaycanın və Sovet Rusiyasının Hərbi Gücünün Nisbəti. Akademik Tarih ve Düşünce Dergisi, Türkiye-Azerbaycan İlişkilerinin 100. Yılı Özel Sayısı, 2023, 10 (2), s. 620-633.

² Указ Президента Азербайджана Ильхама Алиева «О 90-летнем юбилее Азербайджанской Демократической Республики» - <https://axc.preslib.az/az/page/KsMhB2iU7P> (дата последнего входа 05.10.2025)

³ История Азербайджана с древнейших времен до первых десятилетий XXI века, Баку, издание "Baki University", 2016, с. 206.

дискурса стали доминировать. Как метко отметил З. Гасимов, речь идёт о «популистском написании истории во времена династии Алиевых» (Populist History–Writing during the Əliyev Dynasty)¹.

Это неудивительно, учитывая, что азербайджанская академия наук долгое время сталкивалась с серьёзными внутренними проблемами, в том числе с авторитарными ограничениями, препятствующими объективному анализу недавнего прошлого (особенно периода правления Гейдара Алиева), ограниченным языковым образованием исследователей (в основном владение только русским и турецким языками) и широко распространённой коррупцией в академической среде², что значительно затрудняет международное научное сотрудничество³. Совокупность этих факторов создала условия для формирования азербайджанской историографии в политизированной и в значительной степени изолированной форме, без полного доступа к внешним источникам и сравнительным данным. В результате переосмысление истории в постсоветском Азербайджане стало инструментом национального строительства. Государство начало контролировать, какие факты преподносятся молодежи, и стремилось использовать историю для укрепления власти и формирования единой национальной идентичности.

Инструменты демонизации России включают в себя систему школьного образования, академическую историографию и государственные научные институты. Школьное образование является главным полигоном для внедрения этого демонизационного нарратива. Анализ показывает, что негативный образ России встречается практически во всех школьных учебниках разных лет, что свидетельствует о системном подходе происходящего. В учебниках для 7–го, 8–го, 9–го и 11–го классов можно найти множество примеров, подтверждающих

¹ Gasimov Z., Some Reflections on the Past Two Decades of Independence, in: *Historiography and National-Building among Turkic Populations*, hrsg. von Birgit Schlyter, Papers, Vol. 5, Swedish Research Institute in Istanbul, 2014, p. 79.

² Коррупционный скандал в НАНА: расследуются нарушения трех президентов академии, материал медиаресурса «Media.az» 25.10.2025 13:34, (последний вход 11.12.2025) <https://media.az/society/korruptcionnyj-skandal-v-nana-rassleduyutsyanarusheniya-treh-prezidentov-akademii?ysclid=mhv5axxz2376444368>

³ Gasimov Z., Some Reflections on the Past Two Decades of Independence, in: *Historiography and National-Building among Turkic Populations*, hrsg. von Birgit Schlyter, Papers, Vol. 5, Swedish Research Institute in Istanbul, 2014, p. 69-89.

эту тенденцию. Например, в учебнике 8 класса 2024 года образ России можно найти даже в заголовках «Содержания» учебника, например – «Начало завоевания Россией азербайджанских земель», «Захват Россией Джаро–Балекана и Гянджинского ханства» или «оккупация Россией Карабахского, Шекинского и Шамахинского ханства» и так далее. В описании попытки завоевания города Дербент в 89-ом странице захватчиком назван также Петр I, а термин захватчик по отношению России и русских в учебнике встречается несколько раз в разных частях. Схожая ситуация наблюдается и в учебнике 9-го класса 2024 года и здесь также можно найти выражения подобно этому примеру «Поэтому Россия создала на завоеванных землях Северного Азербайджана тяжелый военно–оккупационный режим». Авторы коллективной монографии «Россия в учебниках истории стран Ближнего и постсоветского Востока, Китая»¹, анализируя азербайджанский учебник по истории для 11 класса, отмечают формирование «тренда на усиление антиколониального дискурса по отношению к Российской империи и СССР, негативизируя весь данный период, что будет в итоге вызывать у азербайджанской молодежи неприятие общего прошлого наших государств». Однако подобная характеристика представляется несколько сглаженной. Судя по материалам самого учебника, именно Россия – не «Российская империя» и не «царское правительство» – обозначается в качестве непосредственного «захватчика»: активно используются формулировки вроде «русские захватили», «Москва захватила», «захватчики» и т. п. Подобная лексика едва ли способствует формированию нейтрального или тем более позитивного образа России и русских в сознании азербайджанских школьников².

Невозможно переоценить также роль ключевых академических фигур и научных школ в формировании вышеупомянутого нарратива. Центральную роль в этом процессе сыграл историк и ориенталист Зия Бунятов (1923–1997), который после независимости стал центральной фигурой в формировании национальной исторической доктрины. Особо примечателен его труд «*Гырмазы террор*» (Красный террор),

¹ Россия в учебниках истории стран Ближнего и постсоветского Востока, Китая, Реферативный сборник / отв. ред. В. А. Аватков, ИНИОН РАН, Москва, 2024, 155 с.

² Россия в учебниках истории стран Ближнего и Постсоветского Востока, Китая, с. 9-16.

констатируя советское (т.е. российское) репрессивное давление¹. Однако исследования показывают, что Бунятов допускал серьезные академические проступки, включая плагиат и манипуляцию источниками, что ставит под сомнение фундаментальную надежность всей созданной им системы знаний². Тем не менее, его наследие продолжает оказывать огромное влияние на историческую дискуссию в Азербайджане. Тенденция интерпретировать Россию преимущественно в категориях агрессора, колонизатора и экспансионистской державы сохраняется в современной азербайджанской историографии. Если рассмотреть исследования современных авторов, то например среди них в монографии Видади Умудлу *“Şimali Azərbaycanın çar Rusiyası tərəfindən işğal və müstəmləkəçilik əleyhinə mübarizə (1801–1828)”* автор интерпретирует политику Российской империи в начале XIX века в категориях «терроризирующего оккупанта», угнетающего население так называемого «Северного Азербайджана» (*iqtisadi zülm və mədəni terror siyasəti*). В подобной логике именно действия российской администрации рассматриваются им как ключевой фактор, якобы вызвавший начало второй русско-персидской войны и спровоцировавший массовые восстания 1826 года³. Характерным примером подобного подхода является образ России в монографии Акифа Наджа. Автор последовательно представляет Российскую империю как силу, осуществившую аннексию территорий так называемого «Северного Азербайджана», а затем утверждает, что в советский период – уже в качестве «Советской империи» – Россия вновь выступила в роли агрессора и оккупанта, установив контроль над этими же регионами. Аналогичные формулировки неоднократно повторяются в различных частях монографии, в том числе в таких характерных для данной риторической традиции высказываниях, как: «Россия, изменившая свой облик и превратившаяся в Советскую империю, вновь оккупировала Северный Азербайджан» (*Rəngini dəyişərək Sovet*

¹ Бунятов З., Гырмызы террор, Баку, 1993, 331 с.

² Crombach S. G., Zia Buniatov and the invention of an Azerbaijani past. Thesis, fully internal, Universiteit van Amsterdam, 2019, p. 76-79.

³ Umudlu V. U., Şimali Azərbaycanın çar Rusiyası tərəfindən işğal və müstəmləkəçilik əleyhinə mübarizə: 1801-1828, elmi red.: M. Ə. İsmayılov, H. Həsənov; AMEA A.A. Bakıxanov adına Tarix İnstitutu, Bakı, 2004, s. 78.

imperiyasına çevrilən Rusiya yenidən Şimali Azərbaycanı işğal etdi)¹. Особенно выраженной антироссийской риторикой отличаются исследования Гаджи Нуру оглы Гасанова – руководителя отдела истории «Северного Азербайджана» (XIX – начало XX вв.) Института истории НАН Азербайджана. Гасанов концентрирует своё внимание на антинаучной концепции «Северного Азербайджана» и её интерпретации через призму предполагаемой оккупационной политики Российской империи. Содержательная направленность его работ – как статей, так и конференционных докладов – последовательно отражает устойчивую антироссийскую трактовку исторических процессов, связанных с началом XIX века и последующей интеграцией Кавказа в состав Российской империи². В одном из интервью, анализируя Туркманчайский договор, Гасанов продвигает интерпретацию, согласно которой русско–иранские войны фактически представляли собой «русско–азербайджанские войны». Подобное антинаучное определение сопровождается игнорированием исторических реалий и официального государственного статуса противостоящей стороны – Ирана – в XIX веке. По словам Гасанова: «В первые три десятилетия XIX века война между Россией и Ираном на Южном Кавказе фактически была войной между Россией и Азербайджаном» (XIX əsrin birinci 30 illiyində Cənubi Qafqazda gedən Rusiya–İran müharibəsi faktiki olaraq Rusiya–Azərbaycan müharibələri idi)³.

В заключении отметим, что демонизация России в постсоветской азербайджанской историографии служит важным инструментом в процессе становления нации. Этот подход оказался одним из весьма успешных факторов в формировании национальной идентичности. Тем не менее, у этого процесса есть и обратная сторона: он порождает недоверие в отношениях с Россией и с русским миром, с общей памятью, с советским прошлым и т.д., кроме того, создает препятствия для объективных исторических исследований. На основе вышеупомянутых фактов, можно предполагать, что демонизация России в постсоветском

¹ Nağı A.Q., Azərbaycan tarixi (ən qədim zamanlardan müasir dövərədək), Bakı, 2025, 608 s. (см. с. 15, 414, и т.д.)

² См. Официальный сайт Института Истории НАНА, (дата последнего входа 01.11.2025) https://tarixinstitutu.az/Web/finder_upload/8.%20Hac%C4%B1%2B.pdf

³ См. «Azərbaycan növbəti «Türkmənçay» müqaviləsinə doğru gedir», Azadlıq, 10.02.2009 (последний вход 01.11.2025) <https://www.azadliq.org/a/1490627.html>

Азербайджане является результатом скоординированных сверху действий различных институтов. Школьные учебники обеспечивают массовую аудиторию, ученые предоставляют «научное» обоснование, а государственные учреждения и университеты создают экосистему, соответствующую официальной идеологии.

ԳՈՒ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Երևանի պետական համալսարան,
Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ,
«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամ
Էլփոստ՝ gor.margaryan@ysu.am

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵՐՊԱՐԻ ԴԻՎԱՅՆԱՑՈՒՄՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բանալի բառեր՝ Ադրբեջանական պատմագրություն, Ռուսաստանի դիվայնացում, գաղութային հարացույց, հիշողության քաղաքականություն, ազգակերտում, պատմության առասպելականացում, դպրոցական դասագրքեր, հետխորհրդային տարածք, Ռուսաստանյան կայսրություն, ԽՍՀՄ:

Հոդվածում քննվում է հետխորհրդային ադրբեջանական պատմագրության մեջ Ռուսաստանի՝ ի դեմս Ռուսաստանյան կայսրության և ԽՍՀՄ-ի կերպարի դիվայնացումը: Այն Ադրբեջանում տարվող հիշողության քաղաքականության կայուն և ինստիտուցիոնալ առումով ամրագրված ռազմավարության մասն է կազմում: Այս ամենում օգտագործվող հիմնական գործիքը գաղութային հարացույցի մոդելն է, որը թույլ է տալիս մեկնաբանելու «ազրեսիա», «օկուպացիա», «զավթիչներ» և «ճնշում» եզրույթները:

Հեղինակը ցույց է տալիս, որ այս մոտեցումն ինքնաբերական գիտական բանավեճերի արդյունք չէ, այլ ձևավորվում է ադրբեջանական պետական հաստատությունների, ակադեմիական կենտրոնների և

դպրոցական կրթական համակարգի կողմից: Հատուկ ուշադրություն է դարձվում պատմագիտությունը ներկայացնող հիմնական դեմքերի դերերին, պատմագիտության քաղաքականացմանն ու հիմնական իրադարձությունների մեկնաբանությանը: Աղբյուրների և գիտական հրապարակումների վերլուծությունը ցույց է տալիս Ռուսաստանի բացասական կերպարի միտումնավոր ամրապնդումը և աղբյուրների և գիտական ազգակերտման քաղաքականության նպատակներին ծառայող հետահայաց կառուցվածքների ստեղծումը: Այս ամենը նպաստում է աղբյուրների և գիտական հիմնարկների ամրապնդմանը և խոչընդոտում է օբյեկտիվ գիտական պատմագրության զարգացմանը՝ խորացնելով գաղափարախոսական բաժանումները տարածաշրջանում:

ԵՊՀ, Համաշխարհային պատմության ամբիոն,
Էլփոստ՝ almastmuradyan@gmail.com

ՃԻՉ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ. ԴՐՎԱԳՆԵՐ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԵԶԴԻՆԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Հոդվածում ամփոփվել են 2014 թ. օգոստոսի 3-ին սկսված ԻԼԻՊ խմբավորման կողմից Հյուսիսային Իրաքի Սինջար շրջանի եզդիական համայնքի վրա կատարած հարձակման նախապատմությունն ու հետևանքները: Հարձակումը, որը վերածվեց ցեղասպանության, հանգեցրեց տարբեր հաշվարկներով շուրջ 5000 եզդիների կոտորածի, ավելի քան 7000 կանանց և աղջիկների ստրկության և մարդասիրական ճգնաժամի: Երկայացվել են ցեղասպանության իրագործման նախապայմանները, Իրաքում եզդիական համայնքի առանձնահատկությունները, ներքաղաքական իրադրությունը, միջազգային հանրության արձագանքն ու եզդիների ցեղասպանության ճանաչումը տարբեր պետությունների կողմից:

Բանալի բառեր՝ եզդիների ցեղասպանություն, Սինջար, Հյուսիսային Իրաք, «ԻԼԻՊ», Քոչո գյուղ:

Նախաբան

Օգոստոսի 3-ին աշխարհի տարբեր ծայրերում բնակվող եզդիները հարգանքի տուրք են մատուցում 2014 թ. Սինջարի եզդիների ցեղասպանության զոհերի հիշատակին: Աշխարհում կա մոտ 800000–1000000 եզդի, ամենամեծ խումբը՝ մոտ 400000 եզդի, ապրում է Հյուսիսային Իրաքում՝ Նինվե նահանգի Սինջար լեռան տարածքում:

Պատմության ընթացքում եզդիները շատ անգամ են ենթարկվել բռնությունների, կոտորածների: 2014 թ. «Իսլամական պետության» ջիհադիստները Սինջարում կազմակերպեցին եզդիների կոտորածներ:

Հոդվածի նպատակն է վեր հանել Սինջարում եզդիների ցեղասպանության իրագործման պատճառահետևանքային կապերը,

ժամանակագրական հաջորդականությունը: Հողվածում տեղ են գտել նաև միջազգային հանրության արձագանքն ու իրավապաշտպան կառույցների կոչերը: Հիմնահարցը ներկայացնելիս կարևոր խնդիրներից է նաև ցեղասպանության ճանաչման միջազգային գործընթացին ու պատժելիության հիմնահարցին անդրադարձը: Հարկ է նշել, որ անպատժելիության գործընթացը բերում է ոճրագործությունների շարունակականությանը, քանզի մինչ այսօր էլ Սինջարի բազմաթիվ եզդիներ շարունակում են պահվել գերության մեջ, կան բազմաթիվ անհետ կորածներ: Հետևաբար, հարկ է ներկայացնել ցեղասպանություն վերապրածների պատմությունները ևս, քանզի նրանք այժմ դարձել են եզդիների ձայնը ողջ աշխարհում: Նրանցից նշանավորը Նոբելյան խաղաղության մրցանակակիր Նադիա Մուրադն է՝ երիտասարդ մի աղջիկ, որը պատմում է իր ապրած ցավերի մասին ու բարձրաձայնում եզդիների ցեղասպանության մասին:

1. 2014 թ. եզդիների ցեղասպանության իրագործումը.

ա) եզդիներն Իրաքում, համայնքի առանձնահատկությունները

Եզդիների բնակության հիմնական տարածքներից մեկը Հյուսիսային Իրաքի Նինվե նահանգի Սինջար (քրդերեն՝ Şengal) շրջանն է՝ Շինգալ (Սինջար) վարչական կենտրոնով: Այն գտնվում է Իրաքի հյուսիս-արևմուտքում, բազմաթիվ եզդիական գյուղեր փռված են Սինջար լեռան ստորոտում, ապա Սինջար քաղաքն է՝ լեռան հարավարևելյան ստորոտում: Սինջար լեռը տարածաշրջանի սիրտն է: Մինչև 2014 թ. օգոստոսը Սինջարում բնակվում էին տարբեր էթնիկ և կրոնական խմբեր, սուննի և շիա արաբներ, քրդեր, թուրքմեններ, քրիստոնյաներ և եզդիներ: Ինքնատիպ է հատկապես եզդիական համայնքը՝ իր յուրահատուկ կրոնով՝ եզդիզմով, որը հայտնի է շարՖադին անունով, հենց այսպես են եզդիներն անվանում իրենց կրոնը: Եզդիների մայրենի լեզուն քուրմանջին է, քրդերեն լեզվի բարբառներից մեկը, որը եզդիներն անվանում են էզդիկի: Եզդիներ ապրում են նաև Սիրիայի հյուսիսում, Իրանի հյուսիս-արևմուտքում և Թուրքիայի հարավ-արևելքում: Ներկայումս եզդիական համայնքներ գոյություն ունեն նաև Արևմտյան Եվրոպայում: Աշխարհում եզդիական ամենամեծ սփյուռքը գտնվում է Գերմանիայում (150000):

Եզդիական գլխավոր կրոնական կենտրոնը գտնվում է Դոհուկի շրջանի Լալիշ բնակավայրում, այստեղ են գտնվում գլխավոր սրբավայրերը և հոգևոր կառավարման մարմինը (Եզդիների գերագույն հոգևոր ժողով): Ըստ Եզդիների՝ Լալիշում է գտնվել դրախտը, և այդտեղ ապրել է Ադամը: Այդտեղ ձևավորվել է եզդիական համայնք, որը հավաքվել է կրոնական բարեփոխիչ Շիխադիի շուրջը: Շեյխ Ադի իբն Մուսաֆիրը կամ Շիխադին ապրել է մոտավորապես 11–12–րդ դարում և Եզդիների կողմից համարվում է աստվածամարդ և մարգարե: Հետաքրքիր է, որ Եզդիների կրոնական և ազգային առանձնահատկությունները բազմիցս խեղաթյուրված են ներկայացվել, որի արդյունքում դարեր շարունակ ապրելով Միջագետքում Եզդիները ենթարկվել և շարունակում են ենթարկվել արմատական մուսուլմանների հարձակումներին: Դրանցից վերջինն իրագործվեց 21–րդ դարում:

Եզդիների նկատմամբ ցեղասպանական գործողություններ 18–19–րդ դարերում կազմակերպել է նաև Օսմանյան կայսրությունը: Մինչ 2014 թ. իրադարձությունները՝ 2007 թ. հարյուրավոր Եզդիներ էին սպանվել Հյուսիսային Իրաքում պայթյունների ալիքի հետևանքով²: 2007 թ. օգոստոսի 14–ին Սինջարում պայթյունի հետևանքով զոհվեցին ավելի քան 800 Եզդիներ, իսկ վիրավորվեց ավելի քան 300 մարդ³:

բ) Քաղաքական իրավիճակն Իրաքում

2003 թ. ԱՄՆ–ի գլխավորությամբ Իրաք ներխուժման արդյունքում տապալվեց Սադամ Հուսեյնի (Սադամ Հուսեյն Անդ ալ–Մադջիդ ատ–Տիկրիտի (1937–2003 թթ., Իրաքի նախագահ՝ 1979–2003 թթ.) ռեժիմը, արգելվեց նրա գլխավորած ազգայնական «Բաաս» (Արաբական սոցիալիստական վերածննդի կուսակցություն) կուսակցությունը, և լուծարվեց իրաքյան բանակը: Սադամ Հուսեյնի տապալումից ի վեր Իրաքը ապրել

¹ Русаков А. И., Положение езидов на Ближнем Востоке в связи с геноцидом, осуществлявшимся экстремистами в Шангале в 2014 году, Журнал Христианство на Ближнем Востоке, Москва, 2019, с. 17.

² Jalabi R., Who are the Yazidis and why is Isis hunting them?, The Guardian, <https://www.theguardian.com/world/2014/aug/07/who-yazidi-isis-iraq-religion-ethnicity-mountains> (10.05.2025).

³ Մախմուդյան Ռ., Եզդիների ցեղասպանությունը Հայոց Եղեռնի միջազգայնորեն չճանաչման արդյունք, Երևանի պետական համալսարան, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 1(1) 2018, էջ 21:

է քաղաքական ճգնաժամերի մի քանի շրջան, այդ թվում՝ սուննիների, շիաների և քրդերի միջև հակամարտությունները:

Իրաքի բնակչության մեկ երրորդից ավելին սուննի արաբներ են: Նրանք հիմնականում ապրում են երկրի հյուսիսում և արևմուտքում: Մինչև 2003 թ. Սադամ Հուսեյնի տապալումը իշխանության գլուխ կանգնած էր սուննի փոքրամասնությունը, իսկ շիաների և քրդերի նկատմամբ խտրական քաղաքականություն էր իրականացվում: Երկրորդ իրաքյան պատերազմի ավարտից հետո երկրում անցկացվեցին ընտրություններ, ինչի արդյունքում ընտրված շիա վարչապետ Նուրի ալ-Մալիքիի (Նուրի Քամիլ Մուհամմադ-Հասան ալ-Մալիքի, Իրաքի վարչապետ՝ 2006–2014 թթ.) կառավարումը գնալով ավելի ավտորիտար էր դառնում: Նման պայմաններում, քանի որ թույլ և անարդյունավետ կառավարությունը չկարողացավ կայունություն և անվտանգություն ապահովել, ամրապնդվեցին ահաբեկչական խմբավորումների դիրքերը, որոնցից մեկը ԻԼԻՊ-ն էր:

2011 թ. դեկտեմբերին՝ Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերումից հետո, ահաբեկչական խմբավորումներից մեկը, որը ղեկավարում էր Աբու Բաքր ալ-Բադրադին (Իբրահիմ Ավադ Իբրահիմ ալ-Բադրի) վերանվանվեց՝ «Իրաքի և Լևանտի իսլամական պետության» (ԻԼԻՊ, ԻՊ, ԴԱԻՇ, ISIS): Դա ազդանշան էր, որ զինյալները մեծ ծրագրեր ունեին՝ վերահսկողություն հաստատել արևելամիջերկրածովյան տարածաշրջանի, Սիրիայի, Լիբանանի, Իսրայելի, Հորդանանի, Եգիպտոսի, Թուրքիայի և Կիպրոսի նկատմամբ: «Իրաքի և Լևանտի իսլամական պետությունը» շուտով կարողացավ իր իշխանությունը հաստատել Իրաքի հյուսիսում և արևմուտքում: Իրաքում 2014 թվականին բարդ իրադրություն ստեղծվեց աճող անկայունության պատճառով, այդ թվում՝ ԻԼԻՊ-ի ակտիվության պատճառով: Իրավիճակը զգալիորեն վատթարացավ 2014 թ. առաջին կեսին, երբ ահաբեկչական խմբավորումը գրավեց Մոսուլը և այլ խոշոր քաղաքներ երկրի հյուսիսում: Այս գործընթացներին նպաստում էին իրաքյան բանակի թուլությունը և քաղաքական անկայունությունը, աշխարհաքաղաքական բարդ իրավիճակը, հիմնականում՝ Սիրիայում քաղաքացիական պատերազմը, ինչպես նաև տարբեր խմբավորումներից և երկրներից ԻԼԻՊ-ին

¹ Ходали Д., Пеле С., Штедель Н., В. Волков, Участники конфликта в Ираке: кто они? Берлин, <https://www.dw.com/ru/> (12.05.2025).

տրամադրված աջակցությունը¹: ԻԼԻՊ–ը լայնածավալ հարձակում սկսեց, որը հանգեցրեց մեծ զոհերի և ավերածությունների, որոնցից ողբերգականն էր հատկապես Իրաքի եզդիական համայնքի նկատմամբ իրագործած ցեղասպանությունը²: Նման իրավիճակում Իրաքի կառավարությունը ստիպված էր դիմել Ամերիկայի Միացյալ Նահանգներին և այլ երկրների՝ ԻԼԻՊ–ի դեմ պայքարում օգնություն խնդրելու համար: Արձագանքելով կոչին՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները և այլ երկրներ սկսեցին ավիահարվածներ հասցնել ահաբեկիչների դիրքերին:

2014 թ. օգոստոսի 3–ի վաղ առավոտյան Իսլամական պետության գրոհայինները հարձակվեցին Հյուսիսային Իրաքի Սինջար շրջանի վրա: Մինչ այդ ԻԼԻՊ–ը շարունակում էր տարածել իրաքյան հասարակության մեջ վաղուց առկա եզդիական հավատքի մասին սխալ պատկերացումները՝ հրապարակայնորեն անվանելով եզդիներին անհավատներ և կռապաշտներ³: Հարձակումից մի քանի օր անց տեղեկություններ հայտնվեցին նրա մասին, որ ԻԼԻՊ–ը աներևակայելի վայրագություններ էր իրականացրել եզդիների 350000–անոց համայնքի նկատմամբ: Արդյունքում 200000 խաղաղ բնակիչներ հեռացան Սինջարից, որոնցից մոտ 50000–ը ապաստան գտավ մոտակա Սինջարի լեռներում՝ շրջապատված ԻՊ զինյալներով, սովի ու ջրազրկման պայմաններում⁴: Եզդիների նկատմամբ վայրագությունները հաջորդ օրերին դարձան մասսայական, իսկ եզդիների էմիր Թահսին Սաիդը ստիպված էր կոչ անել աշխարհի առաջնորդներին՝ օգնություն ցուցաբերել ԻՊ–ի կողմից հարձակման ենթարկվող եզդիներին:

Օգոստոսի 4–ին ԻՊ–ի զինյալները արդեն սպանել էին 30 եզդի տղամարդու, ևս 60 եզդի տղամարդ սպանվել էր Հարդան գյուղում: Նույն օրը եզդիական համայնքի առաջնորդները հայտարարեցին, որ

¹ ՏԵՍ, նույն տեղում:

² Гомбош К., Хронология: ключевые моменты войны в Ираке, <https://www.veridica.ru/mneniya/xronologiya-klyucevye-momenty-voiny-v-irake> (12.05.2025).

³ Ashraph S., The Yazidi Genocide, The Cambridge World History of Genocide, Chap. 30, 2023, pp. 722-745.

⁴ Köthe N., Documenting the Yazidi survival of genocide: Aesthetics and politics between Sabaya, The Murad code The Last Girl, https://www.google.com/url?sa=t&source=web&rct=j&opi=89978449&url=https://uplopen.com/chapters/2000/files/6037755d-c782-462b-83f6-91adfefe98c0.pdf&ved=2ahUKEwi76o_6w4yOAxUHJBAIHZeDCioQFnoECDIQAQ&usq=AOvVawOVIX3H1W0XaD2x9dKsqmh4 (24.06.2025).

Սինջարում սպանվել է առնվազն 200 եզդի, իսկ Ռամադի Ջաբալի մոտակայքում՝ 60–70: Ըստ մի շարք վկայությունների՝ օգոստոսի 3–6–ը Դիուլա գյուղի մոտ սպանվել էր ավելի քան 50 եզդի, Խանասոր գյուղում՝ 100, Հարդանի տարածքում՝ 250–300¹: Արդեն օգոստոսի 10–ին, ըստ Իրաքի կառավարության հայտարարությունների, ԻՊ զինյալները կենդանի թաղել էին անհայտ թվով եզդի կանանց և երեխաների:

Եզդիների ջարդերի մեծ ալիքը հասել էր նաև Քոչո գյուղը: 2014 թ. օգոստոսի 15–ին Սինջարից հարավ գտնվող եզդիական Քոչո գյուղի բնակչությանը ջիհադիստները ներկայացրին կրոնափոխ լինելու վերջնագիրը, որի արդյունքում սպանվեց ավելի քան 80 տղամարդ: Վկաներից մեկի խոսքով՝ գյուղացիները սկզբում կրոնափոխ էին եղել ճնշման տակ, բայց երբ գյուղի ավագը հրաժարվել էր կրոնափոխ լինել, բոլոր տղամարդկանց տարել էին բեռնատարներով՝ Սինջար տանելու պատրվակով, և ճանապարհին գնդակահարել: Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը գրանցել էր փրկվածների հաղորդումները, որոնց համաձայն՝ օգոստոսի 15–ին եզդիական Քոչո գյուղի բոլոր տղամարդիկ՝ մոտ 400 հոգի, գնդակահարվել են ԻՊ–ի կողմից, իսկ մինչև 1000 կին և երեխա առևանգվել են:

Նույն օրը Թալ Աֆարի բանտում 200 եզդի տղամարդ մահապատժի էր ենթարկվել կրոնափոխությունից հրաժարվելու համար²: Օգոստոսի 24–25–ն էլ Շեյխ Մանդի սրբավայրում ԻՊ–ի կողմից մահապատժի ենթարկվեցին 14 տարեց եզդի տղամարդիկ, իսկ Ջիդալա գյուղի եզդիների սրբավայրը պայթեցվեց: Սեպտեմբերի 1–ին ԻՊ ահաբեկիչները հրդեհեցին Կոթան, Հարեկո և Խարազ եզդիական գյուղերը, իսկ սեպտեմբերի 9–ին հայտնաբերվեց զանգվածային գերեզման, որտեղ գտնվել էին մահապատժի ենթարկված 14 քաղաքացիական անձանց մարմիններ:

Սինջարում տեղի ունեցած իրադարձությունները համարվում են եզդի ժողովրդի նկատմամբ բռնաճնշումների և ցեղասպանության երկար պատմության մաս: Պատճառներից մեկը նաև այն էր, որ բնակչությունը մնացել էր անպաշտպան, քանի որ մինչ դեպքերը այդ

¹ Yazidi Genocide Timeline, Free Yezidi Foundation, <https://freeyezidi.org/> (24.06.2025).

² Кургель М., Мы выиграем эту войну, Радио Свобода, <https://www.svoboda.org/a/32354326.html> (09.04.2025).

տարածքներից հեռացել էր իրաքյան բանակը, այնուհետև տարածքները լքել էր նաև Փեշմերգան (Իրաքյան Քրդստանի ռազմական ուժեր):

ԻՊ-ն հարձակվեց և գրավեց Սինջարը: Գրեթե 200000 եզդի փախավ դեպի Սինջար լեռ, որը շուտով ԻՊ-ն պաշարեց: Փախստականների մյուս մասը, որը չկարողացավ արտագաղթել, ապաստանեց Իրաքյան Քուրդիստանի տարածքում գտնվող տարբեր վրանային ճամբարներում: Այս իրադարձությունների արդյունքում եզդիների և քրդերի միջև հակամարտությունն էլ սրվեց: Չնայած քրդական Փեշմերգան մասնակցեց Շինգալի ազատագրմանը, եզդիների մոտ կասկած կա, որ քրդերը միտումնավոր էին եզդիներին անպաշտպան թողել, քանի որ, ինչպես վերը նշվեց, երբ ԴԱԻՇ-ի զինյալները առաջ շարժվեցին, Փեշմերգան արագ լքեց քաղաքը՝ այն հանձնելով ահաբեկիչներին: Ամռան տապի պայմաններում հարյուրավոր եզդիներ մահացան ջրազրկումից, թերսնումից, շատերն էլ ինքնասպան եղան: Ի վերջո, ամերիկյան, իրաքյան, ֆրանսիական, ավստրալական և բրիտանական ուժերը կարողացան մարդասիրական օգնություն ուղարկել, իսկ Սիրիայի քրդական ուժերը (YPG) միջանցք բացեցին Սինջար լեռան և Սիրիայի միջև՝ թույլ տալով մարդկանց հեռանալ այդտեղից¹:

Միավորված ազգերի կազմակերպության տվյալներով՝ 2014 թ. օգոստոսին ԻՊ-ն Հյուսիսային Իրաքում կոտորել է մոտ 5000 եզդի տղամարդու և առևանգել մոտ 7000 եզդի կանանց և աղջիկների, որոնք հարկադրաբար ստրկության են վաճառվել և տարվել սիրիական Ռաքա քաղաք, որտեղ գտնվում էր ԴԱԻՇ ահաբեկիչների հենակետը: Մոտ 400000 մարդ լքել էր Շինգալը և հարակից բնակավայրերը: Հարկ է նշել, որ ԴԱԻՇ-ի կազմակերպած վայրագությունները սոսկ սպանություններ չէին, դրանք օրեցօր վերածվում էին կրոնական, էթնիկ խմբի ոչնչացման ծրագրի: 2015 թ. նոյեմբերին Միացյալ Նահանգների Հոլոքոստի հիշատակի թանգարանը հրապարակեց զեկույց, որտեղ փաստացի նշեց, որ ԻՊ-ն ցեղասպանություն է իրականացրել Սինջարի եզդիների դեմ: 2016 թ. հունիսին Միավորված ազգերի կազմակերպությունը ևս հրապարակեց իր զեկույցը՝ անկախ

¹ ՏԵՍ, Նույն տեղում:

հետաքննությունը, որը նաև պարզել էր, որ ԻԼԻՊ-ը կատարել է ցեղասպանական, ինչպես նաև մարդկության դեմ բազմաթիվ այլ ռազմական հանցագործություններ¹:

Թեպետ եզդի բնակչությունը հիմնականում անպաշտպան էր և մասսայական ոճրագործության զոհ դարձավ, այնուամենայնիվ հարկ է նշել, որ Իսլամական պետության դեմ պայքարում համառ դիմադրություն ցուցաբերեցին եզդիական աշխարհագորային խմբավորումները, որոնց շարքում համառ պայքար են մղել նաև կանայք: Սինջարի եզդի ժողովրդի պաշտպանությունը կազմակերպելիս Հյուսիսային Իրաքի քրդական շրջանում ձևավորվել էին եզդիական աշխարհագորային երեք խմբավորումներ, որոնցից է «Էզդիխանայի պաշտպանության ուժեր»-ը (քրդերեն՝ Hêza Parastina Êzîdxanê-HPÊ): Այն ստեղծվել էր 2014 թ. օգոստոսի 3-ին Սինջարի վրա ԻԼԻՊ ահաբեկչական հարձակման արդյունքում: Ջոկատի մարտիկները աչքի ընկան հատկապես Շարֆադինի եզդիական սրբավայրի պաշտպանության, ինչպես նաև Սինջարի լեռներում խաղաղ բնակչության պաշտպանության գործում: Ջոկատը կազմված էր եզդի կամավորներից, Փեշմերգայի և Իրաքի բանակի նախկին զինվորներից: «HPÊ»-ի գլխավոր հրամանատարը Հայդար Շեշոն էր, որը նաև Իրաքի խորհրդարանի նախկին անդամ էր²: Ահաբեկիչների դեմ համառ մարտեր են մղել նաև Սինջարի դիմադրության ջոկատները (YBŞ, քրդերեն՝ Yekîneyên Berxwedana Şingal), որոնք Քրդստանի աշխատավորական կուսակցության (PKK) ճյուղերից են: Ինքնապաշտպանական մարտերում նաև աչքի ընկան «YPG»-ի մարտիկները, այն նաև հայտնի է եզդի կանանց ուժեր (YJÊ, քրդերեն՝ Yekîneyên Jinê Êzîdxan) խմբավորմամբ, որը ստեղծվել էր Իրաքում 2015 թ.:

Եզդի և քուրդ կանայք մեծ դիմադրություն են ցույց տվել Իսլամական ահաբեկչական խմբավորմանը, ինչպես նաև մշտապես բարձրաձայնել են մարդու իրավունքներին առնչվող հարցերը: Կանայք պայքարում են նաև ցեղասպանության զոհ դարձած բազմաթիվ երեխաների և կանանց իրավունքների համար: Մինչ այսօր էլ խմբավորումն ակտիվորեն

¹ Ashraph S., The Yazidi Genocide. The Cambridge World History of Genocide, Chap. 30, p. 4.

² Paraszczuk J., Yazidi Militias Fight IS In Iraq, Amid Kurdish Rivalries, <https://www.rferl.org/a/islamic-state-yazidi-militias-kurdish-region/27066780.html> (09.04.2025).

զբաղվում է կանանց իրավունքների պաշտպանությամբ և ցեղասպանության ականատեսների կյանքի որակի բարելավմանն ուղղված նախագծեր է իրագործում¹: 2015 թ. նոյեմբերին Սինջարի ազատագրման գործում մեծ դեր խաղաց վերոնշյալ խմբավորումներից ձևավորված «Սինջար դաշինքը»²:

Այսօր իրաքում եզդիները շարունակում են ապրել բացառիկ խոցելի պայմաններում: Սինջարը ազատագրվել է ԻՊ-ից 2015 թվականին, սակայն ենթակառուցվածքային խնդիրները և տարբեր զինված խմբավորումների առկայությունը բարդացնում են քաղաքացիական բնակչության վերադարձի հարցը: Հաղորդվում է, որ գրեթե 350000 ներքին տեղահանվածներից, որոնք ապրում են ժամանակավոր պայմաններում՝ Քրդստանի տարածաշրջանային կառավարության (KRG) կողմից կառավարվող տարածքների ճամբարներում, մինչ օրս վերադարձել են ընդամենը մի քանի հազար եզդիներ: Առևանգված ավելի քան 6000 կանանցից և երեխաներից մոտ 3000-ը դեռևս անհետ կորած են համարվում³: Ահաբեկիչների դեմ պատերազմը ամբողջությամբ ոչնչացրել է քաղաքի ենթակառուցվածքները: Հինգ տարի անց վերադարձած ավելի քան 2000 փախստականներ շարունակում են ապրել Սինջար լեռան ստորոտում գտնվող Ջեբալի վրանային ճամբարում: Իրավիճակի մասին եզդիների հոգևոր առաջնորդ Բաբա Շեյխը «Նյու Յորք Թայմս»-ին տված հարցազրույցում նշել է. «Խսկամական ֆունդամենտալիզմի աճը հազարավոր եզդիների դրդել է ապաստան խնդրել Եվրոպայում: Որոշ գնահատականների համաձայն՝ իրաքում եզդի բնակչության մոտ 15%-ը փախել է երկրից⁴: Այն կրոնի համար, որը չի ընդունում կրոնափոխներին, եզդի երիտասարդների

¹ Kaválek T., *Competing Interests in Shingal District: Examining the PKK-linked Structures, Defusing Tensions*, *Middle East Research Institute*, 2017, <https://www.jstor.org/stable/resrep13623> (25.06.2025).

² Moroz S., *The women taking on Isis: on the ground with Iraq's female fighters*, <https://www.theguardian.com/artanddesign/2015/sep/11/women-taking-on-isis-iraq-yazidi-female-fighters> (13.05.2025).

³ Ayhan T., *Genocidal Rape and Community Cohesion: The Case of Yazidis, Religion, Violence, and the State in Iraq*, University of Central Florida, <https://pomaps.org/genocidal-rape-and-community-cohesion-the-case-of-yazidis> (12.05.2025).

⁴ Jalabi R., *Who are the Yazidis and why is Isis hunting them?*, *The Guardian*, <https://www.theguardian.com/world/2014/aug/07/who-yazidi-isis-iraq-religion-ethnicity-mountains> (12.05.2025).

ծուլումը Եվրոպայում սպառնում է եզդիական հավատքի գոյությանը: Մարդիկ հեռացել են հարձակումներից: Սա դժվարացնում է հավատքի պաշտպանությունը»:

Նրա խոսքով՝ վերջին մի քանի տարիների ընթացքում, նոր հարձակումներից վախենալով, չեղարկել են նաև եզդիների սրբավայր Լալիշ տաճարում տեղի ունեցող ամենամյա պաշտոնական կրոնական արարողությունը:

Այսօր աշխարհը ճանաչում է մի շարք իրավապաշտպանների և ակտիվիստների, որոնք ցեղասպանության վկաներ են եղել, դարձել բռնության զոհ, իսկ հիմա աշխարհին պատմում են իրենց ապրած ողբերգությունն ու կոչ անում պայքարել դրա դեմ և օգնել տուժածներին: Նրանցից մեկը Խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր Նադիա Մուրադն է¹: Եզդի իրավապաշտպան Նադիա Մուրադը պարզևատրվել է միջազգային մի շարք մրցանակներով: Դրանցից է «Անդրեյ Սախարովի անվան մտքի ազատության մրցանակը»:

Նադիա Մուրադը և ցեղասպանության ականատես Լամիյա Աջի Բաշարը պայքարում են եզդիների իրավունքների համար, այդ թվում՝ այն կանանց իրավունքների համար, ովքեր բռնության են ենթարկվել «Իսլամական պետություն» ծայրահեղական խմբավորման զինյալների կողմից: Նրանց հայրենի Քոչո գյուղը, ինչպես նշվեց, հարձակման էր ենթարկվել 2014 թ. ամռանը: Մարդու իրավունքների պաշտպանները հազարավոր եզդի աղջիկների և կանանց թվում էին, որոնք առևանգվել էին ջիհադիստ զինյալների կողմից: 2015 թ. նոյեմբերին քրդական զինված ուժերը ազատագրեցին Իրաքի Սինջար քաղաքը, որից ոչ հեռու գտնվում է այն գյուղը, որտեղից առևանգվել էին Մուրադն ու Լամիյա Աջի Բաշարը: Քաղաքի մոտակայքում հայտնաբերվել են եզդիների գերեզմաններ, որտեղ թաղված են ջիհադիստների կողմից բռնության ենթարկվածները²: Նադիա Մուրադը գերության մեջ ենթարկվել է ծեծի և բռնության: Բացի դրանից՝ նա կորցրել է մորը և վեց եղբայրներին: Լամիյա Աջի Բաշարն առևանգման պահին 16 տարեկան է եղել: Նա գրեթե երկու տարի անցկացրել է գերության մեջ: Մի քանի անգամ

¹ Murad N., Krajewski J., *The Last Girl: My Story of Captivity and My Fight Against the Islamic State*, <https://www.hachette.com.au/nadia-murad-jenna-krajewski/the-last-girl-my-story-of-captivity-and-my-fight-against-the-islamic-state> Paperbac (11.05.2025).

² Watson L., Warzer J., *Yazidi refugees braced for life in exile*, <https://edition.cnn.com/2014/08/17/world/meast/yazidi-refugees/index.html> (18.05.2025).

փախուստի փորձերից հետո նրան վերջապես հաջողվել է փախչել ջի-հադիստների գերությունից: Մուրադը պայքարում է նաև եզդիների դեմ ԻԼԻՊ-ի գործողությունների միջազգային ճանաչման համար և կոչ է անում ճանաչել այն որպես ցեղասպանություն:

Այժմ եզդիական բարեգործական կազմակերպություններից մեկի՝ Նադիա Մուրադի հիմնադրամի, բարերարների և նվիրատուների, տարբեր երկրների եզդիական համայնքների անդամների ջանքերն ուղղված են Սինջարի վերականգնմանը: Եզդիների իրավունքների պաշտպանությանն է լծվել նաև մեկ այլ նշանավոր եզդի ակտիվիստ՝ Միրզա Դինային: «Օդային կամուրջ Իրաք» կազմակերպության համահիմնադիր և տնօրեն, եզդի ակտիվիստ Միրզա Դինային իր ամբողջ կյանքը նվիրել է իրաքյան պատերազմից տուժածների փրկության գործին՝ տեղափոխելով կանանց և երեխաներին «Խսկամական պետություն» ահաբեկչական խմբավորման վերահսկողության տակ գտնվող տարածքներից¹: 2019 թ. հոկտեմբերի 19-ին Միրզա Դինային դարձավ «Ավրորա» մարդասիրական մրցանակի դափնեկիր: Նրա անունը հայտարարվեց Երևանում 2019 թ. «Ավրորա» ֆորումի ընթացքում մրցանակաշնորհման արարողության ընթացքում:

Այսօր աշխարհի շատ երկրներ միջոցներ են տրամադրում եզդիներին՝ տարածաշրջանը վերականգնելու համար: Այս պահին Շինգալում վերականգնվում է ջրամատակարարումը, կառուցվում են դպրոց և հիվանդանոց: Գյուղատնտեսությունն աստիճանաբար վերականգնվում է: Այնուամենայնիվ՝ իրավիճակը շարունակում է մնալ ծանր²:

2. Միջազգային հանրության արձագանքը. եզդիների ցեղասպանության ճանաչումը տարբեր պետությունների կողմից

2014 թ. օգոստոսյան հարձակման պատճառներն ուսումնասիրելու, մեղավորներին պատժելու նպատակով ՄԱԿ-ը ստեղծել է ջիհադիստների կատարած հանցագործությունների համար պատասխանատվության բարձրացմանն ուղղված հետաքննչական խումբ (UNITAD): Փորձագետները հետաքննում են 2014 թ. հունիսից մինչև 2017 թ. դեկտեմբերը

¹ Դինայի Մ., Aurora Humanitarian Initiative, <https://aurorapize.com/hy> (10.06.2025):

² Русаков А. И., Положение езидов на Ближнем Востоке в связи с геноцидом, осуществлявшимся экстремистами в Шангале в 2014 году, Журнал Христианство на Ближнем Востоке, Москва, 2019, с. 17.

Իրաքի մեծ մասը զավթած ԴԱԻՇ-ի զինյալների կատարած վայրագությունները¹: Այսօր ևս ՄԱԿ-ի՝ ԴԱԻՇ-ի կատարած հանցագործությունների համար պատասխանատվության հարցերով հետաքննչական խումբը կոչ է անում միջազգային հանրությանը վճռականորեն գործել՝ արդարադատությունը պահպանելու և հանցագործությունների համար պատասխանատուներին պատժելու համար: Տեղասպանական հանցագործությունները բացահայտելու համար անմիջապես ստեղծվել են իրավական նախադեպեր գերմանական դատարաններում: Եզդիների բնակության շրջանում հայտնաբերվել և ուսումնասիրվել են ԴԱԻՇ-ի զոհերի նոր զանգվածային գերեզմաններ: Սակայն, ցավոք, նույնիսկ տարիներ անց հազարավոր եզդիներ դեռևս չեն վերադարձել իրենց ընտանիքներ: Նրանց գտնվելու վայրը մնում է անհայտ: Շատերը շարունակում են տառապել հոգեկան հիվանդություններից՝ տարիներ շարունակ գերության, խոշտանգումների, բռնության և ստրկության, ինչպես նաև անմարդկային վերաբերմունքի պատճառով:

«Եզդիների հայրենիքը դեռևս զուրկ է այն կայունությունից, որն անհրաժեշտ է նրանց կյանքը վերակառուցելու համար: Մենք բոլորս պատասխանատվություն ունենք լուծելու եզդիների դժվարին վիճակը և գործադրելու բոլոր ջանքերը՝ Սինջարի ժողովրդին ավելի լավ ապագայի հնարավորություններ տրամադրելու համար», – նշված է Իրաքում ՄԱԿ-ի գրասենյակի հայտարարության մեջ²:

ԴԱԻՇ-ը իրականացրել է եզդիներին ոչնչացնելու իր մտադրությունը՝ համակարգված սպանությունների, հարկադիր կրոնափոխության և սեռական բռնության միջոցով: Եզդիների դեմ ահաբեկչական խմբի կատարած սարսափելի գործողությունները ճանաչվել են որպես ցեղասպանություն Միավորված ազգերի կազմակերպության, Միացյալ Նահանգների, Միացյալ Թագավորության, Գերմանիայի և աշխարհի շատ այլ երկրների կողմից³:

¹ Санчес И. Д., Следственная группа – о прогрессе в преследовании боевиков ДАИШ, участвовавших в геноциде езидов, ООН, Новости ООН, <https://news.un.org/ru/story/2022/08/1428892> (09.06.2025).

² Տե՛ս նույն տեղում:

³ Xiao Liu M., The Enduring Genocide Against the yazidis: How Iraq's Law on Religious Identity Violates the Human Rights of Yazidi Survivors of ISIS Captivity and Their Children Born of Sexual Violence, *Northwestern Law Journal of Human Rights*, Georgetown University Law Center, Volume 23, Issue 2 (2025), p. 35.

Դեռ ցեղասպանության ընթացքում՝ ամիսներ տևած վերանա-
յումներից և հետաքննություններից հետո, ԱՄՆ պետքարտուղար Զոն
Քերին առաջիններից էր, ով հայտարարեց, որ Իրաքում և Սիրիայում
ԻԼԻՊ-ի կատարած վայրագությունները հավասարազոր են «ցեղա-
սպանության»: Սա պատմության մեջ ընդամենը երկրորդ դեպքն էր,
երբ գործադիր իշխանությունը նման որակում էր տալիս շարունակ-
վող ճգնաժամին¹: Գերմանիայի Բունդեսթագն էլ 2023 թ. հունվարի 19-ին
«Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման գինյալների
կողմից եզդիների համակարգված հալածանքներն ու սպանություն-
ները ճանաչել է որպես ցեղասպանություն: Պատգամավորները միա-
ձայն կոչ են արել Գերմանիայի կառավարությանը՝ նպաստել եզդիների
դեմ կատարված հանցագործությունների պատմական և իրավական
գնահատականը տալուն: Խմբակցությունների ներկայացուցիչներն էլ
հանդես են եկել Գերմանիայում եզդիներին ապաստան տրամադրելու
նախագծի օգտին: Գերմանիայի արտաքին գործերի նախարար Աննա-
լենա Բերբոկը նշել է, որ Բունդեսթագի որոշումը նաև նշանավորում է առ-
ևանգված և անհետ կորած անձանց գտնելու ջանքերի սկիզբը: Մարդու
իրավունքների պաշտպանների գնահատմամբ՝ մոտ 3000 եզդի դեռևս
գերության մեջ է գտնվում, կամ անհետ կորած է համարվում²: Գերմանի-
ան նաև առաջին պետություններից էր, որը կիրառեց միջազգային քրե-
ական իրավունքի սկզբունքը: Գերմանիայում տեղի է ունեցել քրեական
դատավարություն՝ չնայած նրան, որ տվյալ անձինք Գերմանիայի քա-
ղաքացիներ չէին, արարքն էլ տեղի էր ունեցել ոչ թե Գերմանիայում, այլ
Հյուսիսային Իրաքում: Այնուամենայնիվ, դատարանն առաջին անգամ
ճանաչեց, որ «Իսլամական պետությունը» ցեղասպանություն է իրակա-
նացրել եզդիների նկատմամբ: Դատի ընթացքում մի տղամարդ դատա-
պարտվել է եզդի կնոջը և նրա դստերը որպես ստրուկ պահելու և նրանց
բազմիցս կտտանքի ենթարկելու համար: Սա ցույց է տալիս, որ իրա-
վական համակարգը կարող է պայքարել հանցագործությունների դեմ:

¹ Chandler A., How Meaningful Is the ISIS 'Genocide' Designation? A look at the implications of the State Department's declaration about the Islamic State's brutal campaign in Iraq and Syria, <https://www.theatlantic.com/international/archive/2016/03/isis-genocide-designation/474414/>, (15.05.2025).

² Сотников Д., Бундестаг признал геноцидом преследование езидов игиловцами, Права человека, Германия, <https://www.dw.com/ru/bundestag-priznal-genocidom-presledovanie-ezidov-igilovcami/a-64451057> (15.05.2025).

Դրանք հույս են ներշնչում, որ նոր դատավարություններ կսկսվեն, հանցագործները կպատժվեն, և կկանխվի սպասվող ահազնացող վտանգը: Հիշեցնենք, որ ըստ «Amnesty International»-ի տվյալների՝ ավելի քան 2800 եզդի կանայք և երեխաներ ներկայումս գտնվում են գերության մեջ կամ անհետ կորած են¹:

Ինչ վերաբերում է Եվրոպական Միությանը, ապա այժմ բազմաթիվ կազմակերպություններ աշխատում են փրկվածների և առևանգվածների իրավունքները պաշտպանելու ուղղությամբ:

Բացի դրանից, 2016 թ. փետրվարին Եվրոպական խորհրդարանը միաձայն ընդունեց բանաձև, որով հայտարարվեց, որ ԻԼԻՊ-ը ցեղասպանություն է իրականացրել քրիստոնյաների, եզդիների և այլ էթնիկ ու կրոնական փոքրամասնությունների նկատմամբ: Սա առաջին դեպքն էր, երբ խորհրդարանը կատարվածը որակեց ցեղասպանություն: Կարճ ժամանակ անց ԱՄՆ Ներկայացուցիչների պալատը միաձայն ընդունեց բանաձև, որով հայտարարվեց, որ ԻԼԻՊ-ը ցեղասպանություն է իրականացնում եզդիների և քրիստոնյաների նկատմամբ: 2018 թվականին էլ ԱՄՆ-ն ընդունեց Իրաքի և Սիրիայի ցեղասպանության, օգնության և հաշվետվողականության մասին օրենքը և խոստացավ գրեթե 300 միլիոն դոլարի օգնություն Իրաքի և Սիրիայի էթնիկ ու կրոնական փոքրամասնություններին²:

Միավորված ազգերի կազմակերպությունն էլ հայտարարեց, որ ցեղասպանություն է իրականացվում եզդիների նկատմամբ: Հաջորդիվ՝ 2023 թ. օգոստոսին, Մեծ Բրիտանիայի կառավարությունը պաշտոնապես ճանաչեց եզդի ժողովրդի նկատմամբ 2014 թ. Իրաքում «Իսլամական պետության»՝ ԴԱԻՇ-ի կողմից կատարված վայրագությունները՝ որպես ցեղասպանական ակտ: Մեծ Բրիտանիայի որոշմանը 2023 թ. հունվարին հաջորդեց Գերմանիայի Դաշնային

¹ Genocide of Yazidis: about the strong signaling effect of the conviction of an IS fighter in Germany, Dachverband der Migrantinnenorganisationen, <https://www.damigra.de/en/meldungen/voelkermord-an-jesidinnen-ueber-die-starke-signalwirkung-der-verurteilung-eines-is-kaempfers-in-deutschland/> (10.05.2025).

² Mass Violence and Genocide by the Islamic State/Daesh in Iraq and Syria, Holocaust and Genocide Studies, <https://cla.umn.edu/chgs/holocaust-genocide-education/resource-guides/mass-violence-and-genocide-islamic-statedaesh> (20.04.2025).

դատարանի՝ ԻՊ–ի անդամին ցեղասպանություն իրականացնելու մեջ մեղադրանքի որոշումը¹:

Հայաստանը ևս եզդիների ցեղասպանությունը ճանաչած առաջին երկրներից է: 2018 թ. հունվարի 16–ին Հայաստանի խորհրդարանը ճանաչել է 2014 թվականի Իրաքի տարածքում եզդի ժողովրդի դեմ ահաբեկչական խմբավորումների իրագործած ցեղասպանությունը²: Հայաստանը տարիներ շարունակ միջազգային ամենատարբեր հարթակներում բարձրաձայնել է եզդիների նկատմամբ իրագործված հանցանքների մասին: Ինչպես նշել է ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Պարույր Հովհաննիսյանը, 2018 թ. ՀՀ ԱԺ–ն ընդունել է ահաբեկչական խմբավորումների կողմից Իրաքի Հանրապետության՝ իրենց վերահսկողության ներքո գտնվող տարածքում եզդի ժողովրդի նկատմամբ 2014 թ. իրականացված ցեղասպանության դատապարտման մասին հայտարարությունը: «Հիշատակված հայտարարության ընդունումը պայմանավորված է եղել եզդի ժողովրդի հանդեպ տեղի ունեցած ոճրագործությունը որպես ցեղասպանություն որակելու, ինչպես նաև նման ծանր հանցագործությունները կանխարգելելու, մեղավորներին պատժելու և զոհերին հատուցում տրամադրելու խնդրի աջակցման կարևորությամբ: Հատկանշական է, որ Իրաքի Հանրապետությունը 2021 թ. մարտին ընդունված օրենքով նույնպես ճանաչել է «եզդիների և այլ փոքրամասնությունների ցեղասպանությունը և ամրագրել է օգոստոսի 3–ը՝ որպես Հիշատակի օր»: Սույն նախագծի ընդունումը և 2014–ի օգոստոսի 3–ը Սինջարի եզդիների ցեղասպանության օր ճանաչելու նախաձեռնությունը կարևոր քայլ է հիշյալ հարցում Հայաստանի կողմից վարվող սկզբունքային քաղաքականությունը և մոտեցումները ևս մեկ անգամ արտահայտելու, հայ–եզդիական բարեկամական կապերի ամրապնդման, ինչպես նաև եզդի ժողովրդին աջակցություն հայտնելու համատեքստում»³:

¹ Loft P., UK acknowledges Yazidi genocide by Daesh/Islamic State, <https://commonslibrary.parliament.uk/uk-acknowledges-yazidi-genocide-by-daesh-islamic-state/> (11.05.2025).

² Եզդի ժողովրդի ցեղասպանությունը, օգոստոսի 3–ը եզդիների ցեղասպանության զոհերի հիշատակի օրն Է, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, <http://genocide-museum.am/arm/03.08.24.php>, (11.05.2025):

³ Ղուկասյան Կ., ՀՀ–ն ամենատարբեր միջազգային հարթակներում բարձրաձայնել է եզդիների նկատմամբ իրագործված հանցանքների մասին. Պարույր Հով-

Բացի միջազգային կառույցներից, եզդիական համայնքը ևս մեծ ակտիվություն է ցուցաբերում ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի շարունակականության գործում: Սինջարի ազատագրման օրը Սինջարի ինքնավար վարչակազմը լայնածավալ արշավ սկսեց եզդիների ցեղասպանությունը ճանաչելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու համար: Եզդիականայի Դեմոկրատական Ինքնավար ժողովի համանախագահ Նաիֆ Շամոն էլ կոչ է անում եզդիներին, մասնավորապես՝ Սինջարից, աջակցել ցեղասպանության և եզդիների իրավունքների, այդ թվում՝ ինքնապաշտպանության իրավունքի ճանաչման պահանջով խնդրագրին: Այդ արշավը շարունակում է թափ հավաքել՝ գրավելով միջազգային հանրության ուշադրությունը:

«Մեր նպատակն է՝ հասնել եզդիների դեմ 2014 թ. օգոստոսի 3-ին կատարված ցեղասպանության ճանաչմանը և մեղավորներին պատասխանատվության ենթարկել: Մենք պահանջում ենք ճանաչել եզդիների բոլոր իրավունքները, այդ թվում՝ ինքնապաշտպանության և ազատ կամքի արտահայտման իրավունքը: Այս արշավը որևէ քաղաքական կուսակցության կամ խմբի շահերից չի բխում, այլ բացառապես այն մարդկանց շահերից է բխում, ովքեր տառապել են: Մենք կոչ ենք անում բոլոր եզդիներին, մասնավորապես՝ Սինջարի բնակիչներին, ստորագրել խնդրագիրը և աջակցել այս շարժմանը¹: Ցեղասպանության համար պատասխանատուներից ոչ մեկը չի ենթարկվել արդարադատության, և իրաքը դեռևս չի ճանաչել այս ցեղասպանությունը: Մեր արշավը նպատակ ունի փոխելու այս իրավիճակը, ապահովելու միջազգային ճանաչում և ստեղծելու իրավական հետևանքներ պատասխանատուների համար: Մենք ստորագրություններ ենք հավաքում ամբողջ աշխարհից՝ Միավորված ազգերի կազմակերպությանը ներկայացնելու համար: Մենք ակնկալում ենք միջազգային կառույցների աջակցությունը», – Նաիֆ Շամո:

հանիսյան, <https://www.1lurer.am/hy/2024/04/16/1/1109887> (11.05.2025):

¹ Шамо Н., Признание геноцида езидов-ключ к защите их прав, ANF NEWS, <https://anfussian.com/%D0%92-%D0%9C%D0%B8%D1%80%D0%B5/Naif-Samo-priznanie-genocida-ezidov-kluc-k-zasite-ih-prav-62291> (16.05.2025).

A SCREAM IN THE EAST: EPISODES FROM THE 2014 YAZIDI GENOCIDE

Keywords: *Yazidi genocide, Sinjar Northern Iraq, ISIS, Kocho village.*

On August 3, 2014, ISIS launched its devastating attack on the Yazidis of Sinjar, in northwestern Iraq, on the border with Syria. According to the UN Commission of Inquiry on the Syrian Arab Republic, ISIS has committed a genocide, as well as numerous war crimes against humanity, through mass executions, forced conversions to Islam, enslavement, and widespread violence against women and girls. After the attack on Sinjar, ISIS forcibly transferred thousands of Yazidi captives to Syria, where girls as young as nine were enslaved and Yazidi boys as young as seven were forcibly trained for combat tasks and missions. The genocide committed by ISIS against the Yazidis in the Sinjar region of northern Iraq has claimed many lives and has left a lasting psychological impact on the people. The unanswered questions weigh heavily on those who have decided to return home. Although life is gradually returning to Sinjar today, the fear of a new genocide remains high, and the wounds of 2014 are far from healed.

Ten years after the ISIS attack on the Yazidis of Sinjar, the UN Commission of Inquiry on the Syrian Arab Republic is calling for justice and accountability for ISIS for the crimes. The Commission notes that survivors and victims of the Yazidi genocide and ISIS crimes, as well as women and children, should be immediately released from unlawful detention in north-east Syria and, if possible, repatriated, as well as provided with support to rebuild their lives. Currently, a number of countries and organizations recognize and condemn the Yazidi genocide and punish those responsible for the genocide, despite this, the lives of many Yazidis continue to be in danger. Summarizing the reflection on one of the tragic pages of history – the Yazidi genocide, it is necessary to conclude that:

1. Faced with the advance of jihadists, peshmerga, Kurdish militias from Iraq, who had previously controlled the region and then retreated, abandoning the population, the Yazidi population fought back, and dozens of men were executed. Thousands of Yazidis were captured and taken to Mosul, Tel Afar, or Baaj. Many men were forced to convert, women were sold, and children were adopted.

2. It is estimated that about 130,000 Yazidi men, women and children fled to Mount Sinjar. Trapped on the mountain, many died of hunger and thirst, only a fraction survived. Yazidi temples and shrines, villages were destroyed.

3. The village of Kocho, hidden deep in the mountains, became known to the world by 2018 Nobel Peace Prize winner Nadia Murad.

4. On June 17, 2016, the UN recognized the Yazidi genocide, and a number of countries and organizations have recognized the Yazidi genocide.

5. The outcome of the August 2014 massacres and the fate of thousands of victims remain uncertain. An estimated 5,000 men and women were killed, 7,000 women and girls were abducted, and young boys were often recruited as fighters. At least 80 mass graves containing hundreds of bodies have been discovered.

AREVIK HARUTYUNYAN

“Geghard” Scientific Analytical Foundation,
EUA, Faculty of International Relations,
Email: arevikh99@gmail.com

WOMEN AND GENDER EQUALITY ISSUES IN THE UAE

The paper examines the dynamics of women’s issues and gender equality-related matters in the United Arab Emirates (UAE). Additionally, the research addresses the activities of Sheikha Fatima bint Mubarak as a female pioneer figure in the context of perceiving her “Mother of the Nation” state symbol. The paper analyzes political and social reforms implemented in the UAE aimed at women’s legal and socio-economic empowerment. It addresses institutional reforms of gender equality, particularly women’s involvement in education, work, politics, and diplomacy. Special attention is paid to institutions and programs personally initiated and led by Sheikha Fatima, which have contributed to the advancement of Arab women’s rights not only in the UAE but also at the regional level. The work also addresses existing problems, particularly domestic violence and discrimination in the legislative context.

Key words: Sheikha Fatima, gender equality, women, Emirates, rights, Arab world, women’s rights, women empowerment.

The United Arab Emirates (UAE) is considered the region’s leading state in terms of gender equality, as evidenced by the 2023 Global Gender Gap Report¹. This achievement stems from a fundamental belief in the equality of women and men in society. Thanks to a series of public and private initiatives, women in the UAE today play a significantly stronger and more prominent role not only in government and business, but also in science, technology, engineering, and mathematics (STEM) fields².

¹ World economic forum, “Global gender gap report 2023”, June 2023, https://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2023.pdf (18.02.2025).

² Embassy of United Arab Emirates Washington DC, “Women in UAE”, [https://www.uae-](https://www.uae-embassy.org/)

In Georgetown Institute’s 2023 WPS (Women Peace and Security Index), the UAE ranks 22nd out of 177 countries in women’s involvement in financial, political, and justice sectors¹.

At the same time, in the Middle East and Africa, the UAE is first in women’s involvement in financial, parliamentary seats, and absence of legal discrimination against women.

2025 statistics show that women comprise more than one-third of the UAE population – 4.11 million out of a total population of 11.35 million².

In the United Arab Emirates, gender equality is a national priority and is enshrined in the Constitution, which grants equal rights to women and men. Under the Constitution, women enjoy the same legal status, entitlement to titles, access to education and professional training, as well as the right to inherit property on an equal basis with men. They are also guaranteed equal access to employment, healthcare, and family welfare. The UAE has been recognized as a regional pioneer, serving as a model of equality in the areas of economy, governance, education, and health³.

Today in the UAE, more women than men receive secondary education and are admitted to universities and other higher education institutions. As a result, over 77 percent of Emirati women pursue higher education after secondary school and make up more than 64 percent of university graduates in the country. In public universities, women account for approximately 41 percent of graduates in science, technology, engineering, and mathematics (STEM) fields. These advancements have contributed to the UAE’s female literacy rate reaching 95.8 percent⁴.

Women also play a significant role in various positions across the private sector. They enjoy equal rights to economic resources, including

[embassy.org/discover-uae/society/women-in-the-uae](https://www.uae-embassy.org/discover-uae/society/women-in-the-uae) (18.02.2025).

¹ GIWPS, United Arab Emirates, “United Arab Emirates’s Ranking 22/177”, Index score 0.868, <https://giwps.georgetown.edu/country/united-arab-emirates/> (18.02.2025).

² GMI Research Team, “Unites Arab Emirates (UAE) population statistics 2025”, April 7, 2025, https://www.globalmediainsight.com/blog/uae-population-statistics/#UAE_Population_2025_Key (09.04.2025).

³ Embassy of United Arab Emirates Washington DC, “Women in UAE”, <https://www.uae-embassy.org/discover-uae/society/women-in-the-uae> (18.02.2025).

⁴ UAE USA United, “Changing the Equation: UAE Women Take the Lead in STEM”, <https://www.uaeusaunited.com/stories/uae-women-lead-stem?ga=2.203313489.1990280959.1709913058-113539686.1708248299> (03.08.2025).

equal wages, property ownership, land and asset management, access to financial services, inheritance, and natural resources – all protected under national law. Reflecting this progress, Emirati women made up the largest national group on Forbes magazine’s 2023 list of the Arab World’s Most Influential Women, with 15 women featured. Female entrepreneurs comprise around 10 percent of the UAE’s private sector; approximately 25,000 businesswomen manage organizations valued at over 60 billion dirhams. Nationwide, women occupy about 15 percent of industrial and commercial leadership roles. In 2021, the UAE Securities and Commodities Authority mandated that all publicly listed companies must include at least one woman on their boards of directors¹.

One of the most significant and impactful areas is the public sector and state-level positions, where Emirati women are actively represented. Approximately two-thirds of public sector employees in the UAE are women, with 30 percent holding leadership roles. The UAE stands out as the only Arab country to have achieved parliamentary-level gender equality and ranks 35th globally for women’s political participation and empowerment, according to the World Economic Forum’s Global Gender Gap Report 2023². Additionally, women are actively engaged in diplomacy, comprising 42.5 percent of the diplomatic corps, eleven of whom have been appointed as ambassadors and consuls general³.

To emphasize gender equality in political dialogues, the UAE has established the Gender Balance Council, which is a federal body responsible for developing and implementing measures and initiatives aimed at gender equality. The Council’s goal is to narrow the gender gap in all government sectors and to achieve gender equality in decision-making positions⁴.

¹ Reuters, March 15, 2021, “UAE listed companies must have at least one female board member: regulator”, <https://www.reuters.com/article/us-emirates-companies-women/uae-listed-companies-must-have-at-least-one-female-board-member-regulator-idUSKBN2B71NI/> (03.08.2025).

² Global Economic Forum, June 20, 2023, “Global Gender Gap Report 2023”, <https://www.weforum.org/publications/global-gender-gap-report-2023/> (03.08.2025).

³ Anwar Gargash Diplomatic Academy, March 2023, research analysis, “2023 Women in Diplomacy Index”, https://www.agda.ac.ae/docs/default-source/2023/women-diplomacy.pdf?sfvrsn=6189673b_3 (03.08.2025).

⁴ Embassy of United Arab Emirates Washington DC, “Women in UAE”, <https://www.uae-embassy.org/discover-uae/society/women-in-the-uae> (18.02.2025).

Women’s Rights and Legal Frameworks Supporting Them

The United Arab Emirates has made significant changes regarding women’s rights in recent years. The reform period began with the introduction of new regulations to address domestic violence. Although domestic violence was previously regulated, women’s and girls’ rights remained limited, and discriminatory practices persisted. Due to numerous legal gaps, it was often easier for men to circumvent the law and avoid sentencing—or even the death penalty—when killing female relatives.

On February 26, 2021, Human Rights Watch presented a report to the Emirates’ national committee, examining discrimination against women in the UAE and presented the Convention on the Elimination of All Forms of Discrimination against Women (CEDAW)¹. The committee scheduled a session during the first week of March to present the list of issues and questions it intended to address to UAE authorities prior to reviewing UAE’s submissions².

Human Rights Watch senior women’s rights researcher Rothna Begum³ notes: “The UAE’s recent women’s rights reforms are a step in the right direction, but in reality they don’t go far enough to eliminate the deep discrimination against women in legislation and practice.”

Women’s rights in the UAE largely went unnoticed until videos began being published featuring Dubai ruler’s daughter, Sheikha Latifa, describing her forced detention conditions after her abduction and forced return to the UAE in 2018. She also requested investigation of her sister Sheikha Shamsa’s abduction and forced return from the United Kingdom to the UAE in 2000⁴.

¹ “Human Rights Watch Submission to the Committee on the Elimination of Discrimination against Women on the United Arab Emirates”, March 4, 2021, <https://www.hrw.org/news/2021/03/04/human-rights-watch-submission-committee-elimination-discrimination-against-women> (11.03.2025).

² United Nations Human Rights Treaty Bodies, Treaty Body Database, “Sessions for CEDAW – Convention on the Elimination of All Forms of Discrimination against Women”, https://tbinternet.ohchr.org/_layouts/15/TreatyBodyExternal/SessionsList.aspx?Treaty=CEDAW (11.03.2025).

³ Human Rights Watch, “Rothna Begum, Associate Director, Women’s Rights Division”, <https://www.hrw.org/about/people/rothna-begum> (11.03.2025).

⁴ Alberge, D., November 28, 2023, “Princess Latifa abduction ordeal to be turned into TV drama”, <https://www.theguardian.com/tv-and-radio/2023/nov/28/dubai-princess-latifa->

On March 8, 2015, on the 40th anniversary of the General Women's Union's establishment, Emirati Women's Day was celebrated for the first time in the Emirates as a national holiday, emphasizing women's role in society. The same year launched the 2015–2021 Emirati Women's Empowerment National Strategy under Sheikha Fatima bint Mubarak's leadership.

In the October 2019 Federal National Council elections, 200 out of 555 candidates were women, resulting in seven women among the twenty elected members, making the UAE one of the first countries where women are included in national council or assembly compositions¹.

Parallel to promoting women's involvement in the public sector, the state does not leave the private sector unattended either. In 2012, the Emirates government established a law granting women the right to occupy leadership positions in federal and private bodies and organizations².

In 2015, the Gender Balance Council was established with the aim of ensuring that women continue to participate in decision-making and hold leadership positions in the country's development. The Council's goal is to review the legal system and policies, as well as to create and implement programs promoting gender equality in the workplace³.

Characteristically, on the path of women's involvement, development, and gender equality, the Emirates actively cooperates with other states and bodies, such as the European Union. In 2013–2015 and 2016–2018, the Emirates was elected as a member of the UN Women Executive Board, an organization dealing with gender equality and women's empowerment issues⁴.

tv-drama-the-escape#:~:text=The%20daughter%20of%20Dubai's%20ruler,was%20returned%20to%20her%20father. (11.03.2025).

¹ "Women's Rights", United Arab Emirates Ministry of Foreign Affairs, <https://www.mofa.gov.ae/en/the-ministry/the-foreign-policy/women-rights> (01.04.2025).

² "Emirati women's day", The official portal of the UAE Government, <https://u.ae/en/information-and-services/social-affairs/women#:~:text=In%20December%202012%2C%20the%20Government,federal%20bodies%2C%20companies%20and%20institutions.&text=As%20of%202015%2C%20women%20occupy,of%20the%20highest%20proportions%20worldwide> (01.04.2025).

³ "Gender balance", The official portal of the UAE Government, <https://u.ae/en/information-and-services/social-affairs/gender-equality/gender-balance> (01.04.2025).

⁴ "Women's Rights", United Arab Emirates Ministry of Foreign Affairs, <https://www.mofa.gov.ae/en/the-ministry/the-foreign-policy/women-rights> (01.04.2025).

Since 2017, special parking spaces and carriages have been allocated for women in Dubai's public transport. In the Women's Global Peace and Security Index, the Emirates ranked 24th based on 2021–2022 results, which is considered the best result for the Middle East and North Africa¹.

Mother of the Nation

Sheikha Fatima bint Mubarak is the wife of Sheikh Zayed bin Sultan Al Nahyan, the founding father of the UAE, and is widely recognized as the “Mother of the Nation” for her tireless efforts in advancing women's empowerment and social progress. She actively works toward empowering women through education. She encouraged, supported, and believed in the power and influence that women have in supporting the state's development.

In 2015, Sheikha Fatima was recognized as Person of the Year by Forbes Middle East for her active contributions to healthcare, education, and social program development processes. It is noted that her contributions to UAE's socio-economic and political life are so significant that she is called the “Mother of the Nation” in the Emirates. Sheikha Fatima is not simply a leader or noble. She is a person who has completely devoted herself to society and their needs².

“In Sheikha Fatima's words, progress occurs when literally all members of society develop equally. In the United Arab Emirates we have that, and women are equal partners,” – noted Sheikha Moza bint Thahun al Nahyan, advisor to the UAE Ministry of Foreign Affairs and International Cooperation, during the Women's Global Summit held in Abu Dhabi in February 2023³.

¹ Митечкина А., «Абайя - это статус»: есть ли у женщин в Дубае права и свободы», 15 июня, 2023, <https://www.forbes.ru/forbes-woman/490927-abaja-eto-status-est-li-u-zensin-v-dubae-prava-svobody> (04.03.2025).

² Серкова Ю., Известные люди: Бин Мубарак Фатима: Незаходящее солнце Эмиратовъ, 2015, <https://www.goldmustang.ru/magazine/heroes/people/4442.html> (04.04.2025)

³ Al Nowais, S., “Sheikha Fatima Key to making UAE's model in equality”, march 2, 2023, Pressreader, https://www.pressreader.com/uae/the-national-news/20230302/281612424603776?srsIid=AfmBOorHx7X5H6O91EA0_jBDQGimDP_EEKmsmPnTaV1gY7fExYSJsrGH (26.03.2025).

Educating women not only advances gender equality but also contributes to economic development and improvements in living standards, helping to lift communities and nations out of poverty.

Sheikha Moza also noted that in the Arab region, and generally at the international level, the UAE is an example in women's advancement. Women comprise about 70 percent of university graduates, particularly in science, technology, engineering, and mathematics (STEM) fields. Additionally, women comprise about 44 percent of the state's researchers¹.

"In 50 years we achieved everything that requires centuries," – Sheikha Fatima noted during the conference, "Women today are judges, astronauts, ambassadors, doctors, engineers, pilots, and decision-makers"².

In 1973, Sheikha Fatima founded the Abu Dhabi Women's Development Foundation, the first organization in the UAE dedicated to women. This was followed by the establishment of the General Women's Union in 1975, the Supreme Council for Motherhood and Childhood in 2003, and the Family Development Foundation in 2006. Sheikha Fatima serves as the chief financier and governing authority of these institutions.

In addition to the aforementioned institutions, the Arab Women's Organization and Sheikha Fatima's Foundation were also established to promote the development of refugee women and women in neighboring Arab states³. The foundation's presence and activities clearly demonstrate that the title "Mother of the Nation" extends beyond the Emirates to the entire Arab world. Indeed, Sheikha Fatima commands the same respect and authority across Arab societies as she does in the UAE. She has implemented—and continues to implement—a range of development programs in regional countries aimed at promoting the advancement of local Arab women, ensuring access to education and healthcare for all.

¹ Al Nowais, S., "Sheikha Fatima 'led the way' for girls' education from the beginning", February 28, 2023, The National, UAE Education, <https://www.thenationalnews.com/uae/education/2023/02/28/sheikha-fatima-led-the-way-for-girls-education-from-the-beginning/> (26.03.2025).

² Al Nowais, S., "In 50 years we achieved what takes centuries, says Sheikha Fatima", UAE Government, The National, <https://www.thenationalnews.com/uae/government/2023/02/21/in-50-years-we-achieved-what-takes-centuries-says-sheikha-fatima/> (26.03.2025).

³ "Balance for Better: A comprehensive overview of gender balance in the UAE", UAE Gender Balance Council, https://www.gbc.gov.ae/ENG_GBC_Report.pdf (01.04.2025).

Sheikha Fatima was born in a Bedouin family in the Al Hayer community of the Al Ain region. She grew up in a conservative, religious family, which helped shape her future views. In 1960, marrying Sheikh Zayed, who was then the regional leader of Al Ain, they moved to Abu Dhabi, where Sheikh Zayed ruled from 1966. A strong bond was formed between Sheikh Zayed and Sheikha Fatima, and it is noted that Sheikh Zayed was not only a husband but also a teacher and inspiration for Sheikha Fatima, and on December 2, 1971, after the Emirates' creation, that bond only strengthened. Being a devoted wife and mother, as well as following Sheikh Zayed's political practice, Sheikha Fatima developed a strong character and worldview. Sheikha Fatima continuously educated herself – studying the Quran, learning law and literature, history, diplomacy, and more¹.

In 2005, a gold coin worth one thousand dirhams was issued in honor of H.H. Sheikha Fatima. The coin features Sheikh Zayed bin Sultan Al Nahyan on one side, and a flower symbolizing Sheikha Fatima on the reverse, accompanied by the inscription “Mother of the Nation”² (see Appendix 1).

Abu Dhabi is home to the world's second-largest mosque, which bore the name of Sheikh Mohammed bin Zayed until 2017. In that year, it was renamed the “Maryam, Mother of Jesus” Mosque (‘Maryam Umm Issa’ Mosque) (see Appendix 2) by order of Abu Dhabi Crown Prince and UAE Armed Forces Supreme Commander Sheikh Mohammed bin Zayed Al Nahyan. The name change was intended to symbolize peace and solidarity between Christians and Muslims³. It is also important to note that this was another step in demonstrating the significance, importance, and status of women in Emirati society. Moreover, this act resonates with the Crown Prince's mother, Sheikha Fatima's, title as the “Mother of the Nation,” once again emphasizing the vital role of motherhood.

¹ “Her Highness Sheikha Fatima bint Mubarak, “Mother of the Emirates”, Chairwoman of the General Women's union, Chairwoman of the Supreme council for motherhood and childhood, Supreme chairwoman of the Family development foundation, UAE government website, https://www.gwu.ae/hh_resume?lan=ar (04.04.2025).

² “1000 Dirham - Khalifa: Mother of the Nation”, Numista, <https://en.numista.com/catalogue/pieces91860.html> (09.04.2025).

³ “Abu Dhabi mosque named after Mariam, mother of Prophet Isa”, June 14, 2017, <https://www.gdnonline.com/Details/220093/Abu-Dhabi-mosque-named-after-Mariam> (09.04.2025).

In the Arab world, women have always been revered as symbols of national unity, continuity, and social cohesion. Embodied as mothers, they remain the most important pillar of state unity.

Despite recent decades of progress and increased women's rights and participation, the general worldview toward women and mothers has remained largely unchanged. The image of the mother plays a crucial role in educating future generations, closely linked to women's development and education. This explains the UAE's efforts: to build a developed and civilized state, it is essential to have educated mothers who will raise their children with good manners and instill values rooted in Emirati customs and traditions¹.

Alongside the state's continuous development and achievements, it is important to recognize that mothers bear the responsibility of passing the nation's rich culture, history, and heritage on to the younger generation². The role and significance of women within families cannot be diminished or overlooked; however, this should not restrict their professional growth or career development. Women must be empowered to balance their professional ambitions with family responsibilities, particularly in light of the UAE's vision for a technologically advanced and progressive future.

The United Arab Emirates places strong emphasis on women's rights, recognizing their vital role in society—not only as active contributors to national development but also as mothers shaping future generations. Women's empowerment programs receive substantial support and funding from both the government and private sector, reflecting a national commitment to advancing women's welfare. Acknowledging the value of women fosters a healthier, more inclusive, and diverse society. The enthusiastic participation and engagement of Emirati women in these initiatives clearly demonstrate that the UAE is moving in the right direction.

¹ "The Role of Women in Shaping Emirati Youth and an initiative to Support Mothers: Key Points of an "Open Talk" Hosted by Khalaf Al Habtoor", ALHABTOOR, <https://www.habtoor.com/en/news/26/2224/the-role-of-women-in-shaping-emirati-youth-and-an-initiative-to-support-mothers-key-points-of-an-%E2%80%9COpen-talk%E2%80%9D-hosted-by-khalaf-al-habtoor> (01.04.2025).

² Gokulan, D., "Emirati mothers are the custodians of UAE's future", Khaleej times, March 20, 2021, <https://www.khaleejtimes.com/uae/emirati-mothers-are-the-custodians-of-uaes-future> (04.04.2025).

The UAE stands as a powerful example—both for Arab countries and beyond—of how a nation can achieve progress and development through the active participation and empowerment of women.

ԱՐԵՎԻԿ ԿԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամ,
ՀԵՀ, Միջազգային հարաբերություններ,
Էլվիոստ՝ arevikh99@gmail.com

**ԿԱՆԱՅՔ ԵՎ ՍԵՌԵՐԻ ՄԻՋԵՎ ԿՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐՆ ԱՄԷ-ՈՒՄ**

Քանալի բառեր՝ Շեյխա Ֆաթիմա, սեռերի միջև հավասարություն, կին, Էմիրություններ, իրավունքներ, արաբական աշխարհ, կանանց իրավունքներ, կանանց հզորացում:

Հոդվածում ուսումնասիրվում է կանանց խնդիրների և սեռերի հավասարությանն առնչվող հարցերի դինամիկան Արաբական Միացյալ Էմիրություններում (ԱՄԷ): Բացի դրանից, հետազոտության մեջ անդրադարձ է կատարվում Շեյխա Ֆաթիմա բինթ Մուբարաքի գործունեությանը՝ որպես կին առաջամարտիկի կերպարի՝ նրա «Ազգի մայր» պետական խորհրդանիշի ընկալման համատեքստում: Աշխատանքում անդրադարձ է արվում ԱՄԷ-ում իրականացվող քաղաքական և սոցիալական բարեփոխումներին, որոնք ուղղված են կանանց իրավական և սոցիալ-տնտեսական հզորացմանը: Անդրադարձ է կատարվում սեռերի միջև հավասարության ինստիտուցիոնալ բարեփոխումներին, մասնավորապես՝ կրթության, աշխատանքի, քաղաքականության և դիվանագիտության ոլորտներում կանանց ներգրավվածությանը: Հատուկ ուշադրություն է դարձվում Շեյխա Ֆաթիմայի նախաձեռնած և ղեկավարած կառույցներին, ծրագրերին, որոնք նպաստել են արաբ կանանց իրավունքների առաջխաղացմանը ոչ միայն ԱՄԷ-ում, այլև տարածաշրջանային մակարդակում:

Աշխատանքում անդրադարձ է արվում նաև առկա խնդիրներին, հատկապես՝ ընտանեկան բռնությանն ու խտրականությանը օրենսդրության բնագավառում:

Appendix 1



Commemorative gold coin, Sheikha Fatima Mother of the Nation

Appendix 2



Mary, Mother of Jesus Mosque, Abu Dhabi, United Arab Emirates

ԱՐՄԻՆԵ ԽԱՆՊԻԿՅԱՆ

«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամ,
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ, Արևելագիտության ամբիոն,
Էլփոստ՝ arminekhanbekyan18@gmail.com

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՕՐԳԱՆՆԵՐԻ ԵՎ «ՁԻՆՎՈՐԻ ԲԱԺՆԻ» ՎԱՃԱՌՔՆ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ

Ադրբեջան պետության և ադրբեջանական հասարակության իրական պատկերի ուսումնասիրության տեսանկյունից բավականին հետաքրքրական է ադրբեջանական բանակում ինքնասպանությունների, զինվորների օրգանների վաճառքի և «զինվորի բաժնի» յուրացման երևույթների հետազոտությունը: Ավտորիտար ռեժիմի պայմաններում ազատ խոսքի և մամուլի խիստ սահմանափակումը և համակարգային վերահսկողությունը մեծապես դժվարացնում են վերոնշյալ հարցերի խորքային ուսումնասիրությունը, մինչդեռ պետական պաշտոնական հաղորդագրությունների ենթագրային վերլուծության և սոցցանցային տիրույթում խնդրո առարկայի վերաբերյալ տեղեկատվության արտահոսքի համադրումը թույլ է տալիս որոշակի փաստական, սակայն ոչ ամբողջական պատկերացում կազմել 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո ինքնասպանությունների պատճառների, զինվորների օրգանների վաճառքին պետական ինստիտուտների մասնակցության և «զինվորի բաժնի» վաճառքի կազմակերպման վերաբերյալ:

Բանալի բառեր՝ Ադրբեջան, բանակ, ինքնասպանություն, օրգանների վաճառք, «զինվորի բաժնի»:

Նախաբան

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով՝ աշխարհում ամեն տարի գրեթե մեկ միլիոն մարդ ինքնասպան է լինում¹: Ինքնասպանության վարքագիծը զարգանում է բարդ գոր-

¹ Deploymentpsych.org, Suicide in the Military, see more details here: <https://deploymentpsych.org/disorders/suicide-main> (11.04.2025).

ծընթացների արդյունքում՝ անհատի հոգեվիճակը վտանգող հոգեբանական, սոցիալական, նյարդակենսաբանական և ժողովրդագրական գործոնների համակցմամբ¹: Ինքնասպանություններին հակված անձանց մեջ առանձին խումբ են կազմում ռազմական ծառայություն իրականացնող անձինք: Մարտական գործողություններին մասնակցելը կարող է զգալիորեն բարձրացնել հոգեբանական և վարքագծային խանգարումները՝ այդ թվում հետտրավմատիկ սթրեսային, դեպրեսիայի և կախվածության ձևերի (օրինակ՝ ավրոհողի կամ թմրամիջոցների չարաշահման) առաջացումը, ինչն իր հերթին նպաստում է ինքնասպանության հավանականության աճին²:

Գիտական հանրության շրջանում առկա են քննարկումներ այն մասին, թե որքանով են մարտական գործողությունները նպաստում զինծառայողների շրջանում ինքնասպանությունների թվի աճին: Խնդրով զբաղվող մասնագետների մի մասը պնդում է, որ ինքնասպանությունները կապված են ռազմական գործողությունների հետ, իսկ մյուս մասը՝ որ ռազմական գործողությունների և ինքնասպանության միջև կապ չկա: Հաստատվել է, որ մարտական ծառայությունը զգալի ռիսկեր է պարունակում ծառայողների հոգեբանական առողջության համար: Մասնավորապես՝ հետտրավմատիկ սթրեսային խանգարում և դեպրեսիայի ավելի բարձր մակարդակներ են նկատվում այն զինծառայողների շրջանում, ովքեր մասնակցել են մարտական գործողությունների:

Ինքնասպանության վտանգը մեծապես կապված է հոգեկան առողջության վատ վիճակի հետ³: Նման երևույթներից զերծ չէ նաև ադրբեջանական բանակը: Ադրբեջանի իշխանությունների անտարբերությունը սեփական զինվորականության խնդիրների նկատմամբ վկայում է, որ զինվորները պարզապես գործիք են իշխանությունների քաղաքական նկրտումների համար, իսկ նրանց բարեկեցությունն ու հոգեկան առողջությունը պակաս կարևոր տեղ են զբաղեցնում Ադրբեջանի ղեկավարության օրակարգում: Կարևոր է նշել, որ բանակում

¹ Nock M. et al, Suicide Among Soldiers: A Review of Psychosocial Risk and Protective Factors, Washington School of Psychiatry, 76(2), 2013, p. 97-125.

² Abct. org, Military Suicide, see more details here: <https://www.abct.org/fact-sheets/military-suicide/> (11.04.2025).

³ Castro C. A., Kintzle S., Suicides in the Military: The Post-Modern Combat Veteran and the Hemingway Effect, Current Psychiatry Reports, vol. 16(8), N 460, 2014, p. 3.

Ծառայելը վտանգավոր է թվում ոչ միայն պատերազմից վերադարձածների, այլ նաև ծառայության մեջ գտնվող զինվորների համար: Բազմաթիվ վկայություններ փաստում են, որ բանակին ուղղված պետական ռեսուրսների զգալի մասը յուրացվում է զինվորների համար նախատեսված սնունդն ու առաջին անհրաժեշտության միջոցները դուրս են գրվում համակարգից և վաճառվում քաղաքացիական շուկայում: Այս բացահայտ կոռուպցիոն սխեմաները տեղի են ունենում պետական մակարդակով՝ բանակը վերածելով տնտեսական շահարկման գործիքի: Անվերջանալի շահագործման այս շղթայի ամենադաժան դրսևորումն ադրբեջանական բանակում կապված է զինվորների օրգանների վաճառքի մասին շրջանառվող տեղեկությունների հետ: Չնայած պաշտոնական մակարդակով այս տեղեկությունները շարունակաբար հերքվում են, այնուամենայնիվ մի շարք անկախ լրատվամիջոցներ ներկայացնում են բազմիցս արձանագրված կասկածելի մահվան դեպքեր, ինչպես նաև բժշկական փաստաթղթերի անհամապատասխանություններ:

Ինքնասպանություններն ադրբեջանական բանակում. պատճառներ, արձագանքներ

2020 թ. 44-օրյա պատերազմի մասնակից ադրբեջանցի զինվորականության շրջանում արձանագրվեց ինքնասպանությունների մեծ ալիք¹, որն առաջացրեց ոլորտի փորձագետների հետաքրքրությունը դրանց պատճառների նկատմամբ. արդյո՞ք կառավարությունը բավարար քայլեր է ձեռնարկում պատերազմի մասնակից անձանց վերականգնման համար²: Ադրբեջանական իշխանությունները տեղի ունեցած ինքնասպանությունները կապում են սոցիալական առկա խնդիրների, հոգեկան խանգարումների հետ: Ըստ ադրբեջանական կողմի ներկայացրած տվյալների (ինչը ճշգրտման կարիք ունի)՝ զինվորականության շրջանում ինքնասպանությունները կատարվել են տարբեր հանգամանքներում ու պայմաններում, տարբեր միջոցներով:

¹ 27sentyabr.az, Azərbaycanda müharibə veteranı intiharları və sosial işin təşkil edilməsinin əhəmiyyəti, <https://27sentyabr.az/552/> (10.04.2025).

² Oc-media.org, Turned away: Azerbaijan's war veterans, <https://oc-media.org/turned-away-azerbajians-war-veterans/> (12.04.2025).

Ընդ որում՝ ինքնասպանություններ արձանագրվում են ինչպես բուն ծառայության ընթացքում, այնպես էլ՝ ծառայությունից հետո՝ քաղաքացիական կյանքում: Բանակում տեղի ունեցող ինքնասպանությունների ուսումնասիրության վերաբերյալ կարևոր է դիտարկել «ռազմական համակարգից քաղաքացիական կյանքին անցման տեսությունը» (Military transition theory): Այն տեղի է ունենում փուլային տարբերակով՝

1. առաջին փուլը ռազմական համակարգից քաղաքացիական կյանքի անցնելուն մոտենալն է, որը պայմանավորված է անձնական, մշակութային և այլ գործոններով, որոնք անցումային փուլի հիմքն են:

2. Երկրորդ փուլը՝ անցման կառավարումը, վերաբերում է անհատական, համայնքային, կազմակերպական և անցումային գործոնների, որոնք ազդում են զինծառայողից քաղաքացի դառնալու անհատական գործընթացի վրա:

3. Վերջին փուլը՝ անցման գնահատումը, նկարագրում է անցման արդյունքները: Հիմնական արդյունքները ներառում են աշխատանքը, ընտանիքը, առողջությունը, ընդհանուր բարեկեցությունը և համայնքը՝:

Զինվորականության շրջանում ինքնասպանությունների աճը նկատելի է հատկապես հետպատերազմյան շրջանում՝ 2021–2022 թթ.: Հարկ է նշել, որ ինքնասպանություն գործած անձանց մեծամասնությունը ռազմական գործողությունների ընթացքում ձեռք բերված հաջողությունների համար պարգևատրված անձինք են: 44-օրյա պատերազմից հետո ինքնասպանություն գործած ադրբեջանցի զինվորականներն են՝

1. Էլվին Ջաֆարով²,

¹ Castro C. A., Kintzle S., Suicides in the Military: The Post-Modern Combat Veteran and the Hemingway Effect, Current Psychiatry Reports, vol. 16(8), N 460, 2014, p. 4.

² 1987 թ. Սաբիրաբադի շրջանի Գալադայ գյուղում ծնված Էլվին Ջաֆարովը 2020 թ. 44-օրյա պատերազմի 3-րդ կարգի հաշմանդամ էր: Ինքնասպան է եղել սոցիալական ծանր պայմանների և գործադիր իշխանության անտարբերության պատճառով: Տե՛ս <https://foto.info.az/gundem/11067-vtn-muharibsi-qazisi-elvin-cfrov-intihar-etdi.html> (09.04.2025): Ջաֆարովը հասարակության շրջանում հայտնի էր «Մաուզլի» մականունով, որը նա ստացել էր ռազմական գործողությունների ընթացքում հանձնարարություն կատարելիս (իբրև թե Բերծորի (Լաչին) շրջանի անտառների ծառերից հավաքել է հայերի կողմից տեղադրված մեծ թվով տեսախցիկներ): Տե՛ս Prokurorluq qazinin intihari ilə bağlı araşdırmalara başladı, <https://modern.az/hadise/358492/prokurorluq-qazinin-intihari-ile-bali-arasdirmalara-basladi/> (09.04.2025):

2. Նիզամադդին Իբրահիմով¹ պարզևատրված «Խոջավենդի (հայկական Մարտունի) ազատագրման համար» մեդալով²,
3. Էլվին Ալըն³,
4. Մաշալլահ Մանաֆով⁴,
5. Ադիլ Բայրամով⁵ պարզևատրված «Սուգովուջանի ազատագրման համար» մեդալով⁶,
6. Գումրահ Սաֆարգուլիև⁷,

¹ 44-օրյա պատերազմի մասնակից 33-ամյա Նիզամադդին Իբրահիմովը Բիլասուվարի շրջանի Սամադաբադ գյուղի բնակիչ էր: Ինքնահրկիզվել է իր տան դիմաց: Տե՛ս Daha bir Qazi intihar etdi, <https://foto.info.az/gundem/15587-daha-bir-qazi-intihar-etdi.html> (09.04.2025):

² Buta.media, Özüni yandıran qazi vəfat etdi, <https://buta.media/az/guc-strukturlari/20439/zunu-yandiran-qazi-vefat-etdi-foto/> (09.04.2025).

³ 1992 թվականին ծնված Ադստաֆա քաղաքի բնակիչ, 44-օրյա պատերազմի մասնակից Ալիևը ինքնասպանություն է գործել ինքնահրկիզման միջոցով՝ իր վրա նավթ լցնելով. այրվել է մարմնի 70%-ը: Տես՝ <https://a.bizim.media/az/cemiyet/198596/veten-muharibesinin-istirakcisi-bakida-xestexanada-oldu-sbbfoto/> (09.04.2025): Ադստաֆայից նրան տեղափոխել են Բաքվի հիվանդանոց, որտեղ էլ մահացել է: Տե՛ս Bir neçə gün əvvəl Ağstafada özünü yandıran qazi vəfat edib, <https://foto.info.az/gundem/19299-bir-nec-gun-vvl-agstafada-ozunu-yandiraraq-intihar-edn-qazi-vfat-edib.html> (09.04.2025):

⁴ Սաբիրաբադի շրջանի Ջավադ գյուղի բնակիչ, 1986 թ. ծնված Մաշալլահ Մանաֆովը ինքնասպան է եղել՝ ծառից կախվելով: Ըստ ադրբեջանական աղբյուրների՝ նախկին զինվորականն ինքնասպանություն է գործել Սաբիրաբադի շրջանի գործադիր իշխանության վարչական շենքից դուրս գալուց հետո: Տե՛ս Daha bir Vətən müharibəsi qazisi özünü asdı, <https://gundem.az/az/cemiyet/22343/daha-bir-veten-muharibesi-qazisi-zunu-asdi/> (09.04.2025):

⁵ Ծագումով Սալյանի շրջանի Բուրգարագաշլը գյուղի բնակիչ, 2002 թվականին ծնված Ադիլ Բայրամովն աչքի էր ընկել Արցախի Հանրապետության դեմ ադրբեջանական կողմի սանձազերծած պատերազմում: Նախկին զինվորականն ինքնասպան է եղել՝ կախվելով Սումգայիթում վարձակալած տանը: Տե՛ս Daha bir Vətən müharibəsi iştirakçısı intihar etdi, տես՝ <https://unikal.az/news/334843/daha-bir-veten-muharibesi-qazisi-intihar-etdi> (09.04.2025):

⁶ Axar.az, 2 gün öncə ad gününü olan qazimiz intihar etdi, <https://axar.az/news/toplum/650116.html> (09.04.2025).

⁷ Գուևարի շրջանի Յասաբոբա գյուղի բնակիչ, 2002 թ. ծնված Գումրահ Սաֆարգուլիևը 44-օրյա պատերազմի մասնակից էր: Ինքնասպան է եղել՝ հաչմազի անտառապատ տարածքներից մեկում կախվելով: Տե՛ս Vətən müharibəsi qazisi intihar edib, տե՛ս <https://www.qlobal.az/veten-muharibesi-qazisi-intihar-edib/javascript%28%29> (09.04.2025):

7. Ալիսահիբ Մամմադով¹,
8. Իսմաթ Բաբաքիշև² պարզևատրված «Արիության համար» մեդալով, ինչպես նաև՝ «Շուշիի», «Ֆիզուլիի», «Խոջավենդի» և «Զաբ-րայիլի» ազատագրման համար մեդալներով³,
9. Բահման Աբբասլը⁴ պարզևատրված «Կուրաթլուի ազատագրման համար» մեդալով⁵,
10. Ֆեյրուզ Գեհրեմանով⁶,
11. Էմին Ջալիլով⁷ պարզևատրված «Կուրաթլուի» և «Զանգեյլանի» ազատագրման համար մեդալներով,
12. Ֆիրուդին Ֆիրուդինլի⁸ պարզևատրված «Խոջավենդի ազատագրման համար» և «Ֆիզուլիի ազատագրման համար» մեդալներով⁹,
13. Ֆարիդ Գուլիև¹⁰,

¹ Ադրբեջանական որոշ լրատվամիջոցներ Մամմադովի ինքնասպանությունը ներկայացնում են ընտանեկան-անձնական խնդիրների հիմնավորմամբ: 44-օրյա պատերազմի մասնակիցն ինքնասպան է եղել Բիլասուվարի շրջանի իր բնակավայրում: Տե՛ս Վեթոն müharibəsi qazisi intihar etdi, <https://azvision.az/news/294819/news.html> (09.04.2025):

² Հատուկ նշանակության ուժերի կազմում կռված Իսմաթ Բաբաքիշևն ինքնասպան է եղել Գադաբայի շրջանի Չանագչը գյուղում:

³ Turkustan.az, Վեթոն müharibəsi qazisi intihar etdi, <https://www.turkustan.az/news.php?id=15768> (09.04.2025):

⁴ Բահման Աբբասլըն ծնվել է 1998 թ. Ջալիլբադի շրջանում: Նախկին զինվորական ինքնասպան է եղել կախվելով:

⁵ Fedai.az, Daha bir qazimiz intihar etdi, <https://fedai.az/?p=41999> (09.04.2025):

⁶ Ինքնասպանության հաջորդ դեպքն արձանագրվել է Ադրբեջանի Գուևարի շրջանի Անիգ գյուղում: Նախկին զինվորական Ֆեյրուզ Գեհրեմանովը կախվել էր ծառից: Մտերիմների խոսքով՝ վերջինս վիրավորում էր ստացել 44-օրյա պատերազմի ընթացքում և բուժում էր ստանում: Տե՛ս 23 yaşlı qazinin intihar etməsinin səbəbi, https://modern.az/aktual/345180/qazinin-intihar-sebebinin-teferruati/site_url/lang/news/cat/javascript/: (10.04.2025):

⁷ 1988 թ. ծնված Էմին Ջալիլովը 44-օրյա պատերազմի կամավոր մասնակիցներից էր: Երկու երեխաների հորը հարազատները կախված են գտել իրենց բնակարանում: Տե՛ս Վեթոն müharibəsi iştirakçısı intihar etdi, <https://www.yeniavaz.com/az/news/172104/veten-muharibesi-istirakcisi-intihar-etdi> (09.04.2025):

⁸ Կախվելով ինքնասպանություն գործած 44-օրյա պատերազմի մասնակից Ֆիրուդին Ֆիրուդինլին ռազմական գործողությունների ժամանակ աչքի ընկած զինվորականներից էր:

⁹ Modern.az, Qazi intihar etdi, <https://modern.az/hadise/370430/qazi-intihar-etdi-foto/> (09.04.2025):

¹⁰ Յարդմըլի շրջանի Ուրաքարան գյուղի բնակիչ Ֆարիդ Գուլիևը կախվել էր ան-

14. Էլխան Մամմադով¹ պարզևատրված «Քաջարի մարտիկ», «Ֆիզուլիի ազատագրման համար» և «Ջաբրայիլի ազատագրման համար» մեդալներով²,

15. Ռաբիլ Բաբան³ պարզևատրված «Քաջարի մարտիկ», «Հայ-բենական պատերազմի մասնակից» և «Աղդամի ազատագրման համար» մեդալներով⁴,

16. Վուսալ Մուսան⁵ պարզևատրված «Քաջարի մարտիկ» մեդալով⁶,

17. Ալիմ Մամմադով⁷,

18. Ուլվի Իսգանդարով⁸,

տառում: Վերջինս եղել է կրոնական և կրթությունը ստացել էր Իրաքի Նաջաֆ քաղաքում: Հարկ է նշել, որ Գուլինը ինքնասպանություն գործելու ժամանակ կրել էր զինվորական հագուստ: *Stu` Bu gün daha bir qazi intihar etdi: Nə baş verir?*, <https://diqqetinfo.wixsite.com/diqqet/post/bu-gün-daha-bir-qazi-intihar-etdi-nə-baş-verir-foto-vi-deo> (09.04.2025):

¹ Արցախի դեմ ադրբեջանական կողմի սանձագերծած պատերազմի հերթական մասնակից Էլխան Մամմադովը կախվել էր Բեյլյազանի շրջանի Շարգ գյուղի իր տան բակում գտնվող անասնազոմում:

² Fedai.az, *Daha bir qazimiz intihar edib*, <https://fedai.az/?p=61876> (09.04.2025).

³ Ադրբեջանի Աղսուի շրջանի Ուլգուջ գյուղում բնակվող, 1992 թ. ծնված Ռաբիլ Բաբանը ինքնասպան է եղել՝ իր տան բակում ծառից կախվելով: Ըստ ադրբեջանական լուրերի՝ Ռաբիլ Բաբանի սոցիալական վիճակը բավականին ծանր է եղել: Նա բազմիցս է դիմել համապատասխան կառույցների՝ աշխատանքի տեղավորման համար, սակայն վերջինիս խնդրին լուծում չի տրվել: Վերջին անգամ Բաբանը Նույն հարցով դիմել է Աղսուի շրջանի գործադիր իշխանությանը, սակայն տուն վերադառնալուն պես ինքնասպան է եղել:

⁴ Avrasiya.net, *Qazi Ağsu İcra Hakimiyyətində qəbuldan çıxıb intihar etdi*, <https://avrasiya.net/sosial/76165-qazi-asu-cra-hakimiyetinde-qbuldan-cxb-nthar-etd.html> (09.04.2025).

⁵ Ինքնասպան է եղել Չինված ուժերի զլխավոր կլինիկական հոսպիտալում: Ըստ վերջինիս եղբոր՝ Ռամին Մուսանի՝ եղբայրն ինքնասպանությունը գործել է խալաթի գոտիով կախվելու միջոցով հոսպիտալի լոգարանում:

⁶ News24.az, *İntihar edən qazi Vüsal Musayev özünü hamam xalatinin kəməri ilə boğub-qardaşı danışdı*, <https://news24.az/54743-gece-intihar-eden-shehidimiz-ozunu-hamam-xeleti-ile.html> (09.04.2025).

⁷ Կապիտան Ալիմ Մամմադովը ծնվել էր 1989 թ.: Ներքին գորքերի հատուկ նշանակության ջոկատներից մեկի հրամանատարն էր: Վերջինս ինքնասպան է եղել ատրճանակի միջոցով: *Stü Xüsusi təyinatlı zabit hərbi hissədə intihar etdi*, <https://shownews.az/news/criminal/2171-xususi-teyinatli-zabit-herbi-hissede> (09.04.2025):

⁸ 1997 թվականին ծնված Իսգանդարովն ինքնասպանություն էր գործել Աղդաշի շրջանում: Նախքան պատերազմը նա աշխատել էր Բաքվի կազմակերպություններից մեկում որպես անվտանգության աշխատակից, սակայն պատերազմից հետո

19. Ռուֆաթ Նաբիգադան¹ պատգևատրված «Ֆիզուլիի ազատագրման համար», «Ջաբրայիլի ազատագրման համար», «Շուշիի ազատագրման համար» և «Զինվորական ծառայության մեջ տարբերվելու համար» մեդալներով²,

20. Էլչին Հուսեյնգադա³,

21. Նամին Մամմադով⁴ հարկ է նշել, որ Մամմադովը ևս աչքի էր ընկել մարտերում, պարգևատրվել էր «Սուգուլուջանի ազատագրման համար» մեդալով⁵:

Ադրբեջանի Հանրապետությունում 44-օրյա պատերազմի ավարտից հետո ռազմական գործողությունների մասնակիցների շրջանում տեղի ունեցած ինքնասպանությունները լայն արձագանք են գտել ոչ միայն հասարակության, այլև պաշտոնատար անձանց շրջանում: Օրինակ՝ Ազգային ժողովի պատգամավոր Վահիդ Ահմադովը, «վետերանների» խնդիրներով պայմանավորված, դիմել է աշխատանքի և բնակչության սոցիալական պաշտպանության նախարարի տեղակալ

նրան աշխատանքի չեն ընդունել: Նախկին զինվորականի հայրը հարցազրույցի ժամանակ նշել էր, որ որդին, մեկ տարուց ավելի է, ինչ էր կարողանում աշխատանք գտնել: «Ինչ կարող եմ ասել, շատ ծանր է: Տղայիս մտահոգությունը գործազրկությունն էր: Չկար այնպիսի մի տեղ, որ նա չդիմեր: Մեր մտքով երբեք չէր անցնի, որ նման քայլի կդիմեր»: Իսկ Իսգանդարովի ընկերը՝ Ռոյալ Ալիևը, հավելել էր. «Երկար կռիվ անցած, Ֆիզուլիի, Կուբաթլուի, Ջաբրայիլի և Չանգելանի մարտերում հերոսություն ցուցաբերած մարդուն մեդալի չեն արժանացրել»: Ըստ նրա՝ ընկերոջ խնդիրները գործազրկությունն ու մեղալ չստանալն էր: Տես՝ <https://bizim.media/az/cemiyet/47096/> (10.04.2025):

¹ Լեյտենանտ Ռուֆաթ Նաբիգադան ծառայել էր Ներքին գործերի նախարարության ներքին զորքերի հատուկ նշանակության ստորաբաժանման կազմում: Պատերազմից առաջ Նաբիգադան համալրել էր ԿԱՏՄԱ-ի կազմը:

² Press.az, Xüsusi təyinatlı zabitimiz intihar edib, <https://press.az/az/news/87903> (10.04.2025).

³ Խազարի շրջանի բնակիչ Էլչին Հուսեյնգադան 44-օրյա պատերազմի մասնակից էր: Հուսեյնգադայի մահվան մասին հայտնել էր «Երիտասարդ վետերանների հասարակական միության» նախագահ Հաջի Վալիևը: Ըստ նրա՝ ինքնասպանություն գործած զինվորականի գրպանում հայտնաբերվել էր նամակ, որը հանձնվել էր դատախազություն: Տե՛ս Daha bir qazi özünə qəsd etdi - Cibindən məktub tapılıb, <https://becan.az/index.php?newsid=1691> (10.04.2025):

⁴ Ելթասպա Նամին Մամմադովն ինքնասպանություն գործած ադրբեջանցի հերթական զինվորականն է: Վերջինս ինքնասպան է եղել իր տանը արձակուրդում գտնվելու ժամանակ:

⁵ Modern.az, Azərbaycan Ordusunun giziri intihar edib, <https://modern.az/azerbaycan-ordusunun-giziri-intihar-edib-/311934> (10.04.2025).

Անար Քարիմովին՝ հարցադրում կատարելով, թե ինչն է պատճառը, որ նախկին զինվորականներից մեկն ինքնահրկիզվում է, մյուսը նախարարության ապակիներն է կոտրում և այլն, ինչո՞ւ պատերազմի ավարտից հետո 11-12 հազար «վետերան»-ին վերաբերող խնդիրները դեռևս չլուծված են մնում: Խնդրին անդրադարձել է նաև ֆինանսների նախարար Սամիր Շարիֆովը՝ նշելով, որ տեղի ունեցածը ֆինանսական խնդիրների հետ կապ չունի¹, մինչդեռ կատարված ինքնասպանություններն այլ բան են փաստում:

Հետպատերազմյան շրջանում իրականացված ինքնասպանությունների այս ալիքը ցույց է տալիս, որ պատերազմի հոգեբանական հետևանքները խորքային անդրադարձ են ունենում զինծառայողների վրա: Թեև ադրբեջանական իշխանություններն ունեն բավարար ռեսուրսներ և հնարավորություն՝ պատերազմի հետևանքներից տուժած զինծառայողներին տրամադրելու անհրաժեշտ հոգեբանական և սոցիալական աջակցություն, նրանք հետևողականորեն մերժում են դա անել: Իշխանությունները նախընտրում են թաքնվել անհատական խնդիրների մասին պատմող բացատրությունների հետևում՝ խուսափելով համակարգային լուծումներ մշակելուց: Այս անտարբերությունը ոչ միայն լուրջ բարոյական խնդիր է, այլ նաև բացահայտում է պետության իրական վերաբերմունքը իր իսկ զինվորականների հանդեպ:

Զինվորների օրգանների վաճառքն ադրբեջանական բանակում (44-օրյա պատերազմից առաջ և հետո)

Ադրբեջանական հասարակության շրջանում քննարկվող խնդիրներից է Ադրբեջանի զինված ուժեր ներթափանցած «օրգանների բիզնեսի»՝ զինվորների օրգանների վաճառքի խնդիրը: Դեռևս 44-օրյա պատերազմից առաջ ադրբեջանական բանակում ծառայողների ծնողներն ու ընդդիմադիր ակտիվիստները բազմիցս բարձրաձայնել են զինվորների ներքին օրգանների վաճառքի մասին: Սպանված կամ մահացած զինծառայողների ծնողներն ու ընդդիմադիրները բազմիցս բարձրաձայնել են արատավոր այս երևույթի մասին, որն ադրբեջանական իշխանությունները խնամքով փորձում են թաքցնել:

¹ Unikal.az, “Qazilerin problemlərini həll etmək belə çətinidir?” - Deputatdan nazir müavininə etiraz, <https://unikal.az/news/337123/qazilerin-problemlerini-hell-etmek-bele-çetindir-deputatdan-nazir-muavinine-etiraz> (10.04.2025).

Դեռևս 2012 թ. ադրբեջանական լրատվամիջոցները հաղորդել են 97 զինվորականների մահվան մասին, որոնցից 22-ն ինքնասպանություն էին գործել, 13-ը սպանվել էին իրենց ծառայակիցների կողմից, 17-ը մահացել էին «ղժբախտ պատահար»-ից, 14-ը՝ տարբեր հիվանդություններից¹ և այլն: Ընդդեմ այդ ամենի՝ Բաքվում բողոքի ցույցեր էին տեղի ունեցել: Մահացության կասկածելի դեպքերի մասին՝ «փոխպատվաստման» բիզնեսի հանրային կասկածի շրջանակներում, հանդես են եկել ադրբեջանցի մի շարք փորձագետներ: Օրինակ՝ Սուրխան Լատիֆովը, որը փորձել է պարզել այս գործընթացի ակունքները, գրում է՝ «ադրբեջանական բանակն օրգանների անօրինական վաճառքի պոտենցիալ բազա է, եթե հաշվի առնենք, որ այնտեղ ծառայում են բժշկական տեղեկանք ունեցող երիտասարդներ, ովքեր պատրաստի դնորներ են հանցավոր խմբավորումների համար»²:

Այսպես՝ ադրբեջանական բանակում զինվորականների օրգանների վաճառքի մասին է փաստում նաև «առեղծվածային կերպով» մահացած Փարվիզ Իսգանդարովի մայրը՝ Քիֆայաթ Ասգարովան: Վերջինս պնդում է, որ սպանված զինծառայողների օրգանները հանձնվում են Թուրքիային և Իրանին: Փարվիզ Իսգանդարովի հայրը՝ Ջահան Իսգանդարովն, իր հերթին հայտնում է, որ ադրբեջանական բանակի զորամասերում օրգանների վաճառքը լայն տարածում ունի: Սպանվածի հոր խոսքով՝ որդին կապավոր է եղել և սպանվել է, քանի որ գիտեր օրգանների հեռացման բազմաթիվ դեպքերի մասին: Իսկ սպանված զինծառայողի մայրը նշում է³, որ իրեն անհանգստացնում է հրադարարի պայմաններում որդու մահից հետո վերջինիս օրգանների հանված լինելու փաստը: Բնականաբար, Փարվիզ Իսգանդարովն ադրբեջանական բանակում միակ զինծառայողը չէր, որ զոհ էր դարձել ալիկյան ընտանիքի «բիզնեսին»: 19-ամյա Օրխան Ալըևը, որ ծառայում էր Լաֆթալանի թիվ 157 զորամասում, ծառայության ընթացքում

¹ Panorama.am, Акция протеста матерей погибших в рядах ВС Азербайджана солдат. Полиция разогнала митингующих, см. <https://www.panorama.am/ru/news/2013/01/12/baku-meeting-army/608371> (10.04.2025).

² Panorama.am, Эксперт: Выходцы из необеспеченных семей – потенциальные жертвы торговли органами в азербайджанской армии, см. <https://www.panorama.am/ru/news/2013/11/15/azerbaijan-army/404408> (10.04.2025).

³ Meydan.tv, Vəfat edən əsgərlərin orqanları niyə çıxarılır? <https://www.meydan.tv/az/article/vefat-eden-esgerlerin-orqanlari-niye-cixarilir/> (10.04.2025).

մահացած հերթական զինվորականն է: Օրխան Ալըևի հայրը նշում է, որ իր որդին առողջական ոչ մի խնդիր չի ունեցել: Նրան սպանողների նպատակը որդու օրգանների՝ 1.5–2 ժամվա ընթացքում զորամասից դուրս հանելն ու վաճառելն էր¹: 2013 թ. մամուլում տարածվեց Ջեյհուն Գուբադովի մահվան լուրը: Չնայած նրան, որ պաշտոնական վարկածով Գուբադովի մահը ներկայացվեց իբրև սրտի անբավարարության հետևանք, այնուամենայնիվ սոցիալական ցանցերում տարածվեցին սպանված զինծառայողի մարմնի վրա բռնության հետքերով լուսանկարներ, որոնք կասկածների² տեղիք տվեցին: 19–ամյա սպանված զինծառայողի մայրն էլ իր հերթին պնդում էր, որ որդուն սպանել են դիտավորյալ՝ ծեծի ենթարկելով³: Ասվածից պարզ է դառնում, որ Ադրբեջանում երկար տարիներ ծաղկող ներքին օրգանների վաճառքն իր դոնորներին է գտել նաև զինվորականության շրջանում: Տարիներ շարունակ ալիկյան ռեժիմի այս հրեշավոր քաղաքականությանը զոհ են դառնում ադրբեջանական բանակում ծառայության անցած զինվորականները, որոնք, ինչպես փաստերն են վկայում, հիմնականում աղքատ ընտանիքների զավակներ են: Նման դեպքերի թիվն այսքանով չի սահմանափակվում: Նմանօրինակ հանցագործությունների վերաբերյալ տեղեկությունը հիմնականում սպրդում է հասարակական բողոքի և դրանք թաքցնելու անհնարինության պարագայում, իսկ բազմաթիվ դեպքեր հանրությանն ուղղակի անհայտ են մնում:

Օրգանների առուծախը շարունակվել է նաև պատերազմի օրերին և դրանից հետո: Ընդ որում, Ադրբեջանի գործող իշխանությանը սեփական զինվորների օրգանները վաճառելու և դրանից շահույթ ստանալու նպատակից հետ չեն պահել նույնիսկ ռազմական գործողությունները: Այս խնդիրը մշտապես գտնվել է ընդդիմադիր հայացքներ ունեցող ադրբեջանցիների ուշադրության կենտրոնում: Մասնավորապես նրանց, ովքեր այսօր ստիպված բնակվում են արտերկրում՝ փորձելով բռնապետական ռեժիմից ապահովագրել իրենց ֆիզիկական անվտանգությունը: Հենց արտասահմանում բնակվող

¹ Meydan.tv, Թսգեր Օրխան Ալիևին օրգանları ցıxarılıb, <https://www.youtube.com/watch?v=7BAWiwsxHMk> (10.04.2025).

² Modern.az, Թսգեր Շեյխուն Քուբադովուն օլյւմյւ ıle baęlı yeni aęıqlama, <https://modern.az/news/36671/> (10.04.2025).

³ BBC.com, Թսգերın օլյւմյւ barədə cinayət işi aęılıb, https://www.bbc.com/azeri/azerbaijan/2013/01/130110_soldier_death_qubadov (10.04.2025).

ադրբեջանցիների կողմից էլ սոցիալական ցանցերում տարածվում են լուսանկարներ և տեսանյութեր, որոնցում երևում են սպանված ադրբեջանցի զինվորների ծնողներին հանձնված դատարկ դագաղներ: Ընդդիմադիր ակտիվիստ Սուլեյման Սուլեյմանլին, որ մշտապես պայքար է մղում ալիյան բռնապետական ռեժիմի դեմ, X–ի իր էջում գրում է, որ շատ դեպքերում ծնողներին հանձնած դագաղները դատարկ են եղել, քանի որ «Ալիևը վաճառել է զինվորների ներքին օրգանները»¹: Նա տարածել է մեկ այլ տեսանյութ ևս, որտեղ Միլի մեջլիսի առջև բողոքի ակցիա են իրականացնում զոհված զինվորների մայրերը, որոնց որդիները սպանվել են ոչ թե ռազմական գործողությունների ժամանակ, այլ խաղաղ պայմաններում: «Այս զինվորներին սպանել են ոչ թե հայերը, այլ մեր բանակում օրգանների բիզնեսով զբաղվողները: Ալիյան ռեժիմը սպանում է մեր զինվորներին, իսկ հետո ասում, թե դա արել է Հայաստանը»²,– նշում են բողոքի ակցիա իրականացնողները:

Ասվածը հաստատվում է համացանցում տարածված տարաբնույթ տեսանյութերով, որոնցում, սպանված զինծառայողների մարմինների փոխարեն, դագաղներում տեսանելի են տարաբնույթ իրեր: Նման դեպք է տեղի ունեցել, օրինակ, Ադրբեջանի Աղջաբադիի շրջանում, երբ դագաղի մեջ զինվորի մարմնի փոխարեն եղել է ավազով լցված տոպրակ³: Կարելի է արձանագրել, որ ռազմական գործողությունները ոչ թե զսպում են ալիյան ռեժիմի այս սարսափելի գործունեությունը, այլ ընդհակառակը. վիրավորված–մահացած զինվորները պոտենցիալ դոնորներ և առք ու վաճառքի նոր օբյեկտներ են: Այսպես, առաջնագծում սպանված ադրբեջանցի զինվորականներից մեկի մարմինը տեղափոխել էին բռնազավթված Վարանդայի (Ֆիզուլի) հոսպիտալ, որտեղ հեռացրել էին նրա ներքին օրգանները, իսկ մարմինը՝ լցրել բամբակով և կարել: Այդ ամենից հետո զինվորի դագաղը հասցրել էին Ղազախի շրջանի Քեմարլի գյուղ և գիշերը, հարազատներից գաղտնի,

¹ Suleymanli S., <https://x.com/BloggerSuleyman/status/170589647774488007> (10.04.2025).

² Suleymanli S., <https://x.com/BloggerSuleyman/status/1792591988232958237> (10.04.2025).

³ Suleymanli S., <https://x.com/BloggerSuleyman/status/1704756166415315247> (10.04.2025).

թաղել էին: Անգամ վերջինիս մորը թույլ չէին տվել որդուն հրաժեշտ տալ, ավելին՝ արգելել էին բարձրաձայնել¹ դեպքի մասին:

Ադրբեջանցի մեկ այլ ընդդիմադիր ակտիվիստ՝ Մանաֆ Ջալիլզադեն, որ 2018 թվականից պայքար է մղում ալիևյան ռեժիմի դեմ, բարձրաձայնում է բանակում տեղի ունեցող սարսափելի գործողությունների մասին: Մ. Ջալիլզադեն իր էջում հրապարակել էր մի տեսանյութ, որում սպանված զինծառայողի հայրը՝ Արիֆ Իսմայրլովը, տեսաուղերձով² ներկայացնում է տեղի ունեցածը: Նրա խոսքով՝ որդին՝ սպանված Ազիլ Իսմայրլովը, բանակ էր զորակոչվել 2021 թ. և ծառայում էր Նախիջևանի N 217 զորամասում: Մեկ տարի երկու ամիս ծառայելուց հետո նա սկսել էր ծնողներից գումար խնդրել, որպեսզի իրեն արձակուրդ տրամադրեն: Որոշ ժամանակ անց զորամասից զանգահարել են ընտանիքին և հայտնել, որ իրենց որդին ինքնասպան է եղել: Արիֆ Իսմայրլովը համոզված է, որ որդուն դիտավորյալ են սպանել, քանի որ վերջինիս ներքին օրգանները տեղում չեն եղել: Այս ամենից գատ՝ զինծառայողի հայրը պարզել է, որ որդուն սպանել են բութ կացնով կամ մետաղական այլ առարկայով: Տուժածի հայրը ընդգծել է, որ զինդատախազ Խանլար Վալիևը հովանավորում է հանցագործներին, և որ սա ադրբեջանական բանակում առաջին դեպքը չէ:

Ջինվորներին սպանելու և նրանց ներքին օրգանների վաճառքով զբաղվելու փաստերն այսքանով չեն ավարտվում: Բոլորովին վերջերս Մ. Ջալիլզադեն կրկին անդրադարձել էր տվյալ թեմային՝ նշելով, որ երկար տարիներ զինվորների օրգանները հանվել և վաճառվել են Իսրայելին: Վերջինս ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ ալիևյան ռեժիմի նման քաղաքականությանը զոհ են դառնում միայն աղքատ ընտանիքի զավակները:

Ըստ Մ. Ջալիլզադեի³ Բերձորի շրջանում (Լաչին) ադրբեջանցի 4 զինվորականների մահը ևս պատահականություն չէր: Թեպետ տեղի ունեցածն ադրբեջանական լրատվամիջոցները լուսաբանեցին որպես թունավորում, այնուամենայնիվ ադրբեջանցի ընդդիմադիրն այդ

¹ Suleymanli S., <https://x.com/BloggerSuleyman/status/1701223810194669699> (10.04.2025).

² Jalilzade M., <https://x.com/JalilzadeManaf/status/1580593781719830528> (10.04.2025).

³ Jalilzade M., <https://x.com/JalilzadeManaf/status/1819151897103929791> (10.04.2025).

կարծիքին չէ: Մ. Զալիլզադեն համոզված է, որ այս զինվորականների օրգանները նույնպես վաճառել են:

Մեր կողմից փաստագրված և փաստարկված նյութերից պարզ է դառնում, որ Ադրբեջանում զինվորների օրգանների վաճառքն արմատացած երևույթ է. ալիևյան ռեժիմի կողմից այն իրականացվում է արդեն տևական ժամանակ: Ադրբեջանական հասարակությունը անզոր է այս հարցում և ստիպված է հանդուրժել նույնիսկ այնպիսի երևույթ, ինչպիսին ալիևյան ընտանիքի կողմից 44-օրյա պատերազմից հետո սեփական զինվորների նկատմամբ իրականացվող թրաֆիքինգն է: Ընդգծենք, որ վարվող քաղաքականությունը շարունակվում է ավելի մեծ թափով:

«Զինվորի բաժնի» վաճառքն ադրբեջանական խանութներում

Ադրբեջանում հասարակական բուռն քննարկման առարկա է ևս մի երևույթ. վաճառքի է հանվում զինվորի համար նախատեսված սնունդը՝ այսպես կոչված զինվորի բաժինը (ադրբ.՝ əsgər payı): Ակնհայտ է, որ այս գործընթացը տեղի է ունենում բանակի հետ կապ ունեցող անհատների անմիջական մասնակցությամբ, սակայն շուկա է դուրս գալիս քաղաքացիական անձանց կողմից: Ադրբեջանում «Զինվորի բաժնի» մակագրությամբ սնունդ վաճառվում է ինչպես խանութներում, այնպես էլ այլ հաստատություններում: Ընդ որում, վաճառքը տեղի է ունենում տարբեր ճանապարհներով՝ գաղտնի կամ առցանց՝ սոցիալական ցանցերի միջոցով: Վերջերս Ֆարիադ Բաբան անունով անձը «Ֆեյսբուք»-ում տեղադրել էր հետևյալ հայտարարությունը¹. «Վաճառվում է 150 հատ ջեմ՝ արժեքը 0,50 մանաթ. վաճառվում է ամբողջը»: Ադրբեջանական բանակի համար նախատեսված սննդամթերքն իր սպառողն ունի նաև մայրաքաղաք Բաքվում: Վախենալով հնարավոր քրեական պատասխանատվությունից՝ վաճառողները հաճախ պոկում են մթերքի տուփերին առկա պիտակները, փչացնում կամ անընթեռնելի են դարձնում դրանք: Բաց վաճառքում նման սնունդ էժան գներով կարելի է գտնել Բաքվի փոքր թաղամասերի խանութներում: Հիմնական սպառողները խանութների մշտական հաճախորդներն ու խանութպանների ծանոթներն են: Ոչ վաղ անցյալում Ադրբեջանի

¹ Aqreqator.az, Əsgər payı aşkar satışı qoyulub - „Facebook”da biabırçılıq, <https://aqreqator.az/az/cemiyet/3904986> (10.04.2025).

խանութներում «Զինվորի բաժին» սննդի վաճառքի մասին բարձրաձայնել էր Բաքվի բնակիչներից մեկը, ով ադրբեջանական ԶԼՄ-ներին էր ներկայացրել խանութից գնված նմանատիպ ապրանք: Վաճառվող սնունդը խնձորի ջեմ էր՝ արտադրված «Azersun Holding»-ի¹ կողմից, պիտակավորված՝ «Զինվորի բաժին»: Ադրբեջանական բանակի համար նախատեսված սնունդը վաճառվում է ոչ միայն մայրաքաղաքում, այլև խոշոր քաղաքներում՝ Սումգայիթում և Գանձակում (Գյանջա): Կատարվածի վերաբերյալ սոցիալական գրեթե բոլոր կայքերում իրենց բողոքն են արտահայտում ընդդիմադիրներն ու հասարակ քաղաքացիները: X-ի իր էջում ադրբեջանցի Հաբիբ Մունթազիրը տեղադրել է «Զինվորի բաժին» մակագրությամբ մթերքի լուսանկար՝ հետևյալ գրառմամբ. «Բարդայի շրջանի Գազրգուրդալը գյուղում վաճառվում է «Զինվորի բաժին» պահածոն, որը, ի դեպ, վաճառքի ենթակա չէ»²:

Զինվորի համար նախատեսված սնունդ կարելի է հանդիպել նաև Ադրբեջանի դպրոցներում: Դեռևս 2018 թ. «HamamTimes»-ի հրապարակած լուսանկարում պարզ երևում է «Զինվորի բաժին» և «Վաճառքի ենթակա չէ» մակագրությամբ կարագ: Վաճառքը տեղի էր ունեցել Գանձակի (Գյանջա) թիվ 26 դպրոցում:

Պարզ է, որ Ադրբեջանի Հանրապետությունում տեղի ունեցող անօրինություններն իրականացվում են իշխանությունների հետ փոխկապակցված անձանց, իշխանական ավելի ցածր օղակների հովանավորությամբ և պատվերով: Ասվածի ապացույցն է կատարված դեպքը Թովուզում: Բնակիչները զինվորների համար գնել էին ծխախոտ, ջուր, սնունդ և այլն, այնուհետև գյուղ տանող ճանապարհին գնված մթերքները հանձնել էին ոստիկաններին: Նրանցից մեկը գողացել էր 4 արկղ ծխախոտ և սնունդ, ապա վաճառել դրանք: Գերմանիայում բնակվող ադրբեջանցի բլոգեր, ընդդիմադիր Հաբիբ Մունթազիրը սոցիալական ցանցերում բացահայտել էր այդ ոստիկանի ինքնությունը՝ Ադրբեջանի Հանրապետության թիվ 106 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի որդին³: Ինչպես վկայում են

¹ Vetenim.wordpress.com, “Əsgər Payı” Ərzaqları Satilir, <https://vetenim.wordpress.com/2013/07/21/esger-payi-erzaqlari-satilir/> (10.04.2025).

² Modern.az, “Əsgər payı” satışda: hadisənin şahidi Modern.az-a danışır, <https://modern.az/az/news/56763> (10.04.2025).

³ Azsiyaset.az, Əsgərin payını mənim sədiyi deyilən polis işdən çıxarılib? - DİN-dən

փաստերը, իշխանությունների կողմից իրականացվող կոռուպցիան ու թալանն առկա են պետական գրեթե բոլոր օղակներում: Ալիկյան ռեժիմի կողմից իրականացվող հարստահարումներից զերծ չի մնում նաև բանակը: Հարկ է նշել, որ ադրբեջանական բանակում տեղի ունեցող առևտրական գործարքներն սկսվում են զինվորների համար նախատեսված սննդի առուծախից՝ հասնելով մինչև մահացած զինվորների օրգանների վաճառք:

Եզրակացություն

Հետազոտելով ադրբեջանական բանակում մի շարք անօրինական և ոչ հումանիտար երևույթների առկայությունը մեզ հասանելի սուղ տեղեկատվության և աղբյուրների պայմաններում՝ կարող ենք եզրակացնել, որ՝

1. Ադրբեջանի զինված ուժերում 44-օրյա պատերազմից հետո արձանագրված ինքնասպանությունների թվի աճը բազմաշերտ պատճառաբանություն ունի: Դրանք պայմանավորված են ոչ միայն պատերազմի արդյունքում առաջացած հոգեբանական տրավմաներով, այլև պետական համակարգի՝ զինվորների նկատմամբ ցուցաբերած անտարբեր և անպատասխանատու վերաբերմունքով:

2. Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ինքնասպանություն գործած զինծառայողների զգալի մասը պարզևատրվել էր ռազմական գործողությունների ընթացքում ցուցաբերած արիության և հաջող մարտական գործողությունների համար: Այս հանգամանքը ևս մեկ անգամ վկայում է, որ զինվորական ինքնասպանությունների պատճառները չեն սահմանափակվում միայն հոգեբանական տրավմայի ազդեցությամբ: Ակնհայտ է, որ խնդիրը խոր և բարդ կառուցվածք ունի՝ պայմանավորված ոչ միայն սոցիալ-հոգեբանական, այլև ինստիտուցիոնալ և կառավարման համակարգում առկա լրջագույն թերություններով:

3. Ադրբեջանական զինված ուժերում արձանագրված այնպիսի երևույթներ, ինչպիսին է, օրինակ, զինվորների օրգանների վաճառքը, բազմիցս բարձրաձայնվել և բազմիցս շահարկվել են հանրային դիսկուրսում: Այս հարցը բարձրաձայնել են տուժած զինծառայողների

ազիլա, <https://azsiyaset.az/arashdirma-reportaj/187-Esgerin-payini-menimsediyi-deyilen-polis-ishden-chixarilib.html> (10.04.2025).

ծնողները, անկախ լրատվամիջոցներն ու բլոգերները, որոնք մշտապես լուսաբանել են այդ դաժան երևույթները: Անշուշտ, կարելի է պնդել, որ առանց կենտրոնական իշխանությունների իմացության նմանօրինակ գործողությունները ոչ մի դեպքում հնարավոր չէր լինի իրականացնել: Փաստացի, Ադրբեջանի զինված ուժերում, ինչպես նաև Ալիևյան ռեժիմի օրոք զինվորականները դարձել են «կենդանի դոնորներ»՝ պարզապես գործիք, այլ նպատակների համար:

4. Պատերազմը ստեղծեց նոր հնարավորություններ՝ օրգանների վաճառքի ոլորտում, ինչի մասին բազմաթիվ ապացույցներ սկսեցին հայտնվել: 44-օրյա պատերազմից հետո ընդդիմադիր շրջանակները բարձրաձայնեցին այս մտահոգիչ երևույթի մասին՝ ներկայացնելով մի շարք փաստեր, որոնք վկայում էին, որ ադրբեջանական իշխանությունները ռազմական գործողությունների ընթացքում ծանր վիրավորված կամ զոհված զինծառայողների հարազատներին հանձնում են դատարկ դագաղներ: Կային նաև պնդումներ օրգանների ապօրինի վաճառքի նպատակով դիտավորյալ սպանությունների վերաբերյալ:

5. Ադրբեջանում կոռուպցիան ներթափանցել է նաև զինված ուժեր: Զինվորների համար նախատեսված սննդի վաճառքը վկայում է այն մասին, թե որքան խորն է կոռուպցիոն համակարգը արմատացած այս երկրում:

ARMINE KHANPIKYAN

*“Geghard” Scientific Analytical Foundation,
ISEC NAS RA, Department of Oriental Studies,
Email: arminekhanbekyan18@gmail.com*

SUICIDE, ORGAN TRAFFICKING, AND THE SALE OF ‘SOLDIER’S RATION’ IN THE AZERBAIJANI ARMY

Keywords: Azerbaijan, Military, Suicide, Organ trafficking, Soldier’s ration.

Suicides in the Azerbaijani army, reports of the sale of soldiers' organs, and cases of embezzlement involving the "soldier's ration" offer significant insight into the true nature of the country's political system and society. The high rate of suicides among servicemen highlights the severe psychological and social pressures they face, stemming not only from physical hardship but also from moral and institutional abuse. Simultaneously, reports about the sale of soldiers' organs suggest the existence of systematic criminal networks that commodify human lives. In addition, the embezzlement of food and other supplies intended for soldiers not only constitutes a legal violation but also seriously affects the health and well-being of those in service. Taken together, these phenomena reveal a system in which corruption and impunity undermine the effective and humane functioning of the armed forces.

ԱՆՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամ,
Էլփոստ՝ anushhar1997@gmail.com

ՄԱՍՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ (2003–2025 ԹԹ.)

Զանգվածային լրատվության միջոցներն այսօր առանցքային դերակատարում ունեն պետության հասարակական-քաղաքական միջավայրի ձևավորման գործում: Լրատվամիջոցների ազատությունը հաճախ ընկալելի է որպես ժողովրդավարության ցուցիչ, և ընդհակառակը. դրա սահմանափակումը վկայում է ավտորիտար կառավարման համակարգին հակված լինելու մասին: Հարավային Կովկասում լրատվամիջոցների սահմանափակումների և լրագրողների նկատմամբ բռնությունների քաղաքականության հարցում առաջնությունը պատկանում է Ադրբեջանին, որտեղ դեռևս անցյալ դարի վերջից նկատելի է ուղղահայաց ավտորիտարիզմի ձևավորման գործընթաց՝ ի դեմս Հեյդար Ալիև-Իլիամ Ալիև նախագահական ժառանգականության: 2003 թ. Իլիամ Ալիևի՝ նախագահ դառնալու ի վեր գործընթացն ընդունել է անկասելի բնույթ և ծառայում է գործող վարչակարգի ամերապնդմանը՝ ուղեկցվելով ինչպես տեղական ու արտասահմանյան լրատվամիջոցների փակմամբ կամ սահմանափակմամբ, այնպես էլ՝ լրագրողների հանդեպ տարատեսակ բռնություններով:

Քանալի բառեր՝ Ադրբեջան, Իլիամ Ալիև, մամուլի ազատություն, միջազգային արձագանք:

Ներածություն

Մամուլն ու նրա ազատ գործունեությունը քաղաքական վարչակարգերի համար յուրահատուկ գույց և ոչ ինստիտուցիոնալ հաշվետվողականության մեխանիզմ է, որը կարող է նպաստել ինչպես վարչակարգի ամրապնդմանը, այնպես էլ՝ քայքայմանը: Առհասարակ

մամուլի ազատությունը որևէ պետության թե՛ քաղաքական, թե՛ սոցիալ-հասարակական ընթացիկ իրավիճակի կարևոր ցուցիչ է: Որքան ցածր է մամուլի ազատության գործակիցը, այնքան սահմանափակ են քաղաքական և քաղաքացիական իրավունքները և խոցելի՝ մարդու իրավունքների իրացման մեխանիզմները:

Անկախ լրատվամիջոցները հաճախ կարևոր վերահսկողական դեր են խաղում՝ հետաքննելով և բացահայտելով կառավարության չարաշահումները: Լրատվամիջոցներն ունեն ուժ՝ «համոզելու» անհատներին մտածել որոշակի ձևով՝ հիմնվելով տեղեկատվության մատուցման ձևի և բովանդակության վրա: Լրատվամիջոցների՝ հասարակության վրա ունեցած ահռելի ազդեցությունն է, որ մեծ վախեր է առաջացնում իշխող վարչակարգի շրջանում՝ կախված վերջինիս բնույթից՝ ստիպելով գնալ համապատասխան քայլերի: Ժողովրդավարական կառավարման համակարգերում սովորաբար գործընթացը ուղղվում է ընտրազանգվածի վստահությունը շահելու ճանապարհով, ոչ թե բռնությունների, այլ՝ խոստացված նախընտրական ծրագրերի իրականացման միջոցով, մինչդեռ ավտորիտար կառավարման համակարգերում հակառակն է¹: Վերջինիս պարագայում վերահսկողությունը պահպանելու ջանքերում ավտոկրատիաները լրատվամիջոցներն օգտագործում են որպես գործիք՝ հասարակական կարծիք պարտադրելու և բարենպաստ լուսի ներքո մանիպուլյացիայի ենթարկելու համար²: Լիարժեք ավտոկրատիաների մեծ մասում լրատվամիջոցները ամբողջությամբ պետական սեփականություն են, խիստ գրաքննության են ենթարկվում կամ համակարգված կերպով ճնշվում են: Լրագրողները, որոնք «հրահրում» են կառավարության զայրույթը, կարող են ձերբակալվել, արտաքսվել և նույնիսկ սպանվել³: Շատ դեպքերում լրատվամիջոցները ծառայում են ընդունելի կամ անընդունելի մասին պատմություն ստեղծելուն⁴:

¹ Egorov G., Guriev S. and Sonin K., Media Freedom in Dictatorships, Greg Chih-Hsin Sheen, Hans H. Tung & Wen-Chin Wu, Power Sharing and Media Freedom in Dictatorships, Political communication, 2022, vol. 39, No. 2, pp. 202-221.

² Stokes M., Placek M., “Media Effects on Political Confidence in Autocratic Regimes,” University of South Carolina Upstate Student Research Journal, 2025, Vol. 18, Article 1, p. 1.

³ Levitsky S. and Way L. A., The rise of competitive authoritarianism, Journal of Democracy, Volume 13, N: 2, 2002, p. 57.

⁴ Makayla M. and Placek M., Media Effects on Political Confidence in Autocratic Regimes, University of South Carolina Upstate Student Research Journal, 2025, Vol. 18, Article 1, p. 4.

Բնական է, որ նման գործընթացները պետք է սրվեն նախընտրական շրջանում, ուստի համեմատաբար ազատ լրատվամիջոցները և ընտրությունները չեն կարող համաժամանակ գոյություն ունենալ¹:

Բնական է, որ նման գործընթացները չեն կարող շրջանցել Ադրբեյջանը: Մամուլն ալիկյան ռեժիմի համար դիտարկելի է և՛ որպես սպառնալիք իշխանության հիմքերին, և՛ որպես հենց այդ հիմքերի ամրապնդման միջոց: Ուստի առաջինի չեզոքացման և երկրորդի իրացման նպատակով իր իշխանավարման 25 տարիների ընթացքում Իլիամ Ալիևը ԶԼՄ-ների նկատմամբ իրականացրել է զսպման և վերահսկման համակարգված և թիրախային քաղաքականություն:

Մամուլի անազատությունն Ադրբեյջանում. ընդհանուր բնութագիր

2000–ական թթ. սկզբներին Ադրբեյջանում անկախ թերթերը սկսեցին ենթարկվել տնտեսական ճնշման և տուգանքների, հետագայում լրագրողների հանդեպ ֆիզիկական բռնությունները, ձերբակալությունները և առհասարակ մամուլի վերահսկման գործիքակազմը դարձավ ավելի արմատական:

Դեռևս 2003 թվականին Ադրբեյջանում ստեղծվեց Մամուլի խորհուրդ², որի նպատակն է հանրային վերահսկողություն իրականացնել լրագրողների նկատմամբ՝ օրենսդրությանը համապատասխան գործունեություն ծավալելու պարտադրանքով: Խորհուրդը 2009 թվականից ի վեր պարբերաբար հրապարակում է, այսպես կոչված, «ռեկետային թերթերի սև ցուցակ», որոնց խմբագիրները կամ թղթակիցները խախտել են լրագրողների վարքագծի կանոնները³: 2010 թվականի «սև ցուցակում» էին 77 լրատվամիջոցներ⁴, 2011 թվականի՝ 87⁵, 2012 թվականի՝ 89⁶:

¹ Schulze G., Zakharov N., Political Cycles of Media Repression, University of Freiburg, Department of International Economic Policy Discussion Paper Series, N 52, p. 2.

² Azərbaycan Mətbuat Şurası, *Mətbuat Şurası haqqında* (մուտք՝ 22.10.2025 թ.)

³ «Reket qəzetlər»in siyahısı açıqlandı, Azadlıq radiosu, *«Reket qəzetlər»in siyahısı açıqlandı* (մուտք՝ 22.10.2025 թ.).

⁴ Azerbaijan Press Council publicizes new list of racketeering newspapers, APAÇ *Azerbaijanâ€™s Press Council publicizes new list of racketeering newspapers â€“ FULL LIST* (մուտք՝ 22.10.2025 թ.).

⁵ Mətbuat Şurası “reket qəzetlər”in yeni siyahısını açıqadı, Milli.az, *Mətbuat Şurası “reket qəzetlər”in yeni siyahısını açıqadı - SİYAHİ* (մուտք՝ 22.10.2025 թ.).

⁶ “Reket qəzetlər”in ən sonuncu “QARA SİYAHİ”si, Modern.az, *“Reket qəzetlər”in ən*

Մամուլի սահմանափակումներն իրականացվում էին ինչպես բռնությունների միջոցով, այնպես էլ իրավական գործիքակազմով: Երկրի ներսում լրատվամիջոցներին և լրագրողներին վերահսկելու համար իրավական հիմքեր էր ստեղծում 2021 թվականին ընդունված «Լրատվամիջոցների մասին» օրենքը¹, որով ներդրվեցին այնպիսի պահանջներ, ինչպիսիք են լրատվամիջոցների արտոնագրումը, լրագրողների գրանցումը և պետական գրանցամատյանում ընդգրկումը²: Օրենքով փաստացի վերահսկողություն սահմանվեց ոչ միայն լրատվամիջոցների և լրագրողների, այլև յուրօրյան ալիքների, բլոգերների և առհասարակ սոցիալական տեղեկույթ ստեղծողների նկատմամբ: Օրենքը փորձում է ոչ միայն սահմանափակել նոր հնարավոր քննադատություններ ստեղծող կենտրոնների հիմնումը, այլև արգելել արդեն իսկ նման փորձառություն ունեցողների գործունեությունը: Օրինակ՝ օրենքն արգելում է լրատվականներ հիմնել նախկինում դատվածություն ունեցող անձանց, ինչը նշանակում է, որ նախկինում դատապարտված լրագրողները, անազատության ժամկետի լրանալու պարագայում անգամ, չեն կարող վերսկսել իրենց գործունեությունը:

2009 թվականին կառավարությունն արգելեց արտասահմանյան ռադիոկայանների հեռարձակումը FM հաճախականություններով: Արդյունքում՝ BBC-ն, «Ամերիկայի ձայնը» և «Ազատ Եվրոպա/Ազատություն» ռադիոկայանները դադարեցին հեռարձակվել³: 2017 թ. երկրի անկախ լրատվական կայքերի մեծ մասն արգելափակվեց (օրինակ՝ «Ազատ Եվրոպա» ռադիոկայանը, «Մեյդան» հեռուստաընկերությունը, ինչպես նաև՝ առցանց «Թուրան» և «Ազերբեյջան Սաաթի» հեռուստաալիքների կայքերը)⁴, իբրև թե դրանք «սպառնալիք են ներկայացնում» Ադրբեյջանի ազգային անվտանգության համար, քարոզում են «բռնություն, ատելություն կամ ծայրահեղականություն, խախտում են

sonuncu "QARA S'YAH!"si | Modern.az (մուտք՝ 22.10.2025 թ.).

¹ Media haqqında AZƏRBAYCAN RESPUBLİKASININ QANUNU, <https://e-qanun.az/framework/49124>, (մուտք՝ 22.10.2025 թ.).

² Մամուլի ազատությունն Ադրբեյջանում, մաս 5. օրենքի խստացումներ, «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամ, *Մամուլի ազատությունն Ադրբեյջանում, մաս 5. օրենքի խստացումներ*: <https://geghard-saf.am/356> (մուտք՝ 22.10.2025 թ.):

³ Госдеп США серьезно раскритиковал Азербайджан, regnum.ru, *Госдеп США серьезно раскритиковал Азербайджан - ИА REGNUM* (մուտք՝ 22.10.2025 թ.).

⁴ The Evolution of Authoritarianism in Azerbaijan (Part I), Khar center, *The Evolution of Authoritarianism in Azerbaijan (Part I)* (մուտք՝ 22.10.2025 թ.).

անձնական կյանքի անձեռնմխելիությունը¹: ԵՄ-ն հանդես եկավ հայտարարությամբ, թե «այս որոշումը չի համապատասխանում ժամանակակից և ժողովրդավարական հասարակություններում ազատ, բազմազան և անկախ լրատվամիջոցների պահանջին», և «ԵՄ-ն ակնկալում է, որ Ադրբեջանը կկատարի իր միջազգային պարտավորությունները՝ որպես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և դրա 10-րդ հոդվածի (խոսքի և տեղեկատվության ազատության իրավունքի մասին) կողմ»²: Սակայն նման հայտարարությունները չէին կարող էական դերակատարում ունենալ մամուլի ազատության հետագա սահմանափակումների գործում:

Յանցային միջամտության բաց դիտարանի (Open Observatory of Network Interference – OONI) հաղորդմամբ՝ Ադրբեջանում արձանագրվել է անկախ կայքերի հասանելիության և մուտքի արգելքի անումալ բարձր ցուցանիշ³: 2022 թ. հունվարից մինչև 2023 թ. փետրվարը արգելափակվել են ռուսական մի շարք ալիքների հասանելիությունը: «OONI» հետազոտությունը տվյալ ժամանակահատվածում ցույց է տվել, որ արգելափակման ամենաուժեղ ազդանշանները արձանագրվել են հետևյալ դոմեյնների պարագայում՝ *azerbaycansaati.tv*, *www.24saat.org*, *www.abzas.net*, *www.azadliq.info*, *www.azadliq.org*, *www.meydan.tv*, *www.rferl.org*, *www.gununesi.org*, *ria.ru*, *www.theguardian.com*⁴: Եթե վերոնշյալ կայքերի նկատմամբ արգելքները արձանագրվել են տարիներ շարունակ, ապա «The Guardian» կայքի արգելափակումները գրանցվել են 2022 թվականի դեկտեմբերից:

Վերջին տարիներին Ադրբեջանում լրատվամիջոցների գործունեության արգելքները, լրագրողների հետապնդումները մեծ

¹ Azerbaijani Court Blocks RFE/RL Website, Radio Liberty, *Azerbaijani Court Blocks RFE/RL Website* (մուտք՝ 22.10.2025 թ.).

² EUDEL Statement on the decision of Sabail district court in Azerbaijan on 12 May to block permanently five online media outlets including online television platforms, *EUDEL Statement on the decision of Sabail district court in Azerbaijan on 12 May to block permanently five online media outlets including online television platforms | EEAS* (մուտք՝ 22.10.2025 թ.).

³ OONI Measurement Aggregation Toolkit (MAT), *OONI Measurement Aggregation Toolkit (MAT)* (մուտք՝ 22.10.2025 թ.).

⁴ OONI measurements show ongoing internet censorship in Azerbaijan, *OONI measurements show ongoing internet censorship in Azerbaijan | OONI* (մուտք՝ 22.10.2025 թ.).

թափով շարունակվում են: 2023 թ. նոյեմբերից մինչև 2024 թ. հունվար ամիսն ադրբեջանական ոստիկանությունը ձերբակալել է Abzas Media-ի տնօրեն Ուլվի Հասանլիին, գլխավոր խմբագիր Սևինջ Վազիֆզըզըին, ծրագրի համակարգող Մահմուդ Կեկալովին և լրագրողներ Հաֆիզ Բաբալիին, Նարգիզ Աբսալամովին և Էլնարա Հասիմովին¹: 2024 թ. սկզբին Ադրբեջանի իշխանությունների թիրախում հայտնվեց Toplum. TV յուրօրյան ալիքը²: 2023 թ. վերջից հետապնդումներ էին սկսվել «Kanal 13» յուրօրյան ալիքի գլխավոր խմբագրի նկատմամբ, այնուհետև մեղադրանք առաջադրվեց նաև լրագրող Շամո Էմինովին, և որոշում կայացվեց լրատվականը փակելու մասին:

Բաքվում՝ ՄԱԿ-ի COP29 գլոբալ կլիմայի փոփոխության համաժողովի փակումից անմիջապես հետո, ձերբակալեցին յոթ անկախ լրագրողներ: 2024 թ. դեկտեմբերին բռնությունների գլխավոր թիրախը Meydan TV-ն էր՝ Ադրբեջանի ամենաազդեցիկ անկախ լրատվամիջոցը, որը գործում էր արտերկրում³: Ձերբակալվածների թվում էին Meydan TV-ի գլխավոր խմբագիր Այնուր Գանբարովան (Էլզունեջ) և հինգ լրագրողներ՝ Այթաջ Ահմեդովան (Թափդիզ), Խայալա Աղաևան, Նաթիգ Ջավադլին, Այսել Ումուդովան և Ռամին Ջաբրահիլզադեն (Դեկո): Նույն օրը ոստիկանությունը ձերբակալեց լրագրող, Բաքվի լրագրության դպրոցի փոխտնօրեն Ուլվի Թահիրովին և կենդանիների իրավունքների պաշտպան Քամրան Մամեդլիին:

2025 թ. Ադրբեջանի դատարանը «Ազատություն» ռադիոկայանի լրագրողին և ևս վեց այլ անձանց, բազմաթիվ մեղադրանքներ առաջադրելով, դատապարտեց 7.5-ից մինչև 9 տարի ազատազրկման: 2023 թվականից ի վեր՝ Ադրբեջանում բանտարկված լրագրողների

¹ Մամուլի ազատությունն Ադրբեջանում, մաս 2. Լրագրողների հետապնդումների նոր ալիքն Ադրբեջանում, «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամ, <https://geghard-saf.am/326> (մուտք՝ 22.10.2025 թ.): Azerbaijani authorities charge 6 Abzas Media journalists with 7 new offenses, CPJ, *Azerbaijani authorities charge 6 Abzas Media journalists with 7 new offenses - Committee to Protect Journalists* (մուտք՝ 22.10.2025 թ.):

² Azerbaijani police raid Toplum TV, detain journalists over alleged currency smuggling, CPJ, *Azerbaijani police raid Toplum TV, detain journalists over alleged currency smuggling - Committee to Protect Journalists* (մուտք՝ 22.10.2025 թ.):

³ Meydan TV ilə əməkdaşlıq edən jurnalistlər saxlanılıb, CivilAzerbaijan.com, *Meydan TV ilə əməkdaşlıq edən jurnalistlər saxlanılıb* » *Civil Azerbaijan - İnformasiya portalı* (մուտք՝ 22.10.2025 թ.):

և լրատվամիջոցների աշխատողների ընդհանուր թիվը հասել է առնվազն 25-ի¹: Եվրոպայի խորհրդի՝ լրագրության պաշտպանության և լրագրողների անվտանգության խթանման հարթակի 2024 թ. տարեկան զեկույցում ներկայացված է, որ եվրոպական երկրներում բանտարկված 159 լրագրողներից 30-ը գտնվում է Ադրբեջանում:

Լրագրողների դեմ ֆիզիկական բռնությունների պրակտիկան

Լրատվամիջոցների գործունեության արգելքից, հասանելիության սահմանափակումներից, լրագրողների ձերբակալություններից բացի, մամուլի անազատության արտահայտման տարածված երևույթներ են լրագրողների հանդեպ ֆիզիկական բռնություններն ու հետպանդունները:

Ինչպես Ադրբեջանում, այնպես էլ միջազգային հանրության շրջանում մեծ աղմուկ է բարձրացրել 2005 թ. ադրբեջանական ընդդիմադիր «Մոնիտոր» ամսագրի գլխավոր խմբագիր Էլմար Հուսեյնովի սպանությունն իր բնակարանի մուտքի մոտ²: Վերջինս զբաղվում էր մարդու իրավունքների պաշտպանությամբ և հանդես էր գալիս կառավարության պաշտոնյաների և նախագահ Իլհամ Ալիևի ընտանիքի դեմ իր քննադատական հոդվածներով:

2006 թ. մի խումբ լրագրողներ ենթարկվեցին ֆիզիկական բռնությունների. օրինակ՝ ընդդիմադիր «Բիզիմ Յոլ» թերթի գլխավոր խմբագիր և «Ադրբեջանի ժողովրդական ճակատ» կուսակցության փոխնախագահ Բահեդդին Հեզինն առևանգվել և ծեծի է ենթարկվել³: Նրան «հորդորել են» դադարեցնել «քննադատական հոդվածներ» գրելը: «Ազատության» թղթակից Ֆիկրետ Հուսեյնլին առևանգվել և սպանվել է անհայտ անձանց կողմից⁴: Համանման վերաբերմունքի են արժանացել

¹ Azerbaijan arrests 2 more journalists, increasing crackdown tally to 25, CPJ *Azerbaijan arrests 2 more journalists, increasing crackdown tally to 25 - Committee to Protect Journalists* (մուտք՝ 22.10.2025 թ.).

² Azerbaijan: Prominent journalist found slain, Human rights house foundation, <https://humanrightshouse.org/articles/azerbaijan-prominent-journalist-found-slain/> (մուտք՝ 22.10.2025 թ.).

³ Azerbaijan: Mixed messages on freedom of expression, Amnesty International, p. 2, *Azerbaijan:Layout 4.qxd* (մուտք՝ 22.10.2025 թ.).

⁴ Նույն տեղում: Ֆ. Հուսեյնլիի մարմնի վրա առկա են եղել անմարդկային բռնության հետքեր, ենթադրաբար, կապել են, մատները կտրել և դանակահարել պարանոցից:

«Ազատության» լրագրող Նիկատ Հուսեյնովը¹, ընդդիմադիր «Ադրբեջանի ազգային անկախության» կուսակցության մամուլի քարտուղար Ալի Օրուջովը², «Գյունդեիկ Ազերբայջան» թերթի խմբագիր և ռազմական լրագրող Ուզեյիր Ջեֆերովը³, «Իմպուլս» թերթի լրագրող Սուհեյլե Քեմբերովան⁴, որոնք զբաղվում էին բարձրաստիճան պաշտոնյաների կոռուպցիոն գործունեության լուսաբանմամբ: 2008 թ. «Ազատության» 25-ամյա թղթակից Ազիլ Խալիլը⁵, լրագրող և «Լրագրողների ազատության ու անվտանգության հիմնադրամի» (IRFS) նախագահ Էմին Հուսեյնովը նույնպես ենթարկվեցին հետապնդման և բռնության⁶:

Լրագրողների հանդեպ բռնություններ կիրառվում են հակաիշխանական հողվածներ հրապարակելու պատճառով: Բռնությունները հաճախ գործադրվում են իրադարձությունների լուսաբանման ընթացքում: Օրինակ՝ 2009 թ. հունվարին «Ենի Մուսավաթ»-ի լրագրող Աֆղան Սուխթարլին իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ծեծի է ենթարկվել Իսրայելի դեսպանատան առջև տեղի ունեցող հանրահավաքը լուսաբանելիս: Նույն ժամանակաշրջանում Նախիջևանի հինքնավար Հանրապետության ազգային անվտանգության աշխատակիցները ձերբակալել և բռնության են ենթարկել անկախ լրագրող Իդրակ Աբասովին⁷: «Ենի Մուսավաթ»-ի 21-ամյա լրագրող Էլմին Բադալովը և Անար Գերայլին անհայտ անձանց կողմից հարձակման են ենթարկվել, երբ հետաքննական հողվածի համար լուսանկարել են Բաքվի ծայրամասում գտնվող շքեղ առանձնատները, որոնք, ենթադրաբար, պատկանում են տրանսպորտի նախարար Ջիյա Մամեդովին⁸:

¹ Նույն տեղում, էջ 3:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ United Nations, Committee against Torture Forty-third session Summary record of the 907th meeting, p.12, *CAT/C/SR* (մուտք՝ 22.10.2025 թ.).

⁵ Azerbaijan: Investigative Journalist Hospitalized After Stabbing, Radio Liberty, *Azerbaijan: Investigative Journalist Hospitalized After Stabbing* (մուտք՝ 22.10.2025 թ.).

⁶ Азербайджан: Независимые журналисты в тяжёлом положении, Amnesty International, *Azerbaijan campaign digest RU formatted* <https://amnesty.org.ru/sites/default/files> (մուտք՝ 22.10.2025 թ.).

⁷ IRFS journalist Idrak Abbasov briefly detained, mistreated by National Security Ministry, Human rights house foundation, *IRFS journalist Idrak Abbasov briefly detained, mistreated by National Security Ministry - Human Rights House Foundation* (մուտք՝ 22.10.2025 թ.).

⁸ Yeni Musavat correspondent Elmin Badalov's appeal denied, IRFS, *Yeni Musavat*

Լրագրողներին հասցեագրված հիմնական մեղադրանքները

Ձերբակալված լրագրողներին հասցեագրվող հիմնական մեղադրանքներն էին զրպարտությունը, ահաբեկչությունը, էթնիկական ատելության հրահրումն ու հարկերից խուսափելը: Ընդդիմադիր լրագրող «Իրական Ադրբեջան» և «Գյունդեյի Ազերբայջան» թերթերի հիմնադիր Էյնուլլա Ֆեթուլայևը տարիներ շարունակվող հետապնդումներից հետո՝ 2007 թվականին, դատապարտվել է 11 տարվա ազատազրկման հենց այս մեղադրանքներով¹: Ֆեթուլայևը մեղադրվում էր նաև զրպարտության մեջ՝ Խոջալուի «կոտորածի» մասին տպագիր և ապա՝ առցանց հոդված հրապարակելու համար, որտեղ նա անարգել է Խոջալուի զոհերի հիշատակը՝ կասկածի տակ դնելով իրադարձության ադրբեջանական տարբերակը²: 2011 թ. Ֆեթուլայևը համաներմամբ ազատ է արձակվել և արժանացել մամուլի ազատության համար միջազգային մրցանակի³:

Մեկ այլ դեպքում խմբագիր Գանիմեդ Ջահիդովը և երիտասարդ ակտիվիստներ Էմին Միլլին և Ադնան Հաջիզադեն բանտարկվեցին խուլիգանության մեղադրանքներով՝ սոցիալական ցանցերում կառավարության քաղաքականությունը քննադատելու համար⁴: Գ. Ջահիդովի եղբայրը՝ հայտնի երգիծաբան և «Ազատության» լրագրող Միրզա Սաքրթը, 2006 թ. հոկտեմբերին երեք տարվա ազատազրկման է

correspondent Elmin Badalov's appeal denied – IRFS (մուսը՝ 22.10.2025 թ.); Azeri journalists 'assaulted' in Baku, Azernews, *Azeri journalists 'assaulted' in Baku* (մուսը՝ 22.10.2025 թ.).

¹ Court of Appeals continues Eynulla Fetullayev's trial, APA, *Court of Appeals continues Eynulla Fetullayev's trial* (մուսը՝ 22.10.2025 թ.); Three years after editor's murder, Azerbaijan journalists still abused, Amnesty International, *Three years after editor's murder, Azerbaijan journalists still abused - Amnesty International* (մուսը՝ 22.10.2025 թ.).

² Beaten, Blacklisted, and Behind Bars, Human Rights Watch, *Beaten, Blacklisted, and Behind Bars: The Vanishing Space for Freedom of Expression in Azerbaijan | HRW* (մուսը՝ 22.10.2025թ.); Journalist Under Fire - RELEASED! Amnesty International, *Eynulla Fatullayev | Amnesty International USA* (մուսը՝ 22.10.2025 թ.).

³ Eynulla Fatullayev Award Acceptance Speech, CPJ, *Eynulla Fatullayev Award Acceptance Speech - Committee to Protect Journalists* (մուսը՝ 22.10.2025 թ.).

⁴ История дела: Ганимат Захидов, Frontline defenders, *Case History: Ganimat Zahidov | Front Line Defenders* (մուսը՝ 22.10.2025թ.); After 15 years, the ECHR recognized the violation of the rights of Emin Milli and Adnan Hajizade, IRFS, *After 15 years, the ECHR recognized the violation of the rights of Emin Milli and Adnan Hajizade – IRFS* (մուսը՝ 22.10.2025 թ.).

դատապարտվել թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեղադրանքով: Եղբայրներին անգամ չի թույլատրվել մասնակցել իրենց հոր հուղարկավորությանը¹:

2007 թ. լրտեսության և դավաճանության մեղադրանք է առաջադրվել «Թալիշի սադո» թերթի գլխավոր խմբագիր, թալիշների մշակութային իրավունքների ակտիվ պաշտպան Նովրուզալի Մամեդովին², որը 2008 թ. հունիսին դատապարտվեց տասը տարվա ազատազրկման:

2007 թ. դեկտեմբերին հինգ լրագրողներ ստացան նախազահական ներում և ազատ արձակվեցին համընդհանուր համաներմամբ: Նրանցից երեքը բանտարկվել էին զրպարտության մեղադրանքով (Յաշար Աղազադե, Ռովշան Քեբիրլի և Ֆարամազ Նովրուզովու), մյուս երկուսը՝ Ռաֆիկ Թադին և Սամիր Սեդեքթեթովուն՝ կրոնական ատելություն հրահրելու մեղադրանքով՝ իրենց հողվածում իբրև թե Մուհամեդին վարկաբեկելու համար³: Amnesty International-ը վերջիններիս համարել է խղճի բանտարկյալներ: 2008 թ. հայց է ներկայացվել «Խաղաղության և ժողովրդավարության ինստիտուտ»-ի տնօրեն Լեյլա Յունուսի, փաստաբան, «Ֆեմիդա 007» թերթի գլխավոր խմբագիր Այուբ Քերիմովի դեմ⁴: Քերիմովն ընդդիմադիր «Ազատություն» օրաթերթին տված հարցազրույցում Ներքին գործերի նախարարությունն անվանել էր հանցագործների «բույն»: 2010 թ. դատարանը հաստատեց Քերիմովի մեղքը՝ զրպարտություն⁵: 2018 թ. Բաքվի իր տանը հայտնաբերվեց Քերիմովի դին: Հայտարարվեց, որ նա մահացել է գազի արտահոսքից⁶: «Նոտա» թերթի գլխավոր խմբագիր Սարդար Ալիբեյլին, թղթակից Փարամազ Նովրուզովուն նույնպես «զրպարտության համար» երկու

¹ Jailed Journalists in Azerbaijan Not Allowed to Attend Father's Funeral, Radio Liberty, *Jailed Journalists in Azerbaijan Not Allowed to Attend Father's Funeral* (մուտք՝ 22.10.2025 թ.).

² Азербайджан: Независимые журналисты в тяжёлом положении, Amnesty International, *Azerbaijan campaign digest RU formatted* (մուտք՝ 22.10.2025 թ.).

³ Таги Рафик, Кавказский Узел, *Кавказский Узел | Таги Рафик* (մուտք՝ 24.10.2025 թ.); Azerbaijan: Mixed messages on freedom of expression, Amnesty International, *Azerbaijan:Layout 4.qxd* (մուտք՝ 24.10.2025 թ.).

⁴ Charges dropped against Azerbaijani activist, Amnesty International, *Charges dropped against Azerbaijani activist - Amnesty International* (մուտք՝ 24.10.2025թ.).

⁵ Главного редактора приговорили, Azadlıq radiosı, *Главного редактора приговорили* (մուտք՝ 24.10.2025 թ.).

⁶ Умер редактор газеты «Femida 007» Эюб Керимов, Vzglyad.az, *Умер редактор газеты «Femida 007» Эюб Керимов* (մուտք՝ 24.10.2025 թ.).

անգամ դատապարտվել են 2007 և 2009 թվականներին¹: 2010 թ. Նով-րուզոլուն կրկին ձերբակալվեց՝ ֆեյսբուքյան էջում զանգվածային անհնազանդության կոչ անելու մեղադրանքով:

2010 թ. Ներքին գործերի նախարարության՝ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վարչության պետ Միրյաֆար Մեի-դովը քրեական հայց է ներկայացրել Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) գործող փաստաբան և դատական դիտորդ Մուզաֆար Բադիշովի դեմ²: Բադիշովը զբաղվել է մի շարք քաղաքականությանների իրավունքների պաշտպանությամբ, որի պատճառով էլ, հավանաբար, 2016 թ. Փաստաբանական պալատի նախագահությունը չեղյալ հայտարարեց նրա արտոնագիրը և միջնորդություն ներկայացրեց Նարիմանովի շրջանային դատարան՝ Մուզաֆար Բադիշովի իրավաբանական գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ³:

2010 թ. հունիսին Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեիդինը անկախ «Խուրալ» շաբաթաթերթի դեմ քաղաքացիական հայց ներկայացրեց իր պատվի և արժանապատվության պաշտպանության և բարոյական վնասի փոխհատուցման պահանջով: 2011 թ., ձերբակալվեց թերթի գլխավոր խմբագիր Ավագ Զեյնալովը⁴:

Իշխող կուսակցության անդամ, նախագահ Իլիամ Ալիևի հորեղբայր Զալալ Ալիևը նույնպես մի շարք մեղադրանքներ է ներկայացրել լրագրողներին՝ զրպարտության համար: 2007 թ. հայց է ներկայացվել «Մուխալիֆաթ» թերթի խմբագիր Ռովշան Մախմուդովի և լրագրող Յաշար

¹ Azerbaijan: Journalist and writer jailed as ruthless crackdown continues, Amnesty International, *Azerbaijan: Journalist and writer jailed as ruthless crackdown continues - Amnesty International* (մուտք՝ 24.10.2025 թ.); Journalist jailed in Azerbaijan, Amnesty International, *Journalist jailed in Azerbaijan - Human Rights House Foundation* (մուտք՝ 24.10.2025 թ.).

² Beaten, Blacklisted, and Behind Bars, The Vanishing Space for Freedom of Expression in Azerbaijan, *Beaten, Blacklisted, and Behind Bars: The Vanishing Space for Freedom of Expression in Azerbaijan | HRW*, (մուտք՝ 24.10.2025 թ.).

³ Court Grants Lawyer Muzaffar Bakhishov's Motion for Stay of Proceedings, IRFS, *Court Grants Lawyer Muzaffar Bakhishov's Motion for Stay of Proceedings – IRFS*, (մուտք՝ 24.10.2025 թ.).

⁴ В Азербайджане арестован главный редактор независимой газеты «Хурал», Кавказский Узел, Источник: <https://www.kavkaz-uzel.eu/articles/194908/> (մուտք՝ 24.10.2025 թ.).

Աղազադեհի դեմ. նրանք դատապարտվել են երկու տարի և վեց ամիս ազատազրկման՝ զրպարտության և վիրավորանքի մեղադրանքով: Խոսքի ազատության սահմանափակումը հատկապես սրվեց 2010 թ. նոյեմբերի 7-ի խորհրդարանական ընտրությունների նախաշեմին²: Այդուհետ թե՛ խորհրդարանական, թե՛ նախագահական նախընտրական շրջանները աչքի ընկան լրագրողների և լրատվականների հանդեպ բռնություններով:

Ինչպես նկատում ենք, Ադրբեջանում գործում է լրագրողների հանդեպ բռնությունների իրացման երկու հիմնական մեխանիզմ՝ ուղղակի ֆիզիկական բռնություն և պետական մարմինների կամ պաշտոնյաների կողմից դատական հայցերի ներկայացում լրատվամիջոցների կամ դրանց խմբագիրների ու թղթակիցների դեմ: Առաջին դեպքում փորձ է արվում ուժի սպառնալիքով կանխել կոռուպցիայի և այլ անօրինությունների վերաբերյալ տեղեկատվության տարածումը, մյուս պարագայում դատական հայցերի ներկայացումը և անառողջ դատական համակարգի միջոցով դրանց բավարարումը հնարավորություն է տալիս և՛ արգելափակել լրագրողների գործունեությունը (նաև հետագայում), և՛ ժխտել առաջադրված մեղադրանքների իսկությունը:

Քանակական տվյալներն էլ ավելի ակնառու են դարձնում Ադրբեջանում մամուլի ազատության խնդրի ողջ ողբերգականությունը: «Reporters without borders» կազմակերպության ամենամյա զեկույցների ուսումնասիրությունը ցույց է տալիս աշխարհի մյուս պետությունների համեմատությամբ Ադրբեջանի՝ ցուցանիշով պայմանավորված շարունակական անկումը: Կազմակերպության կողմից մեդիաազատության ցուցանիշի հաշվարկը տեղի է ունենում 5 բաղադրիչների համադրմամբ՝ քաղաքական համատեքստ, իրավական հիմքեր, տնտեսական համատեքստ, սոցիալ-մշակութային համատեքստ և անվտանգություն³: Որքան ցածր է մեդիաազատության ցուցանիշը,

¹ Azerbaijan, Events of 2007, Human Rights watch, World report 2008, *World Report 2008: Azerbaijan | Human Rights Watch* (մուտք՝ 24.10.2025 թ.).

² Beaten, Blacklisted, and Behind Bars, The Vanishing Space for Freedom of Expression in Azerbaijan, *Beaten, Blacklisted, and Behind Bars: The Vanishing Space for Freedom of Expression in Azerbaijan | HRW*, (մուտք՝ 24.10.2025 թ.).

³ Methodology used for compiling the World Press Freedom Index 2025, RSF, *Methodology used for compiling the World Press Freedom Index 2025 | RSF*, (մուտք՝ 24.10.2025 թ.).

այնքան ցածր են քաղաքական ազատությունները, այնքան անհամաչափ են ոլորտի կարգավորման իրավական հիմքերը, անառողջ է տնտեսական միջավայրը, ցածր է սոցիալ-մշակութային զարգացումը, իսկ ճնշման հավանականությունը՝ բարձր:

2003–2025 թթ. դիտարկված 180 երկրների շարքում Ադրբեջանը մշտապես զբաղեցրել է վատագույն հորիզոնականներ՝ ընդգրկվելով անազատության ամենաբարձր ցուցանիշն ունեցող երկրների քսանյակում: Օրինակ՝ 2020 թ. 180 երկրների ցանկում Ադրբեջանը 168-րդն էր, 2024 թ.՝ 164-րդը, իսկ 2025 թ. հավանում է լինել 167-րդը: 2024 թ. մեդիաազատության վատագույն ցուցանիշից (16,64) ադրբեջանական ցուցանիշը տարբերվում էր ընդամենը 11,35 գործակցով: Ադրբեջանին սովորաբար հաջորդում են այնպիսի երկրներ, ինչպիսիք են Բելառուսը, Իրաքը, Վիետնամը, Հյուսիսային Կորեան, Աֆղանստանը:

Հատկանշական է մեկ այլ հանգամանք ևս, որ մամուլի ազատության գործակիցն Ադրբեջանում նվազում է՝ հատկապես նախագահական և խորհրդարանական ընտրություններով պայմանավորված: Օրինակ՝ 2018 թ. նախագահական ընտրություններով պայմանավորված՝ նախորդ տարվա համեմատ՝ մեդիաազատության գործակիցը նվազել է 3,33-ով՝ 43,60-ից հասնելով 40,27-ի, իսկ 2024 թ. նախագահական ընտրությունների ժամանակ՝ 11,94-ով՝ 39,93-ից նվազելով 27,99-ի: Մեկ այլ հսկայական «ցատկ» է նկատվել 2010 թ. խորհրդանական ընտրություններից հետո, երբ 2010 թ. 56,3 գործակցից 2011–2012 թթ. սահմանվել է 87,25 գործակից՝ Ադրբեջանին պետությունների սանդակում 152-րդ հորիզոնականից իջեցնելով 62-րդ հորիզոնական: Լրատվամիջոցների և լրագրողների նկատմամբ բռնությունները ուղեկցում են նախընտրական ողջ գործընթացը, երբ փորձ է արվում հնարավորինս նվազեցնել ընտրական գործընթացի հանդեպ սպասվող քննադատությունը, հետընտրական, երբ փորձ է արվում կանխել արդեն իսկ կատարված ընտրակեղծիքների վերաբերյալ քննադատությունը: «World economics»-ը մամուլի ազատության գործակիցն Ադրբեջանի համար սահմանել է 12,2՝ 100 հնարավորից¹:

¹ Press Freedom GOVERNANCE FACTORS, *'s Governance Rating 2025*, (մուտք՝ 24.10.2025 թ.).

«Freedom House»-ի՝ 2003 թվականի մամուլի ազատության ցուցանիշով՝ Ադրբեջանն արդեն իսկ համարվում էր անազատ պետություն¹: Եթե «Freedom House» կազմակերպության ինդեքսով 2017² և 2018³ թվականներին մամուլի ազատության ցուցանիշով Ադրբեջանը դասվում էր մասնակի ազատ պետությունների շարքին՝ համապատասխան 42 և 40 գործակցով 100 հնարավորից, ապա արդեն 2019 թվականից Ադրբեջանը դասվել է անազատ երկրների շարքին՝ 2019 թվականի 39 գործակցից 2024 թվականին հասնելով 34 գործակցի⁴:

«Cato Institute»-ի՝ «Մարդու ազատությունների ինդեքս-2021» հետազոտության 2019 թ. տվյալներով՝ Ադրբեջանը զբաղեցնում է 127-րդ հորիզոնականը 165 երկրների շարքում՝ անձնական ազատության 5,96 ցուցանիշով, իսկ մամուլի ազատության գործակցը կազմել է ընդամենը 3,9⁵:

Միջազգային կառույցների արձագանքը

Խոսքի և մամուլի ազատության՝ որպես մարդու հիմնարար իրավունքի խնդրով զբաղվում են ՄԱԿ-ի մի շարք կառույցներ: Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը առանցքային դերակատարներից մեկն է, որը նշանակում է անկախ փորձագետներ հետազոտությունների անցկացման համար: ՄԱԿ-ի անկախ փորձագետները, որոնք հանդես են գալիս հատուկ զեկույցներով, մշտապես բարձրաձայնել են Ադրբեջանում մամուլի ազատության սահմանափակման և լրագրողների դեմ բռնությունների հարցերը: 2007 թ. անկախ փորձագետ Ամբեյի Լիզաբոն մտահոգություն է հայտնել Ադրբեջանում

¹ Annual Survey of Press Freedom 2003, *FOTP 2003 Global and Regional Rankings.pdf* (մուտք՝ 24.10.2025 թ.).

² Freedom of the net, Azerbaijan 2017, *Azerbaijan: Freedom on the Net 2017 Country Report | Freedom House*, (մուտք՝ 24.10.2025 թ.).

³ Freedom of the net, Azerbaijan 2018, *Azerbaijan: Freedom on the Net 2018 Country Report | Freedom House*, (մուտք՝ 24.10.2025 թ.).

⁴ Freedom of the net, Azerbaijan 2019, *Azerbaijan: Freedom on the Net 2019 Country Report | Freedom House*, (մուտք՝ 24.10.2025թ.); Freedom of the net, Azerbaijan 2024, *Azerbaijan: Freedom on the Net 2024 Country Report | Freedom House*, (մուտք՝ 24.10.2025 թ.).

⁵ The Human Freedom Index 2021, *human-freedom-index-2021-updated.pdf* (մուտք՝ 24.10.2025 թ.).

մամուլի ազատության սահմանափակումների վերաբերյալ¹: 2014 թ. ՄԱԿ-ի՝ Մարդու իրավունքների խորհրդի կողմից նշանակված հատուկ զեկուցողներ, փորձագետներ Դեյվիդ Քեյը, Մայնա Քեյը և Միշել Ֆորստը մասնավորապես անդրադարձել են Խաղաղության և ժողովրդավարության ինստիտուտի տնօրեն Լեյլա Յունուսի, Նրա ամուսնու՝ հակամարտությունների փորձագետ Արիֆ Յունուսի, Մարդու իրավունքների ակումբի նախագահ Ռասուլ Ջաֆարովի և Իրավական կրթության ընկերության ղեկավար Ինթիգամ Ալիևի ձերբակալությանը և քանիցս դատապարտել են Ադրբեջանում լրագրողների հանդեպ հետապնդումները²: 2015 թ. Ադրբեջանում իրավապաշտպանների, լրագրողների և ակտիվիստների հանդեպ բռնությունների վերաբերյալ իր մտահոգությունն է հայտնել նաև ՄԱԿ-ի՝ Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի ներկայացուցիչ Ռուպերտ Քոլվիլը³:

Ադրբեջանցի լրագրողները և ակտիվիստներն իրենց հերթին օգտագործում են ՄԱԿ-ի հարթակները՝ Ադրբեջանում մամուլի ազատության ոտնահարման խնդիրը բարձրաձայնելու համար⁴:

Լրագրողների և նրանց ընտանիքի անդամների հանդեպ հետապնդումները դատապարտել է նաև Լրագրողների պաշտպանության կոմիտեն: Մասնավորապես քննադատվել են իշխանությունների կողմից դանիական «Միջազգային լրատվամիջոցների աջակցություն» (IMS) մամուլի ազատության հարցերով տարածաշրջանային փորձագետ Գյուլնարա Ախունդովայի ընտանիքի նկատմամբ հետապնդումները⁵:

¹ UN rights expert voices concern about press freedom in Azerbaijan, *UN rights expert voices concern about press freedom in Azerbaijan | UN News* (մուտք՝ 24.10.2025 թ.).

² Спецдокладчики ООН призывают Азербайджан остановить волну преследований правозащитников, *Спецдокладчики ООН призывают Азербайджан остановить волну преследований правозащитников | Refworld* (մուտք՝ 24.10.2025 թ.).

³ В ООН обеспокоены преследованиями журналистов и правозащитников в Азербайджане, *В ООН обеспокоены преследованиями журналистов и правозащитников в Азербайджане | Новости ООН* (մուտք՝ 24.10.2025 թ.).

⁴ Азербайджанские активисты призвали ООН обратить внимание на репрессии против журналистов, Кавказский узел, *Кавказский Узел | Азербайджанские активисты призвали ООН обратить внимание на репрессии против журналистов* (մուտք՝ 24.10.2025 թ.); Օրինակ՝ 2024 թ. ՄԱԿ-ի գրասենյակում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 56-րդ նստաշրջանի ընթացքում կազմակերպվել է «side event»՝ միջազգային կազմակերպությունների ուշադրությունը Ադրբեջանում քաղաքացիական հասարակության ձայնին հրավիրելու համար:

⁵ Азербайджан оказывает давление на родственников защитницы свободы прессы,

Ադրբեջանում մամուլի ազատության սահմանափակմանը պարբերաբար անդրադառնում և դատապարտում է նաև եվրոպական միությունը: Դեռևս 2007 թ. ԵՄ-ն քննադատել է «Ռեալի Ազերբայջան» և «Գունդալիկ Ազարբայջան» թերթերի խմբագիր Էյնուլլա Ֆաթուլաևի ազատագրվումը՝ զրպարտության մեղադրանքով¹: Նույնաբովանդակ հայտարարություններով ԵՄ-ն հանդես է եկել նաև 2010 թ. փետրվարին և ապրիլին²: ԵՄ Արտաքին գործողությունների եվրոպական ծառայությունը 2023 թ. հայտարարություն է տարածել, որում մտահոգություն է հայտնում մի խումբ լրագրողների կամայական ձերբակալություններով «Ադրբեջանում անկախ լրագրության տարածքի նեղացման և խոսքի ազատության սահմանափակումների վերաբերյալ, որոնք հակասում են նրա միջազգային պարտավորություններին»³:

ԵՄ-ն արձագանքել է նաև «Թուրան» լրատվական գործակալության տնօրեն Մեհման Ալիևի ձերբակալությանը, Abzas մեդիայի հանդեպ իրականացված արշավին⁴: 2023 թ. ԵՄ-ն մտազոհություն էր հայտնել լրագրողներ Ուլվի Հասանլիի, Սևինջ Վագիֆբիգիի, Մահամադ Կեկալովի, Ազիզ Օրուջովի, Ռուֆատ Մուրադլիի, Նարգիզ Աբսալամովայի, Թեյմուր Քերիմովի, Իբրահիմ Հումբատովի, Ինչպես նաև՝ Հաֆիզ Բաբալիի կամայական ձերբակալություններով Ադրբեջանում անկախ

организовал налёт на их квартиру, *Азербайджан оказывает давление на родственников защитницы свободы прессы, организовал налёт на их квартиру | Refworld* (մուտք՝ 24.10.2025 թ.); Азербайджан оказывает давление на родственников защитницы свободы прессы, организовал налёт на их квартиру *Азербайджан оказывает давление на родственников защитницы свободы прессы, организовал налёт на их квартиры - Committee to Protect Journalists* (մուտք՝ 24.10.2025 թ.).

- ¹ EU Statement on Media Freedom in Azerbaijan, *PC.DEL/350/07*, (մուտք՝ 24.10.2025 թ.).
- ² EU statement on Media Freedom in Azerbaijan, *PC.DEL/76/10*, (մուտք՝ 24.10.2025 թ.); EU statement on Freedom of the Media in Azerbaijan, *Microsoft Word - pcdel0309 eu on fom in azerbaijan.doc*, (մուտք՝ 24.10.2025 թ.).
- ³ Azerbaijan: Statement by the Spokesperson on the detention of journalists and political activists, *Azerbaijan: Statement by the Spokesperson on the detention of journalists and political activists | EEAS* (մուտք՝ 24.10.2025 թ.).
- ⁴ EU local statement of 6 September on the detention of Azerbaijani journalist Mehman Aliyev, *EU local statement of 6 September on the detention of Azerbaijani journalist Mehman Aliyev | EEAS*, (մուտք՝ 24.10.2025 թ.); Azerbaijan: EU concern at sentencing of journalists and political activists *Azerbaijan: EU concern at sentencing of journalists and political activists - EU NEIGHBOURS east* (մուտք՝ 24.10.2025 թ.)

լրագրության տարածքի նեղացման և խոսքի ազատության սահմանափակումների վերաբերյալ¹: Իսկ 2025 թ. արձանագրել է, որ Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիևի կողմից համաներման արժանացած 154 անձանց մեջ չկան իրենց հիմնարար իրավունքներն իրականացնելու համար դատապարտված անձինք²:

Եվրոպական խորհուրդը նույնպես բազմիցս մատնանշել է Ադրբեյջանում մամուլի անազատության խնդիրը: 2025 թ. հունիսին Եվրոպայի խորհրդի՝ Մարդու իրավունքների ենթահանձնաժողովի նախագահ, Եվրախորհրդարանի անդամ Սունիր Սատուրին, Հարավային Կովկասի հետ հարաբերությունների պատվիրակության նախագահ, Եվրախորհրդարանի անդամ Նիլս Ուջակովսին, Եվրոպական խորհրդարանում Ադրբեյջանի հարցերով մշտական զեկուցող, Եվրախորհրդարանի անդամ Դեն Բարնան հանդես են եկել համատեղ հայտարարությամբ Ադրբեյջանում քաղաքական դրդապատճառներով լրագրողների, հետազոտողների և ակտիվիստների նկատմամբ կիրառվող խիստ բանտարկությունների վերաբերյալ³: Նրանք վերահաստատել են խորհրդարանի կոչերը ադրբեյջանցի պատասխանատու պաշտոնյաների նկատմամբ ԵՄ-ի՝ մարդու գլոբալ իրավունքների պատժամիջոցների ռեժիմի շրջանակներում⁴ պատժամիջոցներ կիրառելու վերաբերյալ: ԵՄ-ն բազմիցս պահանջել է, որ ԵՄ-ի և Ադրբեյջանի միջև ցանկացած ապագա գործընկերային համաձայնագիր պայմանավորվի բոլոր քաղաքականության լրագրողների ազատ արձակմամբ և երկրում մարդու իրավունքների պաշտպանության բարելավմամբ:

ԵՄ-ն 2024 թ. դեկտեմբերին բանաձև է ընդունել՝ հաշվի առնելով COP29-ի կապակցությամբ քաղաքացիական հասարակության, անկախ

¹ Azerbaijan: Statement by the Spokesperson on the detention of journalists and political activists, *Azerbaijan: Statement by the Spokesperson on the detention of journalists and political activists | EEAS* (մուտք՝ 24.10.2025 թ.)

² Azerbaijan: Statement by the Spokesperson on the human rights situation *Azerbaijan: Statement by the Spokesperson on the human rights situation | EEAS*, (մուտք՝ 24.10.2025 թ.)

³ European Parliament 2024-2029, *20250625 joint statement Azerbaijan harsh prison sentences.pdf*, (մուտք՝ 24.10.2025 թ.)

⁴ Новый действенный инструмент ЕС для защиты прав человека — общий режим санкций за нарушение этих прав, *Новый действенный инструмент ЕС для защиты прав человека - общий режим санкций за нарушение этих прав | EEAS*, (մուտք՝ 24.10.2025 թ.)

լրատվամիջոցների նկատմամբ 2023 թվականից ի վեր Ադրբեջանի իշխանությունների համակարգային ճնշումները¹: Բանաձևում հղում է կատարվում MeydanTV-ի լրագրողների ձերբակալությանը և խստորեն դատապարտվում է ադրբեջանական ռեժիմի կողմից մարդու իրավունքների, այդ թվում՝ խոսքի, խաղաղ հավաքների ազատությունների շարունակական խախտումները: 2024 թ. հոկտեմբերին ընդունված ԵԽ բանաձևը պահանջում է երաշխավորել մամուլի և խոսքի ազատությունը և չսահմանափակել լրատվամիջոցների աշխատանքները²:

Ադրբեջանում լրագրողների նկատմամբ իրականացվող բռնությունները և խոսքի ազատության սահմանափակումները մշտապես եղել են նաև ԵԱՀԿ՝ մամուլի ազատության հարցերով ներկայացուցիչների ուշադրության կենտրոնում: Դեռևս 2003 թ. ԵԱՀԿ՝ լրատվամիջոցների ազատության հարցերով ներկայացուցիչ Ֆրեյմուտ Դյուվեն մտահոգություն էր հայտնել Ադրբեջանում անկախ թերթերի դեմ զրպարտության հայցերի շարունակական կիրառման կապակցությամբ³: Նույն տարվա վերջին Ֆրեյմուտ Դյուվեն և Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Վալտեր Շվիմերը հանդես եկան համատեղ հայտարարությամբ՝ Ադրբեջանում լրատվամիջոցների իրավիճակի վերաբերյալ՝ անդրադարձ կատարելով «Յենի Մուսավաթի» դեմ կիրառված տնտեսական ճնշումներին (100000 եվրո տուգանքին) և կոչ անելով Ադրբեջանին վերանայել զրպարտությանը վերաբերող օրենսդրական դրույթները՝ թույլ չտալու դրա թիրախային կիրառումը⁴: ԵԱՀԿ՝ մամուլի ազատության հարցերով ներկայացուցիչ Դունյա

¹ European Parliament resolution of 19 December 2024 on the continued repression of civil society and independent media in Azerbaijan and the cases of Dr Gubad Ibadoghlu, Anar Mammadli, Kamran Mammadli, Rufat Safarov and Meydan TV, *Texts adopted - Continued repression of civil society and independent media in Azerbaijan and the cases of Dr Gubad Ibadoghlu, Anar Mammadli, Kamran Mammadli, Rufat Safarov and Meydan TV - Thursday, 19 December 2024* (մուսը՝ 24.10.2025 թ.).

² European Parliament resolution of 24 October 2024 on the situation in Azerbaijan, violation of human rights and international law and relations with Armenia, *Texts adopted - Situation in Azerbaijan, violation of human rights and international law and relations with Armenia - Thursday, 24 October 2024* (մուսը՝ 24.10.2025 թ.).

³ OSCE Media Representative concerned about continued harassment of media in Azerbaijan, *OSCE Media Representative concerned about continued harassment of media in Azerbaijan | OSCE* (մուսը՝ 24.10.2025 թ.).

⁴ OSCE media freedom representative asks for release of Azeri journalist from prison *OSCE media freedom representative asks for release of Azeri journalist from prison |*

Միյատուվիչը ևս պարբերաբար անդրադարձել է Ադրբեջանում մամուլի ազատությանը՝ այս խնդրով նամակներ հասցեագրելով նաև Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևին¹: Դ. Միյատուվիչը խնդրի մասին բարձրաձայնել է նաև Բաքու կատարած իր այցերի ժամանակ²:

2023 թ. Արևելյան գործընկերության՝ քաղաքացիական հասարակության ֆորումի ղեկավար կոմիտեն նույնպես դատապարտել է մի շարք լրատվամիջոցների նկատմամբ բռնությունները³: 2024 թ. լրագրողների ձերբակալություններին անդրադարձել է նաև Հելսինկյան կոմիտեն՝ համերաշխություն հայտնելով Ադրբեջանի լրագրողներին և քաղաքացիական հասարակության ակտիվիստներին⁴:

Ադրբեջանում Մեծ Բրիտանիայի դեսպան Ֆերգուս Օլդը Ադրբեջանում մամուլի 150-ամյակին նվիրված միջոցառմանը իր ելույթում նշել է, որ վերջին տարիներին Ադրբեջանում լրատվամիջոցների ազատության վերաբերյալ «մտահոգիչ միջադեպեր» են գրանցվում⁵:

Ադրբեջանական սփյուռքի ներկայացուցիչները նույնպես հանդես են գալիս Ադրբեջանում մամուլի ազատության սահմանափակումների դեմ: Գերմանիայում բնակվող ադրբեջանցիների հիմնադրած «Դեմոկրատական Ադրբեջանն ընտրում է» կազմակերպության անդամները Նյուրնբերգում բողոքի ակցիա են անցկացրել՝ միջազգային ուշադրությունը հրավիրելու Ադրբեջանում մարդու իրավունքների խախտումներին, մասնավորապես՝ լրագրողների և քաղաքական

OSCE (մուտք՝ 24.10.2025 թ.).

¹ OSCE media representative condemns new sentencing of Azerbaijani journalist, OSCE media representative condemns new sentencing of Azerbaijani journalist | OSCE (մուտք՝ 24.10.2025 թ.).

² OSCE media freedom representative offers assistance to improve media freedom in Azerbaijan, OSCE media freedom representative offers assistance to improve media freedom in Azerbaijan | OSCE (մուտք՝ 24.10.2025 թ.).

³ Stop the crackdown on civil society and media in Azerbaijan! Stop the crackdown on civil society and media in Azerbaijan! | Eastern Partnership Civil Society Forum (մուտք՝ 24.10.2025 թ.).

⁴ Statement on the Recent Arrests of Journalists in Azerbaijan, Statement | In solidarity with Azerbaijani Journalists - Netherlands Helsinki Committee (մուտք՝ 24.10.2025 թ.).

⁵ Səfir Ferqus Old: “Azərbaycanda müstəqil jurnalistikaya ağır zərbələr vurulur”, Səfir Ferqus Old: “Azərbaycanda müstəqil jurnalistikaya ağır zərbələr vurulur” - MEYDAN.TV (մուտք՝ 24.10.2025 թ.).

ակտիվիստների ձերբակալություններին, խոսքի և լրատվամիջոցների ազատության սահմանափակումներին¹:

Եզրակացություն

Լրատվական կայքերի արգելափակումներն ու լրագրողների հանդեպ բռնությունները վստահաբար ունենալու են շարունակական և համակարգված բնույթ: Այսօր անհնար է պատկերացնել իլիամալիկյան ռեժիմի կենսունակությունն առանց ազատ խոսքի իրավունքի տոտալ խախտման: Չնայած Ադրբեջանի անհաջող «բրենդավորմանը» որպես մարդու իրավունքների, բնապահպանության, կրոնական հանդուրժողականության և բազմամշակութայնության ջատագովի և առաջամարտիկի, «խեղդվող» մամուլի առկայության հանգամանքը վկայում է Ադրբեջանի իշխանության և ադրբեջանական հասարակության խոր բարդութափորվածության և աշխարհի հետ հաղորդակցման կաղապարվածության մասին:

Ադրբեջանում մամուլի ազատության խնդիրը ձևավորվել է ոչ թե մեկուսացված, այլ համակարգային մակարդակում՝ համադրվելով վարչակարգի պահպանման և լեգիտիմացման ռազմավարության հետ: Իլիամ Ալիևի իշխանության տարիներին ձևավորված լրատվական վերահսկման քաղաքականությունը ներկայացնում է ավտորիտար կառավարման դասական օրինակ՝ ներառելով ինչպես իրավական և ինստիտուցիոնալ սահմանափակումներ, այնպես էլ՝ ֆիզիկական և հոգեբանական ճնշումներ լրագրողների նկատմամբ: Միջազգային կառույցների արձագանքները թեև բազմակի են և դատապարտող, չեն հանգեցրել իրավիճակի արմատական փոփոխության, քանի որ արտաքին ճնշումները չեն վերածվել ներքին բարեփոխումների խթանի: Մեդիաազատության ցածր ցուցանիշները և լրագրողների հանդեպ բռնությունները վկայում են, որ Ադրբեջանում ազատ խոսքի իրավունքի ոտնահարումը դարձել է իշխանության վերարտադրության հիմնասյուներից մեկը: Այս իրողությունը ոչ միայն սահմանափակում է հասարակության տեղեկատվական բազմազանությունը, այլև խոչընդոտում է երկրի ժողովրդավարական զարգացման որևէ հեռանկար:

¹ Azərbaycanlı mühacirlər Almaniyada etiraz aksiyası keçirib, *Azərbaycanlı mühacirlər Almaniyada etiraz aksiyası keçirib - MEYDAN.TV* (ունևոթ՝ 24.10.2025 թ.).

ANUSH HARUTYUNYAN

*“Geghard” Scientific Analytical Foundation,
Email: anushhar1997@gmail.com*

POLITICAL MECHANISMS OF RESTRICTIONS ON PRESS FREEDOM IN AZERBAIJAN (2003–2025)

Keywords: *Azerbaijan, Ilham Aliyev, press freedom, international reaction.*

Nowadays, the media plays a key role in shaping the socio–political climate of a country. Freedom of the media is often seen as an indicator of democracy, while restrictions on it, on the contrary, point to a trend towards an authoritarian system of government. In the South Caucasus, Azerbaijan is the worst offender in terms of media restrictions and violence against journalists. Since the end of the last century, the country has been undergoing a process of vertical authoritarianism, represented by the presidential succession of Heydar Aliyev and Ilham Aliyev. Since 2003, this process, which began with the presidency of Ilham Aliyev, has become unstoppable and serves to strengthen the current regime, manifesting itself in the closure or restriction of local and foreign media, as well as in various forms of violence against journalists.

«ԼՈՒՈՒԹՅԱՆ ԳԻՆԸ».
ԹՈՒՐՔԻԱՅՈՒՍ ԼՐԱԳՐՈՂ ԼԻՆԵԼԸ ՀԱՆՑԱՆՔ Է

Լրագրությունն ազատ և ժողովրդավարական հասարակության հիմնասյուններից է: Այն ապահովում է հանրության իրազեկվածությունն ու իշխանությունների նկատմամբ վերահսկողությունը: Սակայն Թուրքիայում մամուլի ազատությունը լուրջ սահմանափակումների է ենթարկվում: Այս աշխատանքի շրջանակում ներկայացվում են Թուրքիայում լրատվական դաշտի ձևավորումն ու ղեկավարումը, վերահսկողությունն ու լրագրողների նկատմամբ հետապնդումները: Քննության են առնվում նաև սոցիալական ցանցերի սահմանափակումները, խոսքի ազատությանը խոչընդոտող մեխանիզմները: Հետազոտության աղբյուրագիտական հենքն են կազմում միջազգային զեկույցները, դատական վիճակագրությունն ու հանրային ուշադրության արժանացած աղմկահարույց գործերը: Հոդվածի նպատակն է բացահայտել՝ ինչպիսի պայմաններում է ձևավորվում Թուրքիայի մեդիա իրականությունը, և որքանով է հնարավոր ճշգրիտ տեղեկատվություն ստանալը:

Բանալի բառեր՝ թուրքական մեդիա, խոսքի ազատություն, լրատվամիջոցների վերահսկողություն, կեղծ տեղեկատվություն, քրեականացում, դատական հետապնդում, լրագրողների ազատագրում, տեղեկատվության տարածման սահմանափակում, իշխանության վերահսկողություն, սոցիալական ցանցերի սահմանափակում:

Նախաբան

Լրագրությունն առանցքային դեր ունի ազատ, ժողովրդավարական հասարակությունների ձևավորման գործում: Այն ոչ միայն հասարակության աչքն ու ականջն է, այլև իշխանությանը հետևելու և հանրային վերահսկողություն իրականացնելու հիմնական լծակը:

Ժողովրդավարական պետություններում մամուլը կատարում է «չորրորդ իշխանության» դերը, որը վերահսկում է մնացած երեքի՝ օրենսդիր, գործադիր և դատական մարմինների գործունեությունը: Որոշ երկրներում, որտեղ իշխող ռեժիմները ձգտում են լիակատար վերահսկողության, մամուլի ազատությունը ճնշման է ենթարկվում, օրինակ՝ Թուրքիայում, որտեղ զանգվածային լրատվության միջոցները հաճախ են ենթարկվում քաղաքական ճնշումների և իրավական սահմանափակումների:

Հոդվածում կանդիդատանք Թուրքիայի լրագրության պատմության զարգացմանը, ներկայիս վիճակին, ճնշման մեխանիզմներին, միջազգային հանրության անդրադարձներին:

Թեման, առավել քան երբևէ, արդիական է, քանի որ անհրաժեշտ է ուշադրությամբ հետևել մեր հարևան երկրի՝ Թուրքիայի մեդիա դաշտում հայտնվող տեղեկատվությանը: Պետք է հասկանանք, որ Թուրքիայում իշխանությունների կողմից չվերահսկվող տեղեկություն հազվադեպ է տարածվում լրատվամիջոցների կողմից (նման բան գրեթե երբեք չի լինում, լինելու դեպքում էլ տեղեկատվություն տարածողին սպառնում է ազատագրկում): Լրատվամիջոցներն այնտեղ գործում են խիստ վերահսկողության պայմաններում, իսկ հրապարակումները հիմնականում արտացոլում են ոչ թե բազմակարծություն, այլ գործող իշխանությունների դիրքորոշումը:

Թուրքիայի լրատվական դաշտը ուսումնասիրելու պատճառներից մեկն այն էր, որ Թուրքիայի՝ ազգությամբ հայ բնակչության շրջանում անգամ Խոջալուի դեպքերի և Արցախի հարցի վերաբերյալ գերակշռում են թուրքական պաշտոնական վարկածները: Այս պարագայում անխուսափելիորեն հետևյալ հարցն է առաջանում. արդյո՞ք նրանք իսկապես անտեղյակ են պատմական ու քաղաքական իրականությանը, թե՞ պարզապես գտնվում են այնպիսի ճնշող միջավայրում, որտեղ ստիպված են քարոզվող տեսակետները վերարտադրել՝ տեսախցիկների առաջ արտահայտելով ոչ թե սեփական, այլ թելադրված դիրքորոշումը: Սա վկայում է, որ մեդիայի վերահսկողությունը և վախի մթնոլորտը ոչ միայն խեղաթյուրում են տեղեկատվությունը, այլև ազդում են անձնական հանգժնունքների ձևավորման վրա՝ սահմանափակելով խոսքի ազատությունը՝ հատկապես փոքրամասնությունների շրջանում:

Թուրքական մամուլի կայացման փուլերը. պատմական անդրադարձ

Թուրքական մամուլի պատմությունը սկսվում է Օսմանյան կայսրության վերջին տասնամյակներից: Takvîm–i Vekâyi պարբերականը՝ Օսմանյան կայսրության առաջին պաշտոնական թերթը, լույս է տեսել 1831 թվականի նոյեմբերի 1–ին Ստամբուլում՝ սուլթան Մահմուդ II–ի հրամանով՝ որպես պետական լրատվամիջոց՝ եվրոպական օրինակով: Թեև թերթի հրատարակումը պարբերական չէր, այն լույս է տեսել մինչև Օսմանյան կայսրության անկումը (1918 թ.), այսինքն՝ մոտ 87 տարի: Թերթի իրավահաջորդը Թուրքիայի Հանրապետությունում ներկայումս լույս տեսնող Resmî Gazete–ն է: 19–րդ դարում սկսեցին լույս տեսնել առաջին պարբերականները (Takvîm–i Vekâyi, Le Moniteur Ottoman¹, Cerîde–i Havâdis², Tercüman–i Ahval³, Tasvîr–i Efkâr⁴): Դրանց մեծ մասը կարճատև

¹ Le Moniteur ottoman-ը ֆրանսերենով տպվող առաջին պաշտոնական օսմանյան թերթն էր, որը հրատարակվել է 1831 թ.՝ սուլթան Մահմուդ II-ի հրամանով: Պետական ֆինանսավորում ունեցող թերթի խմբագիրը Ալեքսանդր Բլակն էր: Թերթը նպատակ ուներ եվրոպացիների շրջանում օսմանյան լուրերը տարածել: Չետագայում այն դարձել է Takvim-i Vekayi թերթի թուրքերեն տարբերակի նախատիպը: Տե՛ս Le Moniteur ottoman, https://www.academia.edu/83634282/Osman%C4%B1Devleti_nin_Frans%C4%B1zca_Resm%C3%AE_Gazetesi_Le_Moniteur_Ottoman_1831_1836_Kebike%C3%A7_53_2022_p_157 (16.05.2025):

² «Cerîde-i Havâdis» օսմաներեն պարբերականը լույս է տեսել 1840 թ. հուլիսի 31–ից: Այն հիմնադրել է անգլիացի գործիչ Ուիլյամ Չերչիլը: Նրա մահից հետո հրատարակությունը շարունակել է որդին՝ Ալֆրեդ Չերչիլը: Թերթը լույս է տեսել մինչև 1864 թ. սեպտեմբերի 26–ը: Լույս է տեսել թերթի 1212–րդ համար: Տե՛ս Ceride-i Havâdis, <https://islamansiklopedisi.org.tr/ceride-i-havadis> (16.05.2025):

³ Օսմանյան կայսրության առաջին մասնավոր պարբերականը հրատարակվել է 1860 թ. Աղահ Էֆենդու և Շինասիի կողմից Կոստանդնուպոլսում: Այն տարբեր հաճախականություններով լույս է տեսել մինչև 1866 թվականը: Թերթում, որպես հեղինակներ, հանդես էին գալիս նշանավոր մտավորականներ, հրապարակվում էին հասարակական-քաղաքական վերլուծություններ և գրական ստեղծագործություններ: Տե՛ս Tercüman-i Ahval, https://www.academia.edu/48845538/TERC%C3%9CMAN_I_AHVAL (16.05.2025):

⁴ Tasvîr-i Efkâr – «Թաավիրի Էֆքար» թերթն Օսմանյան կայսրության՝ օսմաներենով լույս տեսած առաջին կարևոր գրական ու զաղափարական պարբերականներից էր: Այն հիմնադրվել է Շինասիի կողմից 1862 թ. հունիսի 27–ին: Թերթը դարձավ Նոր օսմանցիների շարժման կարևոր խոսափողը և մեծ դեր խաղաց հասարակական կարծիքի ձևավորման, ինչպես նաև ժամանակի քաղաքական ու մշակութային հարցերի լուսաբանման գործում: Շինասիի հեռանալուց հետո թերթի ղեկավարությունն անցավ Նամըք Զեմալին, որը շարունակեց զարգացնել դրա

կյանք ունեցավ՝ սակավաթիվ լսարանի և իշխանական սահմանափակումների պատճառով: Փոխարենն ազատ ու ազդեցիկ էին արտերկրում հրատարակվող և պետության ներսում արգելված թերթերը, որոնք նպաստում էին թե՛ եվրոպական գաղափարների տարածմանը, թե՛ ընդդիմադիր մտածողության ձևավորմանը:

Երիտթուրքական հեղաշրջումից հետո մամուլը ձեռք բերեց քաղաքական մեծ նշանակություն՝ դառնալով գաղափարների տարածման և քարոզչության հզոր գործիք: Երիտթուրքերը, որոնք ձգտում էին հաստատել պետական և քաղաքական նոր կարգ, մամուլն օգտագործում էին իրենց գաղափարախոսությունն առաջ մղելու և քաղաքական ազդեցություն ունենալու համար (“Tanin”, “İkdam”²):

Առաջին համաշխարհային պատերազմական տարիներին, երբ Կայսրությունը փաստացիորեն բաժանվել էր սուլթանի և քենալականների միջև, լրատվամիջոցները սկսեցին ծառայել ազգային շահերին: 1920 թ. ստեղծված «Անադոլու» գործակալությունը³ դարձավ Թուրքիայի

գաղափարական ուղղությունը: Թերթը շարունակել է լույս տեսնել մինչև 1868 թվականը. Նամըք Զեմալի և մյուս ղեկավարների արտագաղթից հետո դադարեց հրատարակվել: Տե՛ս Tasvir-i Efkar, <https://islamansiklopedisi.org.tr/tasvir-i-efkar> (16.05.2025):

¹ «Թանին» պարբերականը հրատարակվել է ընդմիջումներով՝ 1908-1918, 1922-1925. և 1943-1947 թթ.: Հյուսեյին Ջահիթի գլխավորությամբ այն հիմնել են «Իթթիհաթ վե Թերաքքի» կուսակցության մտավորականները՝ որպես ընդդիմությանը ձայն: Լինելով ընդդիմության խոսափողը՝ թերթը կարևոր դեր է ունեցել Օսմանյան կայսրության և նոր Թուրքիայի քաղաքական, մշակութային և հասարակական կյանքում: Տե՛ս Tanin, Meşrutiyet ve Cumhuriyet dönemlerinde İstanbul’da yayımlanan siyasî gazete, <https://islamansiklopedisi.org.tr/tanin> (16.05.2025):

² Հիմնադրվել է 1894 թ. Ստամբուլում օսմանցի հայտնի լրագրող և գրող Իսմայիլ Մյուշթաքի կողմից: Այն կարևոր դեր է խաղացել Օսմանյան կայսրության գոյության վերջին տարիներին և, հատկապես, Թուրքիայի Հանրապետության ձևավորման նախապատրաստական ժամանակաշրջանում: Թերթը դարձել էր առաջադեմ գաղափարների տարածման և հասարակական-քաղաքական մեկնաբանությունների կարևոր հարթակ: Հանրության շրջանում այն հայտնի էր լրագրողական սկզբունքայնությամբ և ազատ մտքի խրախուսմամբ՝ նպաստելով հասարակական կարծիքի ձևավորմանը և մտավոր դաշտի աշխուժացմանը: Տասնամյակներ անց էլ թերթը շարունակում է կարևոր աղբյուր մնալ Թուրքիայում այդ շրջանի պատմաքաղաքական իրադարձությունները ուսումնասիրողների համար: Տե՛ս İkdam, https://www.oldnews.com/en/newspapers/turkey/marmara/istanbul/ikdam?tr_id=m_x6x2kr4gda_1ijc3eqsl6 (16.05.2025):

³ «Անադոլու» գործակալությունը (թուրքերեն՝ Anadolu Ajansı, AA) Թուրքիայի խոշորագույն պետական լրատվական ծառայությունն է: Այն հիմնադրվել է 1920 թ. ապրիլի

առաջին պետական լրատվամիջոցը: Այն կարևոր դեր խաղաց ինչպես Հունաստանի, այնպես էլ Հայաստանի դեմ մղվող պատերազմներում՝ տեղեկատվական դաշտում ապահովելով քեմալական շարժման դիրքորոշման տարածումը և քարոզչական աջակցությունը (Hâkimiyet-i Milliye¹, Yeni Gün²):

6-ին Անկարայում՝ որպես ազգային տեղեկատվական կառույց: Գործակալության ստեղծման գաղափարը ծագել է մարտի 31-ին Գեյվեում կայացած հանդիպման ժամանակ, երբ լրագրողներ Յունուս Նադին ու Խալիդե Էդիբը Մուստաֆա Զեմալին առաջարկեցին հիմնել ժողովրդին իրազեկող ազգային լրատվամիջոց: Անվանման երեք տարբերակներից («Թյուրք», «Անկարա», «Անադոլու») ընտրվեց վերջինը: Գործակալությունն ստեղծվեց Թուրքիայի ներսում և արտերկրում ընթացող ազգային-ազատագրական շարժման մասին տեղեկություն տարածելու և սուլթանական ու արտասահմանյան մամուլի կողմից տարածվող տեղեկատվությանը հակազդելու նպատակով: 1925 թ. այն վերակազմակերպվեց բաժնետիրական ընկերության՝ արևմտյան չափանիշներով: Ներկայումս գործակալության բաժնետոմսերի 49%-ը պատկանում է պետությանը, 51%-ը՝ մասնավորին: Գործակալության գլխամասային գրասենյակը գտնվում է Անկարայում: Այն գրասենյակներ ունի ավելի քան 30 երկրում: Գործակալությունը նորություններ է հրապարակում 10 լեզվով: Տե՛ս Anadolu (информационное агентство), տե՛ս <https://www.aa.com.tr>:

¹ Hâkimiyet-i Milliye-ը՝ («Հասարակության գերիշխանություն») որպես «Իրադե-ի Միլլիյե» թերթի իրավահաջորդ, հրատարակվել է Մուստաֆա Զեմալի նախաձեռնությամբ և վերահսկողությամբ՝ 1920 թ. հունվարի 10-ին: Կարգախոսն էր՝ «Մեր առաքելությունն է՝ ապահովել ժողովրդի կամքի գերիշխանությունը»: Սկզբնական շրջանում այն տպագրվում էր շաբաթական երկու անգամ, 1200-1500 օրինակով: Հետագայում դարձավ օրաթերթ: Թեև համարվում էր մասնավոր, իրականում պետական ֆինանսավորում էր ստանում և կառավարության կիսապաշտոնական խոսափողն էր: Բազմաթիվ հոդվածներ գրել է անձամբ Մուստաֆա Զեմալը: 1921 թ. թերթում հայտնվեցին հեղինակների կողմից ստորագրված հոդվածներ: Թերթը հրապարակում էր ազգային պայքարի, Ազգային մեծ ժողովի գործունեության, ռազմաճակատներում տիրող իրավիճակի մասին պատմող, ինչպես նաև գաղափարական հոդվածներ: 1928 թ. այն անցավ լատինատառ տպագրության, իսկ 1935 թ. վերանվանվեց «Ուլուս»՝ դառնալով ժողովրդական Հանրապետական կուսակցության պաշտոնաթերթը: Տե՛ս Hâkimiyet-i Milliye, <https://islamansiklopedisi.org.tr/hakimiyet-i-milliye> (16.05.2025):

² Թերթը հիմնադրել է Յունուս Նադին 1918 թ. սեպտեմբերի 2-ին Ստամբուլում: 1920 թ. մարտի 16-ին՝ Ստամբուլի օկուպացիայից մեկ օր անց, թերթը փակվեց բրիտանական իշխանությունների կողմից, քանի որ աջակցում էր ազգային-ազատագրական պայքարին: Յունուս Նադին ստիպված էր հեռանալ Ստամբուլից: 1920 թ. օգոստոսի 10-ին նա թերթը վերահրատարակեց Անկարայում՝ «Անադոլուլա Ենի Գյուն» («Նոր օր Անատոլիայում») անունով՝ շարունակելով աջակցել քեմալական պայքարին: Ավելի ուշ թերթը դարձավ Թուրքիայի կոմունիստական կուսակցության խոսափողը: Կուսակցության փակվելուց հետո թերթը որոշ ժամանակ շարունակում

Հանրապետության հռչակումից հետո թուրքական մամուլը որոշ ժամանակ գործեց ազատության պայմաններում, սակայն 1930–ականներին այն ամբողջությամբ լծվեց իշխող քեմալական գաղափարախոսության տարածման գործին: Թեև տպագիր մամուլի թիվը աճում էր, սակայն բազմակարծությունը սահմանափակ էր:

1946 թ. Թուրքիայի անցումը բազմակուսակցական համակարգի նոր հույս ու խթան հանդիսացավ մամուլի ազատության համար: Դեմոկրատական կուսակցությունը, համագործակցելով ընդդիմադիր պարբերականների հետ, խոստանում էր ազատել մամուլը, ինչը մեծապես նպաստեց 1950 թ. ընտրություններում նրանց հաղթանակին: Սակայն, իշխանության գալուց հետո, կուսակցությունը սկսեց խստորեն վերահսկել մամուլն ու հետապնդել լրագրողներին՝ ընդունելով օրենքներ, որոնք սահմանափակում էին մամուլի ազատությունը: 1950–1958 թթ. Թուրքիայի դատարանները հետապնդել են 2324 լրագրողի, որոնցից 811–ը դատապարտվել են տարբեր ժամկետներով ազատազրկման կամ ենթարկվել վարչական տույժերի¹:

1960 թ. ռազմական հեղաշրջումը բերեց նոր սահմանադրություն և մամուլի վերաբերյալ ավելի լիբերալ օրենսդրություն: Չնայած դրան՝ նույն ժամանակաշրջանում նկատելիորեն ավելացան դատական գործերն ու լրագրողների դեմ ճնշումները: Այսպես՝ 1961–1962 թթ. լրագրողների դեմ հարուցվել է 402 դատական հայց: Չնայած ճնշումներին՝ տնտեսական աճի արդյունքում մամուլը տեխնիկապես զարգացավ, նոր պարբերականներ հայտնվեցին, և մամուլի դաշտը զգալիորեն ընդլայնվեց:

1970–ական թվականներին Թուրքիայում մամուլը զարգանում էր քաղաքական խոր պառակտումների, բևեռացման և բռնությունների ֆոնին: Այս տասնամյակը նշանավորվում է քաղաքական մամուլի ակտիվացմամբ, լրագրողների նկատմամբ աճող ճնշումներով,

Էր գործել: 1924 թ. մայիսի 7-ին Յուսուֆ Լադիկ Զեքերիյա Սերթեփի հետ Ստամբուլում հիմնադրեց «Cumhuriyet» (Հանրապետություն) թերթը, ինչից հետո՝ մայիսի 11-ին, «Ենի Գյուն» թերթը դադարեց հրատարակվել: Տե՛ս Yeni Gün, https://tr.wikipedia.org/wiki/Yeni_G%C3%BCn (16.05.2025):

¹ Տեր-Մաթևոսյան Վ., Չանգվաճային լրատվամիջոցները Թուրքիայում. քաղաքականություն, սահմանափակումներ և մարտահրավերներ, տես՝ <https://www.scribd.com/document/720620065> (28.10.2025):

միջամտությունների ազդեցությամբ և գաղափարական լրատվամիջոցների ակտիվությամբ:

1980 թ. ռազմական հեղաշրջման արդյունքում մամուլի նկատմամբ վերահսկողությունն ուժեղացավ, և քաղաքական ու գաղափարական մամուլը կտրուկ հարված ստացավ:

1980–90–ական թվականները նշանավորվեցին մի կողմից հաղորդակցական ենթակառուցվածքների զարգացման, մյուս կողմից՝ մասնավոր լրատվամիջոցների թվային աճով: Այդ ժամանակ առաջատար էր համարվում «Doğan grup»¹–ը, որը վերահսկում էր մի քանի առաջատար թերթերի: Միևնույն ժամանակ՝ 1980–ականների նախաշեմին, Թուրքիայում սրվեց «քրդական հարցը»: 1984 թ. սկսվեց զինված պայքար, ձևավորվեց Քրդական ազգային ճակատը (Kürt Ulusal Cephesi), որի նպատակն էր համախմբել Թուրքիայում գործող քրդական քաղաքական ու գաղափարական տարբեր ուղղվածություններ ունեցող կազմակերպություններին՝ ընդդեմ թուրքական պետության ասիմիլացիոն և ճնշման քաղաքականության²: Հենց այս ժամանակահատվածում ԶԼՄ նկատմամբ սկսեցին իրականացվել համակարգված հետապնդումներ, հատկապես՝ քրդամետ մամուլի: Լրագրողները հաճախ էին ենթարկվում բռնությունների, ինչը հայտնվեց միջազգային իրավապաշտպանների ուշադրության կենտրոնում:

Որպես պետական հեռարձակողներին այլընտրանք՝ հեռարձակվեցին նաև իսլամական–կրոնական ուղղվածության հեռուստաա-

¹ Doğan grup - մուտք է գործել մամուլի աշխարհ 1979 թ.՝ ձեռք բերելով «Միլլիյեթ» թերթը: 1994 թ. ձեռք է բերել նաև «Յյուրիյեթ» թերթը՝ ամրապնդելով դիրքերը ԶԼՄ ոլորտում: Հետագայում ստեղծվել են նաև «Պոստա» և «Ֆանատիկ» թերթերը: Հեռուստառադիոհաղորդումներում գործարկել է Kanal D, CNN Türk և Kanal D Ռուսիկա այիքները: Չարագրել է գրքերի, երաժշտության, ամսագրերի և թվային բովանդակության բիզնես՝ Դոհան Զիթափ, Դոհան Բուրդա, DMC և այլն: Նա առաջինն էր Թուրքիայում, որ ստեղծեց միջազգային գործընկերությամբ ԶԼՄ բրենդներ: 1986–1996 թթ. եղել է Թուրքիայի «Թերթերի սեփականատերերի միության» նախագահ, իսկ 2004 թ. դարձել է «Աշխարհի թերթերի միության» վարչության առաջին թուրք անդամը: St'ս Doğan grup, <https://www.doganholding.com.tr/kurumsal/kurucumuz/> (16.05.2025):

² Թուրքիայի պատմություն. հարյուրամյա հանրապետության քաղաքական ուրվագծերը 1923–2023 թթ. (երրորդ լրամշակված հրատարակություն), Երևան, ԵՊՀ Հրատարակչություն, Երևան, 2023, էջ 303:

լիքներ (Yeni Şafak¹, Yeni Akit²), որոնք շուրջ երկու տասնամյակ ազատորեն տարածում էին պահպանողական գաղափարներ ոչ միայն Թուրքիայի ներսում, այլև՝ նրա սահմաններից դուրս: 1990–ականներին լրատվության ոլորտում նշանակալի դեր խաղաց աստվածաբան Ֆեթուլլահ Գյուլենը, որը, լինելով նաև բիզնես շահեր հետապնդող գործիչ, աստիճանաբար ընդլայնեց իր ներկայությունը մեդիա դաշտում՝ դառնալով ազդեցիկ դերակատար: 1999 թ. Գյուլենը արտագաղթեց ԱՄՆ, սակայն նրան պատկանող զանգվածային լրատվության միջոցները շարունակեցին իրենց գործունեությունը և, դեռ ավելին, ընդլայնվեցին (Zaman³, Sızıntı⁴): Մինչև 2013 թ. նրանք վայելում էին իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության (ԱԶԿ) աջակցությունը:

¹ Yeni Şafak օրաթերթը պահպանողական և իսլամիստական ուղղվածությամբ թուրքական պարբերական է: Այն իր գործունեությունը սկսել է 1995 թ. հունվարի 23-ին՝ հրապարակելով իր առաջին՝ 16-էջանոց համարը «Թուրքիայի գալիքը լուսավոր է» վերնագրով: Խմբագրական հոդվածի վերնագիրը եղել է «Թուրքիայի ժառանգությունը», որը հետագայում դարձել է թերթի կարգախոսը: Տե՛ս <https://www.yenisafak.com>:

² Yeni Akit (թուրք.՝ «Նոր համաձայնություն») թուրքական ամենօրյա թերթ է, որը հիմնադրվել է 1993 թ. սեպտեմբերի 12-ին Ստամբուլում: Այն համարվում է Թուրքիայի մեդիա դաշտում առավել ծայրահեղ պահպանողական և իսլամիստական դիրքորոշում ունեցող թերթերից մեկը: Իր հրապարակումներով աչքի է ընկնում աշխարհիկության, քեմալականության, ԼԳԲՏ համայնքի և այթիզմի դեմ ուղղված հայտարարություններով: Yeni Akit-ին է պատկանում նաև «Haber Vaktim» անվամբ գործող առցանց լրատվական հարթակը: Թերթը, լինելով հետևողական իր գաղափարական ուղեգծում, ներկայում շարունակում է հանդես գալ որպես Թուրքիայի ներսում իսլամիստական, ազգային և հակաաշխարհիկ քարոզչության ամենակտիվ խոսափողներից մեկը՝ Եսկան ազդեցություն ունենալով հասարակական կարծիքի ձևավորման վրա: Տե՛ս <https://www.yeniakit.com>:

³ Թուրքիայում ամենահայտնի Գյուլենամետ թերթերից էր (1986-2016 թթ.): Թերթը հիմնադրվել է 1986 թ. Անկարայում իսլամամետ դիրքորոշմամբ, իսկ 1987 թ. անցել է Ֆեթուլլահ Գյուլենի շարժման վերահսկողության ներքո: Ժամանակի ընթացքում դարձել է ամենաշատ ընթերցվող թերթը Թուրքիայում՝ օրական մինչև մեկ միլիոն տպաքանակով: Հրապարակվել է 11 երկրում, ներկայացվել է 10 լեզվով: Թերթը առաջիններից էր, որ ստեղծեց առցանց հարթակ: Սակայն 2013 թ.-ից սկսած՝ ընթերցողների թիվը կտրուկ անկում է գրանցել՝ քաղաքական ճնշումների պատճառով: 2016 թ. պետական հեղաշրջման փորձից հետո կառավարությունը Zaman-ը կապեց Գյուլենական «զուգահեռ պետության» հետ, թերթին կից նշանակվեց հավատարմատար, իսկ հուլիսին փակեց: Տե՛ս www.zaman.com:

⁴ Ամսագիրը լույս է տեսել 1979 թ. փետրվարին: Տպագրվել է մինչև 2016 թ.: Ամսագրի 449 համար է լույս տեսել՝ Kaynak Kültür Yayın Grubu-ի հովանու ներքո: Ամսագիրը ունեցել է միջին հաշվով մոտ 825000 տպաքանակ: Sızıntı-ն կապ է ունեցել

2002 թ. նոյեմբերից՝ ԱԶԿ-ի իշխանության գալով, թեպետ սկզբնական շրջանում նպաստավոր պայմաններ ստեղծվեցին մամուլի ազատ գործունեության, ինչպես նաև խոսքի ազատության համար, սակայն 2010 թվականից հետո իրավիճակը կտրուկ փոխվեց. Թուրքիայի իշխանությունները սկսեցին առավել կոշտ վերահսկողություն սահմանել լրատվամիջոցների նկատմամբ. պատճառը 2010 թվականի սեպտեմբերի 12-ի սահմանադրական հանրաքվեն էր: Քրդական կուսակցությունը բոյկոտեց հանրաքվեն, քանի որ փոփոխությունների փաթեթում ներգրավված չէին ոչ թուրք ժողովուրդների իրավունքների խնդիրները¹: Մամուլի ազատությունն աստիճանաբար սահմանափակվեց. ԶԼՄ նկատմամբ կիրառվեցին ճշումներ, սկսվեցին դատական հետապնդումներ, ֆինանսական տուգանքներ սահմանվեցին, և փակվեցին լրատվամիջոցներ: Այս շրջանում հաճախ էին կալանավորվում քննադատական հրապարակումներով հանդես եկող լրագրողները, իսկ մեղիա դաշտը աստիճանաբար կենտրոնանում էր իշխանությանը մոտ կանգնած գործարարների ձեռքում: Կարելի է ասել, խոսքի ազատության բարենպաստ միջավայրը սկսեց նկատելիորեն նահանջել՝ տեղը զիջելով վերահսկվող և սահմանափակված մեդիային:

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ թուրքական մամուլն անցել է բարդ ու հակասական փուլերով՝ ներառելով գաղափարական, քաղաքական և տնտեսական գործոններ, սակայն մինչ օրս պահպանել է իր նշանակալի դերը հանրային կյանքում:

Որքա՞ն է կազմել «Լռության գինը» Թուրքիայում 2024 թվականին²

2024 թվականին Թուրքիայում մամուլի ազատությունն ավելի վատթար վիճակում է հայտնվել: Մամուլի ազատության տեսանկյունից՝ լրագրողական միություններն այն անվանել են **«կորցրած տարի»**:

Ֆեթուլլահ Գյուլենի շարժման հետ: 2008 թ. փետրվարի համարում Գյուլենը գրել է խմբագրական հոդված: Ամսագրում կան նրա մասին հոդվածներ և նյութեր, որոնք առկա են նաև tr.fgulen.com կայքում: 2016 թ. հուլիսի 26-ին արտակարգ դրության հրամանագրով ամսագիրը փակվել է: Տե՛ս նաև <https://www.cmlive.com>:

¹ Թուրքիայի պատմություն. հարյուրամյա հանրապետության քաղաքական ուրվագծերը 1923-2023 թթ. (երրորդ լրամշակված հրատարակություն), էջ 360:

² Stockholm Center for Freedom- Press Freedom in Turkey: 2024 in Review, <https://stockholmcf.org/press-freedom-in-turkey-2024-in-review/> (16.05.2025).

Թուրքական լրատվական կազմակերպությունները ահազանգել են, որ մամուլի ազատությունը ենթարկվում է իրավական և քաղաքական ճնշումների, որոնք ուղեկցվում են ձերբակալություններով, ոստիկանության կողմից բռնությամբ և գրաքննությամբ: Որոշ լրագրողներ անգամ նշել են, որ 2024 թվականին, ի տարբերություն նախորդ տարիների, լրագրողների նկատմամբ բռնությունների թիվը անհամեմատ աճել է, և որ ոստիկանությունը ոչ համաչափ ուժ է կիրառել բողոքի ցույցերի ժամանակ:

Ստորև ներկայացնում ենք 2024 թվականի ամփոփ տվյալները:

Ցուցանիշ	Թիվ/ Նկարագրու- թյուն	Մեկնաբանություն
1. Լրագրողների և ԶԼՄ-ների դեմ հարուցված քրեական գործեր	70 գործ	Հարուցվել են ամբողջ տարվա ընթացքում
2. Ներգրավված լրագրողներ	89 լրագրող	Լրագրողները՝ քրեական հետանդաման թիրախ
3. Ներգրավված լրատվամիջոցներ	1 թերթ	Ներգրավվել է առնվազն մեկ քրեական գործընթացքում
4. Դատավարությունների արդյունքում կայացված վճիռներ	17 գործ	Ավարտված դատական գործընթացներ
4.1. Արդարացված լրագրողներ	16 լրագրող	Դատարանն անմեղ է ճանաչել
4.2. Դատապարտված լրագրողներ	9 լրագրող	Ընդհանուր դատավճիռը՝ ավելի քան 50 տարվա ազատազրկում
5. Տուգանված լրագրողներ	2 լրագրող	Միասին վճարել են 33320 թուրքական լիրա (մոտ \$969)
6. Ֆիզիկական բռնությունների ենթարկված լրագրողներ	25 լրագրող	Բռնությունները հիմնականում կատարվել են ոստիկանների և քաղաքական խմբավորումների կողմից

7. Բռնությունների ենթարկված լրատվամիջոցներ	5 լրատվամիջոց	Աշխատակազմի կամ գույքի նկատմամբ ոտնձգություններ
8. Սպառնալիքներ ստացած լրագրողներ	82 լրագրող	Սպառնալիքները հիմնականում հնչել են ծայրահեղ աջ խմբերի կողմից
9. RTÜK-ի սահմանած տուգանքներ ընդդիմադիր հեռարձակողների նկատմամբ	Ընդհանուր՝ 72.1 միլիոն թուրքական լիրա	Մոտ 1.92 միլիոն ԱՄՆ դոլար
10. RTÜK-ի կիրառած այլ պատժամիջոցներ	Թիվը հստակ չէ	Դադարեցվել են լրատվամիջոցների հեռարձակումները, արգելվել են որոշ հեռուստա/ռադիոձրագրեր
11. Ճնշումներ «Տեղեկատվության մանիպուլյացիայի մասին» օրենքով	66 հետաքննություն	Հիմնականում ընդդիմադիր և անկախ լրագրողների դեմ
11.1. «Տեղեկատվության մանիպուլյացիայի մասին» օրենքով դատապարտված լրագրողներ	56 լրագրող	2022 թ.-ից ի վեր աճել է օրենքի կիրառումը՝ որպես լրագրողներին լռեցնելու գործիք
12. Թուրքիայի դիրքը Մամուլի ազատության միջազգային վարկանիշում	158-րդ հորիզոնական 180 երկրների շարքում	«Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության՝ 2024 թվականի տվյալներ

Լրագրողների ձերբակալությունները՝ մասնագիտական գործունեություն իրականացնելիս

1. 2022 թ. հոկտեմբերի 25-ին Թուրքիայում՝ Անկարա, Ստամբուլ, Վան, Դիարբեքիր, Ուրֆա և Մարդին քաղաքներում, իրականացված ոստիկանական գործողությունների արդյունքում ձերբակալվել է 11 լրագրող: Միջազգային և եվրոպական լրագրողական ֆեդերացիաները (IFJ/EFJ), միանալով իրենց անդամ կազմակերպություններին՝ Թուրքիայի Լրագրողների միությանը (TGS) և DISK Basın-ış-ին, կոչ են

արել իշխանություններին անհապաղ ազատ արձակել ձերբակալված լրագրողներին և դադարեցնել նրանց դեմ ուղղված ճնշումները:

Ըստ հաղորդագրությունների՝ լրագրողների դեմ գործողությունները նախաձեռնել է Անկարայի գլխավոր դատախազությունը՝ «ահաբեկչության հետ կապված» հետաքննության շրջանակում: Խուզարկվել 10 լրագրողի տուն: DISK Basin-ի տեղեկացմամբ՝ բռնության են ենթարկվել գենքի սպառնալիքի տակ նրանց գետնին են պառկեցրել, ձեռնաշղթայել:

Խուզարկվել են նաև քրդամետ երկու լրատվամիջոցների՝ Mezo-potamya Agency-ի և JINNEWS-ի գրասենյակները: Ձերբակալված լրագրողները մեղադրվել են քրդական արգելված խմբավորումների հետ կապեր ունենալու մեջ: Լրագրողների նկատմամբ սահմանվել է 24-ժամյա սահմանափակում՝ ներառյալ փաստաբանների մուտքի արգելքը: Նրանց աշխատավայրերում ևս խուզարկություններ են իրականացվել: Ըստ Mezo-potamya լրատվամիջոցի՝ ոստիկանությունն առգրավել է ավելի քան 100 գիրք, համակարգիչներ, թերթեր, քրդերեն ամսագրեր և անձնագրեր:

2022 թ. հոկտեմբերի 13-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովը ընդունել է լայնորեն քննադատված նոր օրենսդրական փաթեթ, որը սահմանում է մինչև երեք տարվա ազատազրկում «սուտ և ապատեղեկատվություն» տարածելու համար: Օրենքը նախատեսում է վերահսկողություն առցանց տեղեկատվության նկատմամբ և, ըստ լրագրողական կազմակերպությունների, օգտագործվում է լրատվամիջոցների դեմ ճնշումներ գործադրելու նպատակով¹:

2. 2025 թվականի փետրվարի 18-ին Թուրքիայում ձերբակալվել են լրագրողներ Էլիֆ Աքգյուլը, Էրչումենթ Աքդենիզը, Յըլդըզ Թարը և Էնդեր Իմրենը: Նրանք 24 ժամով զրկվել են փաստաբանի ծառայությունից: Ստամբուլի դատախազությունը հայտնել է, որ ձերբակալությունները կապված են քրդամետ «ժողովրդավարական կոնգրես»-ի դեմ իրականացվող գործողությունների հետ:

¹ IFJ/International Freedom of Journalists/, Turkey: Eleven journalists arrested following raids, see more details here: https://www.ifj.org/media-centre/news/detail/category/impunity-2022/article/turkey-eleven-journalists-arrested-following-raids?utm_source (16.05.2025).

«Բուրսա Մուհալիֆ» թերթի խմբագիր Օզան Կապլանօղլուն բանտարկվել է՝ 2013 թ. բողոքի ցույցի ժամանակ էրդողանին վիրավորելու մեղադրանքով: Լրագրող Բերիթան Ջանյոզերը դատապարտվել է մեկ տարի երեք ամսվա ազատազրկման՝ «ահաբեկչական կազմակերպության քարոզչության» համար՝ 2015 թ. սոցցանցային գրառումների հիման վրա:

Ըստ Միջազգային լրագրողական ֆեդերացիայի (IFJ)՝ միայն 2025 թ. հունվարին Թուրքիայում ձերբակալվել են առնվազն 9 լրագրող, 6-ը դատապարտվել են, 23-ի նկատմամբ քննչական գործընթացներ են սկսվել:

IFJ-ն, EFJ-ն և լրագրողական այլ միավորումներ դատապարտել են այս զարգացումները՝ ընդգծելով, որ Թուրքիան շարունակում է մամուլի ազատության խիստ խախտումների քաղաքականությունը¹:

3. Շվեդ լրագրող ժակիմ Մեդինին կալանավորվել է Թուրքիայում. նա մեղադրվել է նախագահին վիրավորելու և ահաբեկչական կազմավորումների հետ առնչություններ ունենալու համար: Ժակիմ Մեդինը անկախ լրագրող է՝ շվեդական Dagens ETC թերթի հատուկ թղթակից: 2025 թ. մարտի 30-ից գտնվում է Ստամբուլի Սիլիվրի շրջանի Մարմարայի բանտում: Նրան մեղադրանքներ են առաջադրվել Թուրքիայի Քրեական օրենսգրքի մի քանի հոդվածներով: Դրանց թվում են Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանին վիրավորելը, «ահաբեկչական կազմակերպության անդամակցությունը» և «ահաբեկչության քարոզչություն իրականացնելը»:

Մեդինը ձերբակալվել էր մարտի 27-ին Ստամբուլ ժամանելուն պես: Ըստ մեղադրական եզրակացության՝ նրա դեմ հարուցված գործը հիմնված է 2023 թ. Ստոկհոլմում ՊԿԿ-ին համակիր ցուցարարների բողոքի ակցիան լուսաբանելու և Հյուսիսային Իրաքի Քուրդիստանի տարբեր շրջաններ կատարած լրագրողական այցերի վրա:

Լրագրողներ առանց սահմանների (RSF) կազմակերպության՝ Թուրքիայում ներկայացուցիչ էրոլ Օնդերօղլուն հայտարարել է. «Նախագահին վիրավորելու մասին օրենքը հակասում է մարդու իրավունքների միջազգային ստանդարտներին և վերածվել է քննադատ լրագրողների

¹ NUJ /National Union of Journalists/, More journalists detained in Turkey, 24 Feb 2025, see more details here: https://www.nuj.org.uk/resource/more-journalists-detained-in-turkey.html?utm_source (16.05.2025).

հանդեպ հետապնդումների գործիքի: Ժակիմ Մեդինը, որը մեկ ամիս է՝ պահվում է կալանքի տակ առանց օրինական հիմքի, պետք է անհապաղ ազատ արձակվի, ինչպես նաև բոլոր մյուս լրագրողները, որոնք անարդարացիորեն կալանավորված են իրենց մասնագիտական գործունեության համար»: RSF-ի տվյալներով՝ Մեդինի ձերբակալությունը ուղղակիորեն պայմանավորված է նրա լրագրողական գործունեությամբ: Նա Թուրքիա էր ժամանել՝ լուսաբանելու երկրում ժողովրդավարական շարժումները և քաղաքական զարգացումները¹:

Դատական հետապնդումներ և դատավճիռներ

1. 2024 թ. դեկտեմբերի 23-ին Լրագրողների պաշտպանության կոմիտեն (CPI) դատապարտել է Ստամբուլում լրագրողների և լրատվամիջոցների աշխատակիցների ձերբակալությունները, որոնք մեղադրվել են իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելու համար: Կոմիտեն թուրքական իշխանություններին կոչ է արել նրանց անհապաղ ազատ արձակել:

Դեկտեմբերի 20-ին Սիրիայի հյուսիսում թուրքական անօդաչու թռչող սարքի հարվածից սպանված ազգությամբ քուրդ, Թուրքիայի քաղաքացիություն ունեցող լրագրողներ Ժիհան Բելքինի և Նազիմ Դաշդանի հիշատակի ցույցի ժամանակ ոստիկանությունը ձերբակալել է մի քանի տասնյակ մարդու, այդ թվում՝ լրագրողների:

Նրանք մեղադրվել են ահաբեկչական քարոզչության և պետական անվտանգությանը սպառնացող գործողությունների մեջ՝ ցույցը և քրդամետ խմբերի գործունեությունը լուսաբանելու համար: CPI-ն շեշտում է, որ լրագրողներին պետք է թույլատրվի կատարել իրենց աշխատանքը՝ առանց հետապնդման և խոչընդոտների, և կոչ է անում անմիջապես ազատ արձակել բոլոր ձերբակալվածներին²:

¹ RSF /Reporters Without Borders/, Who is Joakim Medin, the Swedish journalist who could face over 27 years in Turkish prison?, see more details here: <https://rsf.org/en/who-joakim-medin-swedish-journalist-who-could-face-over-27-years-turkish-prison> (16.05.2025).
² HRWF, Turkey jails 7 journalists and media workers, places one under house arrest, see more details here: https://hrwf.eu/turkey-jails-7-journalists-and-media-workers-places-one-under-house-arrest/?utm_source (16.05.2025).

2. Թուրք լրագրողներին սպառնում է ազատագրվում՝ դատական կոռուպցիայի մասին տեղեկությունների տարածելու համար:

2024 թ. հունվարի 23–ին Անկարայի դատարանում դատախազը պահանջել է ազատագրվել լրագրողներ Ֆարուք Էրենին և Ֆուրհան Քարաբային՝ «ահաբեկչության դեմ պայքարող պաշտոնյաներին թիրախավորելու» մեղադրանքով: Մեղադրանքը կապված է դատական համակարգում կոռուպցիայի վերաբերյալ Քարաբայի հրապարակած հոդվածների և սոցիալական ցանցերում արված մեկնաբանությունների հետ: Դատախազը մեղադրել է նաև «Gerçek Gündem» լրատվական կայքի գլխավոր խմբագիր Էրենին, ըստ նրա՝ վերջինս տեղյակ է եղել Քարաբայի սպասվող հրապարակումների մասին: Քարաբայը ձերբակալվել էր դեկտեմբերին և մեկ շաբաթից ավելի պահվել նախնական կալանքի վայրում: Գործը հարուցվել է Սահմանադրական դատարանի անդամ Իրզան Ֆիդանի բողոքի հիման վրա, ում անունը հիշատակվել էր հրապարակումներում¹:

Բռնություններ և ձերբակալություններ՝ բողոքի ակցիաների ժամանակ

1. 2024 թ. մարտի 17–ին Ստամբուլում Նովրուզի՝ քրդական նոր տարվա տոնակատարության ընթացքում ձերբակալվել է 70 մարդ, իսկ երկու լրագրող ենթարկվել են բռնության:

Ստամբուլի նահանգապետարանը հայտարարել է, որ ձերբակալվածներից 15–ը կանայք են, 55–ը՝ տղամարդիկ: Նրանց մեղադրում են ոստիկանությանը դիմադրություն ցույց տալու, «ահաբեկչական կազմակերպության» օգտին քարոզչություն իրականացնելու մեջ: Երեք ձերբակալվածներ ունեցել են արգելված «Քրդական աշխատավորական կուսակցության» (PKK) հիմնադիր Աբդուլլահ Օջալանի նկարով պաստառներ:

¹ SCF /Stockholm Center for Freedom/, Turkish prosecutor seeks prison sentences for journalists who covered alleged judicial corruption, see more details here: <https://stockholmcf.org/turkish-prosecutor-seeks-prison-sentences-for-journalists-who-covered-alleged-judicial-corruption/> (16.05.2025).

Լրագրողների նկատմամբ բռնություններ

Լրագրող Թուդչե Յըլմազը (Bia.net-ից) բռնության է ենթարկվել ոստիկանների կողմից, երբ փորձել է տեսանկարահանել մեկ այլ անձի նկատմամբ կիրառվող բռնությունը:

Ֆրանսիական AFP գործակալության լրագրող Էյյուլ Դենիզ Յաշարը ենթարկվել է ֆիզիկական բռնության: Նրա խոսքով՝ ոստիկաններն ասել են. «Աղոթի՛ր, որ քեզ օճառի չվերածենք, ինչպես հրեաներին»: Յաշարը ձերբակալվել է, սակայն ազատ է արձակվել հաջորդ օրը¹:

2. Թուրքիայի հարավարևելյան շրջաններում քաղաքապետերի պաշտոնանկության դեմ անցկացված բողոքի ակցիաների ընթացքում ձերբակալվել են տասնյակ մարդիկ, այդ թվում՝ լրագրողներ²:

Սպանություններ և բռնություններ՝ ռազմական գործողությունների ժամանակ

1. Թուրքական անօդաչու թռչող սարքի հարվածից Սիրիայում զոհվել է երկու քուրդ լրագրող

2024 թ. դեկտեմբերի 20-ին Սիրիայի հյուսիսում թուրքական անօդաչուի հարվածից զոհվել են լրագրողներ Ժիհան Բելքինը և Նազիմ Դաշդանը: Նրանք ուղևորվում էին՝ լուսաբանելու Սիրիայի դեմոկրատական ուժերի և թուրքամետ ուժերի բախումները: Բելքինը աշխատում էր Hawar News Agency-ում (ANHA), Դաշդանը՝ մի քանի լրատվամիջոցներում՝ ANHA, Firat News, Ronahi TV: Նրանց մեքենան ունեցել է «PRESS» տարբերանշանը:

ANHA-ի տնօրեն Աքրամ Բարաքաթը միջադեպը բնութագրել է որպես միտումնավոր հարձակում մամուլի դեմ՝ նշելով, որ Թուրքիան անտեսում է միջազգային իրավունքը:

Լրագրողների պաշտպանության կոմիտեն (CPJ) կոչ է արել անցկացնել անկախ հետաքննություն: Սակայն CPJ-ի դիմումները մնացել են անպատասխան³:

¹ BalkanInsight, Reporters Attacked, Dozens Detained, at Kurdish Celebration in Istanbul, see more details here: https://balkaninsight.com/2024/03/18/reporters-attacked-dozens-detained-at-kurdish-celebration-in-istanbul/?utm_source=chatgpt.com (16.05.2025).

² BalkanInsight, Turkish Opposition Condemns Dismissal of Kurdish Mayors for Alleged Terror Ties, see more details here: <https://balkaninsight.com/2024/11/04/turkish-opposition-condemns-dismissal-of-kurdish-mayors-for-alleged-terror-ties/> (16.05.2025).

³ CPJ /Committee to Protect Journalists/, 2 Kurdish journalists killed in suspected Turkish

2. RSF-ը դատապարտում է Իրաքյան Քրդստանում անօդաչուի հարվածից մեդիա աշխատողների սպանությունը

2023 թ. օգոստոսի 23-ին Իրաքյան Քրդստանում անօդաչու թռչող սարքի հարվածից զոհվել են Sterk TV-ի երկու քուրդ լրագրողներ՝ Հերո Բահադենը և Գյուլիստան Թարան, իսկ երրորդը՝ Ռեբին Բաքերը, վիրավորվել է: Հեռուստաալիքը պատկանում է CHATR մեդիա ընկերությանը:

Դեպքը տեղի է ունեցել Սուլեյմանիեի նահանգի Սայիդ Սադիկ քաղաքում: Տեղական աղբյուրների համաձայն՝ անօդաչու թռչող սարքը պատկանել է թուրքական զինված ուժերին, որոնք ակտիվացրել են գործողությունները «Քրդստանի աշխատավորական կուսակցության» դեմ: Սակայն Թուրքիայի պաշտպանության նախարարությունը հայտարարել է, որ հարվածը իրենք չեն հասցրել:

Այդ կապակցությամբ **Լրագրողներ առանց սահմանների** (RSF) կազմակերպությունը հայտարարում է. «Վերջին երկու ամսում երեք մեդիա աշխատողի սպանությամբ Իրաքյան Քրդստանը դարձել է աշխարհի ամենավտանգավոր վայրերից մեկը լրագրողների համար: Մենք կոչ ենք անում քրդական իշխանություններին՝ պարզել հանցագործության բոլոր հանգամանքները, իսկ Թուրքիայի իշխանությունները պետք է պատասխանատվություն կրեն: Անհրաժեշտ է արդարություն Բահադենի և Թարայի համար»¹:

Մի քանի աղմկահարույց գործեր, որոնք ցնցեցին հանրությանը

1. 2024 թ. հոկտեմբերին ձերբակալվեց «Yeni Asya» թերթի գլխավոր խմբագիր Քազըմ Գյուլեչյուզը: Պատճառը՝ իր խմբագրական սյունակում Ֆեթուլլահ Գյուլենի մահվան կապակցությամբ ցավակցություն արտահայտելն էր: Քանի որ Թուրքիայի իշխանությունները Գյուլենին դասել են ահաբեկիչների շարքին՝ մեղադրելով 2016 թվականի հեղաշրջման փորձը կազմակերպելու մեջ, խմբագրի խոսքը որակվեց

drone attack in northern Syria, see more details here: <https://cpj.org/2024/12/2-kurdish-journalists-killed-in-suspected-turkish-drone-attack-in-northern-syria/> (16.05.2025).

¹ RSF /Reporters Without Borders/, RSF condemns drone strike in Iraqi Kurdistan that killed two media workers, wounded third, see more details here: <https://rsf.org/en/rsf-condemns-drone-strike-iraqi-kurdistan-killed-two-media-workers-wounded-third> (16.05.2025).

որպես «ահաբեկչության քարոզչություն»: Այս դեպքը լայն արձագանք գտավ «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության կողմից, որը պահանջեց Գյուլեչյուզի անհապաղ ազատ արձակումը:

Ֆեթուլլահ Գյուլենի մահվան մասին մամուլում հրապարակումների անելը կամ ցավակցական տեքստեր հրապարակելը հիմք էին դարձել լրագրողներին քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Բացի «Yeni Asya»-ի խմբագրից, մի շարք լրագրողներ ենթարկվեցին դատական հետապնդման՝ սոցիալական ցանցերում կատարած գրառումների համար: Նրանց մեծ մասին մեղադրանք առաջադրվեց «ահաբեկչության քարոզչություն» և «հանրային սադրանք» հոդվածներով¹:

2. Շվեդ ակտիվիստ Գրետա Թունբերգը այցելել է² Ստամբուլի «Açık Radyo»՝ իր աջակցությունը հայտնելով ռադիոկայանին, որը փորձում էր պատմել ճշմարտությունը:

Թուրքիայի հեռուստառադիոհանձնաժողովը՝ RTÜK-ը, սկզբում հինգ օրով կասեցրել էր Açık Radyo-ի հաղորդումները՝ ատելություն հրահրելու մեղադրանքով, այնուհետև ամբողջությամբ կասեցրել էր ռադիոկայանի արտոնագիրը:

Պատճառն ապրիլին եթեր հեռարձակված հաղորդումներ էր, որի ընթացքում հյուրերից մեկը 1915 թ. հայերի կոտորածները որակել էր Օսմանյան կայսրության կողմից իրականացված «ցեղասպանություն»: Թուրքական իշխանություններն անմիջապես դադարեցրել էին ռադիոյի աշխատանքը՝ հիմնվելով «Ազգային անվտանգությանը սպառնալիք ներկայացնող հրապարակումներ»-ի մասին օրենքի վրա:³

¹ Medya ve Hukuk Çalışmaları Derneği (MLSA), Yeni Asya editor-in-chief Kazım Güleçyüz sentenced to prison, see more details here: <https://www.mlsaturkey.com/en/yeni-asya-editor-in-chief-kazim-gulecyuz-sentenced-to-prison> (16.05.2025).

² France 24, Greta Thunberg visits Turkey radio station closed over Armenia genocide row, see more details here: <https://www.france24.com/en/live-news/20241025-greta-thunberg-visits-turkey-radio-station-closed-over-armenia-genocide-row> (16.05.2025).

³ *Turkish Minute*, 515 journalists prosecuted in Turkey in past 6 months, see more details here: <https://www.turkishminute.com/2024/07/08/515-journalist-prosecuted-turkey-past-6-months-report/> (16.05.2025).

Ընդհանուր վիճակագրություն

2024 թ. առաջին 6 ամիսներին Թուրքիայում 515 լրագրող ենթարկվել է դատական հետապնդման, նրանցից 36-ը դատապարտվել է ազատազրկման կամ խոշոր տուգանքների:

Միայն հունիս ամսին 22 կին լրագրող ներգրավվել է դատավարությունների մեջ, 17-ը՝ առանձին գործերով:

Ընդդիմադիր պատգամավորների տվյալներով՝ միայն հունվար-փետրվարին լրագրողները դատարան են ներկայացել 207 անգամ:

Այսպիսով՝ Թուրքիայում մամուլի և խոսքի ազատության ոտնահարման դեպքերը 2024-2025 թթ. հասել են ռեկորդային քանակի: Տասնյակ լրագրողներ դատապարտվել են իրենց մասնագիտական գործունեության համար: Դատարանները, ոստիկանությունը և հատուկ ծառայությունները գործել են համատեղ՝ անկախ ու քննադատող մեդիան լռեցնելու նպատակով: Այս ամենը լարվածություն է ստեղծել ոչ միայն Թուրքիայի ներքին, այլև արտաքին քաղաքական հարթակում՝ խորացնելով հակասությունները Մարդու իրավունքների միջազգային կազմակերպությունների և եվրոպական միության հետ:

Միջազգային արձագանքները

Մամուլի ազատության պաշտպանությամբ զբաղվող միջազգային կազմակերպությունները՝ «Միջազգային մամուլի ինստիտուտը» (IPI), «Լրագրողների պաշտպանության կոմիտեն» (CPI), «Մամուլի և մեդիայի ազատության եվրոպական կենտրոնը» (ECPMF) և «Լրագրողներ առանց սահմանների» (RSF) միջազգային կազմակերպությունը 2024 թ. նոյեմբերին համատեղ առաքելություն են իրականացրել Թուրքիայում մամուլի ազատության վիճակը գնահատելու համար: Մամուլի ազատության համաշխարհային օրը նրանք թուրքական իշխանություններին ուղղված կոչով են հանդես եկել¹.

- հետ վերցնել «Օտար գործակալների մասին» օրինագիծը, որը լրացուցիչ վտանգ է ներկայացնում միջազգային լրատվամիջոցների հետ աշխատող լրագրողների համար,

¹ ECPMF /European Centre for Media Freedom/, Turkey's Intensifying Media Crackdown Threatens Press Freedom, see more details here: <https://www.ecpmf.eu/turkeys-intensifying-media-crackdown-threatens-press-freedom/> (16.05.2025).

- դադարեցնել լրագրողների նկատմամբ դատական հետապնդումներն ու ոստիկանական բռնությունները,
- իրականացնել RTÜK-ի բարեփոխում՝ ապահովելու դրա քաղաքական անկախությունը և հեռարձակվող լրատվամիջոցների պաշտպանությունը:

Եվրոպայի խորհրդի և Եվրոպայի խորհրդարանի պատգամավորները Թուրքիային կոչ են արել վերականգնել ժողովրդավարական ստանդարտները և դադարեցնել լրագրողների դեմ քրեական գործերը¹:

Ակնհայտ է դառնում, որ թուրքական իշխանությունները հետևողականորեն վերահսկում են են լրատվամիջոցների գործունեությունը, ոտնահարում են խոսքի ազատությունն ու լռեցնում անկախ լրատվամիջոցներին: Այս պայմաններում ժողովրդավարության մասին խոսելն անգամ ավելորդ է: Ստեղծված իրավիճակը վտանգավոր է ոչ միայն լրագրողների, այլև ողջ հասարակության համար, քանի որ խոչընդոտվում է քաղաքացիների՝ ճշգրիտ և բազմակողմանի տեղեկատվություն ստանալու իրավունքը:

Թուրքիայի Ռադիոյի և հեռուստատեսության բարձրագույն խորհուրդ (RTÜK)

RTÜK-ը՝ Թուրքիայի Ռադիոյի և հեռուստատեսության բարձրագույն խորհուրդը, ձևականորեն կոչված է կարգավորելու մեդիա դաշտը, ապահովելու խոսքի ազատությունն ու բազմակարծությունը: Սակայն վերջին տարիների իրադարձությունները վկայում են, որ այն աստիճանաբար վերածվել է քաղաքական վերահսկողության գործիքի: RTÜK-ը շատ դեպքերում առանցքային դեր է խաղում անկախ լրատվամիջոցների դեմ պատժամիջոցներ կիրառելու գործում՝ իր վերահսկողությունը ծառայեցնելով ոչ թե ազատ մամուլի պաշտպանությանը, այլ քննադատող լրատվամիջոցները լռեցնելուն:

¹ Article 19, EU: Act to end Turkey’s abuse of criminal justice system against journalists and writers, see more details here: <https://www.article19.org/resources/eu-expand-measures-end-abuse-turkeys-criminal-justice-system-journalists-writers-human-rights-defenders/> (16.05.2025).

Միջազգային կառույցներն ու մեդիա մասնագետները մտահոգությամբ ընդգծում են, որ խորհրդի որոշումները հաճախ քաղաքականապես ուղղորդված են: RTÜK-ը կորցրել է իր հավասարակշռող դերը և վերածվել իշխանության վերահսկողության գործիքի՝ լրատվամիջոցների ազատությունը սահմանափակելու գործում:

Թուրքիայի Ռադիոյի և հեռուստատեսության բարձրագույն խորհուրդը հիմնադրվել է 1994 թ.՝ որպես անկախ և անաչառ հանրային իրավական մարմին¹: Խորհուրդը բաղկացած է 9 անդամներից, որոնք ընտրվում են Թուրքիայի խորհրդարանի կողմից: Անդամների պաշտոնավարման ժամկետը 6 տարի է, իսկ նախագահն ու փոխնախագահը ընտրվում են 2 տարի ժամկետով: RTÜK-ը նաև վերահսկում է հեռարձակման լիցենզիաները:

Ըստ օրենսդրության՝ տեսալսողական լրատվամիջոցների վերահսկման գործում ունի հետևյալ հիմնական գործառույթները.

- ապահովել խոսքի և տեղեկատվության ազատությունը
- ստեղծել կարծիքների բազմազանություն
- պաշտպանել մեդիայի բազմակարծությունը
- խուսափել մեդիայի կենտրոնացումից՝ ապահովելով մրցակցային միջավայր
- պաշտպանել հանրային շահը:

Խորհրդի եկամուտները ձևավորվում են հեռարձակման լիցենզիաների վճարներից, հեռուստաընկերությունների կապուղիների և ռադիոհաճախականությունների տարեկան վճարներից, ինչպես նաև մեդիա ծառայությունների ընդհանուր կոմերցիոն եկամուտներից՝ բացառելով հովանավորչական գումարները:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների վարչություն

Թուրքական մեդիա դաշտը վերահսկող կարևոր մարմիններից մեկը Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների վարչությունն է (ICTA) (թուրք.՝ Bilgi Teknolojileri ve İletişim Kurumu (BTK)) : Այն նախկինում հայտնի էր «Հեռահաղորդակցության վարչություն» (թուրք.՝ Telekomünikasyon Kurumu (TK)) անվանումով:

¹ RTÜK, About Us, see more details here: <https://www.rtuk.gov.tr/about-us/1749/en> (16.05.2025).

ICTA-ն կամ BTK-ն պատասխանատու է համացանցի հասանելիության ապահովման, ինտերնետային ծառայությունների մատակարարների արտոնագրման, ինչպես նաև՝ սոցիալական ցանցերի՝ Facebook-ի, X-ի, YouTube-ի և այլն, ազատ օգտագործման համար:

Այս կառույցի կողմից ինտերնետ մատակարարներին պարբերաբար ուղարկվում են արգելված բանալի բառեր, որոնք որոնելիս իշխանությունները իրավունք ունեն արգելափակելու որոնման արդյունքները¹:

Թուրքիայում մեդիայի և համացանցի նկատմամբ «օրինականացված» սահմանափակումները

Թուրքիայում մեդիա և համացանցային ազատությունների սահմանափակման համար կիրառվում են մի շարք օրենքներ: Ստորև ներկայացված են այն օրենքները, որոնք Թուրքիայում սահմանափակում են խոսքի և մամուլի ազատությունը:

1. Թուրքիայի թիվ 5651՝ *«Ինտերնետ միջավայրում հրապարակումների կարգավորման և այդ հրապարակումների՝ որպես հանցագործությունների դեմ պայքարի մասին» օրենք*²: Այն ընդունվել է 2007 թվականին: Օրենքն իշխանություններին հնարավորություն է տալիս վերահսկել ինտերնետային բովանդակությունը՝ սահմանափակելով քաղաքացիների, այդ թվում՝ լրատվամիջոցների՝ ինտերնետում ազատ արտահայտվելու իրավունքը: Ըստ օրենքի՝ իշխանություններն, առանց դատարանի որոշման, իրավունք ունեն արգելափակել սոցիալական ցանցերն ու մեդիա հարթակները, եթե դրանց բովանդակությունը համարեն վտանգավոր:

2. *«Ռադիոհեռուստատեսային և ըստ պահանջի մեդիա ծառայությունների մասին» թիվ 6112 օրենք*³: Այս օրենքը կարգավորում է մեդիա ծառայությունների արտոնագրումը և թույլ է տալիս RTÜK-ին հետևելու

¹ Տեր-Մաթևոսյան Վ., Չանգվածային լրատվամիջոցները Թուրքիայում. Զաղաքականություն, սահմանափակումներ և մարտահրավերներ, տե՛ս <https://www.scribd.com/document/720620065> (28.10.2025):

² Kaya, M. B., The Turkish Internet Law: Full Translation of the Law no. 5651 see more details here: <https://mbkaya.com/> (16.05.2025).

³ Audiovisual Media Law, The Law No. 6112 on the Establishment of Radio and Television Enterprises and Their Media, see more details here: <https://www.rtuk.gov.tr/audiovisual-media-law-/4046/en> (16.05.2025).

հեռարձակվող ծրագրերի բովանդակությանը և անհրաժեշտության դեպքում կիրառելու վարչական պատժամիջոցներ:

3. *Թուրքիայի Քրեական օրենսգիրք՝ թիվ 5237 օրենք*¹:

Քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներ ուղղակիորեն սահմանափակում են մամուլի ազատությունը, օրինակ՝

Հոդված 216 – «*Հանրությանը ատելության դրդելը*»: Այն անձը, ով բացահայտորեն թշնամանք է հրահրում սոցիալական տարբեր դասերի, կրոնական, ռասայական տարբեր պատկանելիությունն ունեցող մարդկանց և մարդկանց խմբերի նկատմամբ, պատժվում է 1–3 տարվա ազատազրկմամբ (եթե հասարակական անվտանգության տեսանկյունից նման արարքը վտանգ է ստեղծում):

Հոդված 299 – Յուրաքանչյուր անձ, ով հրապարակայնորեն կվարկաբեկի թուրքական ինքնությանը, Թուրքիայի Հանրապետությանը կամ Թուրքիայի Ազգային մեծ ժողովին, կղատապարտվի 6 ամսից մինչև 3 տարվա ազատազրկման:

Այս հոդվածներով հաճախ են հետապնդվում լրագրողները, գրողները, սոցիալական ցանցերի օգտատերերը:

4. *«Անկեղծության դեմ պայքարի մասին օրենք»* (2022 թ.):

Այս օրենքն ավելի շատ հայտնի է որպես **«Կեղծ լուրերի դեմ պայքարի մասին»** օրենք: Այն ամրապնդում է պետական վերահսկողությունը սոցիալական մեդիայի վրա:

Հոդված 213 – Նոր հոդված Քրեական օրենսգրքում. «հանրային վախ կամ խուճապ» առաջացնող ապատեղեկատվություն տարածողին սպառնում է ազատազրկում 3–4 տարի:

5. *«Հասարակությանը մոլորեցնող կեղծ տեղեկատվության մասին» օրենք*

Հոդված 217 – Յուրաքանչյուր ոք, ով բացահայտորեն մարդկանց դրդում է չենթարկվել օրենքներին, պատժվում է 6 ամսից մինչև 2 տարի ժամկետով ազատազրկմամբ կամ տուգանքով, եթե նման արարքը կարող է խախտել հասարակական կարգը: Այս օրենքը ընդունվել է 2022 թ. և քրեականացնում է «հասարակությանը մոլորեցնող կեղծ տեղեկատվության» տարածումը: Այն լայն քննադատության է արժանացել, քանի որ սահմանափակում է խոսքի ազատությունը:

¹ Criminal Code Law Nr. 5237, see more details here: <https://wipolex-res.wipo.int/edocs/lexdocs/laws/en/tr/tr171en.html> (16.05.2025).

6. Հակահարբեկչական թիվ 3713 օրենք¹:

Այս օրենքը ևս հաճախ օգտագործվում է լրագրողների, գրողների և ակտիվիստների դեմ՝ «ահաբեկչական քարոզչություն» տարածելու մեղադրանքով: Օրենքը լայն կիրառություն ունի և հաճախ քննադատվում է խոսքի ազատության սահմանափակման համար:

Թուրքիայում ազատ խոսքի սահմանափակման այս մեխանիզմներն ամբողջական ազդեցություն կարող են ունենալ միայն այն դեպքում, երբ լրատվամիջոցները՝ որպես հանրային կարծիքի ձևավորման հիմնական աղբյուր, գտնվում են վերահսկելի ու ենթարկվող վիճակում: Այս համատեքստում կարևոր է հասկանալ՝ *ու՞մ են պատկանում Թուրքիայում գործող գլխավոր մեդիա հոլդինգները, և ինչ դեր ունեն դրանք՝ իշխանական նարատիվը ձևավորելու և տարածելու գործում:*

Այժմ վերլուծենք, թե ում ձեռքերում է կենտրոնացած լրատվամիջոցների մեծամասնությունը, և ինչպես է այդ վերահսկողությունը ծառայում քաղաքական նպատակներին:

Մեդիա սեփականատերերի քաղաքական կապերը.

1. **Demirören Holding**

Demirören Holding–ը 2018 թ. 916 միլիոն դոլարով ձեռք բերեց Doğan Media Holding–ի ակտիվները՝ դառնալով Թուրքիայի ամենամեծ մեդիա սեփականատերերից մեկը: Այս ընկերությունը վերահսկում է մի շարք խոշոր լրատվամիջոցներ՝ ներառյալ Hürriyet, Posta, Fanatik, հեռուստաալիքներ՝ Kanal D, CNN Türk և լրատվական գործակալություն՝ DHA:

Ընկերության բաժնետոմսերը պատկանում են Դեմիրօրեն ընտանիքին, որը սերտ կապեր ունի Նախագահ Էրդողանի և իշխող ԱԶԿ կուսակցության հետ: 2014 թվականին հրապարակված ձայնագրություններում Էրդողանն իբր միջամտում է խմբագրական քաղաքականությանը՝ պահանջելով ազատել լրագրողներին:

Ելրա Դեմիրօրենը, որը Demirören Holding–ի վարչության նախագահի դուստրն է, 2019 թ. ապրիլի 13–ին ամուսնացավ Հալուք Քայունջուլի հետ, որը Kalyon Group–ի հիմնադիր Հասան Քայունջուլի որդին է: Նախագահ Էրդողանն ու նրա կինը՝ Էմինե Էրդողանը, նրանց ամուսնության

¹ Law No. 3713 of Turkey to Fight Terrorism, see more details here: <https://legislationline.org/> (16.05.2025).

վկաներն են եղել: Ամուսնությունը մեկնաբանվեց որպես Turkuvaz and Demirören Groups «ընկերությունների միջև ամուսնություն»¹:

2. Albayrak Group

Albayrak Group, որը ղեկավարում է Albayrak Media Holding-ը, տարիներ շարունակ շահել է պետական խոշոր տեղերներ՝ սկսած Ստամբուլի մետրոյի շինարարությունից մինչև թուրքական բանակի համար տանկերի արտադրություն: Այս գործարքները հաճախ ուղեկցվել են սկանդալներով և կոռուպցիոն քննություններով: Albayrak Media Holding-ին են պատկանում “Yeni Şafak” օրաթերթը և երկու հեռուստատալիք: Ընտանիքը հայտնի է իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության ու Նախագահ Էրդողանի հետ իր սերտ կապերով:

Albayrak Group-ը 2000 թ. ունեցել է մոտ 150 միլիոն դոլար եկամուտ, իսկ 2008 թ. նրա շրջանառությունը հասել է մեկ միլիարդի: Մասնավորապես՝ Ալբայրաքները ակտիվ են եղել պետական ծառայությունների և մատակարարման ոլորտում տեղերներ շահելու հարցում:

3. Kalyon Group (Turkuvaz Media)

Kalyon Group-ը հիմնադրվել է 2013 թ.՝ Kalyon Group խորհրդի անդամ Օմեր Ֆարուք Քալյոնջուլի կողմից: Kalyon Group-ը գործում է շինարարության, էներգետիկայի և ենթակառուցվածքների ոլորտներում:

Turkuvaz Medya Yayın Hizmetleri A.Ş.-ն, որը մեդիա ընկերություն է Kalyon Group-ի և Zirve Holding-ի ենթակայության տակ, ունի մոտ 40 միլիոն թուրքական լիրայի կապիտալ (2021 թ. տվյալներով):

Փաստորեն՝ Kalyon Group-ը կամ Turkuvaz Media-ն ամբողջությամբ կամ մասամբ ֆինանսավորվում է Թուրքիայի կառավարության կողմից²:

4. TRT («Թուրքական ռադիոյի և հեռուստատեսության կորպորացիա»)

TRT-ն՝ որպես պետական հեռարձակող, հաճախ քննադատության է ենթարկվում՝ իշխանության տեսակետները տարածելու համար:

¹ Media Ownership Monitor Turkey, 2016, Demirören Holding, see more details here: <https://turkey.mom-rsf.org/en/owners/companies/detail/company/company/show/demiroeren-group/> (16.05.2025).

² Media Ownership Monitor Turkey, 2016, Kalyon Group, see more details here: <https://turkey.mom-rsf.org/en/owners/companies/detail/company/company/show/kalyon-group/> (16.05.2025).

Ընդդիմադիր քաղաքական գործիչները տարիներ շարունակ դժգոհում են TRT-ից՝ կուսակցություններին անհամաչափ լուսաբանելու համար՝ չնայած հանգամանքին, որ այն ֆինանսավորվում է քաղաքացիների վճարած հարկերից:

Թուրքիայի հանրային հեռարձակող «Թուրքական ռադիոյի և հեռուստատեսության կորպորացիան» (TRT) դադարեցրել է Թուրքիայի գլխավոր ընդդիմադիր ուժի ղեկավար Օզգյուր Օզելի ելույթի հեռարձակումը, երբ վերջինս փորձել է քննադատել հեռուստաընկերությանը՝ ընդդիմադիր քաղաքական գործիչներին չլուսաբանելու համար: Իր խոսքում Օզելը նշել է, որ Թուրքիայի Սահմանադրության համաձայն՝ TRT-ն սահմանված է որպես «ինքնավար և անկախ» կազմակերպություն, սակայն գործում է որպես «Արդարություն և զարգացում» կուսակցության (ԱԶԿ) կառավարության խոսափող: Օզելի ներկայացրած թվերը ցույց են տալիս, որ 2024 թ. մարտի 31-ին կայացած տեղական ընտրություններին մասնակցող ընդդիմադիր «Ժողովրդահանրապետական» կուսակցության (CHP) քաղաքապետի թեկնածուների, այդ թվում՝ Ստամբուլի քաղաքապետ Էբրեմ Իմամօղլուի, Անկարայի քաղաքապետ Մանսուր Յավաշի և Իզմիրի քաղաքապետի թեկնածու Ջեմիլ Թուգայի գործունեությունը 2024 թ. հունվարի 1-ից չի լուսաբանվել TRT-ի եթերով, մինչդեռ ԱԶԿ-ի նրանց մրցակիցներից յուրաքանչյուրին անդրադարձ է արվել եթերային առնվազն 30 րոպե:

«Կարծում եմ՝ նրանք մեզ լուսաբանելու են միայն այն ժամանակ, երբ մեր կուսակցության կենտրոնական գրասենյակը այրվի, կամ երբ ես մահանամ: Ես չեմ ուզում, որ TRT-ն լինի իմ հուղարկավորությանը», – հայտարարել է Օզելը¹:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ Թուրքիայում մեդիա դաշտը խիստ կենտրոնացված է և վերահսկվում է իշխանության կողմից, ինչը սահմանափակում է խոսքի ազատությունը և բազմակարծությունը:

Թուրքիայի ընդդիմադիր մեդիան

Թուրքիայում, որտեղ լրատվամիջոցների գերակշիռ մասը վերահսկվում է իշխանությունների կողմից, ընդդիմադիր և անկախ լրատ-

¹ Turkish Minute, State-run TRT stops airing opposition leader's speech in anticipation of criticism, see more details here: <https://turkishminute.com/2024/02/27/state-run-trt-stop-air-opposition-leader-speech-in-anticipation-of-criticism/> (16.05.2025).

վամիջոցները շարունակում են կարևոր դեր ունենալ հասարակության իրազեկվածության, բազմակարծության և քննադատական մտածողության ձևավորման գործում: Չնայած քաղաքական, ֆինանսական և վարչական լուրջ ճնշումներին՝ այդ հարթակները շարունակում են գործել՝ հաճախ ենթարկվելով ֆինանսական տուգանքների, հաճախ զրկվում են լիցենզիայից կամ հայտնվում փակման վտանգի առաջ:

Ստորև ներկայացված աղյուսակում ներկայացված են ճնշումների ենթարկված լրատվամիջոցները՝ ըստ իրենց գործունեության բնույթի և կարգավիճակի¹:

	Անվանում	Տեսակը	Նկարագրություն	Կարգավիճակ
1	Sözcü	Տպագիր օրաթերթ	Ունի ազգայնական ուղղվածություն, հաճախ քննադատում է իշխանություններին	Գործող
2	Cumhuriyet	Տպագիր օրաթերթ	Ունի խմբագրական անկախ ուղղվածություն	Գործող
3	BirGün	Տպագիր օրաթերթ	Ֆինանսավորվում է ՀԿ-ների և արհմիությունների կողմից	Գործող
4	Halk TV	Հեռուստա-ալիք	Ընդդիմադիր ալիք է	Գործող Պարբերաբար տուգանվում է RTÜK-ի կողմից
5	Tele 1	Հեռուստա-ալիք	Ունի խիստ ընդդիմադիր դիրքորոշում	Գործող Հաճախ ենթարկվում է ճնշումների
6	Fox TV	Հեռուստա-ալիք	Համեմատաբար անկախ է	Գործող

¹ BBC News, Turkey media guide, see more details here: <https://www.bbc.com/news/world-europe-17992011> (16.05.2025).

7	Flash Haber	Հեռուստա-ալիք	Ընդդիմադիր լրատվական ալիք է	Գործող Հաճախ ենթարկվում է ճնշումների
8	IMC TV	Հեռուստա-ալիք	Ընդդիմադիր լրատվական ալիք էր, որը լուսաբանում էր քրդական թեմաներ	Փակված (2016)
9	Hayatın Sesi TV	Հեռուստա-ալիք	Սոցիալական ուղղվածությամբ ալիք	Փակված (2016)
10	Özgür Radyo	Ռադիո	Ընդդիմադիր, քրդամետ	Փակված (2016)
11	T24	Առցանց լրատվ.	Անկախ վերլուծական կայք	Գործող
12	Bianet	Առցանց լրատվ.	ԵՄ աջակցությամբ գործող անկախ վերլուծական հարթակ	Գործող
13	MedyaScope	Առցանց լրատվ.	Անկախ վերլուծական հարթակ	Գործող
14	Duvar (Gazete Duvar)	Առցանց լրատվ.	Ընդդիմադիր դիրքորոշում ունեցող վերլուծական կայք	Գործող
15	Voice of America Türkçe	Միջազգային	ԱՄՆ պետական ֆինանսավորմամբ գործող անկախ ռադիոկայան	Գործող RTÜK-ի կողմից պարբերաբար ենթարկվում է ճնշումների
16	Deutsche Welle Türkçe	Միջազգային	Գերմանական պետական ֆինանսավորմամբ գործող անկախ լրատվամիջոց	Գործող RTÜK-ի կողմից պարբերաբար ենթարկվում է ճնշումների
17	Euronews Türkçe	Միջազգային	Եվրոպական հեռուստաալիք	Մասամբ հասանելի

VOA-ն, DW-ն և Euronews-ը Թուրքիայում արգելքի վտանգի տակ են

2022 թ. փետրվարի 21-ին Թուրքիայի մեդիայի կարգավորող մարմինը՝ Ռադիոյի և հեռուստատեսության բարձր խորհուրդը (RTÜK), 72-ժամյա վերջնագիր է հղել ԱՄՆ-ում հիմնված “Voice of America”-ի (VOA), Գերմանիայի պետական “Deutsche Welle”-ի (DW) և “Euronews”-ի թուրքերեն ծառայություններին՝ պահանջելով դիմել՝ առցանց հեռարձակման արտոնագիր ստանալու համար: Հակառակ դեպքում սպառնացել են արգելափակել նրանց ծառայությունները Թուրքիայում¹:

Այս լրատվամիջոցները թուրքերենով հրապարակում են անաչառու հավաստի լրատվություն: RTÜK-ն պնդում է, որ այս բովանդակությունը պետք է հսկվի 2019 թ. ընդունված առցանց հեռարձակման կանոնակարգի համաձայն: Չնայած նախկինում նման վերահսկողությունը հիմնականում տարածվում էր տեղական մեդիայի վրա, սա առաջին դեպքն է, երբ RTÜK-ը փորձում է այդ կանոնները կիրառել միջազգային լրատվամիջոցների նկատմամբ:

“Reuters”-ի տվյալների համաձայն՝ RTÜK-ի խորհուրդը ենթարկվում է նախագահ Էրդոհանի կուսակցությանն ու նրա դաշնակիցներին և հաճախ է տուգանում ընդդիմադիր լրատվամիջոցներին:

DW-ի գործադիր տնօրեն Պետեր Լիմբուրգը նշել է. «Սա տեխնիկական խնդիր չէ: Նպատակը լրատվական բովանդակության վերահսկողությունն է: Թուրքական իշխանությունները կարող են ամբողջ ծառայությունը արգելափակել՝ հենվելով մեկ քննադատական նյութի վրա, եթե այն չընչվի: Սա բացում է գրաքննության դուռը»:

DW-ն ու VOA-ն հայտարարել են, որ պատրաստվում են դատարան դիմել: DW-ն ընդգծում է, որ պետական ֆինանսավորմամբ աշխատելով հանդերձ՝ խստորեն ապահովում է խմբագրական անկախությունը:

VOA-ն նշել է. «Լիցենզավորումը ռադիոյի և հեռուստատեսության համար հասկանալի է, քանի որ դրանք աշխատում են սահմանափակ հաճախականությունների վրա: Դրանց օրենսդրական կարգավորումներն արվում են՝ ի շահ հանրության: Սակայն ինտերնետը

¹ Public Media Alliance-International broadcasters face potential ban in Turkey, see more details here: <https://www.publicmediaalliance.org/international-service-broadcasters-face-potential-ban-in-turkey/> (16.05.2025).

սահմանափակ ռեսուրս չէ, ու այստեղ արտոնագրման միակ նպատակը կարող է լինել գրաքննությունը»:

Euronews-ը հաստատել է, որ չի դիմելու արտոնագրի համար, սակայն համաձայնել է արգելափակել իր անգլերեն տեսանյութերի և ուղիղ հեռարձակման հասանելիությունը թուրքական լսարանի համար՝ RTÜK-ի պահանջով:

Թուրքիայում մամուլի ազատության վրա ճնշումները շարունակաբար ուժեղանում են: «Լրագրողներ առանց սահմանների» (RSF) կազմակերպության տվյալներով՝ «Թուրքական կառավարությունը վերահսկում է ազգային լրատվամիջոցների 90%-ին»:

Տեղական ընդդիմադիր մամուլը հաճախ ենթարկվում է հետապնդումների, իսկ Թուրքիան համարվում է լրագրողների համար աշխարհի ամենավտանգավոր երկրկներից մեկը:

Թուրքիայի բազմաթիվ քաղաքացիներ հետևում են արտասահմանյան լրատվամիջոցներին և սոցիալական մեդիային՝ վստահելի տեղեկատվություն ստանալու համար: Հենց այդ պատճառով էլ թուրքական իշխանությունները փորձում են սահմանափակել նրանց հասանելիությունը:

Միջազգային արձագանքը

«Միջազգային հեռարձակողների ասոցիացիա»-ի (AIB) ղեկավար Սայմոն Սփենսոսիկը քննադատել է RTÜK-ի որոշումը՝ նշելով. «Այս որոշումը ինքնակամ է և հակասում է Եվրոպական այլ կարգավորող մարմինների պրակտիկային: RTÜK-ը անդամակցում է Եվրոպական կարգավորող մարմինների հարթակին»: Նա շեշտել է, որ Թուրքիայի քաղաքացիները կանգնած են անկախ և վստահելի տեղեկատվության աղբյուրներից գրկվելու վտանգի առաջ:

2024 թ. Թուրքիայի նախագահի մամուլի ծառայության ղեկավարությունը հայտարարել է, որ խորհրդարանը պատրաստվում է օրենսդրորեն կարգավորել արտասահմանյան ֆինանսավորում ստացող մեդիան՝ «հանրային կարգի և ճշգրիտ տեղեկատվություն ստանալու իրավունքի պաշտպանության» պատրվակով:

Սակայն այս նախաձեռնությունները դիտարկվում են որպես փորձ՝ վերահսկելու միջազգային լրատվամիջոցների աշխատանքը, որոնք հաճախ վստահելի նորությունների միակ աղբյուրներն են:

Լրատվամիջոցների ազատությունն ու բազմակարծությունը ժողովրդավարության հիմքերն են: Պաշտոնական այս քայլերը, ըստ Public Media Alliance-ի, սպառնում են Թուրքիայի քաղաքացիների իրավունքին՝ ստանալ ճշգրիտ, հավաստի և բազմակողմանի տեղեկատվություն:

Եզրակացություն

Անդրադառնալով թուրքական մեդիային՝ պարզ է դառնում, որ ներկայումս այն գործում է իշխանության լիակատար վերահսկողության պայմաններում: Իշխանությանը «նվիրված» գործարարների կողմից խոշոր մեդիա հոլդինգների սեփականաշնորհումը հանգեցրել է նրան, որ լրատվամիջոցներն այլևս չեն ծառայում հանրությանը՝ որպես տեղեկատվություն ստանալու հավաստի աղբյուր, այլ դարձել են պետության պաշտոնական նարատիվի փոխանցող՝ «իշխանության խոսափող»:

Այս պայմաններում լրագրողները, գրողները, հասարակական կարծիք ձևավորող անհատները ենթարկվում են հետապնդումների՝ հասարակությանն օբյեկտիվ տեղեկատվություն տրամադրելու կամ այլընտրանքային դիտանկյուններ ներկայացնելու համար: Նրանց նկատմամբ հարուցվում են քրեական գործեր՝ «ատելության խոսք», «կեղծ տեղեկատվության տարածում» կամ «հանրային անդորրը խաթարելու» մեղադրանքներով, որոնք ամրագրված են գործող օրենսդրության մեջ և հաճախ օգտագործվում են քաղաքական հակառակորդներին լռեցնելու համար:

Այստեղ կարևոր հարց է առաջանում. մի միջավայրում, որտեղ այլակարծությունն ուղղակի կամ անուղղակի կերպով ճնշվում է, որտեղ վախն է գերիշխում, ի՞նչ է անում հասարակ քաղաքացին: Փորձո՞ւմ է արոյոք ճշգրիտ տեղեկություն որոնել, այլընտրանքային աղբյուրների դիմել, թե՞ համակերպվում է պարտադրվող լռության հետ:

Այս ամենից կարելի է եզրակացություն անել՝ ազատ, բազմակողմանի և վստահելի տեղեկատվություն ստանալու իրավունքը Թուրքիայում լրջորեն խաթարված է: Երբ տեղեկատվական հոսքը միակողմանի է, իսկ ճշմարտության որոնումը՝ վտանգավոր, հասարակությունը զրկվում է իր՝ ինքնուրույն կարծիք կազմելու հնարավորությունից: Սա ոչ միայն տեղեկատվական ազատությունների ճնշում է, այլ նաև սպառնալիք ժողովրդավարական զարգացման և հանրային գիտակցության ձևավորման համար:

TIGRANUHI VARDPARONYAN

*ISEC NAS RA, Department of Oriental Studies,
Email: tigranuhivardparonyan@gmail.com*

“THE PRICE OF SILENCE”: JOURNALISM AS A CRIME IN TURKEY

Keywords: *Turkish media, Freedom of speech, Control of the media, Disinformation, Criminalization, Judicial persecution, Imprisonment of journalists, Restriction on the dissemination of information, Government control, social media restrictions.*

The article focuses on the severe restrictions on freedom of speech and the press in Turkey. It examines the historical development of Turkish media, from the Ottoman Empire to the incumbent Erdoğan regime, and presents numerous cases of pressure, censorship, imprisonment, and killings of journalists. Particular attention is given to the activities of two regulatory bodies—RTÜK and ICTA/BTK—which oversee both traditional and digital media. The study highlights how laws have been instrumentalized to criminalize independent journalism. It also analyzes the concentration of media ownership in the hands of pro-government business groups, the reactions of international organizations, and the state of press freedom in neighboring countries (Georgia, Iran, and Azerbaijan), where Turkey stands out as one of the most repressive. The work concludes that freedom of expression in Turkey is seriously endangered, affecting both journalists and the public’s right to be informed.

**ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐԻ ՄՈՏ
ԹԵՆԳՐԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԱՄԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

Հոդվածում ներկայացվում է սախա (յակուտ) ժողովրդի հավատալիքների, ավանդույթների և կենցաղային առանձնահատկությունների վերլուծությունը՝ հիմնվելով ՌԴ Սախա-Յակուտիայի Հանրապետությունում արտագնա աշխատանքի մեկնած հայերի հետ հարցազրույցների վրա: Չնայած յակուտների մեծ մասը այսօր քրիստոնեության հետևորդներ են, այնուամենայնիվ նրանցից շատերը շարունակում են պահպանել իրենց ավանդական հավատալիքները, որոնք ներառում են երկնային աստծո պաշտամունքը, նախնիների հանդեպ հարգանքը և շամանական ծեսերը:

Հետազոտությունում ներկայացվել են յակուտների հոգևոր կյանքի հիմնական դրսևորումները, ինչպիսիք են «Տենգերե/Ուրյունգ Այի Տոյոն»-ի պաշտամունքը, հոգու («կուտ») հասկացությունը և երեք աշխարհների (վերին, միջին, ստորին) գոյության մասին հավատալիքները: Ուշադրություն է դարձվում նաև յակուտների կենցաղին, սննդակարգին, բնակարանային պայմաններին և սոցիալական սովորույթներին: Հոդվածում ընդգծվում է ժամանակակից յակուտների մշակութային ինքնության պահպանման կարևորությունը, որն արտահայտվում է ավանդույթների, ծեսերի և բնապաշտական աշխարհայացքի միջոցով՝ չնայած քաղաքակրթական փոփոխություններին:

Բանալի բառեր. Յակուտներ, շամանություն, թենգրիականություն, երկնային Աստված, կուտ (հոգի), երեք աշխարհներ, ավանդույթներ, Սախա-Յակուտիա:

Նախաբան

Սախա-թյուրքերի հավատալիքները

Յակուտների մեծ մասն այսօր համարվում է քրիստոնյա: Սակայն մինչ օրս էլ Յակուտիայում առկա են թյուրքական ժողովուրդների հին կրոնական, հոգևոր պատկերացումները: Հայտնի է, որ յակուտների կյանքում երկնային աստծո կրոնը մեծ դեր է խաղում: Յակուտները չեն հրաժարվել հին թյուրքական կրոնից՝ երկնային աստծո պաշտամունքից, նախնիների պաշտամունքից, Կուտ, Սյուր հավատալիքից և շամանականությունից:

Երկրի, մարդկանց և տեսանելի ու անտեսանելի բոլոր էակների արարչի ու տիեզերքի տիրոջը՝ Երկնային աստծուն, յակուտները անվանում են «Տենգերե/Ուրյունգ Այի Տոյոն», որն ընկալվում է և՛ որպես «Երկինք», և՛ որպես ամենամեծ «հոգի»: Չնայած յակուտներն իրենց ավանդազրույցներում, վիպերգերում ու հեքիաթներում Աստծուն անվանել են «Տանգարա», սակայն այսօր հայտնի է, որ նրանք բոլոր հոգիներին են «Տանգարա» անվանում: Նախնիների հոգիներին նվիրված այցելությունները, ընծաները, զոհաբերությունները և այլ ծեսեր բացատրվում են որպես նախնիների պաշտամունք¹:

Յակուտները հոգին կամ կենսական ուժը անվանում են «տին», «կուտ» և «սյուր»: Բոլոր կենդանի արարածների հոգիները կոչվում են «կուտ»: Մարդու հոգին, ըստ նրանց պատկերացումների, կազմված է երեք «կուտից»՝ «բուր-կուտ» (հողի կենսական ուժ), «սալգըն-կուտ» (ջարժվող, փչող կենսական ուժ), «իյե-կուտ» (մայրական կենսական ուժ):

Ըստ յակուտների՝ «կուտը» տրվում է «Ուրյունգ Այի Տոյոն»-ի (Սպիտակ բարի աստծո) կողմից, իսկ այն բերում է «այըսըտ»-ը (բարիքի աստվածուհին): Մարդու կենսական հոգին «սյուր-կուտն» է: Կամերը (շամանները) կարող են վերահսկել այդ «կուտերի» փոփոխությունները, միացնել կամ բաժանել դրանք: Յակուտները հավատում են, որ ամեն նյութական բան ունի հոգի, և նույնիսկ մարդկանց գործերն ունեն իրենց հոգևոր էությունը: Յակուտների հավատալիքներով՝ գոյություն ունի երեք աշխարհ՝ վերին աշխարհ, միջին աշխարհ, ստորին

¹ Yildiz H., Saha (yakut) türkçesinde geleneksel inançlara ait söz varlığı, Pamukkale Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü, 2022, s. 8.

աշխարհ: Կամականությունը (շամանականությունը) մեծ տիեզերք է, որով անցնում են բոլոր աստվածները և հոգիները:

Շամանականությունը՝ որպես թյուրքական մշակույթի ձևավորման մեջ կարևոր դեր խաղացած երևույթ, պահպանել է իր գոյությունը մինչև մեր օրերը: Շամանիզմի շուրջ զարգացել են բազմաթիվ հավատալիքներ ու ավանդույթներ, որոնք մեծ տեղ են գրավում յակուտների կյանքում ու կրոնական հավատալիքներում: Յակուտների շամանիզմը գոյություն է ունեցել կամերի միջոցով: Կամերն այս հավատալիքը մարմնավորել են իրենց կատարած ծեսերով: Շամանը ի վիճակի է հասնելու այնպիսի նպատակների և լուծումների, որոնք սովորական մարդկանց համար մնում են անհասանելի կամ անգիտակցելի: Ընդհանուր առմամբ՝ շամանն այն անհատն է, որը տիրապետում է տիեզերքի գաղտնիքներին, կարողանում է շփվել հոգիների հետ, բուժում է հիվանդություններ, ապահովում հաջողություն ու բարօրություն համայնքում, ցեղային իմաստության կրողն է: Այլ կերպ ասած՝ շամանը օժտված է գերբնական հատկություններով:

Յակուտները տղամարդ կրոնավորին անվանում են «օյուն», իսկ կնոջը՝ «ուդագան»: Նրանք կարող են լինել սպիտակ կամ սև: Բարի գործերը կատարում են սպիտակ շամանները, որոնք կարող են բարձրանալ մինչև երկնքի իններորդ մակարդակ: Հավատալիքներից մեկի համաձայն՝ սախա թյուրքերի պատմության մեջ միայն մեկ օյուն է հասել իններորդ մակարդակին և մինչ օրս չի վերադարձել: Սև շամանները կամ կամերը ճանաչված են որպես ժողովրդական բժիշկներ, որոնք տիրապետում և կիրառում են ժողովրդական բժշկության մեթոդները²:

Շամանության մեջ հոգու թռիչքը (երկինք բարձրանալը կամ ստորգետնյա աշխարհ իջնելը) և էքստազը տեղի են ունենում միաժամանակ: Շամանը բարեկամություն է անում և՛ երկնքի աստված Բայ-Ուլգենի, և՛ հանդերձյալ աշխարհի տիրակալ Էրլիկի, և՛ մյուս աստվածների հետ, նրանց տեսնում է և հետները խոսում: Շամանների հագուստի վրա կան տարբեր նշանակություններ ունեցող խորհրդանիշներ: Նրանք տարբեր գլխարկներ են դնում, դիմակներ օգտագործում:

¹ Yildiz H., Saha (yakut) türkçesinde geleneksel inançlara ait söz varlığı , s. 9.

² Gömeç S., Tarihte ve günümüzde saha türkləri, Tarih Araştırmaları Dergisi, 19(30), 1997, s. 189.

Նրանք նվագում են հատուկ պատկերներով զարդարված իրենց դափը կամ թմբուկը: Անգիտակից՝ տրանսային վիճակի հասնելու համար նրանք ցատկոտում են, թռչկոտում, տարօրինակ ծայներ հանում: Երբեմն էլ ուշաթափվում են: Հոգիների մի մասը պաշտպանում է շամանին, իսկ մյուս մասը պարտավոր է օգնել նրան: Այս հոգիները հիմնականում կենդանիների տեսքով են: Սիբիրյան ցեղերի մոտ դրանք կարող են լինել արջ, գայլ, եղնիկ, նապաստակ և տարբեր թռչուններ, մասնավորապես՝ արծիվ, բու և ագռավ: Օրինակ՝ ստորգետնյա աշխարհի իջնելիս նրան օգնում է «արջի հոգին», իսկ երկինք բարձրանալիս՝ «ծիռու հոգին»: Դափը զարկելով՝ շամանը հավաքում է հոգիներին: Նրա ձեռքի պարանը կամ գավազանը մի աշխարհը մյուսին կապող միջոց կամ ճանապարհ է: Արարողության ժամանակ շամանի բերանից հնչող մխիթարական խոսքերը մարդկանց հանգստացնում են: Նրանք նաև բանավոր ժառանգության պահապաններն են: Ինչպես բուրյաթների մոտ, սախա շամանի բառապաշարը ևս հասնում է 12 հազարի, մինչդեռ ժողովրդի օգտագործած բառերի թիվը չի անցնում 4 հազարից¹:

Սախա թյուրքերի կյանքում երկնային թենգրիի կրոնը կարևոր դեր է խաղացել, և ինչպես նշվեց, շամանական ծեսերն այսօր էլ շարունակում են պահպանել իրենց գոյությունը:

Մեր կատարած դաշտային հետազոտության մեթոդով փորձել ենք պատկերացում կազմել ժամանակակից յակուտների կենցաղի, հավատալիքների, ավանդույթների ու սովորույթների վերաբերյալ: Ախուրյանի շրջանի Ազատան գյուղում կատարվել են հարցազրույցներ ՌԴ Սախա-Յակուտիայի Հանրապետությունում արտագնա աշխատանքի մեկնած հայերի հետ՝ հիմնվելով 1980-2000-ական թվականների նրանց հիշողությունների վրա: Հարցազրույցները իրականացնելու համար առանձնացվել է հարցերի շրջանակ և կազմվել է հարցարան:

1. Օրինակ՝ 1990-ական թվականներին Յակուտիա արտագնա աշխատանքի մեկնած ***Ռուբեն Սկրտչյանը*** նշում է, որ, թեև ներկայում քաղաքաբնակ յակուտները բնակվում են բազմաբնակարան շենքերում, սակայն գյուղերում նրանց տներն հիմնականում փայտից են կառուցված: Գյուղերում խնդիրներ են առաջանում՝

¹ Gömeç S., Saha (yakut) türkçesinde geleneksel inançlara ait söz varlığı, s. 188.

կապված ջրամատակարարման և կոմունալ հարմարությունների բացակայության հետ: Այդ պատճառով յակուտները հաճախ օգտագործում են գետի ջուր: Գյուղական տներում ջեռուցման համար ա օգտագործում են ծուխ: Մնունդը (հիմնականում ձուկ) պահում են սառեցված վիճակում՝ ամբողջ տարվա ընթացքում օգտագործելու համար: Յակուտները երբեմն միսն ուտում են նաև հում վիճակում:

Ծեսեր և հավատալիքներ

Յակուտների հավատալիքների հիմքը շամանիզմն է. կան փայտե գերաններ, որոնց վրա քանդակված են աստվածների ու ոգիների պատկերներ: Ծեսերի ժամանակ յակուտները շուրջպար են կազմում գերանի շուրջը՝ ձայներ արձակելով, շուտ մզզոց են հիշեցնում, քան՝ երգ: Այս գործողությունը համարվում է աղոթքի ձև: Ծեսին մասնակցում են և՛ կանայք, և՛ տղամարդիկ: Շուրջպարի ժամանակ առանձնանում է շամանը, որը տարբերվող հագուստ է կրում և յուրահատուկ գլխարկ ունի: Նա դեկավարում է թմբկահարներին ու մյուս մասնակիցներին:

Յակուտները անտառներում ունեն հատուկ սրբազան վայրեր, որտեղ դնում են սնունդ ու ջուր՝ որպես ընծա տայգայի հոգիներին: Այս արարողությունը նման է մատաղի:

Սիրահարված յակուտ երիտասարդները, ըստ սովորության, իրենց զգացմունքները խոստովանում են լեռներում՝ բղավելով՝ ես սիրում եմ քեզ: Եթե նրանց ձայնը արձագանքում է, դա համարվում է հոգիների օրհնություն: Համբույրի փոխարեն՝ յակուտները քթերով են հպվում միմյանց:

Հարսանեկան ծեսերը նման են ռուսական ավանդույթներին: Թաղումների համար գերեզմանատեղիները փորում են գարնանը, որպեսզի ձմռանը խնդրի առաջ չկանգնեն: Մահացածին հուղարկավորում են նստած դիրքով՝ փաթաթելով շորերի մեջ:

Սրբազան վայրեր այցելելիս յակուտները ծառերին կապում են գունավոր կտորներ: Կան սուրբ ծառեր, որոնք ամբողջությամբ պատված են թելերով ու կտորներով: Նման ծառերը սովորաբար մեկուսացած են. մոտակայքում այլ ծառեր չկան:

Յակուտները հատուկ հարգանքով են վերաբերում եղջերուներին, որոնց միսն ու մորթին օգտագործում են կենցաղում:

Յակուտների մոտ տարածված են նաև գուշակությունները. նրանք հավատում են ոգիների գոյությանը և պաշտում են բնության տարրերը: Հատկապես երկրպագում են Լենա գետին, որը նրանց հնուց ի վեր ապահովել է ձկով: Նրանց բնապաշտական աշխարհայացքն արտահայտվում է շրջակա միջավայրի նկատմամբ հատուկ վերաբերմունքով:

2. 1980-ական թվականներից մինչ օրս Յակուտիայում աշխատած Դեմո Ազատյանը պատմում է, որ յակուտները գյուղերում հիմնականում զբաղվում են որսորդությամբ ու ձկնորսությամբ, իսկ քաղաքներում ժամանակակից կենսակերպ են վարում:

Ծեսեր և ավանդույթներ

Յակուտների մոտ մինչ օրս պահպանվել է հարսնացուին «առևանգելու» ավանդույթը. հարսանիքի ժամանակ փեսացուն պետք է գումար վճարի հարսի ընտանիքին՝ նրան իր տուն տանելու համար: Հարսանեկան ծեսերը, ինչպես արդեն նշեցինք, նման են ռուսական ավանդական հարսանիքներին:

Մահացածին հուղարկավորելու համար նախատեսված փոսի մեջ փորում են ևս մեկ փոս: Հանգուցյալի մարմինը թաղում են առանց դագաղի՝ վրան փայտե տախտակներ դնելով: Թաղման ծեսն իրականացնում են հարազատները: Յակուտները հաճախում են եկեղեցի, այդ թվում՝ հայկական:

Ազգային տոներ

Յակուտների ամենահայտնի տոնը Եսիխն (կամ Էսեխ) է՝ ազգային նոր տարին: Այն նշվում է ապրիլին՝ մեծ շուքով. ժողովուրդը հավաքվում է, ուտում, խմում, պարում ու մրցումներ անցկացնում: Տոնակատարության ընթացքում մասնակիցները բաժանվում են երկու խմբի ու մրցում. պարան են ձգում, գերաններին բարձրանում: Տոնը ուղեկցվում է շուրջպարերով ու երգերով:

Հագուստ և ավանդական տարազ

Յակուտների ազգային տարազները գունազարդ են, հատկապես գերակշռում է կարմիր գույնը: Դրանք զարդարված են ժապավեններով:

Յակուտները ճակատներին կապում են հատուկ կտորներ՝ զարդարված հուլունքներով:

Բնավորության գծեր

Յակուտները խիստ հյուրասեր են: Նրանց միջավայրում գողություններ գրեթե չեն լինում: Նրանց տների դիմաց դրված ձեռնափայտը ցույց էր տալիս, որ տանը մարդ կա. եթե փայտ չկար, նշանակում էր՝ տանտերերը տանը չեն:

Մանդակարգ

Յակուտների սնունդը հիմնականում բաղկացած է մսեղենից ու ձկնեղենից: Հայտնի ուտեստներից է նաև հում սառեցրած ձուկը, որը բարակ կտրատվում ու համեմվում է կարմիր ու սև պղպեղով, աղով:

Սրբավայրեր ու հավատալիքներ

Ճանապարհին հանդիպող հատուկ ծառերը, որոնք ունեն «փռված» տեսք, յակուտները անվանում են շամանի ծառեր: Դրանց ճյուղերին կապում են ժապավեններ, իսկ տակը դնում փող՝ որպես ընծա: Այդ ծառերը համարվում են սրբավայրեր:

Որսորդական ավանդույթներ

Յակուտները հմուտ որսորդներ են. նրանք կրակում են կենդանու աչքին, որպեսզի մորթին չվնասվի: Որսն ունի խիստ սեզոնայնություն. արգելվում է սպանել ձագ ունեցող կենդանուն: Եթե որսը տեղի ունենա արգելված ժամանակ, շամանը պատժում է մեղավորին:

Շամանները զբաղվում են գուշակություններով ու պաշտպանում չար ուժերից: Նրանք օգտագործում են ձիու պոչ, որով հարվածում են չար ոգիներին տնից դուրս վճնդելու համար: Շատ յակուտներ իրենց տներում պահում են ձիու պոչ, սակայն նախքան օգտագործելը շամանը պետք է օրհնի այն:

Եղջերուի կոտոջը կախում էին բակում: Եթե տանը կախեին, դա համարվում էր անհաջողություն բերող: Նրանք լայնորեն օգտագործում են սև աղվեսի ու այլ կենդանիների մորթիներ:

3. 1980-ական թվականներին Յակուտիայի Հանրապետություն արտագնա աշխատանքի մեկնած Լևոն Թամրազյանը պատմում է, որ յակուտները մինչև 1990-ականները տների դռները չեն փակել: Նրանք համարում էին, որ ավելի լավ է բաց թողնել տան դուռը, որպեսզի յուրաքանչյուրն անցնի ու տանի այն, ինչ իրեն պետք է, քան դուռը կոտրի:

Ըստ յակուտների սովորության, եթե տղան ու աղջիկը հավանում էին միմյանց, ամուսնանում էին: Եղել են դեպքեր, երբ սիրահարվել են ամուսանացած կինն ու տղամարդը: Այս դեպքում նրանք միասին փախել են: Մինչև օրս էլ պահպանվել է փախչելու կամ փախցնելու ավանդույթը:

Յակուտների երգերում գերակշռում են կենդանական ձայները, քանի որ նրանք ընդօրինակել են իրենց շրջապատի կենդանիների ձայները: Արարողությունների ժամանակ օգտագործում են լարային գործիքներ:

Թաղման արարողություն

Թաղման ծեսի ժամանակ շամանը արջի ձայն է հանում, որից հետո միայն հանգուցյալին թաղում են: Թաղման արարողությունից 15 րոպե անց յակուտները երեք բաժակ խմիչք են խմում ու սկսում պարել:

Հարսանեկան ավանդույթներ

Փեսան կարմիր ու կանաչ ժապավեններ է կապում: Հարսանիքի ընթացքում վկան հարսին 2 ժամով տանում է արարողությունից, ապա՝ հետ բերում: Հարսանիքների ժամանակ մասնակիցները պարտադիր ծեծկռտուք են սարքում:

Այլ ավանդույթներ

«Յակուտը յակուտ չէ, եթե քիթը ջարդված չէ» ասացվածքը արտահայտում է նրանց կռվարար բնույթը: Յակուտները տոների ժամանակ կրակ են վառում, խոնարհվում են կրակի դիմաց, ապա ջուր են ցողում դեպի երկինք:

4. Արտագնա աշխատանքի մեկնած Սինար Թովմասյանը պատմում է, որ յակուտների հարսանեկան հանդերձանքը հարուստ է զարդարանքներով: Հարսի շորը զարդարված է հուլունքներով, ինչը խորհրդանշում է պտղաբերություն ու բախտ:

Մննդակարգ

Նրանք հաճախ օգտագործում են միս ու ձուկ՝ հում վիճակում: Հատկապես տարածված է ձիու միսը:

Շամանական հավատալիքներ

Գունավոր թելերը կարևոր դեր ունեն յակուտների կյանքում: Նրանք շամանիզմի հետևորդներ են և կարծում են, որ ձեռքին կապված թելերը պաշտպանում ու օգնում են իրենց: Յակուտները հավատում են շամանների: Հատկապես տարածված են «սպիտակ» շամանները, որոնք համարվում են բարի ուժերի կրողներ:

Օրինակ՝ երբ Սինարի ընկերը ծնկի խնդիրներ է ունեցել (հեղուկ էր կուտակվում հոդում), և բժիշկները անգամ վիրահատություններից հետո չէին կարողացել նրան բուժել, նրան տարել են սպիտակ շամանի մոտ: Շամանը հարվածել է դափին և աղոթել՝ անհասկանալի բառեր արտաբերելով, որից հետո, ըստ ականատեսի, այդ մարդը բուժվել է: Այդ «բուժումի» դիմաց շամանին նվիրել են 3 լիտր սպիրտ:

Պարերն ու երաժշտությունը

Յակուտների ավանդական պարերը, ինչպես օրինակ՝ «յուխըրը», կատարվում են խմբով՝ ձեռք ձեռքի տված: Պարողները երգում են, իսկ երաժշտությունը հիմնված է բնության ձայների վրա:

Անտառի դերը

Նրանք հմուտ որսորդներ են, և անտառները կարևոր դեր ունեն նրանց կենսակերպում: Գյուղերը փոքր են՝ առավելագույնը 100 տուն կա, իսկ բնակիչները միմյանց հետ կապված են ընտանեկան կամ բարեկամական հարաբերություններով:

Շամանի ծառը

Յակուտսկ քաղաքից դուրս գալիս՝ Նամսկի շրջան մտնելու ճանապարհին, կա մի հսկա ծառ, որը ամբողջությամբ ծածկված է կտորներով ու ժապավեններով: Այն կոչվում է «Շամանի ծառ»: Տեղացիները հավատում են, որ այդ ճանապարհով անցնողը պետք է նվեր տա շամանին՝ կտոր կապելով ծառին, մանրադրամ դնելով կամ ծխախոտ զոհաբերելով: Այս ավանդույթին հետևում են նույնիսկ տեղացի հայերը, որոնք ապրում են Յակուտիայում:

5. Մանուշ Վալեսյանը 2000-ականներից մինչ օրս բնակվում է Յակուտիայում:

Նա նշում է, որ Յակուտիա քաղաքը շատ է փոխվել՝ թե՛ իր ճարտարապետությամբ, թե՛ բնակչության հոսքով: Բայց այս տարիների ընթացքում անփոփոխ են մնացել տեղի յակուտների ծեսերը, նիստ ու կացը, հավատքն ու սերը բնության և կենդանիների հանդեպ: Դա պայմանավորված է նրանով, որ փոքրերի կապը մեծերի հետ շատ սերտ է: Նրանք ունեն մի սովորույթ. իրենց փոքր երեխաներին մինչև 6 տարեկանը հանձնում են հարազատների դաստիարակությանը՝ անկախ նրանից՝ հորեղբայրն է, մորաքույրը, տատիկը, թե պապիկը:

Ահա թե ինչու, լինելով փոքրաթիվ, նրանք չեն կորցնում իրենց ավանդույթները, լեզուն ու հավատքը: Չնայած յակուտների մեծ մասը մկրտված է քրիստոնեական եկեղեցում, մի մասն էլ մուսուլման է, բայց նրանք հավատում են նաև շամաններին: Մինչ օրս նորակառույց շենքի բացման արարողությունը տեղի է ունենում շամանի օրհնությամբ: Միջոցառումներն ու արարողությունները պարտադիր կատարվում են նրանց ներկայությամբ:

Յակուտները մի սովորույթ ունեն, որին տեղաբնիկ հայերը ևս հետևում են. էքսկուրսիաների, որսի կամ սունկ ու հատապտուղ հավաքելու ժամանակ նախ «կերակրում են» հողին, ջրին, կրակին, որից հետո նոր իրենք ուտում են:

Իհարկե, գյուղերը՝ համեմատած քաղաքների և մայրաքաղաքի հետ, շատ են տարբերվում՝ թե՛ զարգացման մակարդակով, թե՛ բնակչությամբ: Զգացվում է, որ քաղաքի և գյուղի բնակիչների միջև որոշակի անվստահություն կա: Քաղաքներում բնակվող յակուտները երբեմն չեն հասկանում գյուղական բնակավայրերի բնակիչների բարբառը: Այդ

պատճառով գյուղացիները հաճախ վիրավորում են քաղաքաբնակներին՝ իրենց բարբառը, երբեմն նաև լեզուն չիմանալու համար (քաղաքաբնակների մի մասը ռուսախոս է), ինչն էլ հանգեցնում է երիտասարդների միջև վեճերի:

Մենդի առումով Նրանք պահպանում են իրենց ավանդական խոհանոցը. ուտում են ձիու միս, արյունով երշիկ, իսկ որպես խմիչք օգտագործում են նաև ձիու կաթից պատրաստված կումիսը:

Թյուրքական տարբեր ժողովուրդների մշակույթում առ այսօր պահպանվել են բազմաթիվ թենգրիական և շամանական ծեսեր, որոնք շարունակում են գոյություն ունենալ՝ վերափոխվելով կամ պահպանելով իրենց սկզբնական էությունը: Այս հավատալիքները խորապես արմատավորված են յակուտ հասարակության մեջ և դրսևորվում են տարբեր ձևերով՝ սկսած բուժման նպատակով իրականացվող ծեսերից մինչև տոնակատարություններ:

Մասնագիտական գրականության և դաշտային հարցումների տվյալների ուսումնասիրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ ժամանակակից թյուրքական մի շարք ժողովուրդների մշակույթում շամանական և թենգրիական ավանդույթները դարձել են կենսակերպի անբաժանելի մաս՝ միաձուլվելով յակուտների ժամանակակից հավատալիքներին:

Եզրակացություն

- Սախա-Յակուտիայի թյուրքախոսների հավատալիքների և ավանդույթների վերաբերյալ կատարված այս ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թենգրիականությունն ու շամանությունը խորապես արմատավորված են յակուտների մշակութային և հոգևոր կյանքում: Նրանք շարունակում են պահպանել իրենց հավատալիքները՝ միաձուլելով դրանք ժամանակակից կրոնական պրակտիկաների հետ:

- Յակուտների հոգևոր աշխարհը կառուցված է երկնային աստծո պաշտամունքի շուրջ, որն ընկալվում է որպես տիեզերքի արարիչ: Նրանց համար կարևոր է նաև նախնիների պաշտամունքը, որն արտահայտվում է զոհաբերությունների, ընծաների և սրբազան վայրեր այցելությունների միջոցով: Շամանները («օյուն» և «ուդագան») հանդես են գալիս որպես միջնորդներ աստվածների, հոգիների և մարդկանց

միջև՝ կատարելով բուժման, գուշակության և համայնքի բարօրությանը նպաստող ծեսեր:

- Յակուտների առօրյա կյանքում կարևոր դեր ունեն բնության պաշտամունքը, կենդանիների հանդեպ հարգանքը և սրբազան տարրերի (կրակ, ջուր, հող) նկատմամբ ունեցած հատուկ վերաբերմունքը: Այս ամենն արտահայտվում է նրանց ծեսերում, տոներում, հարսանիքների և թաղման արարողություններում, ինչպես նաև՝ սննդակարգի ու կենցաղի մեջ:

- Յակուտիայում բնակվող կամ այնտեղ արտագնա աշխատանքի մեկնած հայերի հետ հարցազրույցները հաստատում են, որ յակուտները, չնայած զարգացմանը, շարունակում են պահպանել իրենց ավանդույթները, հատկապես գյուղական համայնքներում: Նրանց մշակույթը բնութագրվում է հավատքի սինկրետիզմով, համայնքային ամուր կապերով և բնապաշտական աշխարհայացքով:

AZGANUSH MKRTCHYAN

*ISEC NAS RA, Department of Oriental Studies,
Email: agamkrtchyan2001@gmail.com*

CONTEMPORARY MANIFESTATIONS OF TENGRISM AND SHAMANISM AMONG TURKIC PEOPLES

Keywords: *Yakuts, Shamanism, Tengrism, Heavenly God, Kut (soul), Three Worlds, Traditions, Sakha–Yakutia.*

This study examines the beliefs, traditions, and daily life of the Sakha–Yakut Turks, based on interviews with Armenian migrants who worked in the Sakha–Yakutia Republic of Russia. Despite being officially Christian, the Yakuts preserve their pre–Christian beliefs, including the worship of the Sky God, ancestor veneration, and shamanic rituals. The research examines the core manifestations of Yakut spiritual life, including the concept of the soul (“kut”), beliefs about the three worlds (upper, middle, lower), and

the role of shamans (“oyun” and “udagan”) as mediators between deities and humans. Additionally, it explores Yakut daily life, dietary practices, ceremonial traditions, and social customs. This study holds significant importance for the preservation of cultural heritage, as it demonstrates how ancient traditions withstand modern transformations while maintaining their essence. It also contributes to intercultural dialogue by revealing the interactions between Turkic and Armenian communities.

**ԹՈՒՐՔԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԵՐԸ
ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

21-րդ դարում Մերձավոր Արևելքը շարունակում է լինել գլոբալ և տարածաշրջանային դերակատարների շահերի ու հետաքրքրությունների բախման թատերաբեմ: Այդ գործընթացներում ակտիվորեն ներգրավված է Թուրքիան, որը տարածաշրջանային և միջազգային ազդեցությունը մեծացնելու նպատակով իրականացնում է նաև ակտիվ, ագրեսիվ քաղաքականություն: Հատուկ ուշադրություն է դարձվում նաև ռազմավարական գործիքակազմից փափուկ ուժի կիրառմանը, որի միջոցով Թուրքիան նպատակ ունի ազդելու տարածաշրջանի երկրների հասարակական ընկալումների, մշակութային ինքնության և քաղաքական կողմնորոշումների վրա:

Հոդվածի նպատակն է վերլուծել Թուրքիայի կողմից Մերձավոր Արևելքի երկրներում կիրառվող փափուկ ուժի քաղաքական ու սոցիալ-հոգեբանական մեխանիզմները՝ դիտարկելով դրանց ազդեցությունը հասարակական ընկալումների, արժեհամակարգային փոփոխությունների ու քաղաքական գործընթացների վրա: Ուսումնասիրվում են նաև «փափուկ ուժի» տեսական հիմքերը, սոցիալական նույնականացման գործընթացները, նեոսոմանիզմի գաղափարախոսական դրսևորումները, մշակութային և հանրային դիվանագիտության ռազմավարությունները, ինչպես նաև էվֆեմիզմների կիրառման և կոլեկտիվ հիշողության վերափոխման մոդելները: Հետազոտությունն իրականացվում է միջառարկայական շրջանակներում՝ համադրելով միջազգային հարաբերությունների և սոցիալական հոգեբանության տեսությունները:

Բանալի բառեր՝ Մերձավոր Արևելք, Թուրքիա, փափուկ ուժ, սոցիալական նույնականացման տեսություն, նեոսոմանիզմ, էվֆեմիզմ:

Նախաբան

Պետությունները, ազգերն ու ժողովուրդները կարող են նվաճվել ոչ միայն ռազմական ճանապարհով («կոշտ ուժ» hard power), այլև դեմոգրաֆիկ, քաղաքական, տնտեսական, մշակութային, գաղափարական մակարդակներում: Քաղաքական էքսպանսիան կարող է լինել արդյունավետ և տևական միայն այն պարագայում, երբ ուղեկցվում է տնտեսական, մշակութային և գաղափարական գերազանցության հաստատմամբ: Տնտեսական էքսպանսիան դրսևորվում է ոչ միայն այլ ժողովուրդներին պատկանող ռեսուրսների յուրացմամբ և տնօրինմամբ, այլև՝ էժան աշխատուժի շահագործմամբ, շուկաների նկատմամբ մենաշնորհի հաստատմամբ և տնտեսական կախվածության մեխանիզմների ստեղծմամբ: Թեև նման տնտեսական գերազանցության հաստատումն առաջին հայացքից առավելություն է տալիս, սակայն ոչ միշտ է տևական գերակայություն ապահովում, քանի որ ժամանակի ընթացքում ժողովուրդներն ու պետությունները կարող են հաղթահարել կախվածությունը և վերականգնել տնտեսական անկախությունը: Ի տարբերություն վերոնշյալի՝ հոգևոր-մշակութային, դեմոգրաֆիկ և գաղափարական մակարդակներում իրականացվող էքսպանսիան խորքային, հաճախ անշրջելի փոփոխություններ է առաջացնում նվաճված հասարակություններում: Դեմոգրաֆիկ էքսպանսիան կարող է վերածնել տարածաշրջանի ժողովրդագրական պատկերը՝ փոխելով էթնիկական հարաբերակցությունները և ազդելով սոցիալ-մշակութային միջավայրի վրա: Այդ գործընթացը, փոխազդելով մշակութային և արժեքային փոխակերպումների հետ, ժամանակի ընթացքում հանգեցնում է նվաճված տարածքներում ինքնության, արժեհամակարգերի և քաղաքական լեգիտիմության վերաիմաստավորման:

Միաժամանակ «էքսպանսիոնիստական համակարգը անքակտելիորեն կապված է էքսպանսիան իրականացնող հասարակության առաջնահերթությունների հետ, և, հետևաբար, բոլոր երկրների և ժամանակաշրջանների համար չկա մեկ սցենար»: Միջազգային հարաբերությունների սուբյեկտների կողմից «սեփական ազդեցությունը՝ քաղաքական, մշակութային, տնտեսական, ընդլայնելու ձգտումը բխում

¹ Шапталов Б. Н., Теория и практика экспансионизма: опыт сильных держав, Москва, 2009, с. 384.

է յուրաքանչյուր քաղաքակրթական ընդհանրության բնույթից: Այդ ձգտումը դրսևորվում է տարբեր ձևերով և պայմանավորված է տվյալ քաղաքակրթության ներքին արժեքային և մշակութային հիմքերով¹:

21-րդ դարի աշխարհաքաղաքական վերաձևումների և համաշխարհային ուժային կենտրոնների վերադասավորումների պայմաններում Մերձավոր Արևելքը շարունակում է առանցքային դերակատարություն ունենալ: Այդ գործընթացներում ակտիվորեն ներգրավված է Թուրքիան, որն օգտագործում է ռազմավարական լայն գործիքակազմ՝ իր ազդեցությունը մեծացնելու նպատակով: Հատուկ ուշադրություն է դարձվում փափուկ ուժի կիրառմանը, որի միջոցով Թուրքիան նպատակ ունի ազդելու տարածաշրջանի երկրների հասարակական ընկալումների, մշակութային ինքնության և քաղաքական կողմնորոշումների վրա: Խնդիրը հատկապես արդիական է՝ հաշվի առնելով Մերձավոր Արևելքում շարունակվող քաղաքական անկայունությունը, արտաքին դերակատարների միջև սրվող մրցակցությունը, ինչպես նաև՝ այն հանգամանքը, որ տարածաշրջանը զգայուն է թե՛ գաղափարական, թե՛ մշակութային ներթափանցումների նկատմամբ:

Պատմաքաղաքական ակնարկ

Վերջին տասնամյակներում Մերձավոր Արևելքում ընթացող խորքային փոխակերպումները՝ պայմանավորված ներքաղաքական ճգնաժամերով, քաղաքական բևեռացմամբ, արտաքին դերակատարների ազդեցության վերադասավորմամբ և միջազգային համակարգում ուժերի վերաբաշխմամբ, նոր մարտահրավերների առջև են կանգնեցրել տարածաշրջանը: Հերթական ակտիվ փուլը սկսվեց 2022 թ. ՌԴ-Ուկրաինա, իսկ իրականում՝ ՌԴ-Արևմուտք առճակատման արդյունքում ստեղծված իրավիճակով, երբ Ուկրաինայի հետ սկսված պատերազմը զգալիորեն սահմանափակեց մերձավորարևելյան տարածաշրջանում Ռուսաստանի մասնկրելու հնարավորությունը², միաժամանակ մեծացրեց տարածաշրջանային երկրների էներգետիկ

¹ Киселев С. Г., Экспансия как имманентное свойство цивилизации, Вестник Московского государственного лингвистического университета, Общественные науки, 2022, Вып. 4 (849), с. 34-38.

² Норлен Т., Как война в Украине отражается на российском влиянии в регионе Ближнего Востока и Северной Африки, (15.11.2023), <https://perconcordiam.com/ru> (22.05.2025).

դերակատարությունը: Հաջորդ կարևոր իրադարձությունը 2024 թ. դեկտեմբերի 8-ին Սիրիայի քաղաքական իշխանության փոփոխությունն էր¹, որի արդյունքում ռուսամետ և իրանամետ կողմնորոշում ունեցող Բաշար ալ Ասադի իշխանությանը փոխարինեց «Հայաթ Թահրիր ալ-Շամ» խմբավորման առաջնորդ Ահմեդ ալ-Շարաան: Նրա ղեկավարությամբ Սիրիան ձգտում է զարգացնել հարաբերությունները ոչ միայն արաբական աշխարհի պետությունների (Կատար, Սաուդյան Արաբիա, ԱՄԷ)², այլև Արևմուտքի ու Աֆրիկայի երկրների, Թուրքիայի³, ինչպես նաև միջազգային տարբեր կառույցների ու կազմակերպությունների հետ:

Զարգացումների նման ընթացքը հնարավորություն է ընձեռել աշխարհաքաղաքական մյուս դերակատարներին, մասնավորապես՝ Թուրքիային, մեծացնելու իր ազդեցությունն ու կշիռը տարածաշրջանում՝ դիրքավորվելով որպես միջնորդ և «խաղաղության» հաստատման ջատագով⁴: 21-րդ դարում Թուրքիայի արտաքին քաղաքականությունը ենթարկվել է խորքային փոփոխությունների. 2002 թ. «Ազատություն և զարգացում» կուսակցության իշխանության գալով՝ վերաձևակերպվեցին երկրի արտաքին քաղաքական նախապատվություններն ու առաջնահերթությունները: Այդ տարիներին Թուրքիայի ԱԳ նախարար Ահմեդ Դավութօղլուն հանդես եկավ «զրո խնդիր հարևանների հետ» հայեցակարգով: Նրա գաղափարներն ամփոփվեցին 2001 թ. լույս տեսած «Ռազմավարական խորք» աշխատության մեջ, որն ընդունված է համարել նեոսմանիզմի տեսության հիմքը:

¹ Николай Л., В Сирии назначили главу временного правительства, (10.12.2024), <https://www.dw.com/ru/glavoj-vremennogo-pravitelstva-sirii-stal-soratnik-lidera-islamistov/a-71014944> (22.05.2025).

² Президент Аш-Шараа: Сирия находится на своем естественном месте среди арабских братьев, 05.03.2025, <https://sana.sy/ru/?p=380521> (22.05.2025).

³ Сирия и Турция обсудили сотрудничество в финансовой сфере, (05.03.2025), <https://sana.sy/ru/?p=383023> (22.05.2025).

⁴ Турция предложила посредничество в сирийском кризисе, 2 декабря 2024 г., <https://www.trussian.com/article/18239065> (22.05.2025); Мишин Л. Д., Посредничество Турции как попытка встраивания в формирующуюся многополярность на примере Сирийских, Ливийских, Нагорно-Карабахских и Украинских конфликтов, Конфликтология, 2024. № 3, https://nbpublish.com/library_read_article.php?id=71692 (22.05.2025); Starting in Syria, the United States must prevent a Turkish-Sunni bloc from replacing the Iranian-Shia bloc as the regional troublemaker, <https://nationalinterest.org/blog/middle-east-watch/the-middle-east-s-new-axis> (22.05.2025).

Դավութօղլուի մոտեցմամբ՝ Թուրքիան, առաջատար տերությունների հետ հարաբերությունների զարգացմանը զուգահեռ, պետք է բարելավի և խորացնի մշակութային ու տնտեսական դիվանագիտությունը՝ իր արտաքին քաղաքականության նպատակներին հասնելու համար: Նրա տեսության մեջ «փափուկ ուժը» ոչ թե առանձին բաղադրիչ էր, այլ ամբողջական մոտեցման անբաժան մասն էր կազմում¹: 2003 թ. Իրաքի պատերազմի հետևանքով Միացյալ Նահանգների՝ որպես տարածաշրջանում կարգուկանոն ապահովող պետության նկատմամբ վստահության կորուստը, արաբական աշխարհում առկա տարածայնությունները և արաբ-իսրայելյան հակամարտության սրացումը ևս նպաստավոր պայմաններ ստեղծեցին Թուրքիայի համար՝ լրացնելու Մերձավոր Արևելքում առաջացած քաղաքական վակուումը և հանդես գալու որպես միջնորդ տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման հարցում: «Արաբական գարուն»-ից հետո քննարկվում էր թուրքական մոդելի հարցը՝ որպես այդ երկրների համար ընդօրինակման հնարավոր աղբյուր, որն ավելի ամրապնդեց Թուրքիայի փափուկ ուժը²:

Աստիճանաբար Թուրքիան հրաժարվեց Արևմուտքի հետ ինտեգրման հեռանկարից՝ ձգտելով դառնալ ոչ միայն տարածաշրջանային, այլև՝ միջազգային դերակատար: 2014 թ., ելույթ ունենալով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 69-րդ նստաշրջանում³, Էրդողանը հայտարարեց, որ մարդկության ճակատագիրը չպետք է թողնել երկրորդ համաշխարհային պատերազմում հաղթած «մի քանի երկրների» ողորմությանը: Խոսելով համաշխարհային համակարգում առկա անհավասարության մասին՝ նա ընդգծել էր, որ «աշխարհը հինգից ավելին է», հետևաբար համաշխարհային անվտանգության ճարտարապետությունը չի կարող մնալ նույնը, երբ դիվանագիտությունը, առևտուրը և միջազգային հարաբերություններն արմատական վերափոխումների են

¹ Енокян А. В., Значимость «мягкой силы» во внешней политике Турции в 2002-2022 гг., Вестник Российского университета дружбы народов, Серия, Международные отношения, 2023, т. 23, № 4, с. 609-619.

² Сафонкина Е.А., Турция как новый актер политики «мягкой силы», Вестник международных организаций, Т. 9, № 2 (2014), с. 146-166.

³ Президент Эрдоган в 14-й раз выступил на Генассамблее ООН, 17.09.2024, <https://www.aa.com.tr/ru/3332425> (22.05.2025).

ենթարկվում¹: Նմանատիպ հայտարարություններով էրդոլանը հանդես է եկել նաև հետագայում, որով համաշխարհային տերության կարգավիճակին հավակնելու հայտ է ներկայացրել: Այդ համատեքստում Թուրքիայի ռազմավարական ձգտումները ոչ միայն պայմանավորում են իր արտաքին քաղաքականության վեկտորները, այլև ազդում են ամբողջ Մերձավոր Արևելքի կայունության և ուժային հավասարակշռության վերափոխման գործընթացների վրա:

Գաղափարախոսական առումով, 21-րդ դարի սկզբին թուրքական քաղաքականությունը Մերձավոր Արևելքում հիմնված է և՛ չափավոր իսլամիզմի վրա, և՛ նեոսմանիզմի ոչ պաշտոնապես քարոզվող գաղափարների վրա: Անկարան չի մոռանում նաև պանթյուրքիզմի մասին, թեև այն հիմնականում ուղղված է Կենտրոնական Ասիայի տարածաշրջանին, Ադրբեջանին, ինչպես նաև՝ այն երկրներին, որտեղ ապրում են թյուրքալեզու ժողովուրդներ: Այս առումով Թուրքիան առաջնորդվում է ոչ միայն գաղափարական շահերով, այլև՝ աճող տնտեսական շահով²: Անդրադառնալով Օսմանյան կայսրության նախկին տարածքների նկատմամբ հավակնություններին՝ նշենք, որ էրդոլանյան Թուրքիան ակտիվացրել է «Ազգային ուխտ»-ի³ վերաժողովման, ինչպես նաև՝ Լոզանի պայմանագրի վերանայման թեման: «Ազգային ուխտ-Լոզան-1923 թ.» բանալի բառերն ի ցույց են դնում «էրդոլանի անվտանգային, աշխարհաքաղաքական պատկերացումները Թուրքիայի տեղի ու դերի մասին»⁴: Իրաքում և Սիրիայում՝ մասնավորապես՝

¹ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, ապրիլի 19, 2022, <https://hhpress.am/mijazgayin/2022/10461/> (22.05.2025).

² Надеин-Раевский В., Политика Турции на Ближнем Востоке. Пути к миру и безопасности, 2020, № 1(58), с. 139-156.

³ «Ազգային ուխտը» (թուրք.՝ Misak-ı Milli) ընդունվել է 1920 թ. հունվարի 28-ին: Այն համարվում է քեմալական ազգայնամոլական շարժման քաղաքական հռչակագիրը, որը սահմանում է Թուրքիային պատկանող տարածքները և սահմանները: Այն ծավալապաշտական փաստաթուղթ է, որը Թուրքիայի սահմաններում է ներառում Արևմտյան Թրակիան, Կիպրոսը, Էգեյան կղզիները, Նախկին Մոսուլի և Հալեպի վիլայեթները և այլն: «Ազգային ուխտի» սահմաններին վերաբերող տարբեր քարտեզներում Թուրքիայի կազմում ներառված են նաև Աջարիան, Նախիջևանը: Турция продолжает отстаивать права и интересы в регионе – Шентоп, (26.01.2022), <https://www.aa.com.tr/ru/2485802> (22.05.2025).

⁴ Հովսեփյան Լ., Թուրքական արդի քաղաքական-անվտանգային խոսույթի երկու պարադիգմներ՝ «ՍԼԻԻ սինդրոմ» և «Ազգային ուխտ». խոսույթից քաղաքակա-

հղիբում և Աֆրիկայում, թուրքական ուժերի գործողությունները, ինչպես նաև՝ Լիբիա ռազմական ուժեր ուղարկելը նույնպես «Ազգային ուխտի» տրամաբանության շրջանակներում են»¹:

Այսպիսով՝ Թուրքիան, ռազմատնտեսական բաղադրիչին զուգահեռ, ակտիվորեն կիրառում է փափուկ ուժի բազմաբնույթ գործիքները՝ ընդգրկելով կրթական, մեդիա, հումանիտար, մշակութային և կրոնական դիվանագիտության ոլորտները: Այդ գործիքները կառուցվում են խորքային սոցիալ-հոգեբանական մեխանիզմների հիման վրա, որոնց նպատակը հանրային գիտակցության ձևավորումն ու դրական նույնականացման (իդենտիֆիկացիա) խթանումն է, պատմական հիշողության վերափմաստավորումը ու վստահության վրա հիմնված փոխհարաբերությունների կառուցումը: Մերձավոր Արևելքում Թուրքիայի ազդեցության ամրապնդումն իրականացվում է ոչ միայն ավանդական՝ ռազմական, տնտեսական և քաղաքական միջոցներով, այլև՝ սոցիալ-մշակութային ներթափանցման տարբեր ձևերով, այդ թվում՝ հեռուստասերիալների տարածմամբ, թուրքերենի ուսուցմամբ, դպրոցներ բացելով և համալսարանական կրթական ծրագրերի ներդրմամբ, մզկիթների ու եկեղեցիների վերակառուցմամբ, փախստականների ճամբարներում հումանիտար օգնության տրամադրման միջոցով և մի շարք այլ միջոցներով:

Տեսամերթոնական հիմքեր

Թուրքիայի ներգործությունը Մերձավոր Արևելքի արդի փոխակերպումներում կարելի է վերլուծել մի քանի տեսությունների համատեքստում, որոնք թույլ են տալիս առավել ամբողջական և բազմաշերտ ընկալում ձևավորելու երկրի արտաքին քաղաքականության գործիքակազմի մասին:

Փափուկ ուժի հայեցակարգ (Soft Power Theory)

«Փափուկ ուժ» եզրույթն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ ներմուծվել է 1990 թ., երբ Հարվարդի համալսարանի

Լույսին, Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, Երևան, 2020, № 3 (33), էջ 17-29:

¹ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, հունվարի 27, 2022, <https://hhpress.am/taratsashrjan/2022/8427/> (22.05.2025).

պրոֆեսոր և քաղաքագետ Ջոզեֆ Նայը¹ իր «Առաջնորդության դատապարտվածները. ամերիկյան իշխանության փոփոխվող բնույթը» (*Bound to Lead: The Changing Nature of American Power*) աշխատության մեջ տեսականորեն հիմնավորեց այդ հասկացությունը: Ըստ Նրա՝ միջազգային հարաբերություններում պետության ազդեցությունը չի սահմանափակվում միայն ռազմական կամ տնտեսական միջոցներով: Նայը «փափուկ ուժը» սահմանում է որպես ունակություն, որի շնորհիվ ցանկալի արդյունքների են հասնում ոչ թե ճնշումների (ռազմական ուժ) կամ պարզևատրման (տնտեսական ուժ), այլ գրավչության միջոցով, որն ընկալվում է որպես բնական, օբյեկտիվ կուտակված փորձ, հետևաբար՝ նաև բնական վիճակ²: Այսպիսով՝ փափուկ ուժը դաշնակիցներ գտնելու, օրակարգ մշակելու, համոզելու, գրավելու միջոցով ուրիշների վրա ազդեցություն գործելու ունակությունն է, որի վերջնական պատակը նախընտրելի արդյունքին հասնելն է: «Փափուկ ուժը հիմնված է ուրիշների նախասիրությունները ձևավորելու ունակության վրա»³ և այն մեծապես որոշվում է մեր ունեցած այն արժեքներով, որոնք արտահայտվում են «մեր մշակույթում, մեր երկրի ներսում վարվող քաղաքականության մեջ և մեր միջազգային վարքագծի մեջ»⁴: Նայը փաստում է, որ փափուկ ուժը ոչ պակաս կարևոր է, քան «կոշտ ուժը» (hard power), հատկապես՝ գլոբալիզացված աշխարհում, որտեղ գաղափարների ու արժեհամակարգերի մրցակցությունը ձևավորում է միջազգային օրակարգը: Քաղաքագետը նշում է, որ պետության փափուկ ուժը հիմնականում հիմնված է երեք ռեսուրսների վրա՝ մշակույթի, քաղաքական արժեքների և արտաքին քաղաքականության, երբ դրանք համարվում են «լեզվատիր և ունեն բարոյական հեղինակություն»⁵: Տեղեկատվական դարաշրջանում ավելի կարևոր դարձող փափուկ ուժը, մասամբ սոցիալական և տնտեսական կողմնակի

¹ Նայը 1993-1994 թթ.-ին եղել է ԱՄՆ Ազգային հետախուզական խորհրդի նախագահ, իսկ 1994-1995 թթ.-ին՝ պաշտպանության նախարարի միջազգային անվտանգության հարցերով տեղակալ:

² Nye J., *Soft Power, Foreign Policy*, 1990, № 80, pp. 153-171.

³ Nye J., *Soft power: the means to success in world politics*, Public Affairs, New York, 2004, 1st edition, p. 5.

⁴ Най Д., *Мягкая мощь. Как я спорил с Бжезинским и Киссинджером*, Москва, 2023, с. 12.

⁵ Nye J., *Soft power: the means to success in world politics*, Public Affairs, New York, 2004, 1st edition, p. 11.

արտադրանք է և ոչ թե՛ բացառապես կառավարության պաշտոնական գործողությունների արդյունք¹: Ի սկզբանե Նայը նպատակ ուներ ոչ թե ստեղծելու նոր տեսություն, այլ նկարագրելու ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ առկա գործընթացները, որոնք մեկնաբանության լայն հնարավորություններ թողեցին²: Ներկայումս հայեցակարգը դարձել է համաշխարհային քաղաքականության, տնտեսագիտության և դիվանագիտության առանցքային գաղափարներից մեկը:

Փափուկ ուժի հայեցակարգի փիլիսոփայական-հոգեբանական հիմքերը կարելի է գտնել դեռևս 20-րդ դարասկզբի մտածողների գործերում: Մասնավորապես՝ իտալացի մարքսիստ մտածող Անտոնիո Գրամշին (1891–1937 թթ.) զարգացրեց «մշակութային հեգեմոնիայի» (cultural hegemony) գաղափարը՝ բացատրելու համար, թե ինչպես է կարողանում իշխող դասակարգը պահպանել իր իշխանությունը ոչ միայն բռնի ուժով կամ տնտեսական գերակայությամբ, այլև՝ գաղափարական և մշակութային գերիշխանության միջոցով: Նրա մոտեցմամբ՝ մշակութային գերիշխանություն (հեգեմոնիա) նշանակում է հասարակության արժեքների, նորմերի, հավատալիքների համակարգված վերահսկում, որի միջոցով իշխող խմբերը ձևավորում են մարդկանց աշխարհայացքը այնպես, որ իրենց իշխանությունը ընկալվի որպես բնական կամ անխուսափելի: Եթե համեմատության մեջ դրվեն Գրամշիի «գերիշխանության» և Նայի «փափուկ ուժի» մասին տեսությունները, ապա երկուսի մոտ էլ առանձնացվում են ազդեցության 2 տեսակ. Գրամշիի մոտ՝ համաձայնության և բռնության, իսկ Նայի մոտ՝ «փափուկ» և «կոշտ» ուժերի: Երկուսն էլ շեշտում են գերիշխանության հասնելու հարցում մշակույթի, արժեքների, ավանդույթների մեծ նշանակությունը, ինչպես նաև՝ քաղաքացիական հասարակության հսկայական դերը պետության ազդեցությունը ձևավորելու և ապահովելու համար: Միևնույն ժամանակ առկա են էական տարբերություններ. Գրամշին գերիշխանությունը համարում էր ներքաղաքական նպատակի, այն է՝ իշխող դասի իշխանության ապահովման համար անհրաժեշտություն: Մինչդեռ Նայը «փափուկ ուժը» դիտում էր որպես ներգործության միջոց առավելապես միջազգային ասպարեզում: Մյուս կարևոր տարբերությունն այն էր, որ Նայի մեկնաբանմամբ՝

¹ Նույն տեղում, p. 32.

² Nye J., *The Future of Power*, NY: Public Affairs, 2011, p. 81.

«փափուկ ուժը» դրական նշանակություն ունի, որը կոչված է ստեղծելու գրավիչ կերպար՝ դաշնակիցներ գրավելու և դաշինք ձևավորելու համար, իսկ Գրամշիի պատկերացմամբ՝ այն ունի բացասական նշանակություն, այսինքն՝ որպես իշխող դասի ուժ, որը հարկավոր է տապալել՝ տարբեր հնարքների օգնությամբ քայքայելով «մշակութային միջուկը» և աստիճանաբար հող նախապատրաստելով հեղափոխության համար¹:

1960–ականներին միջազգային հարաբերությունների տեսաբան Հեդլի Բուլը «The Anarchical Society» աշխատության մեջ կենտրոնանում էր միջազգային կարգի պահպանման վրա համաձայնության, այլ ոչ թե ֆիզիկական կամ ռազմական ուժի միջոցով: Ազգային շահերը պաշտպանելու հարցում նա կարևորում էր ֆիզիկական բռնությունը նվազագույնի հասցնելու և գերազանցապես քաղաքական, իրավական ու մարդասիրական բնույթի այլընտրանքային մեթոդների վրա շեշտադրում կատարելու անհրաժեշտությունը: Բուլի հիմնական ավանդը միջազգային հասարակության ուսումնասիրման հարցում ինստիտուցիոնալ մոտեցման զարգացումն էր. նա կենտրոնանում էր այն ինստիտուտների վրա, որոնք ձևավորում են միջազգային կարգը՝ առանց ուղղակի ճնշման կամ բռնի մեթոդների կիրառման: Ըստ նրա՝ փափուկ ուժը դրսևորվում է միջազգային իրավունքի, դիվանագիտական պրակտիկաների և համընդհանուր արժեքների տարածման միջոցով: Բուլի գաղափարները միտված էին՝ կանխելու միջուկային պատերազմի վտանգը, որին կարող էր նպաստել միջազգային իրավունքի շարունակական զարգացումը²:

Իրենց աշխատություններում փափուկ ուժին անդրադարձել են նաև փիլիսոփաներ Ժան Բոդրիարը և Ժիլ Լիպովեցկին: Բոդրիարը «զայթակղություն» հասկացությունը ներմուծեց փիլիսոփայական շրջանառության մեջ՝ որպես խորհրդանշանային պատկերների տարածքում իրականացվող ուժեղ ազդեցություն նշանակող կատեգորիա: Նա փափուկ ուժը դիտարկում է ավելի լայն տեսանկյունից, որը հիմնված է սիմուլյակրների (պատկերներ, որոնք չունեն իրական

¹ Ենգոյան Փ., «Փափուկ ուժի» ժամանակակից հայեցակարգի ձևավորումը, Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, Երևան, 2020, № 2 (32), էջ 60-74:

² Большая российская энциклопедия, Булл Хедли, <https://bigenc.ru/c/bull-khedli-15d760> (22.05.2025).

նախատիպ) և իրականության կորստի գաղափարի վրա: Բողոքարը նշում է, որ ներկայիս հասարակություններում մեծ ազդեցություն ունեն այն պատրանքներն ու կերպարները, որոնք ձևավորվում են զանգվածային մեդիայի, մշակույթի և սպառողական հասարակության կողմից: Արդյունքում՝ ազդեցությունը գործում է ոչ թե բացահայտ, այլ խորհրդանշանային մակարդակում՝ սուբլիմացված կերպով վերահսկելով մարդկանց վարքագիծը: Այս տեսանկյունից փափուկ ուժը ոչ այնքան արժեքների պարտադրանք է, որքան պատրանքի ստեղծում, որտեղ մարդիկ, չգիտակցելով այդ մասին, ենթարկվում են ազդեցության: Գայթակղությունը դառնում է ուժ, որի ներգործությունը գերազանցում է իշխանության մյուս ձևերին:

«Երևութական կայսրությունը. նորաձևությունը և դրա ճակատագիրը ժամանակակից հասարակությունում» գրքում¹ Ժիլ Լիպովեցկին վերլուծում է, թե ինչպես է նորաձևությունը վերածվում հզոր սոցիալական մեխանիզմի՝ որոշելով մարդու ինքնությունն ու կարիքները: Գլոբալիզացիայի համատեքստում նորաձևությունը դառնում է սպառողական մշակույթի մաս, որտեղ արժեքներն արագ փոխվում են ու դառնում անցողիկ: Թեև Լիպովեցկին ուղղակիորեն չի օգտագործում «փափուկ ուժ» եզրույթը, սակայն նրա գաղափարները սերտորեն առնչվում են այդ հասկացության հետ՝ հատկապես այն տեսանկյունից, թե ինչպես է նորաձևությունը ազդում սոցիալական նորմերի և վարքագծի վրա: Նորաձևությունը՝ որպես ազդեցության միջոց, իրականացնում է նուրբ վերահսկողություն. այն ուղղակիորեն չի պարտադրում, ինչպես լինում է «կոշտ ուժի» պարագայում, այլ մանիպուլացնում է ցանկություններն ու նախասիրությունները՝ մղելով մարդկանց սպառողական միտումներին համապատասխան վարքագծի: Սպառողական մշակույթի միջոցով մարդիկ սկսում են ենթարկվել իշխող սոցիալական կարգերին՝ հավատալով, թե իրենց ընտրություններն իսկապես ազատ են: Լիպովեցկու դիտարկումները վկայում են, որ փափուկ ուժը գործում է ոչ թե արտաքին ճնշման կամ բռնության, այլ պատրանքի միջոցով՝ մարդկանց դարձնելով իրենց կառավարողների համակիրները:

¹ Липовецкий Ж., Империя эфемерного. Мода и ее судьба в современном обществе; пер. с франц. Ю. Розенберг, под науч. и лит. ред. А. Маркова, Москва, 2012, с. 336.

Թուրքիայի փափուկ ուժը ձևով և բովանդակությամբ շատ առումներով տարբերվում է այլ երկրների փորձից: Թեև Թուրքիան չի ներկայացրել «փափուկ ուժի» առանձին դոկտրին կամ արտաքին քաղաքականության հայեցակարգ, սակայն մշակութային դիվանագիտությունը և Թուրքիայի դրական կերպարի խթանման կարևորությունը ընդգծվել են գրեթե բոլոր դոկտրիններում, հայեցակարգերում և փաստաթղթերում¹: Մերձավորարևելյան տարածաշրջանում, ռազմական գործողություններին զուգահեռ, «Թուրքիան աստիճանաբար և կայուն կերպով մեծացրել է իր քաղաքական, դիվանագիտական և մարդասիրական ներկայությունը՝ կիրառելով «փափուկ» ուժի ռազմավարություն այնպես, որ իր համար ապահովի միջնորդի դերը տարածաշրջանային խնդիրների լուծման գործում»²:

Սոցիալական նույնականացման տեսություն (Social Identity Theory)

Մշակութային, գաղափարական և արժեհամակարգային մակարդակում նվաճողական քաղաքականության հաջողության համար կարևոր նախապայման է սոցիալական նույնականացումը: Թիրախային ժողովուրդը կամ հասարակությունը այդ մակարդակներում պետք է ընդունի նվաճող ուժի ներկայությունը կամ գոնե լեգիտիմացնի դրա իրավունքը: Այդտեղ աշխատում է **սոցիալական նույնականացման** մեխանիզմը, երբ նվաճող կողմը փորձում է ներկայանալ որպես «մենք»-ի մաս, «յուրային» կամ էլ՝ երբ նվաճվող ժողովուրդը սկսում է աստիճանաբար նույնականացնել իրեն նվաճողի մշակույթի, արժեքների, գաղափարների հետ: Այսօր Թուրքիայի փափուկ ուժը, որը դրսևորվում է սերիալների, կրթական ծրագրերի, կրոնական և մարդասիրական աջակցության միջոցով, ուղղված է Մերձավոր Արևելքի ժողովուրդների հետ մշակութային և ինքնության նույնականացման ձևավորմանը: Այս ռազմավարությունը կրում է շարունակական բնույթ.

¹ Енокян А. В., Значимость «мягкой силы» во внешней политике Турции в 2002-2022 гг., Вестник Российского университета дружбы народов, Серия: Международные отношения, 2023, т. 23, № 4, с. 609-619.

² Банникова А.В., Кулешова Б.Э., Джомертогуллары Н., Табаринцева-Романова К.М., Турция и глобальное лидерство: роль турецкой публичной дипломатии во внешней политике, Вестн. Удм. ун-та. Социология. Политология. Международные отношения, 2023, т. 7, вып. 4, с. 520-529.

Օսմանյան կայսրության ժամանակաշրջանում նվաճված ժողովուրդներին փորձել են ձուլել՝ լեզվի, կրոնի ու սոցիալական նորմերի պարտադրման միջոցով: Ներկայումս այդ գործելաոճը վերաիմաստավորվում է նեոօսմանիզմի գաղափարախոսության շրջանակում, որի նպատակն է՝ վերակենդանացնել պատմական կապերը, վերակառուցել ազդեցության գոտիները և ձևավորել դրական վերաբերմունք Թուրքիայի նկատմամբ՝ առանց ֆիզիկական պարտադրանքի:

Սոցիալական ինքնության տեսությունը մշակվել է Հ. Թեջֆելի և Զ. Թերների կողմից 1970-ականներին: Այն բացատրում է, թե ինչպես է որոշակի սոցիալական խմբերին անձի անդամակցությունն ազդում նրա ինքնաընկալման, վարքագծի և ուրիշների նկատմամբ վերաբերմունքի վրա: Մարդու սոցիալական վարքագիծը կազմակերպվում է ոչ միայն սեփական «ես»-ի, այլև՝ իրեն որպես սոցիալական խմբի («մենք») անդամ ընկալելու հիման վրա: «Անձի սոցիալական ինքնության երևույթի մեջ խտացված կերպով կարող են արտահայտվել անձի գոյության և գործունեության այնպիսի յուրահատկություններ, որոնք էլ կվկայեն ազգային ինքնության և գիտակցության տարբեր կողմերի մասին: Սոցիալական ինքնությունը միտված է անձին նույնակաՆացնելու սեփական սոցիալական միջավայրի նորմերի և արժեհամակարգի հետ»¹: Նույնականացումից հետո սկսվում է սոցիալական համեմատությունը սեփական «ներքին խմբի» և «արտաքին խմբերի» միջև: Դրական ինքնագնահատականը պահպանելու համար մարդիկ հակված են իրենց խմբին ավելի բարենպաստ լույսի ներքո տեսնելու, առավել դրական հատկանիշներ վերագրելու: Միևնույն ժամանակ դրական սոցիալական ինքնությունը պահպանելու համար երբեմն մարդիկ կարող են կողմնակալություն կամ խտրականություն դրսևորել այլ խմբերի նկատմամբ՝ վերջիններիս վերագրելով բացասական հատկանիշներ, և էական չէ՝ կլինեն դրանք օբյեկտիվ, թե սուբյեկտիվ²: Սոցիալական ինքնությունն ունի երկու բաղադրիչ՝ ճանաչողական և արժեքային-աֆեկտիվ: Առաջինն արտահայտում է մարդու պատկերացումը որոշակի սոցիալական խմբի պատկանելու մասին, ինչպես

¹ Հակոբյան Ն., Խաչատրյան Ա., Միջմշակութային հոգեբանություն, Ուսումնասանթողական ձեռնարկ, Երևան, 2021, էջ 34:

² Tajfel H., Turner J., *The Social Identity Theory of Intergroup Behavior*, *Political psychology: Key readings*, 2004, pp. 276-293.

նաև՝ մարդն իրեն վերագրում է այդ խմբի անդամների մեծամասնությանը բնորոշ որակները: Երկրորդ բաղադրիչը ներառում է պատկանելության փաստի վերապրումը և խմբի անդամ հանդիսանալու դրական գնահատումը, որը մեծապես կախված է խմբի վերաբերյալ հասարակական կարծիքից: Այն կապված է սոցիալական ինքնության դրական կամ բացասական դրսևորման հետ¹:

Միջազգային հարաբերություններում սոցիալական նույնականացման տեսությունը օգնում է հասկանալ, թե ինչպես են պետությունները (կամ ժողովուրդները) ընկալում իրենց և միմյանց՝ տարբեր «խմբերի»՝ քաղաքակրթությունների, միությունների, մշակութային և գաղափարախոսական համայնքների պատկանելության պրիզմայով: Պետություններն իրենց և մյուսներին բաժանում են կատեգորիաների, օրինակ՝ «մենք Արևմուտքն ենք», իսկ «նրանք Արևելքն են», «մենք ժողովրդավար ենք», իսկ «նրանք ավտորիտար են», «մենք քրիստոնյաներ ենք», իսկ «նրանք՝ մուսուլմաններ» և այլն: Միջազգային ասպարեզում այսպիսի դուալ սկզբունքով ստեղծվում է «մենք»-ի և «նրանք»-ի զգացողությունը: Միջազգային մակարդակում տեղի ունեցող նույնականացումն ազդում է երկրների վարած քաղաքականության, դաշինքների ձևավորման և արտաքին հարաբերությունների բնույթի վրա: Սառը պատերազմի ժամանակ աշխարհը բաժանված էր երկու բևեռի՝ «մենք»-ի ու «նրանք»-ի: Սառը պատերազմից հետո ԱՄՆ-ը և Նրա դաշնակիցներն իրենց համարում էին լիբերալ աշխարհակարգի «հաղթողներ», հաստատվել էր միաբևեռ աշխարհ, սակայն հետագա զարգացումները ապահովեցին բազմաբևեռ աշխարհի ձևավորմանը: Թուրքիան միաժամանակ իրեն նույնականացնում է իսլամական աշխարհի (Իսլամական համագործակցության կազմակերպություն), թյուրքական ժողովուրդների (Թյուրքական պետությունների կազմակերպություն) և արևմտյան ինստիտուտների (ՆԱՏՕ) հետ, ինչը երբեմն «ներքին» և «արտաքին» ինքնությունների միջև խզումներ է առաջացնում: Միջազգային հարաբերություններում սոցիալական ինքնության տեսությունը ցույց է տալիս, որ երկրների վարքագիծը ոչ միայն պայքար է շահերի

¹ Горбатенко Н. С., Сидоренков А. В., Концептуальные компоненты подхода теории социальной идентичности к изучению групп, *Общественные науки*, 2008, № 4, с. 112-116.

համար, այլև՝ պայքար՝ «ովքեր ենք մենք», և «որտեղ է մեր տեղը աշխարհում» հարցադրումների պատասխանները գտնելու համար:

Թուրքիան փորձում է դիրքավորվել որպես իսլամական աշխարհի առաջնորդ՝ շեշտը դնելով իսլամական ինքնության վրա: Ս. Հանթինգտոնը «Քաղաքակրթությունների բախումը» գրքում, անդրադառնալով Թուրքիային, գրում էր, որ այն ճեղքված երկրի օրինակ է, որը գտնվում է երկու քաղաքակրթական շերտերի՝ իսլամականի և արևմտյանի միջև: Պատմականորեն և մշակութային առումով հանդիսանալով իսլամական երկիր՝ 1920-ական թվականներից՝ Աթաթուրքի բարեփոխումներից հետո, Թուրքիան ձգտում էր արևմտականացման՝ քաղաքական, տնտեսական և մշակութային մակարդակներում: Այդ գործընթացը ներառում էր աշխարհիկացումը, լատինական այբուբենի ընդունումը, հագուստի բարեփոխումը, իրավական և կրթական բարեփոխումները և Եվրոպայի հետ մերձեցման ձգտումը¹: Հանթինգտոնը համարում էր, որ Թուրքիայի համար դժվար է դառնալ «իսկապես արևմտյան» երկիր, քանի որ մի կողմից՝ Եվրոպական երկրները չեն ընկալում որպես Եվրոպայի մաս, մյուս կողմից՝ թուրքական հասարակությունը պահպանում է ուժեղ իսլամական և ավանդական տարրեր, հատկապես խոշոր քաղաքներից դուրս: Քաղաքական զարգացումները ցույց տվեցին, որ այդ խոչընդոտները խորքային էին:

Թուրքիան իր արտաքին քաղաքականությունը ձևավորում է ոչ միայն իսլամական ինքնության, այլև՝ նեոսուննիզմի տարրերով՝ որպես կոլեկտիվ հիշողության մոդել: Այդ գաղափարախոսությունը հենվում է Օսմանյան կայսրության պատմամշակութային ժառանգության վրա: Որպես բազմամշակույթ հանրության գաղափարական հիմնավորում՝ այն օգտագործվում է ոչ միայն ներքին, այլև՝ արտաքին լսարանի համար՝ ինչպես Մերձավոր Արևելքի մուսուլմանական երկրներ «արտահանելու» համար: Նեոսուննիզմի «հիմնադիր հայր» համարվող Դավութօղլուի մշակած հայեցակարգը մերժում էր Թուրքիան՝ որպես Արևմուտքի և Արևելքի, Եվրոպայի և Ասիայի միջև «կամուրջ» հանդիսանալու ավանդական դիրքորոշումը: Ըստ նեոսուննիզմի կողմնակիցների՝ դա նվազեցնում է Թուրքիայի դերը համաշխարհային

¹ Хантингтон С., Столкновение цивилизаций, пер. с англ. Т. Велимеева, Москва, 2019, с. 237-247.

ասպարեզում, քանի որ «կամուրջը» երկրորդական է «ափերի» համեմատ: Որպես հակադրություն՝ Դավութջյունն առաջարկեց «Կենտրոնական պետության» գաղափարը, որը կոչված էր դառնալու այն երկրների և ժողովուրդների (առաջին հերթին՝ մուսուլմանական) համայնքի առանցքը, որոնք նախկինում Օսմանյան պետության մաս էին կազմում:

Տարածաշրջանային երկրներում նեոսմանիզմի գաղափարախոսության միջոցով Թուրքիայի դիրքերն ուժեղացնելու նպատակով կիրառվող գործիքներից են կրկին փափուկ ուժի կրթական և մշակութային բաղադրիչները, այդ թվում՝ ֆիլմերն ու հեռուստասերիալները: Մասնավորապես՝ նշանակալի իրադարձություն է համարվում դեռևս 2010 թ. հունվարին համաձայնության կնքումը մի կողմից՝ ԱԶԿ-ի, մյուս կողմից՝ բարձրագույն կրթության խորհրդի միջև, որով հնարավորություն էր ընձեռվում անվճար հիմունքներով Թուրքիայի համալսարաններ ընդունվել արաբական երկրների, մասնավորապես՝ սիրիացի ուսանողներին¹: Կրթական ծրագրեր իրականացնելու միջոցով թուրքական օրակարգն առաջ մղելու քաղաքականությունն անխափան գործում է նաև ներկայումս: «Թուրքիան նպաստում է Սիրիայի Իդլիբ նահանգում երեխաների կրթության հասանելիությանը»², «Թուրքիան մտադիր է Սիրիայի հյուսիսում բժշկական ինստիտուտ և մասնագիտական ուսումնարան բացել»³ և նմանատիպ վերտառությամբ լրատվական նյութերը դրա մասին են փաստում:

Փափուկ ուժի գործիքակազմից են նաև թուրքական կառավարության կողմից ստեղծված տարբեր կազմակերպությունները, օրինակ՝ Յունուս Էմրեի ինստիտուտը (Yunus Emre Institute), որը աշխատանքներ է տանում ոչ միայն թուրքերենի տարածման, այլև օսմանյան մշակութային ժառանգության հանդեպ դրական վերաբերմունքի ձևավորման ուղղությամբ: Կրթության հիմնադրամը (Maarif Vakfi) կառավարում և վերահսկում է արտերկրում գործող թուրքական

¹ Սիմավորյան Ա., Գաղափարախոսական հոսանքները Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում, Գլոբուս, Ազգային անվտանգություն, թիվ 4 (14), 2010, էջ 19-29:

² Турция вносит вклад в доступ детей к образованию в сирийском Идлибе, (17.11.2022), <https://www.aa.com.tr/ru/2741015> (22.05.2025).

³ Турция намерена открыть мединститут и профессиональную школу на севере Сирии, <https://www.ermenihaber.am/ru/news/2021/02/08/201908> (22.05.2025).

դպրոցները: Արաբալեզու լսարանի հետ աշխատող մեդիականուրջ է «TRT Arabic»-ը, որն աշխատում է Թուրքիայի իմիջի բարելավման և քաղաքական նարատիվների տարածման ուղղությամբ: Թուրքիայի կրոնական հարցերով վարչությունը (Diyanet) գործունեություն է ծավալում տարածաշրջանում մզկիթների վերականգնման, իսլամական կրթության ծրագրերի ֆինանսավորման և կրոնական փոխանակումների միջոցով. այդ ամենն ուղղված է իսլամական համերաշխության և Թուրքիայի՝ իսլամական աշխարհի առաջատարի դիրքի ամրապնդմանը: TİKA-ի¹ հիմնադրման օրվանից կառույցին կարևոր դեր է վերապահվում, այն է՝ նպաստել հետխորհրդային, բալկանյան, մերձավորարևելյան և աֆրիկյան տարածաշրջաններում Թուրքիայի դիրքերի ամրապնդմանը, որով կբարձրանա նրա նշանակությունը և կընդգծվր կարևորությունն Արևմուտքի համար²: Կառույցն ակտիվ գործունեություն է ծավալում՝ առաջ մղելով Թուրքիայի աշխարհաքաղաքական շահերն ու նպատակները կրթական ու մշակութային ծրագրերի միջոցով³:

Միջազգային հարաբերությունների համատեքստում այս բոլոր գործընթացները դարձել են Թուրքիայի սոցիալական ինքնության վերագնահատման և վերաձևակերպման հիմքը: Նոր արտաքին քաղաքականության միջոցով Թուրքիան նպատակ ունի ազդեցություն ունենալ տարածաշրջանի երկրների հասարակությունների ինքնության վրա՝ ձևավորելով այնպիսի ընկալում, ըստ որի՝ Թուրքիայի մոդելը կդիտվի որպես դրական և ցանկալի արժեքային և ինստիտուցիոնալ

¹ 1992 թ. հունվարի 27-ին Թուրքիայի արտաքին գործերի նախարարությանը կից հիմնադրվում է «Թյուրքական համագործակցության ու զարգացման գործակալությունը» (Türk İşbirliği ve Kalkınma Ajansı–TİKA):

² Մինասյան Ն., «Թյուրքական համագործակցության և զարգացման գործակալություն» (TİKA). Ստեղծման նպատակները ու գործունեության բնագավառները, Ժամանակակից Եվրասիա, 2014, III (2), էջ 106-113:

³ https://www.dailysabah.com/politics/2015/03/29/tika-opens-another-school-in-palestine?utm_source=chatgpt.com (22.05.2025); Educational Center for Children and Youth Opens in Lebanon with TİKA's Support, https://tika.gov.tr/en/educational-center-for-children-and-youth-opens-in-lebanon-with-tikas-support/?utm_source=chatgpt.com (22.05.2025); Turkish development aid agency opens classrooms for special needs children in northern Syria, https://www.middleeastmonitor.com/20211118-turkish-development-aid-agency-opens-classrooms-for-special-needs-children-in-northern-syria/?utm_source=chatgpt.com (22.05.2025).

ուղենիշ: Այս քաղաքականությունը կյանքի է կոչվում կրթական, մշակութային, կրոնական ծրագրերի, մեդիայի և լեզվի՝ որպես գաղափարախոսական գործիքի միջոցով, ինչն արտացոլում է փափուկ ուժի կիրառման և ինքնության ձևավորման նոր մոտեցումը:

Հանրային դիվանագիտություն

Միջազգային հարաբերությունների անբաժանելի բաղադրիչ է հանրային դիվանագիտությունը. պետությունների՝ հատկապես արտաքին քաղաքական գերատեսչություններն այն ընկալում են որպես կարևոր գործիք: Հասկացության ձևակերպման հեղինակը ԱՄՆ Տեղեկատվական գործակալության (USIA) նախկին տնօրեն Էդմունդ Ա. Գուլիոնն է, որ 1965 թ. օգտագործեց «հանրային դիվանագիտություն» եզրույթն իր ժամանակակից իմաստով, որը հետևյալն է. «Միջոցներ, որոնցով կառավարությունները, մասնավոր խմբերը և անհատները փոխում են այլ ժողովուրդների և կառավարությունների վերաբերմունքն ու կարծիքները այնպես, որ ազդեն նրանց արտաքին քաղաքականության որոշումների վրա»¹: Հարկ է նշել, որ հանրային դիվանագիտության բաղադրիչ է մշակութային դիվանագիտությունը: Թուրքիան ևս օգտվում է հանրային դիվանագիտության (public diplomacy) գործիքակազմի հնարավորություններից, որը ներառում է զանգվածային լրատվամիջոցները, սոցիալական ցանցերը, կրթական ծրագրերը, գիտական ոլորտը, կրոնը և այլն: Հանրային դիվանագիտության մի մասը կազմում է նաև պետությունների մարքեթինգը՝ ազգային դիմագիծը համաշխարհային հանրությանը լավագույն կերպով ներկայացնելու համար: Նշենք, որ 2022 թ. ՄԱԿ-ը բավարարեց Թուրքիայի խնդրանքը՝ բոլոր պաշտոնական փաստաթղթերում հանրապետության անվանումը փոխելու վերաբերյալ: Երկրի անվանման վերաբերենդավորումը նախաձեռնել էր երկրի նախագահ Էրդողանը՝ նշելով, որ ««Türkiye» բառը լավագույնն է արտացոլում է թուրք ժողովրդի մշակույթը, քաղաքակրթությունը և արժեքները»²:

¹ Шамугия И., Понятие «Публичная дипломатия» в теории международных отношений, Актуальные проблемы современных международных отношений, Актуальные проблемы современных международных отношений, 2017, №10, с. 136-142.

² Венкина Е., ООН изменила официальное написание названия Турции, <https://www.dw.com/ru/turcija-poprosila-oon-izmenit-napisanie-nazvanija-strany/a-62010180>, (02.06.2022).

2012 թ. առաջին անգամ իրականացվեց «Թուրքիայի կրթաթոշակներ» (Turkey Scholarships) ծրագիրը, որը համախմբեց տարբեր պետական հաստատությունների կողմից արտերկրի ուսանողներին տրամադրվող կրթաթոշակները մեկ ծրագրի ներքո: Նախկինում կրթաթոշակները տրամադրվում էին տարբեր պետական կառույցների կողմից (Թուրքական բարձրագույն կրթության խորհուրդ (YÖK)¹, Թուրքիայի Գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների խորհուրդ (TÜBİTAK), Թուրքիայի համագործակցության և զարգացման գործակալությունը (TİKA)), միմյանցից անկախ էին և չունեին հանրային դիվանագիտության ուղղվածություն: Ծրագիրը համարվում է Թուրքիայի հանրային դիվանագիտության ամենամեծ նախաձեռնություններից մեկը. եթե սկզբնական շրջանում տարեկան շուրջ 90 հազար դիմում էր ստացվում, ապա 2015–2016 թթ. գրանցվել է 155 հազար դիմում 182 երկրից: 2012–2016 թթ. ավելի քան 50 հազար ուսանող ստացել է կրթաթոշակ²:

Թուրքիայի անվտանգության ծառայության ղեկավար Իբրահիմ Քալընը³ նշում է, որ միջազգային հանրային կարծիքը դարձել է կարևոր կողմնորոշիչ՝ երկրների արտաքին քաղաքականության ձևավորման և իրագործման գործընթացում: Նրա մեկնաբանմամբ՝ Թուրքիայի փափուկ ուժի կարողությունը ներկայացվում է որպես «երկրի պատմության, աշխարհագրության, մշակութային խորության, տնտեսական հզորության և ժողովրդավարության միախառնություն՝ ընդգծելով դրա կարևոր տեղը Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ», իսկ փափուկ ուժի համար իրագործման հարթակ հանդիսացող հանրային դիվանագիտությունը նոր հասկացություն է Թուրքիայում, որը լայնորեն քննարկվում է Հանրային դիվանագիտության գրասենյակի բացումից հետո: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ թուրք

¹ Абдуллаев Р., Турция планирует довести число иностранных студентов до 500 тысяч, 09.02.2025, https://azertag.az/ru/xeber/turciya_planiruet_dovesti_chislo_inostrannyh_studentov_do_500_tysyach-3410031 (22.05.2025).

² Acma B., Kwachuh T., Turkish public diplomacy in a decade: an appraisal and prospects, Theoretical and applied issues of economics, January 2021, <https://doi.org/10.17721/tape.2021.42.14> (22.05.2025).

³ Քալընը նշանակվել է Թուրքիայի վարչապետի՝ Յանրային դիվանագիտության համակարգող կենտրոնի առաջին համակարգող. այն ստեղծվել է 2010 թվականի հունվարին:

դիվանագետը, անդրադառնալով Հայոց ցեղասպանությանը, Կիպրոսի հյուսիսային շրջանի բռնազավթմանն ու Սիրիա ներխուժմանը Քրդական աշխատավորական կուսակցության դեմ պայքարելու քողի ներքո, նշում է, որ Թուրքիան մեծ ճանապարհ է անցել այդպիսի ընկալումները փոխելու հարցում՝ ընդգծելով, որ «բացի սփյուռքի որոշ համայնքներից, միայն մի քանի շրջանակներ են Թուրքիային դեռևս անվանում զավթիչ, ճնշող, ժխտող և այլն»¹:

Կարող ենք փաստել, որ հանրային դիվանագիտությունը երկարաժամկետ գործիք է, որի արդյունքները կարող են նկատելի չլինել կարճաժամկետ կտրվածքով կամ որոշակի իրավիճակներում, այն բարենպաստ մթնոլորտ է ստեղծում արտաքին քաղաքականության իրականացման համար ընդհանուր համատեքստում: Միաժամանակ՝ «հանրային դիվանագիտության և փափուկ ուժի փոխհարաբերությունը կարելի է սահմանել որպես արտաքին քաղաքականության գործունեության հայեցակարգի (փափուկ ուժ) և այդ հայեցակարգը իրականացնելու գործիքի (հանրային դիվանագիտություն) փոխհարաբերություն»²:

Մշակութային դիվանագիտություն

Մշակույթի սահմանման տարբեր մոտեցումներ կան, որոնք ժամանակի ընթացքում դինամիկ զարգացել են, օրինակ՝ մշակույթը դիտարկվում է որպես հասարակության անդամների կողմից յուրացված ընդունակությունների և սովորությունների համալիր (Թեյլոր), որպես սոցիալական ժառանգություն (Լինտոն) կամ որպես մարդկանց խմբի ընդհանուր կենսակերպ³: Նման բնորոշումները թույլ են տալիս եզրակացնել, որ մշակույթի վրա ունեցած ազդեցությունը, փոփոխելու կարողությունը հնարավորություն է ընձեռում ազդեցություն ունեցող և փոփոխություններ իրականացնող կողմին էական կշիռ ունենալ այն հասարակությունների կյանքում, որոնց մշակույթը հայտնվում է թիրախում: Թուրքիան խթանում է իր մշակույթի, պատմության ու

¹ Kalin I., Soft Power and Public Diplomacy in Turkey, Perceptions: Journal of International Affairs, Autumn 2011, Volume 16, Issue 3, p. 5-23.

² Векслер А., «Исторические отцы PR»: Первые практические опыты публичной дипломатии, Коммуникации. Медиа. Дизайн, т. 2, № 1, 2017, с. 139-165.

³ Հակոբյան Ն., Խաչատրյան Ա., Միջմշակութային հոգեբանություն, Ուսումնասիրողական ձեռնարկ, Երևան, 2021, էջ 10-11:

ավանդույթների տարածումը տարբեր միջոցներով՝ հեռուստասերիալների, ֆիլմերի, գրականության և մշակութային փառատոների միջոցով: Որպես մշակութային և միջմշակութային երևույթ՝ թուրքական սերիալների («Հարեմի գաղտնիքները», «Սուլթան Սուլեյման») միջազգային տարածումը զգալիորեն բարձրացրել է Թուրքիայի գրավչությունը ոչ միայն մուսուլմանական, այլև՝ քրիստոնյա հասարակություններում, անգամ՝ հայ իրականության մեջ:

Թուրքական հեռուստասերիալները հնչյունավորված են արաբերենի սիրիական բարբառով, ինչը դրանք դուրընկալելի է դարձնում ավելի լայն լսարանի համար: Թուրքիան ներկայացվում է որպես արևմտյան կենսակերպի, դրա մշակութային տարրերի, իսլամի և Մերձավոր Արևելքի երկրներին բնորոշ ավանդույթների կայուն և խաղաղ համակեցության օրինակ¹: Թուրքական հեռուստասերիալները վարպետորեն ազդում են զգացմունքների վրա. դրանցում գրավիչ ձևով ներկայացված են ոչ միայն պատմական սյուժեները, մշակութային ժառանգության տարրերը, այլև՝ միջանձնային փոխհարաբերությունները²: Ի վերջո՝ ինչո՞ւ է կարևոր կանանց պատկերացումների, արժեհամակարգային ընկալումների վրա ունեցած ազդեցությունը: Ակնհայտ է, որ կինը՝ որպես ընտանիքի հիմնասյուն, ունի իր հստակ գործառույթը, ընդգծվում է «մոր դերը երեխաների սոցիալականացման գործում, մասնավորապես՝ «նվիրված մուսուլմանների» դաստիարակության և մշակութային արժեքների փոխանցման գործում»³: Մերձավոր Արևելքում մորը հաճախ դիտարկում են որպես «առաջին ուսուցիչ», ով երեխային է փոխանցում լեզուն, ազգային ու կրոնական ավանդույթները, ընտանեկան պարտականությունների գիտակցումը: Մայրն էլ ձևավորում է երեխայի՝ որպես համայնքի անդամի ինքնությունը, սեռային դերերի ըմբռնումը, այսինքն՝ «ինչպես պետք է վարվի տղան», «ինչպիսին պետք է լինի աղջիկը»: Այսպիսով՝ Արևելքի կանանց արժեհամակարգում, հետևաբար՝ նաև մտածելակերպում

¹ Зубкова А.И., Мягкая сила Турции: Феномен «soap power» как инструмента культурной дипломатии, Вестник РУДН, серия Политология, 2015, № 2, с. 52-62.

² Հարցազրույց հոգեբան, սեքսապաթոլոգ Ալեքսանդրա Միլերի հետ: *Stu*՝ <https://www.5-tv.ru/tabloid/490784/osmany-snova-zahvatyvaut-cto-zastavlaet-zensin-vlublatsa-vtureckie-serialy/> (22.05.2025).

³ Moghadam V. M., Patriarchy in Transition: Women and the Changing Family in the Middle East, *Journal of Comparative Family Studies*, March 2004, 35(2), pp. 137-162.

փոփոխություններն իրենց ազդեցությունը կունենան ամբողջ հասարակության վրա, ինչը փաստում է, որ թուրքական հեռուստասերիալները վերածվել են փափուկ ուժի խոշոր ոչ պետական գործիքի:

Հասարակական ընկալումների, պատկերացումների, հետևաբար՝ նաև վերաբերմունքի, կարծիքների և վարքագծի փոփոխության վրա ազդելու կարևոր միջոցներից է **էվֆեմիզմը**: Այն օգտագործվում է բազմաթիվ ոլորտներում՝ լեզվաբանությունից մինչև բժշկություն ու մարքեթինգ: Մեզ համար հետաքրքրություն է ներկայացնում դրանց կիրառությունը քաղաքականության, քաղաքական հոգեբանության շրջանակներում, որտեղ էվֆեմիզմը դառնում է հանրային կարծիքի ձևավորման, ընկալումների վերահսկման և փափուկ ուժի իրակաՆացման նուրբ գործիք: Այն թույլ է տալիս ներկայացնել որոշ գործընթացներ կամ երևույթներ ավելի ընդունելի, դրական երանգով, որն էլ, ի վերջո, ազդում է մարդկանց վերաբերմունքի և վարքագծի վրա:

Էվֆեմիզմը կոպիտ ձևակերպման փոխարեն «որևէ առարկայի կամ երևույթի ոչ ուղղակի, թաքնված նշանակության օգտագործումն է, որը տվյալ իրավիճակում անհարմար, անպարկեշտ կամ անընդունելի է անվանել իր ուղղակի անվամբ»¹: «Քաղաքական էվֆեմիզմը քաղաքական գործիչների համար տեղեկատվության քանակն ու որակը վերահսկելու արդյունավետ գործիք է»², որի միջոցով որոշ գործողություններ կամ իրավիճակներ ներկայացվում են ցանկալի «փաթեթավորմամբ»՝ խուսափելով անցանկալի, բացասական ընկալումներից ու դրա հետևանքով ծագած արձագանքներից:

Էվֆեմիզմները կարևոր գործառնություն են կատարում պետությունների, այդ թվում՝ Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ, ազդեցիկ և վիճահարույց գործողություններին առավել ընդունելի ձևակերպումներ տալու համար, օրինակ՝ «պատերազմի» փոխարեն օգտագործվում է «խաղաղության համար պայքար», «պայքար ահաբեկչության դեմ», «պատժիչ գործողություն», «ազդեցության» փոխարեն՝ «բարեկամության մեկնված ձեռք», «մարդասիրական օգնություն», «եղբայրական աջակցություն», «միջնորդ», «զորքերի ներկայության»

¹ Эвфемизм. Толковый словарь русского языка (под ред. Д.Н. Ушакова), <http://dic.academic.ru/dic.nsf/ushakov/1095558> (22.05.2025).

² Алимов Т. Э., Фазилова К.Б., Функции политических эвфемизмов, Вестник науки и образования, N 8(128), 2022, с. 41-43.

փոխարեն՝ «անվտանգությանն ուղղված աջակցություն», «խաղաղապահ առաքելություն»¹ և այլն:

Էվֆեմիզմի կիրառման օրինակներ են ՌԴ նախագահի² կողմից «հատուկ ռազմական գործողություն» ձևակերպումը³, Էրդողանի կողմից Սիրիայի հյուսիսային շրջաններ ներխուժելը՝ «ահաբեկչական միջանցքի ոչնչացմանն» ուղղված քայլ, ինչպես նաև՝ տարածաշրջանին «խաղաղություն և հանգստություն բերելու» գործողություն, որին տրվեց «Խաղաղության աղբյուր» անվանումը⁴: Թեև իրական նպատակներն են ազդեցության ընդլայնումը, Սիրիայի տնտեսական ռեսուրսների շահագործումն ու քրդական պետության ստեղծման կանխումը: Լիբիայում, Պաղեստինում, Իրաքում, Բալկաններում միջամտությունները Թուրքիան արդարացնում է «պատմական և մշակութային կապերով»՝ կիրառելով «եղբայրական ժողովուրդներին աջակցություն», «պատմական պատասխանատվություն», «մեկ ազգ, երկու պետություն» ձևակերպումները: Սիրիայում, Լիբիայում, նաև՝ իսրայելապաղեստինյան հակամարտության շրջանակում առաջարկելով իր միջնորդական առաքելությունը, «հաշտեցման» օրակարգը կամ «խաղաղության երաշխավոր» հանդիսանալը՝ իրականում առաջ է տանում իր պետական շահերն ու հետաքրքրությունները: Իրաքում, Լիբանանում, Պաղեստինում և մյուս մերձավորարևելյան երկրներում «զարգացման աջակցություն», «ենթակառուցվածքների վերականգնում», «եղբայրական օգնություն» խոստանալով՝ թուրքական ընկերությունները մուտք են գործում այդ երկրների շուկաներ, իսկ պետությունը ստանում է քաղաքական ազդեցության լծակներ: 2021 թ. մարտի 15-ին «Արդարություն և զարգացում» կուսակցության համագումարում Էրդողանը նշել էր. «Կիպրոսից մինչև Իրաք, Սիրիա, Ղարաբաղից մինչև Լիբիա

¹ Морозов М. А., Политические эвфемизмы как средство манипулирования в современной публицистике, Мир русского слова, 2015, № 1, с. 24-29.

² https://www.youtube.com/watch?v=iPvB_TctgQ (22.05.2025).

³ Spišiaková M., Shumeiko N., Political Euphemisms and Neologisms in Online Media Content: Amid the War in Ukraine, University of Economics Bratislava, 2022, pp. 372-388; «Война» или «специальная военная операция»: почему в международном праве слова имеют значение, (25.08.2022), <https://www.fidh.org/ru/regiony/evropa-i-central-naya-aziya/ukraina/vojna-ili-special-naya-voennaya-operaciya-pochemu-v-mezhdunarodnom> (22.05.2025).

⁴ Турция начала наступление в Сирии. США заявляют, что не давали на это согласия, 10 октября 2019, <https://www.bbc.com/russian/news-49996222> (22.05.2025).

մենք օգնության հասանք մեր եղբայրներին»¹: «Մենք չենք կարող անտարբեր մնալ, երբ մարդկության դեմ հանցագործություններ են կատարվում»² ձևակերպումը թույլ է տալիս Թուրքիային ուղղակի մեղադրանքներ հնչեցնելու կամ կոնֆլիկտի գնալու փոխարեն հանդես գալ մուսուլմանական աշխարհի պաշտպանի կերպարում՝ միաժամանակ ամրապնդելով իր ազդեցությունը տարածաշրջանում: Նման ձևակերպումը նաև չի ընկալվում այլ պետությունների ներքին գործերին միջամտելու փորձ, այլ ներկայացվում է որպես «ճշվածների պաշտպանություն ու արդարության հաստատմանն ուղղված աջակցություն»: Այս ամենը թույլ է տալիս Թուրքիային ակտիվորեն գործել Մերձավոր Արևելքում, բայց միևնույն ժամանակ պահպանել «արդար և լեգիտիմ» խաղացողի կերպարը միջազգային ասպարեզում:

Էվֆեմիզմի վառ դրսևորում է «թշնամի» եզրույթի փոխարինումը «հակառակորդ» բառով: Ընդհանրապես բառերն ունեն տարբեր կոգնիտիվ և հուզական բովանդակություն, հետևաբար բառերի ընտրությունն էապես ազդում է տեքստի ընկալման վրա: Մասնավորապես՝ «հակառակորդը» եզրույթը կարող է ընկալվել որպես մրցակից խմբի անդամ՝ առանց խիստ բացասական հույզերի, մինչդեռ «թշնամի» բառը միանշանակ կրում է սպառնալիքի, առճակատման գնալու իմաստային շերտեր՝ ակտիվացնելով պաշտպանողական և հարձակողական վարքային պատասխաններ սոցիալական խմբի կողմից: Այս երևույթը կարելի է դիտարկել նաև Սոցիալական նույնականացման տեսության շրջանակում, ըստ որի՝ անհատները իրենց ինքնությունը ձևավորում են սոցիալական խմբերին պատկանելու միջոցով՝ կառուցելով «մենք»-ի և «նրանք»-ի երկբևեռ բաժանումը («ingroup»–«outgroup»): Թշնամու ընկալումը հաճախ կապվում է «նրանց» հետ, ովքեր սպառնում են խմբային ինքնությանը՝ առաջացնելով ավելի ինտենսիվ հուզական և վարքային արձագանք՝ ի տարբերություն «հակառակորդ» եզրույթի, որը սահմանափակվում է մրցակցային շրջանակում:

¹ Эрдоган: Мы пришли на помощь своим братьям, 15 марта, 2021, https://oxu.az/ru/politika/erdogan-my-prishli-na-pomosch-svoim-bratyam-video?utm_source=chatgpt.com (22.05.2025).

² Президент Эрдоган: Турция не оставит Палестину, 11 марта 2025 г., https://trt.global/russian/article/c95f69d174b6?utm_source=chatgpt.com (22.05.2025).

Եզրակացություն

Փափուկ ուժի ազդեցությունը առավել նկատելի է երկարաժամկետ հեռանկարում, երբ ինքնության և արժեհամակարգային պատկերացումների փոփոխությունները սկսում են ազդել սերունդների մտածողության ու վարքագծի վրա: Այն կարևոր ռազմավարական գործիք է, քանի որ կարող է ձևավորել նոր ընկալումներ ու պատկերացումներ, որոնք, խորապես արմատավորվելով հասարակական գիտակցության մեջ, հանգեցնում են կայուն և խորքային փոփոխությունների:

Թուրքիայի կողմից Մերձավոր Արևելքի երկրներում փափուկ ուժի գործադրումը չի սահմանափակվում միայն մշակութային ու կրթական արտահանումներով. այն ունի խորքային սոցիալ-հոգեբանական մեխանիզմներ, որոնք ուղղված են տարածաշրջանային հասարակությունների ինքնության վերափմաստավորմանը: Թուրքիայի կողմից կիրառվող փափուկ ուժի ռազմավարությունները՝ լեզվի, մշակույթի տարածումից մինչև պատմական կոլեկտիվ հիշողության մանիպուլյացիա, էվֆեմիզմների կիրառություն և մեդիա միջամտություններ, ձևավորում են յուրատեսակ ընկալման հարթակ, որտեղ Թուրքիան ներկայացվում է որպես «բարեկամ», ընդհանուր պատմամշակութային ժառանգության կրող և առաջընթացի չափանիշ: Սոցիալական նույնականացման տեսության տեսանկյունից դիտարկելիս պարզ է դառնում, որ այդ մոտեցումներն ուղղված են «յուրայինի» կերպարի ստեղծմանը՝ «մենք»-ի և «նրանք»-ի սահմանները մեղմելուն՝ երբեմն դրանք վերաձևելու միջոցով: Արդյունքում՝ ձևավորվում է ընկալում, ըստ որի՝ Թուրքիային նմանվելը ոչ միայն անվտանգ ու բարենպաստ է, այլև՝ արժեհամակարգային առումով ցանկալի: Այսպիսով, Թուրքիայի փափուկ ուժը նպաստում է նրա միջազգային դիրքի կայունացմանը և Մերձավոր Արևելքում ազդեցության կենտրոնի կերպարի ամրապնդմանը:

LUSINE MKHITARYAN

*ISEC NAS RA, Department of Psychology,
Email: lunam19@gmail.com*

THE SOCIO-PSYCHOLOGICAL MECHANISMS OF TURKEY'S USE OF SOFT POWER IN THE MIDDLE EASTERN COUNTRIES

Keywords: *Middle East, Turkey, Soft power, social identity theory, Neo-Ottomanism, Euphemism.*

The document explores Turkey's use of soft power in the Middle East, emphasizing its psychological and social mechanisms aimed at shaping public perceptions and cultural identities in the region. Drawing on concepts such as social identity theory, symbolic influence, and euphemism strategies, the study illustrates how Turkey leverages non-coercive tools – including education, religion, humanitarian aid, and media – to foster a favorable image and promote its geopolitical vision, particularly within the framework of neo-Ottomanism.

This soft power strategy has had a noticeable impact on how Middle Eastern societies perceive Turkey. Through cultural diplomacy and subtle manipulation of historical memory and shared identity, Turkey has managed to present itself not only as a powerful state but also as a relatable and legitimate regional leader. The approach reduces resistance and enhances voluntary alignment by creating emotional and symbolic connections, rather than relying on coercion. As a result, Turkey's soft power tools serve both to expand its influence and to embed its values and narratives within the social fabric of neighboring societies.

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ ԳԱԱ – Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային
ակադեմիա

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ – ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն

ՀԵՀ – Հայաստանի Եվրոպական համալսարան

ABBREVIATIONS

NAS RA – *National Academy of Sciences of the Republic of Armenia*

ISEC NAS RA – *International Scientific-Educational Center of NAS RA*

EUA – *European University of Armenia*

АББРЕВИАТУРЫ

НАН РА – *Национальная академия наук Республики Армения*

МНОЦ НАН РА – *Международный научно-образовательный центр НАН РА*

ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ
ԱՐԴԻ ՓՈԽԱԿԵՐԴՈՒՄՆԵՐԸ.
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գիտաժողովի նյութեր

**MODERN TRANSFORMATIONS
IN THE MIDDLE EASTERN REGION:
HISTORY AND GEOPOLITICS**

Proceedings of the Scientific Conference

Պատասխանատու խմբագիր՝ *Գոռ Մարգարյան*
Էջադրող՝ *Նարինե Հովհաննիսյան*



Անտարես

«Անտարես» հրատարակչություն
ՀՀ, Երևան-0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ (+374 10) 58 10 59
antares@antares.am
www.antares.am